

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ



Արթնցիկ եւ Փոխէ Աշխարհի

ԼԻՍԱ ՊԸՎԻՐ

Սիրելի բարեկամ,

Աստուծոյ մտադրութեան մէջ կիները պետք է ըլլան նպատակաւորուած, կրակոտ եւ հմուտ: Շատերս պետք եղածէն անելի ժամանակ անցուցած ենք շունքին մէջ քնացած մնալով: Հիմա Աստուած կը կանչէ մեզ, որ արթնանաք, ոտքի ելլենք եւ փոխենք աշխարհը: Դուն շինուած ես ստեղծագործ կերպով եւ ռազմավարականօրէն ազդեցութիւն բերելու համար շուրջիդ աշխարհին մէջ:

Կին Առիւծներուն Արթնալը Աստուծոյ կողմէ ներշնչուած պատգամ մըն է, որ կ'ըսէ, թէ դուն այս պահին համար ծնած ես: Այս պատգամին միջոցաւ Աստուծոյ ինծի խօսած բաները զօրացուցած են եւ մղումներ դրած են մէջս ամէն մակարդակի վրայ: Աշխարհի չորս կողմէն անհամար քոյրեր ինծի հետ բաժնեկցած են, թէ ինչպէս զօրութեան եւ մտադրուած ծառայութեան հանգրուանի մը մէջ մտած են մինչ Աստուած այս յայտնութիւնը խօսած է իրենց սիրտերուն մէջ:

Ամբողջ սիրովս եւ նեցուկովս կը դրկեմ այս գիրքը ձեզի եւ ձեզի պէս ուրիշ առաջնորդներու: Կը խնդրեմ, որ բաժնեկցիք այս գիրքը եւ համագանցի վրայ տրամադրելի բոլոր միւս աղբիւրները ձեր բոլոր ծանօթներուն հետ: Կը հաւատամ, որ *Երբ Կին Առիւծները Կ'արթնանը* ձեզ պիտի դիրքաւորէ այնպէս որ փարատեք խաւարը, փրկէք անյոյսները եւ ոտքի ելլէք ձեր շուրջիներուն հետ՝ երկրի վրայ Աստուծոյ թագաւորութիւնը յայտնաբերելու համար:

Սիրելիս, այս պատգամը յաւիտենապէս փոխած է իմ սիրելի, առաջնորդելու, ծառայելու եւ տալու ձեւ: Կ'աղօթեմ, որ դուն ալ փոխակերպուիս՝ մինչ այս էջերուն մէջ կը փնտռես Աստուծոյ փափաքը քեզի համար: Շատ պիտի ուզէի լսել, թէ այս պատգամը ինչ ազդեցութիւն պիտի ունենայ կեանքիդ մէջ ինչպէս նաեւ անոնց կեանքին, որոնք դրուած են քու հոգատարութեանդ տակ:

Անկեղծօրէն,

Լիսա Պըվիր
LisaBevere@gmail.com



MessengerX



Messenger
INTERNATIONAL



ԵՐԲ ԿԻՆ

ԱՌԻՃՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

Դրուատիք՝ «Երբ Կին Առիծները Կ'արթնան»ի Մասին

«Երբ Կին Առիծները Կ'արթնան»ը պիտի օգնէ, որ տեսնես այն ահաւոր ոյժը եւ գեղեցկութիւնը, որ Աստուած տուած է ամէն կնոջ: Անիկա քու մէջդ պիտի արծարծէ առիծի սիրտ մը եւ պիտի ներշնչէ քեզ, որ բարձրանաս կեանքի առօրեայէն վեր եւ նորոգուած փափաքով կամ կրակով մը ծառայես Աստուծոյ»:

- Ճոյս Մայրը, մեծ վաճառք ունեցող գիրքերու (*պեսթ-սելինկ*) հեղինակ եւ Աստուածաշունչի ուսուցիչ

«Լիսա Պըվիր ոչ միայն կը ներշնչէ մեզ մոնչող ճշմարտութիւններով, այլեւ կ'ապրի առիծի մը յատկանիշներով: Ան նուիրուած Քրիստոնեայ մըն է, զօրաւոր կին մը իր ամուսինին, անվախ մայր մը, համարձակ պատգամաբեր մը եւ բացառիկ գրող մը: *Երբ Կին Առիծները Կ'արթնան*ը պիտի ներշնչէ քեզ, որ իրագործես քու Աստուծոյ նպատակադրած դերդ՝ երկրի վրայ Աստուծոյ Թագաւորութիւնը հաստատելու գործին մէջ: Անիկա ամէնէն խանդավառող գիրքերէն մէկն է, որ երբեւէ կարդացած ենք»:

- Ճէյմզ եւ Պեթի Ռոպիսըն, *Լայֆ Թուրէյ* հեռատեսիլ

«Երբ Կին Առիծները Կ'արթնան»ը պիտի օգնէ քեզի, որ արթնցնես այն մեծութեան հունտերը, զորս Աստուած դրած է մէջդ: Ուրիշները զօրացնելու Լիսայի կրակը պիտի օգնէ քեզի, որ յայտնաբերես քու արժէքդ, նպատակդ եւ այն հիանալի պարգեւները, որ ունիս տալու քու շուրջիդ աշխարհին»:

- Վիքթորիա Օսթին, համահովիւր Լէյքուուտ Եկեղեցիի, Հիուսթըն, Թեքսաս

«Երբ Կին Առիծները Կ'արթնան»ին մէջ Լիսա Պըվիր տպատրիչ պատկեր մը կը գծէ այն ազդեցութեան, որ կատարելապէս արթուն Քրիստոնեայ կին մը կրնայ բերել իր ազդեցութեան շրջանակներուն մէջ իր անձնական կեանքէն մինչեւ եկեղեցույ կեանքին եւ մինչեւ աշխարհի մէջ: Անոնք, որոնք կը կարդան այս գիրքը պիտի մղուին հրելու իրենց կեանքի սահմանները եւ ձեռք ձգելու իրենց համար Աստուծոյ նպատակները»:

- Սթովալ Ուիմզ, աւագ հովիւր *Սելեպրէյշըն Չըրչի*, Ճաքսընվիլ, Ֆլորիտա

«Լիսա Պրվիր կոչ կ'ուղղէ կիներուն ամէն տեղ, որ ոտքի ելլեն եւ ձեռք ձգեն այն զօրութիւնը, որ Աստուած տուած է իրենց: Կեանքիդ մէջ ինչ հանգրուանի մէջ ալ որ ըլլաս, *Երբ Կին Առիւծները Կ'արթնանան*ը կարողութիւնը պիտի տայ քեզի, որ իրագործես այն ոյժը, քաջութիւնը եւ ուղղութիւնը, որ Աստուած դրած է քու ճամբուդ մէջ»:

- Էտ Եանկ, հովիւր *Ֆելոշիփ Չըրչի*, հեղինակը «Դո՛ւն: Ուղեորութիւն Դէպի Արժէքիդ Կեդրոնը» գիրքի

«Լիսայի գիրքը Աստուծոյ ներշնչումով գրուած խօսք մըն է կիներուն: Ժամանակն է թօթափելու ճնշումը, ազատագրուելու անկէ, որ կը գերէ քեզ, ստանալու Աստուծոյ շնորհքը եւ ընելու այն ինչ որ Աստուած կ'ըսէ, որ ընես»:

- Շարոն Տորթի, ասագ հովիւր *Վիքթորի Քրիսչըն Սենթըրի*, Թոլսա, Օքլոհոմա

«Իբրեւ Քրիստոսի դատին համար համագործակից, Լիսա Պրվիր մեզի կը յիշեցնէ, թէ կին արարածը կը մարմնաւորէ սէր, յոյս, ուրախութիւն եւ քնքշութիւն՝ առանց զոհելու քաջութիւնը, ոյժը եւ ինքնավստահութիւնը: Այս գիրքը քեզի պիտի յիշեցնէ, որ Աստուած կը տեսնէ մեր երազները նախքան որ մենք տեսնենք զանոնք: Անիկա պիտի ներշնչէ քեզ, որ բարձրանաս կոչումիդ մէջ եւ յառաջ տանիս Քրիստոսի Թագաւորութիւնը երկրի վրայ»:

- Պրայըն եւ Պոպի Հիուսթըն, ասագ հովիւները *Հիլտնկ Չըրչի*, Աստրալիա

«*Երբ Կին Առիւծները Կ'արթնանան*ին մէջ Լիսայի միջոցաւ կրնանք լսել Աստուծոյ սիրտի ձայնը, որ կը կանչէ կիները՝ զօրութեամբ ոտքի ելլելու եւ աշխատանքի լծուելու: Դադրեցէք ասանդութեան ապահովութեան եւ կրաւորականութեան ետեւէն դիտելէն եւ արտօնեցէք, որ Աստուած տեղադրէ ձեզ իր թագաւորութեան մէջ՝ *“այսպիսի արեւնուան մը համար”*: Չենք կրնար ամէլի սպասել. շատ բան վտանգի տակ է»:

- Ռոն եւ Քաթի Լուչէ, հիմնադիրները *Թին Մանիա Մինիսթրի*ի

«Ամէն կին այս մոլորակին վրայ պէտք է կարգայ այս Աստուծոյ ներշնչումով գրուած պատգամը. արթննալու կոչ մը կիներուն՝ որ ոտքի ելլեն եւ դէմ դնեն ստեղծուած իրավիճակին: Լիսան

մեզի կը յիշեցնէ, որ մենք՝ իբրեւ կիներ, մեր լաւագոյն վիճակին մէջ կ'ըլլանք երբ մէկ կողմ կը դնենք մեր տարբերութիւնները եւ միասին կը գործենք՝ լուծումներ բերելու համար աշխարհի խնդիրներուն»:

- Նանսի Ալքորն, հիմնադիր եւ նախագահը *Մըրսի Մինիսթրիզի*

«Մղող եւ միտքը խթանող այս գիրքը՝ *Երբ Կին Առիւծները Կ'արթնանը*, պիտի մղէ քեզ, որ ըլլաս այն ամէնը, որ Աստուած ծրագրած է, որ ըլլաս»:

- Մարկարէթ Ֆայնպըրկ, հեղինակը «*Տը Աէքթիւ Էքօ*» եւ «*Աքսութիւնկ տը Տիվայն*» գիրքերուն

«Լիսա Պըվիրի աղօթքն է, որ կատաղի, գեղեցիկ եւ վայրի բան մը արթննայ մէջդ մինչ կը կարդաս այս գիրքը: *Երբ Կին Առիւծները Կ'արթնանը* պիտի տայ քեզի իր վերնագիրէն ակնկալածդ, որովհետեւ Լիսան մէկն է, որ աշխարհը ւեղի լաւ վայր մը կ'ընէ»:

- Տինօ Ռիգօ, գլխաւոր հովիւը *Հիլինկ Փէյս Չըրչի*

«Յոյս պիտի ծագի մէջդ մինչ ականարկ մը կը նետես անոր թէ՛ ինչ կրնայ պատահիլ եթէ ամէն կին կատարելապէս արթուն ըլլայ պատմութեան իր պահին մէջ: Կարդա՛ այս գիրքը եւ արթնցնո՛ր քու մէջիդ առիւծը»:

- Շարլոթ Կամպիլ, հիմնադիր եւ տնօրէնը *Չերիշ Ուիմէնզ Մինիսթրիի* եւ գլխաւոր հովիւի օգնականը *Ըպանտընթ Լայֆ Չըրչի*, Անգլիա

«*Երբ Կին Առիւծները Կ'արթնանը* տկար սիրտ ունեցողներուն համար չէ: Անկա կոչ մըն է կիներուն, որ սոթտեն իրենց թեւերը, աշխատանքի լծուին եւ մտնեն աշխարհի ցաւին մէջ՝ Յիսուսի բժշկող հպումը բերելով վիրաւորուածներուն, ճգմուածներուն եւ կոտորուածներուն: Եթէ յօգնած ես ուզելէն այն ինչ որ չունիս եւ պատրաստ ես կեանքդ ներդրելու՝ տալով այն ինչ որ ունիս, այս գիրքը քեզի համար է»:

- Մարիլին Սքինըր, համահիմնադիրը Ուաթթոյի Մանուկներու Հոգատարութեան Ծառայութիւններու

«Առիծի նկարագիրին մասին Լիսայի հետզհետե՛ բացուող յայտնությունը թե՛ ժամանակին է եւ թե՛ կարեւոր: Ամբողջ երկրի վրայ մենք կը տեսնենք համարձակ, գեղեցիկ Աստուծոյ կիներու սերունդի մը յայտնուիլը: Ոչ միայն ատիկա, այլեւ կին առիծներու խումբի մը, որոնց զօրութիւնը եւ ինքնավստահութիւնը կը վերականգնուին Սուրբ Հոգիի զօրութեան միջոցաւ եւ եկեղեցւոյ բժշկարար ապաստանարանին մէջ: Ոչ թէ իշխանութեան ծարաւ եղող կին մը, այլ՝ սիրալիր, գուրգուրացող կին մը, որ գիտէ իր արժէքը եւ ասոր համաձայն կը քալէ երկրի վրայ: Ոչ թէ երկչոտ, վախէն դողացող արարած մը, այլ՝ կին մը, որ ունի նոր երգ մը իր սիրտին մէջ՝ Քրիստոսով արմատական ազատութեան երգ մը: Այդ յանդուգն յաղթականն է՝ *արթնցող կին առիծը*: Այս հետաքրքրական գործը ամէն կնոջ համար է, որ կը ձգտի հարցերու պատասխանը ըլլալու այսօրուայ երկրին մէջ: Թող գտնես քու ներքին “մոնչիւնդ” մինչ Լիսան կ’առաջնորդէ քեզ դէպի Յուդայի Առիծը՝ բուն Ասլանը՝ Յիսուս Քրիստոսը»:

- Քրիստոս Փրիւնկը, աւագ հովիւ *Սի.3* եկեղեցիի

«*Երբ Կին Առիծները Կ’արթնան*»ը ցոյց կու տայ Լիսա Պըվիրի աստուածատուր կարողութիւնը լուսարձակի տակ առնելու հոգեւոր սկզբունքներ մինչ կը ձեւակերպէ աշխարհ մը, ուր կիներ ոտքի կ’ելլեն այն կատաղի եւ գեղեցիկ էգ առիծներուն պէս, որ ստեղծուած էին ըլլալու»:

- Քրիսթին Քէյն, տնօրէնը Ջինէ եւ Լիազօրէ՛ Ծառայութիւններուն, եւ հիմնադիրը *Էյ.21* Շարժումի

«*Երբ Կին Առիծները Կ’արթնան*»ին մէջ Լիսա Պըվիր մեր ուշադրութիւնը կը դարձնէ կնոջ մը բնական, կատաղի, պաշտպանող երեսներուն վրայ եւ ցոյց կու տայ կիներուն զօրութիւնը պատերազմելու իրենց եւ իրենց սիրած անձերուն ճակատագիրին համար: Թող Լիսան սորվեցնէ քեզի ինչպէս գործել Աստուծոյ շնորհքի զօրութեամբ՝ հալածելու համար յուսախաբութեան եւ կոտորած երազներու “որսը”, եւ “ճանչնալ եւ ընդունիլ զօրութիւնդ, քաջութիւն զարգացնել եւ փոփոխութիւն բերել աշխարհի մէջ”»:

- Եպիսկոպոս Քորթնի ՄըքՊարթ, աւագ հովիւ *Քալվըրի Ռիվայլըլ Չըրչի*, Նորֆոք, Վըրճինիա

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԺՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

Արթնցիր եւ Փոխէ Աշխարհդ

ԼԻՍԱ
ՊԵՎԻՐ

Lioness Arising by Lisa Bevere, Western Armenian

© 2023 Messenger International

MessengerInternational.org

Originally published in English as Lioness Arising

Additional resources in Western Armenian by John and Lisa Bevere are available for free download and video streaming at

MessengerX.com and on the **MessengerX App**

To contact the Author: LisaBevere@gmail.com

This book is a gift from Messenger International and is

NOT FOR SALE

Երբ Կին Առիւծները Կ'արթնան, Լիսա Պըվիր, արեւմտահայերէն

© 2023 Messenger International

MessengerInternational.org

Սկզբնապէս հրատարակուած է անգլերէն լեզուով, Lioness Arising վերնագիրով

Յաւելեալ նիւթեր արեւմտահայերէնով հասանելի են անվճար ներբեռնման եւ հոսքային հեռարձակման համար **MessengerX.com** կայքին մէջ եւ **MessengerX** յաւելուածին մէջ:

Հեղինակին հետ կապ հաստատելու համար՝ LisaBevere@gmail.com

Այս գիրքը նուէր է «Messenger International» Առաքելութեան կողմէ եւ ՎԱՃԱՌ-ՔԻ ԵՆԹԱԿԱՅ ՉԷ



App Store-ը Apple Inc.-ի ապրանքանիշն է, որ արձանագրուած է ԱՄՆ-ի եւ այլ երկիրներու մէջ:

Google Play-ը եւ Google Play-ի պատկերանիշը Google LLC- ի ապրանքանիշերն են:

*Բոլոր առիծ քոյրերուս,
որոնք կը զգան, թէ վայրի, կապաղի
եւ գեղեցիկ բան մը կ'արծարծուի իրենց մէջ:*



*Դուն հիանալի ես:
Ծնած ես այս պահին համար:
Մի՛ վախնար զօրութենէդ, հարցումներէդ կամ
ներըմբռնումներէդ:
Արթնցի՛ր, ոտքի ել եւ համարձակութիւնը ունեցի՛ր
իրագործելու
այն ամէնը, որ ստեղծուած ես ըլլալու:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Պիտի Արթնցնես Էգ Առիւծ մը	13
2. Չտեսնուած Ոյժ մը	31
3. Վտանգաւոր Կերպով Արթուն	51
4. Վախի եւ Սքանչելիի Գումարը	73
5. Չօրութիւնը Ծառայութեան Համար Է	97
6. Նոյն Առաքելութեան Տակ	111
7. Ողջունել եւ Չհրար Լզելով Մտերմանալ	139
8. Էգ Առիւծները Ռազմավարական Են	157
9. Էգ Առիւծները Կ'ապրին Լոյսի մէջ եւ Կ'որսան Մութի մէջ	183
10. Բալել Արու Առիւծի մը հետ	225
11. Փսփսուբէ՛ Մռնչիւնի	243

Պիտի Արթնցնես Էգ Առիւծ մը

Բնութիւնը գաղտնաբար կը
համաձայնի հոգիին հետ՝
ազատագրելու համար մեզ:

ՌԱԼՖ ՌԻԱԼՏՕ ԷՍԸՐՍԸՆ



1994

թուականն էր, գիշեր մըն էր որեւէ ուրիշ գիշերուայ մը՝ պէս կեանքիս այդ եղանակին: Տունս կարգի դնելու յուսահատ փորձէ մը ետք պէտք եղածէն աւելի ուշ մտած էի անկողին: Իբրեւ յոյ մայրը երեք տղայ զաւակներու, խորունկ քուն կը քնանայի այդ օրերուն: Աչքերս կը գոցէի եւ ուղղակի քունի կ'անցնէի, միայն արթննալու համար ժամացոյցի զանգակի մը ձայնէն, պզտիկներուն ձայնէն կամ սենեակս սողոսկած ուշ առաւօտեան արեւի ճառագայթէն: Բայց այդ գիշեր քնացայ եւ արթնցայ արշալոյսին՝ մինչեւ կորիզս ցնցուած:

Լուսաբացի ժամերուն վառ եւ անսովոր երազ մը տեսայ: Իրականութեան մէջ զանհկա երազ կոչելը այնպէս պիտի հնչէ, որ անհկա ինծի եկաւ քունիս մէջ կամ շուքի մը պէս: Բայց այդ պատկերները ինծի այդ ձեւով չեկան: Ես կանոնաւոր կերպով երազ կը տեսնեմ, բայց ոչ այդ մակարդակի ուժգնութեամբ: Իմ քունի աշխարհիս մէջ ինքզինքս գտայ աշխուժօրէն արթուն: Առջեւս կար տեսարան

մը՝ ուրիշ վայրի եւ ժամանակի մէջ: Զգացի, թէ երկրի արահետներուն մէջ չէի քալեր այլեւս: Երկնային մարզի մէջ տեղ մը կեցած էի, լուսաւոր վայր մը, առանց շլացնող շողերու:

Պայծառ լոյս կար ամէն տեղ, եւ կը թուէր գալ ամէն տեղէ: Չկար մշուշ կամ շուք, կար միայն փառաւոր գոյն: Այդ կենդանի գոյնի յագեցած ալիքները բաղկացած էին այնքան թանձր երանգներէ, որ անոնց երկրաւոր անունները չունիմ, որ ըսեմ: Գոյները խաւերով էին եւ բազմատարածութիւն: Պատճառով մը ամէնէն լաւ կերպով կը յիշեմ մանիշակագոյնի (բայց ոչ մեր գիտցած մանիշակագոյնի) եւ կապոյտի (ոչ մերինին պէս) երանգները: Չկային ծայրեր, կողմեր կամ վերի սահման, սակայն այդ գոյնի միջավայրը տարածուած էր ամբողջ շուրջը այն բանին, զոր կը ցուցադրէր, որն էր՝ անթերի, սերի գոյն քարէ բարձր հարթակ մը, որուն վրայ պառկած էր ոսկեայ էգ առիւծ մը:

Էգ առիւծը ուղղակի կատարեալ էր. շքեղ, հզօր եւ գեղեցիկ ու ճոխ հիւսուածքի նման մորթով: Ան չէր շարժեր, բայց միտքիս մէջ կասկած չկար, որ ան ողջ էր, շատ ատելի ողջ քան որեւէ երկրաւոր անասուն, զոր տեսած էի շարժումի մէջ: Գլուխը վեր բռնած էր, բայց ոչ լարուած, եւ առջեւի ոտքերը երկարած էր դէպի առջեւ: Անոր մորթը եւ աչքերը ոսկեգոյն էին եւ կը փայլէին: Իր կատարեալ, շագանակագոյն մորթին տակ կը տեսնէի անոր կատարելապէս կազմուած մկաններուն բոլոր մանրամասնութիւնները: Այդ գմայլելի, հանդարտ էգ առիւծը շատ ատելի իրական, կենդանի եւ կենսունակ էր քան որեւէ էգ առիւծ, որ ներկայիս երկրի վրայ կ'ապրի: Միտքէս անցածը այն էր, որ կը տեսնէի էգ առիւծի երկնային նախատիպը:

Այդ անթերի, սիւներով հարթակին առջեւի երեսին վրայ փորագրուած էին բառ մը եւ հռոմէական թիւ մը. Թիւեր XXIII:

Այդ էգ առիւծին դիմաց իմ կերպարս թափանցիկ, անկարեւոր եւ տարօրինակ կերպով անկապ կը թուէր: Ես անջատուած կը զգայի իմ մարմինէս եւ յդի ըլլալու գիտակցութիւնը չունէի: Գիտէի, որ հոն էի *նայելու եւ տեսնելու*, ուշադրութեամբ դիտելու, եւ ատիկա ընելով՝ սորվելու բան մը, որ չէի գիտեր: Զգացի, որ պէտք էր ըմբռնէի

Պիտի Արթնցնես Էգ Առիւծ մը

այդ պատկերին կշիռքը: Հակառակ անոր որ ես առանձին էի առիւծին հետ, ոչ մէկ ահագանգ կամ սպառնալիք կը զգայի: Պարզապէս աչքերս լայն բացած զմայլանքի մէջ էի, կարծես միայն տեսնելով՝ իմ հոգիս կ'ընդարձակէր եւ կը կապուէր անոր հետ: Որքան որ կրնայի ներծծեցի շուրջս եղած բաները: Կեդրոնացումս շեղեցաւ, եւ ուղղակի նայեցայ առիւծին աչքերուն մէջ: Երբ ատիկա ըրի, ձայն մը լսեցի ետեւէս տեղէ մը, որ կը յայտարարէր. *Այս որդիին ծնունդով, դուն պիտի արթնցնես էգ առիւծ մը:*

Ոսկեայ լոյսի պղտորութեան, շքեղութեան եւ զարմանքի մէջ վերջ գտաւ այդ տեսիլքը: Յաջորդ բանը, որուն գիտակցութիւնը ունիմ այն է, որ առաւօտ էր արդէն եւ ես ամբողջութեամբ արթուն էի: Բոլոր զգայարանքներս բարձր զգօնութեան վիճակի մէջ էին, ոչ այնքան վախի պատճառով որքան ցնցուած ըլլալու: Ինչ էր տեսածս: Հիմա որ ժամանակ անցած է անոր վրայ, եկած եմ հաւատալու, որ մեր երկիրը ժամանակի հետ կապուած շուքը կամ մասնակի յայտնութիւնն է անոր, որ նախատիպը կամ իրականն է, անժամանակ է եւ ամբողջական է երկինքի մէջ:

ՈՏՔԻ ԵՆ ԱՌԻՒԾԻ ՄԸ ՊԷՍ

Արշալոյսի աղօտութեան մէջ երկնցած էի՝ լման արթուն: Սիրտս արագ կը զարնէր եւ մարմինս կը դողդղար: Զգացի, որ Աստուած տուաւ ինձի էգ առիւծի այդ տեսիլքը՝ յայտնելու համար բան մը, որ դիւրաւ աննկատօրէն պիտի վրիպէր ինձմէ առօրեայիս մէջ: Ան իմ լման ուշադրութիւնս գրաւեց անով: Մտիկ կ'ընէի՝ բոլոր զգայարանքներս արթուն ըլլալով: Սենեակս տժգոյն եւ պարապ կը թուէր՝ ի հակասութիւն այն գոյներու աշխարհին, որմէ նոր ելած էի: Առաւօտեան սովորական ձայները խով կը թուէին բաղդատաբար այն հնչեղ ձայնին, որ կար այդ այլաշխարհիկ վայրին մէջ: Անշարժ էի՝ վախնալով, որ եթէ շարժէի, կրնայի կորսնցնել այդ տեսիլքի վերջին մնացորդները: Գոցեցի աչքերս: Այո, ամէն բան հոն էր. էգ առիւծը, հարթակը, գրութիւնը, գոյներու միջավայրը եւ ձայնը:

Ժամանակ անցաւ, սիրտս դանդաղեցաւ, մարմինս

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

հանդարտեցաւ եւ աչքերս բացի: Հարթակին դիմացի երեսին վրայի գրութիւնը հասկնալ ուզելով, ձեռքս երկարեցի եւ Աստուածաշունչս առի քովս անկողինիս մէջ: Ես ինծի հարց տուի, թէ արդեօք կապ մը կամ նշուած գիրքին եւ գլուխին հետ: Ուրեմն ինչ կ'ըսէր Թիւերու Գիրքի 23-րդ գլուխը: Մինչ էջերը կը դարձնէի, սիրտս տրտմեցաւ երբ կարդացի թարգմանողին դրած վերնագիրը եւ գիտցայ, որ այդ գլուխը Բաղասամի մարգարէութիւններուն մասին է: Անոր մասին գիտէի, որ ճիշդ պատգամներ տուող, բայց անպարկեշտ մարգարէ մըն էր: Շարունակեցի կարդալ՝ առանց յատուկ բան մը զգալու, մինչեւ, որ հասայ 19-րդ համարին:

Աստուած մարդ չէ՝ որ ստէ,
Ո՛չ ալ մարդու որդի՝ որ զղջայ.
Իր ըսածը պիտի չընէ՞,
Կամ իր խօսածը պիտի չհաստատէ:
Ահա՛ օրհնելու հրաման ստացայ.
Ինք օրհնեց, ու ես չեմ կրնար խափանել:
Յակոբի վրայ անօրէնութիւն չնկատեց,
Ո՛չ ալ Իսրայէլի վրայ անիրաւութիւն տեսաւ.
Տէրը՝ անոր Աստուածը իրեն հետ է,
Եւ անոր մէջ թագաւորի ցնծութեան ձայն կայ:
Աստուած հանեց զանոնք Եգիպտոսէն.
Ան գոմէշի պէս ոյժ ունի:
Արդարեւ Յակոբի դէմ հմայութիւն չ'ըլլար,
Ու Իսրայէլի դէմ՝ դիպութիւն:
Յակոբի եւ Իսրայէլի մասին՝ ժամանակին
Պիտի ըսուի թէ՛ «Աստուած ինչէր ըրաւ»:
(Թիւերու 23.19-23)

Այս խօսքերը շատ բան կ'ըսեն Աստուծոյ հաւատարմութեան մասին: Անոր խօսքերը հաստատ են եւ ստոյգ, եւ Անոր օրհնութիւնները՝ անխափանելի: Աստուծոյ հաւատարմութեան շնորհիւ Իսրայէլ ունեցաւ ապահով ապագայ մը՝ ազատ կախարդութեան կամ անէծքի պիղծ եւ խճճուած ազդեցութիւններէն: Այս բոլորը վստահութիւն ներշնչող էին, բայց յաջորդ համարը կլանող էր:

Պիտի Արթնցնես Էգ Առիծ մը

Ահա՛ այս ժողովուրդը մատակ առիծի պէս պիտի կանգնի,
Առիծի պէս պիտի բարձրանայ.

Պիտի չպառկի՝ մինչեւ որ որսը չուտէ

Եւ սպաննուածներուն արիւնը չխմէ:

(Թիւերու 23.24, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Դողալով, նորէն կարդացի այդ դիրաբեկ էջին վրայ գրուած այդ կատաղի բառերը. *Մատակ առիծի պէս պիտի կանգնի, առիծի պէս պիտի բարձրանայ*: Այդ բնական պատկերը ցնցեց զիս: Աչքիս առջեւ տեսայ. առիծ մը եւ իր մատակ (էգ) առիծը կ'ելլեն խոտերուն մէջէն: Եւ երբ կ'ելլեն, դաշտին ուժաբանութիւնը (մթնոլորտը) կը փոխուի խաղաղէն՝ ելեկտրականի: Ամէն ապրող էակ կը զգայ առիծին կեցուածք փոխելը եւ կը դիտէ ուշադրութեամբ: Ոսկեայ արարածները արթնցած էին, իրենց մկանները կը ձգէին, օդը կը փորձէին, իրենց միջավայրը կը քննէին՝ պատրաստ ըլլալով քայլ առնելու: Թերեւս անօթի էին: Թերեւս գրգռուած էին ներկայութենէն թշնամիի մը, որ խախտած էր իրենց տարածքի սահմանները, եւ ժամանակն էր իրենց ներկայութիւնը յայտնի դարձնելու:

Մէյ մը, որ ոտքի կ'ելլէին, լարուածութիւնը կը բարձրանար մինչեւ որ անոնց շարժումները դադրէին: Եթէ առիծները անհանդարտ էին, միւս արարածներն ալ հանգիստ չունէին մինչեւ որ առիծները կռիւ ընէին կամ իրենց խնձորք ունենային եւ դարձեալ հանդարտէին:

Անոնց ոտքի ելլելովը, զգացի անոնց զօրութեան արծարծումը հոգիս մէջ ալ: Ո՛վ ահի մէջ չ'ըլլար եւ չի հմայուիր երբ արու առիծ մը կամ էգ առիծ մը ոտքի կ'ելլէ եւ կը սկսի քալել կամ շարժիլ: Սքանչելի տեսարան մըն է: Բայց ինչ կապ ունէր ասիկա ինծի հետ: Ինչպէս կրնար այդ վայրի, ոսկեայ հզօրութիւնը կապուած ըլլալ ինծի հետ:

Մինչ այդ պատկերը խանդավառեց զիս, անիկա նաեւ վանեց կամ ետ մղեց զիս: Սիրեցի էգ առիծին արեւի շողերուն տակ մրափելը մինչ կորիւնները կը խաղային իր շուրջը, բայց որսի եւ սպաննելու պատկերները վախցուցին եւ նոյնիսկ զգուեցուցին զիս: Երբ *Նաշընըլ Ճէօկրաֆիք* կամ *Ուայլըր Քինկըրըմ* հեռատեսիլի կայանները կը դիտէի,

աչքերս կը դարձնէի երբ այդ մեծ կատուները վար կ'աննէին այծեամներ եւ վագրաձիեր:

Մինչ այդ միտքերը փայլատակեցին միտքիս մէջ, յիշեցի տեսած տեսիլքիս մէջ լսած խօսքս. «Այս որդիին ծնունդով, դուն պիտի արթնցնես էգ առիւծ մը»: Ինչ կրնայ նշանակել ասիկա: Ես կապ մը չտեսայ հզօր, անվախ էգ առիւծին եւ իր անկողինին մէջ պառկած մեծ, յղի կնոջ մը միջեւ: Ըսել, որ ես առիւծ մըն էի, խնդալիք էր: Ես *թոֆու* ուտող, *վիկըն* [միայն բոյսերէ եկած կերակուրներ ուտող- Թարգմանիչ] ըլլալու սահմանին եղող մէկն էի... ոչ արիւնարբու գիշատիչ մը: Ես կը սարսափէի ամէն բանէ, որ իմ հակակշիռէս դուրս կ'ըլլար եւ ընդհանրապէս ահարկութեան տակ կ'ըլլայի երբ մարդոց կը հանդիպէի: Ես յատկապէս կը վախնայի զօրաւոր, գերիշխող կիներէն:

Յղութիւնս տեսակ մը պատիժի յետաձգումի պէս բան մը եղած էր: Աղօթքի կրակոտ պահի մը ընթացքին՝ վերջին յղութենէս քանի մը ամիս առաջ, բոլոր բողոքներս մէկ կողմ դնելով Աստուծոյ ըսած էի. «Լաւ, լաւ, ես քուկո եմ: Թող քու կամքդ ըլլայ կեանքիս մէջ: Ինչ որ ուզես՝ կ'ընեմ: Նոյնիսկ կը խօսիմ կիներու հետ եթէ կ'ուզես, որ խօսիմ»: Հակառակ անոր որ գաղափար չունէի, թէ ինչ կրնայի ըսել:

Երբ յղացայ, մտածեցի, որ ուրեմն կացութիւնը փոխուեցաւ: Պատկերացուցի, թէ յանձնարարութիւնը եւ իմ հաւանութիւնս տեսակ մը քննութիւն մըն էին, ինչպէս իր որդիին Իսահակը զոհելու Աբրահամի պատրաստակամութիւնը: Թերեւս նուէր (*պոնըս*) կէտեր պիտի ստանայի, քանի որ պատրաստակամութիւն ցոյց տուած էի եւ բնաւ պէտք պիտի չունենայի խոստումս կատարելու:

Բայց այդ տեսիլքով, այնպէս կը թուէր, թէ յղութենէս առաջ մեր ըրած համաձայնութիւնը տակաւին ի զօրու էր: Եւ ինչ էր այդ խօսքը որդիի մը մասին:

Ամբողջ յղութեանս ընթացքին կ'ենթադրէի, որ աղջիկ պիտի ծնանիմ: Ամէն մարդ, որուն կը հանդիպէի, կ'ըսէր, թէ աղջիկ պիտի ունենայի: Ոչ ոք տղայ ըլլալու հաւանականութեան մասին կը խօսէր ինծի: Ես միակն էի, որ մէջս կը պահէի մէկ այլ որդի ունենալու գաղտնի յոյսը:

Պիտի Արթնցնես Էգ Առիւծ մը

Գլուխս շարժեցի՝ չկարենալով հաւատալ եղածին: Եթէ այդ բաներէն որեւէ մէկը ճիշդ էր եւ ես տեսակ մը Էգ առիւծի մը պիտի փոխակերպուէի, ապա վստահաբար ուրիշ մէկն ալ պիտի կանխատեսներ այդ մօտալուտ փոխակերպումը: Այդ տեսիլքին համար շատ լրջօրէն պէտք ունէի երկրորդական հաստատումի մը:

ՀԱՍՏԱՏՈՒՄԻ ՓՆՏՈՏՈՒՔ

Քանի մը շաբաթ անցաւ եւ կին ւաւետարանիչ մը, որուն հանդէպ մեծ յարգանք ունէի մեր քաղաքը եկաւ: Ահա՛ ինծի համար առիթ մը: Ան ուրիշ յղի ընկերուի մը եւ գիս հրաւիրեց ճաշի: Ընկերուիիս բացառիկ գործարար (*պիզնըստումըն*) մըն է, որ շատ հետաքրքրական դարձ մը ունեցած էր եւ Ասիոյ մէջ իր բնակած շրջանը ուղղակի կը շարժէ Աւետարանով: *Թերեւս Էգ առիւծի մասին տեսիլքը իրեն համար էր...* Որոշեցի հարեւանցի ձեւով մը այդ գաղափարը ճաշի ատեն բաժնեկցիլ եւ տեսնել անոր հակազդեցութիւնը:

Մեր ճաշի հանդիպումը գեղեցիկ, արեւոտ օրուան մը հետ զուգահիւսեցաւ Ուինթըր Փարքի մէջ, Ֆլորիտա: Երեքովս փողոցներուն մէջ քիչ մը քալելնէս ետք, վերջապէս յղի մարմինովս յաջողեցայ «իյնալ» աթոռին վրայ եւ կը մտածէի, թէ ինչպէս կրնայի Էգ առիւծը մտցնել ընկերուիիներու միջեւ ընթացող գնումներու շուրջ դարձող մեր այդ խօսակցութեան մէջ: Յետոյ երբ սկսանք ճաշել, նիւթը բանալու առիթս ներկայացաւ:

Ընկերուիիս մեզի ըսաւ, թէ աղջիկ զաւակ մը կ'ակնկալէր, եւ ւաւետարանիչը ըսաւ, թէ խանդավառ էր իմ աղջիկ մը ունենալու հաւանականութեանս գաղափարով:

«Բայց եթէ ուրիշ տղայ մը ունենամ...», հարցուցի:

Ան ցնցուեցաւ, որ ես այդպիսի հաւանականութեան մը մասին կը մտածէի: Վերջապէս ան կը տրամաբանէր, որ ես երեք տղայ զաւակներ ունէի, եւ ճոնը պէտք ունէր աղջիկ զաւակ մը ունենալու՝ անոր սիրահարուելու համար: Այդ պահուն որոշեցի պատմել Էգ առիւծին եւ որդիի մը հռչակումի պատմութիւնը:

Վստահ չեմ, որ ըսածներս տրամաբանական իմաստ

ունէին: Իրականութեան մէջ գիտէի, որ չունէին: Վերջապէս ես աւելի քան համոզուած էի: Գիտէի, որ տեսիլքը իրական էր, բայց ջղագրգռութեանս մէջ տակաւին զեղչեցի էգ առիծի պատկերին հետ իմ կապակցութիւնս: Շարունակեցի խօսիլ՝ փորձելով բացատրել իմ այդ հանդիպումս, բայց ինչպէս կրնայի ակնկալել, որ հասկնային եթէ ես ինքս շուարած էի: Իմ շփոթս կ'արտացոլար անոնց մտահոգ երեսներուն վրայ: Անդրադառնալով, որ անելի մը հանդիպած էի՝ կտրուկ կերպով կանգ առի:

Յետոյ տիրեց երկար, տարօրինակ լռութիւն մը, որմէ ետք աւետարանիչը կասկածանքով ինծի նայելով, հարցուց. «Երբ է ծննդաբերութեան թուականդ»:

«Հոկտեմբեր 10», պատասխանեցի ամչնալով, մխիթարութիւն զգալով վերջապէս իմաստ ունեցող բան մը ըսած ըլլալովս:

Ետեւ կոթնելով, ան իր գլուխը շարժեց եւ ինքնավստահօրէն ըսաւ. «Ոչ, ոչ, *կարելիութիւն* չկայ, որ դուն առիծ մը ըլլաս մինչեւ այն ատեն»:

Կ'ուզէի գոռալ. «Համաձայն եմ», բայց ծիծաղելի ըլլալու հաւանականութիւնը նկատի ունենալով, պարզապէս գլուխովս հաւանութեան նշան տուի: Մէկ կողմէ որոշ թեթեւութիւն կը զգայի, բայց միւս կողմէ քիչ մը նեղացած էի, վստահաբար քիչ մը կ'ամչնայի եւ հաւանաբար նաեւ անարգուած կը զգայի:

Ինչ ըսել կ'ուզէր, թէ՛ չէի կրնար առիծ մը ըլլալ մինչեւ այն ատեն: Տակաւին գարուն էր եւ Հոկտեմբերը հինգ ամիս յետոյ էր: Վերջապէս զորքան ժամանակ պիտի առնէր առիծի փոխակերպուիլը: Ինչո՞ւ բաժնեկցեցայ որ տեսիլքս... Պէտք էր սպասէի մինչեւ որ ստոյգ գիտնայի, թէ տղայ զաւակ պիտի ունենայի:

Ան զգաց իմ շփոթս եւ բացատրեց. «Տակաւին շատ խնդիրներ ունիս, որոնց վրայ Աստուած պէտք է աշխատի... Ազատագրուած չես ըլլար մինչեւ Հոկտեմբեր»:

Ահա՛, հրամանեցէք... Նոյնիսկ որ չսիրեցի այդ կնոջ չափազանց անկեղծութիւնը, համաձայն էի անոր հաստատումին: Կամաց-կամաց խօսակցութիւնը վերադարձաւ իր նախկին բնական կշռոյթին, մինչ ես բերանս գոցեցի եւ արտօնեցի, որ միտքերս դէպի ներս ընթանան: Ան

պարզապէս ըսաւ այն ինչ որ բացայայտօրէն տեսած էր իմ մէջս: Ես կը տանջուէի կասկածով եւ անապահովութեամբ շատ մը մակարդակներու վրայ: Նոյնիսկ ամուսինս՝ Ճոնը, շարունակ կ'ըսէր ինծի. «Դժուար պէտք է ըլլայ քու միտքիդ մէջ ապրիլը, Լիսա, այնքան որ մտահոգութիւններ եւ վախեր ունիս միտքդ խճողող»: Ան ճիշդ էր: Եւ հետզհետէ աւելի կը դժուարանար կացութիւնս: Ձանձրացած էի երկար ժամանակ պահանջող վերականգնումի ծրագիր մը ըլլալէն:

ԱՅԼԵՒՍ ԶԿԱՆ ՊԱՏՐՈՒԱԿՆԵՐ

Տարիներ պատրուակներ կու տայի ինծի համար: Ես քաղցկեղը վերապրած մէկն էի եւ տան տիկին մը՝ անկայուն ընտանեկան անցեալով մը, որ պարզապէս կ'ուզէր ողջ եւ ողջամիտ մնալ (կամ չխենթանալ) իր նախադարոցական տարիքի զաւակները մեծցնելու ատեն: Հաւանակամն էր, որ Աստուծոյ միտքին մէջ ես ատկէ աւելին ընելու համար էի: Արդե՞՞ծք հզօր եւ որոշ չափով կատաղի բան մը կը սպասէր մէջս, որպէսզի զինք արթնցնէի: Թերեւս քաջութիւնը կը վայելէր ինծի: Վերջապէս աւելի երիտասարդ տարիքիս արկածախնդիր մէկը չէի: Ժամանակ մը կար երբ իմ երագած ասպարէզներս վարձկան մարդասպանէն մինչեւ տիեզերագնացի միջեւ կը տարուբերէին:

Այո՛, կ'ուզէի վերականգնել այն զօրութեան մէկ մասը, որ կորսնցուցած էի՝ մինչ փորձած էի յարմարիլ հովիւի մը կնոջ եւ ազնիւ Քրիստոնէայ կնոջ մը տիպարներուն: Պատրաստ էի քիչ մը ընդարձակուելու եւ ոտքի ելլելու զօրութեամբ եւ գեղեցկութեամբ: Յոգնած էի այլեւս մարդոց միտքին մէջ իբրեւ տկար եւ շարունակ դժգոհութիւններ ունեցող մէկը ըլլալէն: Յոգնած էի անցեալի ցաւս վերապրելէն: Պատրաստ էի մարտահրաւէր մը ընդունելու: Կը սիրէի այն իրականութիւնը, որ ամուսինս կրակոտ էր եւ զօրաւոր, բայց յոգնած էի անոր ետեւը պահուրտելէն: Յոգնած էի անկարելորդ բաներով միտքս յոգնեցնելէն: Յոգնած էի ձեռացնելէն: Թերեւս էգ առիւծի մը տեսիլքը ճիշդ իմ պէտքս էր: Մեղմ եւ ապահով ըլլալու փոխարէն, պատրաստ էի երեւելու իբրեւ քիչ մը կատաղի եւ որոշապէս նպատակին կեդրոնացած մէկը:

Ճաշէն ետք քշելով տուն վերադարձայ՝ ինքնաշարժին դեկը պէտք եղածէն աւելի ամուր բռնած ըլլալով ձեռքերուս մէջ: Պատրաստ էի այդ էգ առիծի հոգեվիճակը կամ մթնոլորտը (վայս) փորձելու՝ Հոնտա Սիվիքիս յարաբերական ապահով միջավայրին մէջ: Ինքնաշարժիս պատուհանները վար իջեցուցի եւ բացի ժամանակակից Քրիստոնէական նորագոյն երգերու շարք մը՝ արտօնելով, որ հովը եւ ո՛չ ինքնաշարժի զովացուցիչ սարքը (*էր քոնտրոլընինկ*) շարժէր «բաշ»ս: Քիչ մը անհերթեթ կը թուին այդ բոլորը հիմա (յատկապէս, որ էգ առիծները բաշ չեն ունենար իրենց գլխուն շուրջ): Կատուի աչքերու ձեւով Ռէյ-Պան ակնոցներուս մէջէն տեսայ իմ գանգուր, թել-թել ոսկեգոյնով խառնուած (*հայլայթ*) մազս ինքնաշարժիս կողմի հայելիին մէջ... *Մէկ վայրկեան, արդեօք ապրոնք վայրի էգ առիծի ոսկեգոյն մազերն էին, զորս կը տեսնէի խուրցերուս մէջ:*

Չէի կրնար պատրաստ ըլլալ մինչեւ Հոկտեմբեր: Հահ: Ես ձեզի ցոյց կու տամ: Ես առիծ մըն եմ:

Ձեւով մը այդ ճաշի հանդիպումին ընթացքին ստեղծուած այդ անհանգիստ կացութիւնը, ընկերուհիիս բացէ ի բաց ըրած գնահատումը եւ շարք մը ուրիշ անկապ դէպքեր բոլորը միանալով օգնեցին, որ հետաքրքրական փոխակերպում մը սկսի իմ մէջս: Կարծես ձեռնոց մը գետին նետուած էր եւ մարտահրաւեր մը արձակուած:

Որդիիս՝ Արտըն Քրիսթօֆըրի ծնունդով (անոր անունը կը նշանակէ՝ կրակոտ, վճռական, օծեայ), մէջս բան մը փոխուեցաւ: Հակառակ անոր որ մէկ զաւակ ես կը նշանակէր մայրական գործերու յաւելում, ես դարձայ նպատակին կեդրոնացած դուստր մը: Գիտէ՞ք, ուրիշ մայրերու նման, իմ Աստուծոյ հետ կապուած անձս սեղմումի մէջ էր: Գրեթէ ընկղմած էի առօրեայ կեանքիս մէջ: Այնքան բազմազբաղ էի շարունակ ընդարձակուող եւ հետզհետէ աւելի պահանջկոտ դարձող ընելիքներու ցանկովս, որ մոռցած էի ո՛վ ըլլալս: Ինքզինքիս վրայ մեծ կասկած ունէի: Կեանքս պզտիկ էր, ինքն իր վրայ կեդրոնացած, մեկուսացած, մանրուկ, ապահով եւ անազդու: Կը յիշէի անունս, որով հետ ամուսնացած ըլլալս, եւ որոնք էին զաւակներս: Բայց առօրեայ գործերս եւ որոնց համար

Պիտի Արթնցնես Էգ Առիծ մը

պատասխանատու ըլլալու գիտակցութիւնս շուքի մէջ ձգած էին Աստուծոյ դուստրը ըլլալու գիտակցութիւնս:

Երբ կանգ առի, Աստուած սկսաւ զօրութիւն փսփսալ ինծի եւ ուրիշ անունով մը կանչել զիս: Ուրիշ ամէն մարդու համար ես ունէի անուն մը, որ կապուած էր գործի նկարագրութեան մը: Ես մայր էի զաւակներուս, կին՝ ամուսինիս, հովիւի կին՝ եկեղեցւոյ համայնքին, բայց Ամենաբարձր Աստուծոյ համար ես պարզապէս *դուստր* էի: Մինչ կեդրոնացայ միայն իրը ըլլալու վրայ եւ ասոր ամբողջ իմաստին, կեանք եւ զօրութիւն հոսեցան օրերուս մէջ, եւ հանգիստը տիրեց ներքին անձիս մէջ: Սիրտս լայնցաւ:

Արտընի ծնունդէն ետք, սկսայ դուրս գալ իմ անապահովութիւններուս, վախերուս, հանգիստի գօտիիս եւ ձախողութիւններուս շուքէն, եւ սկսայ ձեռք երկարել ուրիշներու: Գրեցի առաջին գիրքս՝ *Հակակշիռէ Դուրս Եմ եւ Կը Սիրեմ Այդպէս Ըլլալ* («Աութ աֆ Քոնթրոլ անսր Լաւինկ իթ»), մինչ կաթ կու տայի Արտընին: Այդ գիրքը գրելը ուրիշ աշխարհ մը բացաւ իմ առջեւ: Յանկարծ սկսայ տեղեր հրաւիրուիլ մեր երկրին չորս կողմը եւ խօսիլ կիներու, որոնք ծարաւը ունէին ապրելու իրենց ճիշդ անձին հարազատ կերպով: Առ ի պատասխան անոնց ցաւին եւ ծարաւին ինչպէս նաեւ կիներու միջեւ առողջ յարաբերութիւններ մշակելու բացայայտ պետքին, ուրիշ գիրքեր ալ գրեցի:

Ժամանակ անցաւ, փոխադրուեցանք արեւոտ, տաք եւ խոնաւ Ֆլորիտայի մեր տունէն դէպի ուրիշ տուն մը արեւոտ, պաղ եւ չոր Քոլորատոյի մէջ: Քոլորատո մեր փոխադրուիլը մեր ընտանիքը աւելի տունէն ներս եւ ճաշի սեղանին շուրջ ամփոփեց: Ատիկա նաեւ օգնեց մեզի, որ յաջողութեամբ անցնինք անցումային հանգրուաններէ: Յաջորդող տասնամեակին ընթացքին շատ քիչ անգամներ (նոյնիսկ նշուելու արժանի չըլլալու չափ) ես մատնանշուեցայ իբրեւ առիծ կամ կոչուեցայ այդ անունով: Ես պարզապէս կը ժպտայի՝ գոհունակ ըլլալով, որ այլեւս վախի մէջ եղող, երկչոտ, տնային կատու մը չէի: Կ'ենթադրէի, որ առիծի պատմութիւնը արդէն վերջ գտած էր եւ անձնական փոխակերպումս՝ գրեթէ ւարտած:

Բայց կը սխալէի:

ՔՈՒ ՄԱՍԻԴ ՉԷ, ԼԻՍԱ

2007-ի աշնան էգ առիձը նորէն այցելեց ինձի: Նոր Չելանտայի մէջ կազմակերպուած էր գեղեցիկ խորհրդաժողով մը, որուն շարք մը կին պատգամաբերներէն մէկը ես էի: Այնքան մեծ էր թիւը մասնակցողներուն, որ հիրընկալող եկեղեցին ստիպուած եղաւ ետեւ-ետեւի երկու խորհրդաժողովներ ընելու, որպէսզի բոլոր կիները կրնային ներկայ ըլլալ:

Առաջին խորհրդաժողովը տեղի ունեցաւ եկեղեցիին մէջ, եւ երկրորդը՝ Օքլանտ քաղաքի մէկ մարզադաշտին մէջ: Ասարտեցինք առաջին խորհրդաժողովը եւ գացինք մարզադաշտ՝ երկրորդին համար: Ծառայութեան պահերը սկսած էին: Ծառայողները կարող, գթասիրտ, հաւատարիմ ծառաներ էին Խօսքի: Բայց պատճառով մը հոգիիս մէջ անհանգիստ էի յետմիջօրէի դադարի ատեն: Այնպէս չէր, որ պատգամս փոխանցելու համար պատրաստուելու ճնշումը կը զգայի. պիտի խօսէի այն ինչ որ խօսած էի առաջին խորհրդաժողովին ընթացքին: Բայց տակաւին անհրաժեշտ զգացի աղօթել նախքան իմ պահս: Կարծես ընդդիմութիւն մը կար: Գիտէի, որ ներկաներէն չէր, որովհետեւ անոնք ընտրած էին հոն ըլլալ: Ոչ ալ միւս պատգամաբերներէն կամ հիրընկալող եկեղեցիէն: Բոլորս մէկ սիրտ էինք, եւ եկած էին պատրաստ պաշտամունք ընելու, քարոզելու եւ կիները քաջալերելու: Ուրիշ բան մը կար: Թերեւս Աստուած կը փորձէր ուշադրութիւնս գրաւել: Պէտքը զգացի առանձնանալու եւ փորձել հասկնալու, թէ ինչ էր հարցը: Ուստի գացի պանդոկ, որ Օքլանտի նաահանգիստին կը նայէր:

Սենեակիս մէջ առջեւ-ետեւ կը քալէի, թելերս պարզած դէպի նաահանգիստը, աղօթելով Աստուծմէ ուղղութիւն եւ ներըմբռնում ստանալու համար, եւ *այ.Փօլի*ս վրայ մտիկ կ'ընէի «Աղաղակէ՛ Աստուծոյ՝ յաղթանակի ձայնով» երգը: Սիրտիս մէջ ճիշդ կեցուածք ունենալու համար, սկսայ շնորհակալութիւն յայտնել Աստուծոյ այլազան բաներու համար, որ կ'ընէր կեանքիս մէջ: Նոր վերջացուցած էի *Սնուցանել* վերնագիրով գիրքս եւ սկսայ շնորհակալութիւն յայտնել Աստուծոյ, որ գրելու եւ խմբագրելու գործընթացները

Պիտի Արթնցնես Էգ Առիծ մը

աւարտած էին: Ինծի համար գիրք մը գրելը ծննդաբերութեան պէս է, ուստի հետեւեալ ձեռով աղօթեցի. *Շնորհակալ եմ, Աստուած: Աւարտեցի: Փառք տուի իրեն եւ յետոյ ըսի. Մօտիկ ապագային չեմ ուզեր ուրիշ որեւէ բան գրել:*

Յանկարծ զգացի, որ Աստուած կը խօսի հոգիս մէջ: *Կը ցաւիմ, որ այդպէս կը զգաս... որովհետեւ պէտք ունիմ, որ նորէն գրես:*

Ինչ: Աստուած ինծի պէտք ունի:

Ան շարունակեց: *Ես ռազմավարութիւններ կ'արձակեմ երկինքէն: Անոնք պիտի գտնուին իմ Խօսքիս մէջ: Դուն այդ բոլոր ռազմավարութիւնները պիտի չունենաս, բայց անոնցմէ մաս մը պիտի ունենաս: Պէտք է գրես եւ արձանագրես այն ինչ որ կը խօսիմ քեզի, որպէսզի երբ դուստրերս հաւաքուին, ամբողջական պատկեր մը ըլլայ: Եթէ դուն քու բաժինդ չբերես, պատկերը ամբողջական պիտի չըլլայ:*

Յանկարծ էգ առիծը նորէն դիմացս էր:

Մինչ կը նայէի անոր՝ իր ամբողջ զօրութեանը եւ կատաղի գեղեցկութեանը մէջ, լսեցի Ձայնը կ'ըսէ. *Ես ըսի, որ որդիիդ ծնունդով էգ առիծ մը պիտի արթնցնես: Ես չըսի, որ դուն ես այդ առիծը:*

Անմիջապէս հասկցայ, թէ ի՞նչ անհամանափակ, անմիտ եւ մարդկային էր իմ տեսակէտս: Ձայնը շարունակեց. *Յիսուս Յուդայի Առիծն է, եւ ժամանակն է, որ իր հարսը արթնցնէ էգ առիծ մը: Սերտէ՛ էգ առիծի մը յարկանիշները եւ գործելակերպը:*

Ապա լսեցի առաջին ռազմավարութիւնը.

Էգ առիծները միասնաբար որսի կ'երթան:

Ապշեցայ: Նոյնիսկ վստահ չէի, որ լսածներս աստուածաշնչական էին: Ինչ կրնան նշանակել այդ բոլորը: Կիները նոր կը սկսէին վարժուիլ այն գաղափարին, թէ զօրութիւն կայ իգականութեան մէջ եւ արժէք՝ սնուցանելու իրենց կարողութեան մէջ: Եւ հիմա Աստուած ինծի կ'ըսէ, որ զանոնք առիծներ կոչեմ: Ինչպէս կը յարմարի ատիկա առաջինին:

Ես ինծի հարց տուի. *Կրնամ ըլլալ, որ Աստուած կ'ուզէ կարաղի եւ վայրի բան մը արթնցնել իր դուստրերուն մէջ:*

Թիւերու Գիրքի 23-րդ գլուխը առջեւ եկաւ անգամ մը եւս, եւ ատիկա տեսայ իբրեւ կոչ մը Քրիստոնեայ կիներուն, որ ոտքի ելլեն: Այդ պահուն որոշեցի սերտել էգ առիծները, եւ փնտռել անոնց եւ Աստուծոյ դուստրերուն միջեւ զուգահեռները: Վերջին երկու տարին անցուցած եմ էգ առիծները ուսումնասիրելով, դիտելով եւ անոնց մասին գրելով: Սկիզբը մտածեցի կիներու եւ էգ առիծներու միջեւ կապեր գտնել միայն գրական մակարդակի վրայ, առանց բաժնեկցելու Աստուծոյ ինծի տուած տեսիլքը: Բայց ժամանակի ընթացքին անդրադարձայ, որ այդ տեսիլքը միայն ինծի մնալու համար չէր: Ինծի այդ էգ առիծի տեսարանը ցոյց չտրուեցաւ որովհետեւ ես յատուկ շնորհք գտած էի կամ յատուկ էի: Ոչ ալ այդ փորձառութիւնը ունեցայ քանի որ ապագայի համար մեծ տեսիլք ունեցող մէկն էի: Ինծի այդ տեսարանը ցոյց տրուեցաւ, որովհետեւ Աստուած գիտէր, որ օր մը ձայն ունեցող մէկը պիտի ըլլայի:

Կրկին եւ կրկին մինչ արտասանած եմ՝ «Դուն էգ առիծ մը պիտի արթնցնես» բառերը, բառացիօրէն տեսած եմ անոնց ունեցած ազդեցութիւնը կիներու վրայ: Երբեմն կը պատասխանեն լուռ արցունքներով՝ մինչ իրենց մէջ բան մը կը ջրուի: Ուրիշ անգամներ խորունկ շունչ կ'առնեն՝ կարծես իրենց շունչին հետ ներս առնելով այդ յայտնութիւնը եւ անդրադառնալով, որ հարց չէ գեղեցիկ եւ կատաղի ըլլալը: Կը հաւատամ, որ արձագանգները շատ դրական եղած են, որովհետեւ ճիշդ ինչպէս գառնուկ մը կայ պահուած մեր ներսը, նաեւ կայ էգ առիծ մը Աստուծոյ իւրաքանչիւր դստեր մէջ: Եւ ժամանակն է, որ ան արթննայ:

Երբ միտքս կու գայ էգ առիծ մը, ժպիտ մը կը գծուի երեսիս վրայ: Ետեւ կը տանիմ ուսերս եւ քիչ մը ւելի ուղիղ կը կենամ: Որեւէ ուրիշ արարածէ ւելի էգ առիծը զիս հպարտ կը դարձնէ իզական սեռին պատկանելուս համար: Կասկած չկայ անոր զօրաւոր ըլլալուն մասին: Նաեւ կը պատկերացնեմ, որ չկայ արարած մը, որ տղամարդ մը ւելի հպարտ կը դարձնէ արու ըլլալուն համար քան առիծը: Առիծը անտառի թագաւորն է, եւ կասկած չկայ թագուհիին ղվ ըլլալուն շուրջ:

ԴԻՏԷ ԵՒ ՍՈՐՎԷ

Ասիկա առաջին անգամը չէ, որ Աստուած մեզի կը մատնանշէ ստեղծագործութեան պարզութիւնը՝ մեր տեսակէտը վերականգնելու համար: Յիսուս կը քաջալերէ մեզ, որ նայինք ծաղիկներուն եւ անոնցմէ սորվինք, թէ Աստուած պիտի հազցնէ մեզ եւ հոգ տանի մեզի (տե՛ս Մատթէոսի 6.28: Դուկասի 12.27): Նոյնպէս երկինքը Աստուծոյ փառքը կը պատմէ եւ անոր արդարութիւնը պիտի հոչակէ (տե՛ս Սաղմոսներու Սղ 19.1, 50.6):

Երկինքը կը հոչակէ անոր արդարութիւնը,
Եւ բոլոր ժողովուրդները կը տեսնեն անոր փառքը:
(Սաղմոսներու 97.6)

Վայրի, կատաղի գեղեցկութիւնը ստեղծագործութեան պատուհան մըն է, որ մեզի գաղափար մը կու տայ այն Աստուծոյն մասին, որ ստեղծեց մեզ: Պէտք է լայն բանանք այդ պատուհանը եւ արտօնենք, որ Աստուծոյ բացարձակ եւ անսահման գեղեցկութիւնը երկնային ահ մը արթնցնէ մեր մէջ: Երբ մեր աչքերը կը բանանք ստեղծագործութեան սքանչելիութեան, անիկա մեր մէջ Աստուծոյ հանդէպ իղձ կ'արթնցնէ: Մեր հոգին կ'ընդառաջէ այն բանին, որ կը տեսնէ: Ստեղծագործութիւնը կը հոչակէ. «Աւելին կայ: Աւելի քան ինչ որ կը տեսնես: Աւելի քան ինչ որ կը լսես: Աւելի քան սոսկ մարդուն մահկանացու ըլլալը: Կայ Յաւիտենական Աստուածը, որ նստած է բարձրերը»:

Յիսուս՝ մեր Քրիստոսը, եկաւ իբրեւ Գառնուկը, որ մորթուած էր նախքան երկրի հիմնադրութիւնը, բայց Յայտնութեան Գիրքը նաեւ զինք կը յայտնաբերէ իբրեւ Առիւծ մը:

Իսկ երէցներէն մէկը ըսաւ ինծի. «Մի՛ լար. ահա՛ *Յուդայի քոհմէն եղող Առիւծը*, Դաւիթի Արմատը, յաղթեց՝ որպէսզի բանայ այդ գիրքը եւ քակէ ատոր եօթը կնիքները»:
(Յայտնութիւնը 5.5, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Ան թէ՛ մեր Առիւծն է եւ թէ՛ մեր Գառնուկը: Արդեօք այդ երկու պատկերներէն աւելի հակասական երկու պատկեր

կրնայ ըլլայ: Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակը կ'ըսէ, թէ այդ Յուդայի Առիծը «կրնայ պատռել եօթը կնիքները» [բառացի թարգմանութիւն- Թարգմանիչ]: Յովհաննէս՝ Յայտնութեան Գիրքի հեղինակը, լացաւ, որովհետեւ երբ ամբողջ երկինքը, երկիրը եւ նոյնիսկ ենթաշխարհը փնտռեցին, չգտնուեցաւ մէկը, որ արժանի էր պատռել-բանալու եօթը կնիքները եւ սկսիլ տալու աստիճանական յայտնութիւնը: Ապա Յովհաննէսի մօտիկ եղող երէցը քաջալերեց զինք, որ *նայի*, որովհետեւ կար յայտնութիւն մը Առիծի եւ Գառնուկի: Միայն Ինք արժանի է եւ սկիզբ կու տայ կնիքներ բանալու այդ գործին:

Պատռելը վայրագ արձակում մըն է: Անմիջապէս միտքս կու գայ տաճարի այն հաստ վարագոյրը, որ պատռուեցաւ (տես Մարկոսի 15.38): Պատռուիլը սկսաւ ամէնէն վերէն եւ իջաւ մինչեւ ամէնէն վարը: Ես կը սիրեմ ատիկա, որովհետեւ մեր Աստուածը միշտ կը պատռուէ այն ինչ որ արգելք կ'ըլլայ մեզի կամ կը բաժնէ մեզ իրմէ՝ իր ամբողջէն: Յովհաննէսի Յայտնութեան հրաշալիօրէն խորհրդաւոր գիրքին մէջ երկինքի մէջ կնիքներ բանալու գործը շարժումի մէջ կը դնէ երկրի վրայ կատարուելիքները:

Հիմա ալ կը զգամ, որ Աստուած կը փափաքի քակել եւ յայտնել ինքն իրմէ բաժին մը մեր բոլորին եւ մեր բոլորին մէջ: Եթէ այդպէս չըլլար, ինչո՞ւ ան այդպիսի *տրամաթիք* վերջաւորութիւն մը պիտի գրէր մեր երկրի պատմութեան համար՝ եթէ անիկա մեզմէ իւրաքանչիւրիս համար յայտնութիւն մը պիտի չպարունակէր: Կը հաւատամ, որ մենք դարձեալ հրաւիրուած ենք, որ չլուսահատինք կամ չլանք, այլ՝ մեր աչքերը վերցնենք, նայինք եւ իրապէս տեսնենք:

Մեր երկիրը կ'արձագանգէ երկինքի յայտնութիւնները եւ իմաստութիւնը:

Ո՛րքան հիանալի է, որ մեր երկնաւոր Հայրը իր ստեղծագործութիւնը այնպէս ձեւակերպեց, որ մեր սիրտերը բանայ: Իւրաքանչիւր բոյս, կենդանի, տարր եւ բնատեսարան

Բնութիւնը գաղտնաբար կը համաձայնի հոգիին հետ՝ ազատագրելու համար մեզ:

– Ռալֆ Ուալթո Էմըրսըն

Պիտի Արթնցնես Էգ Առիւծ մը

Կ'ըսէ. «Ոտքի՛ ել եւ եղի՛ր այն ամէնը, որ ստեղծուած ես ըլլալու»: Ըստ Յորի, բնութիւնը կարողականութիւնը ունի մեզի սորվեցնելու:

Ինք մեզ երկրի անասուններէն աւելի գիտակից կ'ընէ,
Ու երկինքի թռչուններէն աւելի իմաստուն: (Յորի 35.11)

Աստուծոյ սիրոյ հրաշքը եւ այն ընդարձակ ձեւերը, որ ան կ'որդեգրէ իր իմաստութիւնը հաղորդելու համար մեզի մեր ըմբռնելու կարողութենէն վեր են: Բայց պէտք չէ զարմանանք ատկէ: Ամէն պարագայի Ան Ստեղծիչն է, որ կը հռչակէ.

Որովհետեւ իմս են անտառի բոլոր գազանները,
Հազարաւոր լեռներուն անասունները:
Ես կը ճանչնամ լեռներուն բոլոր թռչունները,
Ու դաշտի գազանները իմ քովս են:
Եթէ անօթենամ՝ քեզի պիտի չըսեմ.
Քանի իմս է երկրագունդը, նաեւ անոր լիութիւնը:
(Սաղմոսներու 50.10-12)

Մենք մեզ կը մեկուսացնենք երկրի արարածներէն, բայց Աստուած զանոնք գիտէ անունով: Արդե՞ծք կը կարծենք, որ ան չի հոգար իր ստեղծագործութեան համար: Ան ստեղծագործութիւնը ինքն իրեն համար ըրաւ: Բնութիւնը շատ բան ունի յայտնելիք իր Ստեղծիչին մասին, միայն եթէ մտիկ ընենք անոր: Առակներու Գիրքին մէջ մեզի կը թելադրուի. «Ո՛վ ծոյլ, գնա՛ մրջիւնին, տես անոր ճամբաները եւ իմաստուն եղիր» (6.6):

Կը հաւատամ, որ Աստուած մեզմէ կ'ուզէ, որ նոյնը ընենք այսօր: Ան կ'ուզէ, որ էգ առիւծին նայինք եւ սորվինք: Ան կը մղէ մեզ, ըսելով. *Դուստրոս, նայ՛ էգ առիւծին: Մօտէն դիպի՛ անոր: Անիկա թող արթնցնէ քու չընտելացուած բնութիւնդ, քու կապաղի գեղեցկութիւնդ, եւ քու անսասն զօրութիւնդ, որպէսզի ոտքի՛ ելլես եւ ըլլաս այն քաջ կինը, որ կանչած եմ քեզ, որ ըլլաս:*

Էգ առիւծը ինչպէս զօրութիւն եւ քաջութիւն կը յայտնաբերէ կիներուն մէջ: Եւ կիները ինչպէս կրնան ոտքի ելլել էգ

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

առիծին նման: Իւրաքանչիւրս պիտի ունենայ իրեն յատուկ պատասխան մը, բայց էգ առիծի յատկանիշներուն մասին այս ակնարկը կրնայ քեզի ներըմբռնում մը տալ: Յաջորդող գլուխներուն մէջ պիտի տեսնենք շարք մը պատճառներ ափրիկեան արեւին տակ իր հանգիստ վիճակէն էգ առիծի մը ոտքի ելլելուն.

Ան ոտքի կ'ելլէ՝ ոյժ հաւաքելու համար:

Ան ոտքի կ'ելլէ՝ ողջունելու եւ մաքրելու համար ուրիշները:

Ան ոտքի կ'ելլէ՝ որսալու համար:

Ան ոտքի կ'ելլէ՝ ուրիշ էգ առիծներու հետ ըլլալու համար:

Ան ոտքի կ'ելլէ՝ կորիւնները ապահով վայր փոխադրելու համար:

Ան ոտքի կ'ելլէ՝ դիմաւորելու համար թշնամիները, որոնք վտանգ կը սպառնան իրենց խումբին:

Ան ոտքի կ'ելլէ՝ իր թագաւորին հետ քալելու համար:

Ես սկսած եմ էգ առիծը տեսնել իբրեւ օրինակ մը թէ՛ ինչպէս Ամենաբարձրի ամէն մէկ դուստրը կրնայ ճանչնալ եւ ընդունիլ իր զօրութիւնը, քաջութիւն զարգացնել եւ փոփոխութիւն բերել իր աշխարհին մէջ: Էգ առիծ մը կայ պահուած քու մէջդ: Իմ աղօթքս է, որ երբ աւարտես այս գիրքի ընթերցումը, ունենաս քու պատասխանդ, եւ այդ պատասխանովդ կատաղի, գեղեցիկ եւ վայրի բան մը արթննայ քու մէջդ:

Չտեսնուած Ոյժ մը

Եթէ երբեք ըլլայ ժամանակ մը երբ աշխարհի կիները իրարու քով գան միմիայն եւ պարզօրէն մարդկութեան օգուտին համար, ասիկա պիտի արտադրէ ոյժ մը, որ աշխարհը երբեք չէ տեսած:

ՄԱԹՈՒ ԱՐՆՈՒՏ, 19-ԲԴ ԴԱՐՈՒ
ԲՐԻՏԱՆԱՅԻ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԵՒ
ՓԻԼԻՍՈՓԱՅ



Ինչնայ ըլլալ, որ մենք արդէն արթնցած ենք: Ես պատիւը ունեցած եմ տեսնելու այդ հաւաքուած ոյժի նախապատկերը: Հեռաւոր Աւստրալիոյ մէջ, Եւրոպայի մէջ եւ նոյնիսկ իմ երկրիս՝ Միացեալ Նահանգներուն մէջ:

Ես տեսած եմ առաջին պտուղները անոր, որ անկասկած պիտի փաստէ ըլլալ ամբողջութեամբ կազմակերպուած շարժում մը: Մէկ դուստրի հոգիին արծարծումին շնորհիւ այդ հաւաքը շուտով կ'աճի ըլլալու կին մը: Այդ բանաստեղծ եւ փիլիսոփային բառերը խօսեցանքու մէջդ գտնուող բայց տակաւին չիրագործուած բանի մը: Սակայն երբ առաջին անգամ կարդացի այդ խօսքը, գրաւուեցայ եւ բառացիօրէն շունչս կեցաւ:

Կը պատկերացնեմ, որ *իմ* ֆիզիքական վիճակս հակազդեցութիւն մըն էր *մեր* չիրագործուած կարելիութիւններուն հսկայութեան դիմաց: Այս գիրքի վերնագիրէն արդէն գիտէք, որ ես կը փափաքիմ վայրի, իմաստուն եւ հրաշալի բան մը արթնցնել քու մէջդ: Կը

քաջալերեմ, որ մտածես բարի գործի համար կիներու իրարու քով գալու գաղափարին մասին: Անգամ մը եւս կարդա՛ վերի մէջքերումը կամ խօսքը եթէ պէտք է, որովհետեւ անոր մէջ գտնուող յոյսը իրապէս մէկ ականարկէ աւելիին արժանի է. այդ գաղափարը արժանի է քու ամբողջական ուշադրութեանդ:

Համարձակէ՛ դուն քեզի հարցնել, թէ կրնա՞յ ըլլալ, որ Մաթիոս Արնուտի բառերը տեսութենէ մը, քաղաքական հռետորաբանութենէ մը կամ յուսադրող ենթադրութենէ մը աւելին են: Կրնա՞յ ըլլալ, որ անոր այդ ներըմբռնումը նախախնամական է, քաջալերական կամ նոյնիսկ մարգարէական: Արդե՞ծք ան իր ժամանակէն աւելի հեռու նայեցաւ եւ տեսաւ մեր ժամանակի դուստրերը եւ կը քաջալերէ մեզ, որ հաւաքուինք ներկայիս: Արդե՞ծք ան գիտէր, որ այդ հաւաքուիլը տեղի պիտի չունենար եւ չէր կրնար տեղի ունենալ իր ժամանակին եւ սակայն կը յուսար, որ ատիկա պիտի պատահէր մեր ժամանակին: Արդե՞ծք ան կ'անդրադառնար, թէ մեր ժամանակի կարիքը ճիշտն մեծ պիտի ըլլար: Արդե՞ծք ան քեզ եւ զիս տեսաւ այս պահին մէջ:

Կը հաւատամ, որ այդ հարցումներու ամէնէն ճշմարիտ պատասխանները կը գտնուին իւրաքանչիւր կնոջ մէջ եւ լաւագոյն ձեռով կը դրսեւորուին ոչ թէ խօսքերով, այլ՝ այն ձեռով, որով ան կ'ընտրէ ապրիլ: Կիներու միջոցաւ գոյանալիք այդ պատասխանին մէջ դեր խաղալու մեր կարողականութիւնը կը գիտցուի երկրի վրայ մեր ապրած ժամանակին ընթացքին մեր տալիք պատասխանէն կամ ունեցած կեցուածքէն: Մեր ընտրութիւնները աւելի եւս կը բացայայտուին անով, թէ՛ արդե՞ծք մեր որդիները եւ դուստրերը կը կրթենք այնպէս, որ անոնք եւս ճիշդ ընտրութիւններ կատարեն:

Չափահասներու վաղուան հարցերուն լուծումը մեծ մասով կախեալ է անկէ, թէ մեր զաւակները ինչպէս կը մեծնան այսօր:

– Մարկարէթ Միտ

Սակայն մեր ժամանակի կիները պիտի բարձրանան աւելի վեր քան ամբողջ աշխարհի մէջ մշակութային եւ կրօնական բազմաթիւ հակասական եւ սահմանափակող պատկերները եւ անոնց իբրեւ հետեւանք յառաջ եկած

Նախապաշարումները կիներու դէմ: Արտերկրի մեր քաջ քոյրերը յառաջ պիտի երթան հակառակ ընկերութեան շատ մը բաժիններու կողմէ քաջալերանքի բացակայութեան: Մենք՝ արեւմտեան աշխարհին մէջ պիտի դառնանք սնտոի շեղումներէ եւ մեր ուշադրութիւնը կեդրոնացնենք արժանի եւ ազնուական դատերու վրայ:

Աւելի վեր պիտի բարձրանանք այն հակառակութեան աղմուկէն եւ առարկութիւններէն, թէ՛ մեր բերելիք ներդրումը անհրաժեշտ չէ, Աստուծոյ ներշնչումով չէ: Պիտի ըմբռնենք լրջութիւնը եւ անմիջականութիւնը մեր ժամանակի եւ մէկ կողմ դնենք մեր վարդապետական տարբերութիւնները եւ կարծիքները՝ մեր պատերազմակիցներու շարքերուն միանալու համար: Տարիքի բացութիւնը պիտի գոցո՞ւի մինչ մենք սիրտեր եւ ձեռքեր կը միացնենք իրարու: Պիտի հասնինք հաւատքի միութեան: Այդ միացած հաւատքը ինքզինք պարզապէս պիտի ներկայացնէ իբրեւ համոզումներու շմրք մը:

Այդ միութիւնը զօրաւոր եւ կենսունակ պիտի ըլլայ: Այդ հաւատքը, զոր կը բաժնեկցինք պիտի արծարծուի՞ գործերու միջոցաւ եւ յայտնաբերէ մեզ իբրեւ տնտեսները բանի մը, որ նոյն ատեն բացայայտ է, անդիմադրելի, կատաղի եւ շօշափելի:

Մեր այդ միութիւնը պիտի տայ այն պատկերը, զոր կը համարձակինք յուսալ եւ ըլլայ կենդանի հռչակումը այն բանին, որ մենք ճշմարտապէս կը հաւատանք: Կրնայ այդ հաւատքը ինքզինք ընդարձակել՝ անձնուրաց կերպով ձեռք մեկնելով եւ տալով աշխարհին փոխանակ ներսը մնալու եւ ստանալու: Ես կ'աղօթեմ, որ այդպէս ըլլայ, որովհետեւ միայն այդ ատեն է, որ պիտի տեսնենք մեր աշխարհը ընդլայնուած եւ մարդոց կեանքերը բարեփոխուած մեր այդ ձգտումովը կամ ընդարձակումովը:

Այո, կը հասկնամ, որ ամբողջ խնդրածս եւ յուսացածս քիչ մը ձգտում է ներկային համար, բայց որեւէ տեղ պիտի չհասնինք առանց այդ ձեւով ձգտելու: Բաւարար չէ միայն նայիլ հոն, ուր ենք այսօր: Եթէ պիտի տարածուինք, պէտք է նայինք ետեւ, մեր շուրջը եւ առջեւը:

Երբ 1800-ականներուն նայինք, կը տեսնենք ժամանակ

մը երբ կիները ծայն չունէին կամ շատ քիչ ծայն ունէին: Մեր շուրջը նայելով, կ'անդրադառնանք մեր ծայնին կարեւորութեան: Առջեւ նայելով, կը գիտնանք, որ պէտք է մեր խօսքերը եւ կեանքերը կառուցանենք այնպիսի ձեւով մը, որ իմաստութեամբ շինենք ապագային:

Ժամանակն է, որ ընդլայնենք այն ձեւը, որով կը նայինք կեանքի շատ մը մարզերու եւ գործ կ'ունենանք անոնց հետ: Այդ ձգտումը կը պատահի երբ լարուածութիւն եւ պրկում կ'ըլլայ մկանի խումբի մը մէջ: Ձգտելու կարողութիւնը կրնայ արտադրել յաւելեալ դիւրաթեքութիւն եւ արգիլել անոր վնասուիլը:

Կը յուսամ, որ որոշ ձգտում կ'աւելցնես կեանքիդ մէջ՝ էգ առիծի օրինակը որդեգրելով: Կ'ուզեմ, որ ան ընդլայնէ քու անձիդ, քու իգականութեանդ, քու գեղեցկութեանդ, քու ոյժիդ, քու նպատակիդ, քու ամուսնութեանդ, քու աշխարհիդ եւ քու Աստուծոյդ նայելու քու ձեւդ: Արտօնէ, որ էգ առիծը մարտահրաւէր ուղղէ մարդոց հետ կապակցութիւններուդ եւ զարգացնէ տղամարդոց, բարեկամներու եւ ընտանիքիդ հետ յարաբերութիւններդ: Նոյնիսկ էգ առիծը գիտէ, որ պէտք է ձգտի նախքան խոյանալը կամ ցատկիլը:

Մեր առջեւ կը գտնուի լարուածութիւնը թէ՛ մեր անձնական կեանքի եւ թէ՛ աշխարհի կարիքներուն: Այդ ընդարձակ տարածքը ծածկելու համար, պէտք պիտի ունենանք տեսիլքի մը, որ երկուքն ալ կը պարփակէ:

ՀԱՆԴԱՐՏ՝ ՈՅԺԻ ՀԵՏ, ՀԱՆԳԻՍՏ՝ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Նախքան որ շարունակենք, կ'ուզեմ քննարկել հարցում մը, որ մէջս ծագեցաւ տեսիլքէն ետք: Ես ինձի հարց տուի, թէ՛ ինչո՞ւ տեսայ էգ առիծ մը հանդարտ վիճակի մէջ՝ անոր պատուանդանին դիմաց արձանագրուած ըլլալով աստուածաշնչական հատուած մը, որուն մէջ կը կարդանք դէպքի մը մասին, ուր Աստուծոյ ժողովուրդը սպառող վայրագութիւն մը կը գործէ: Ժամանակի ընթացքին ես առիթ ունեցած եմ խոկալու տեսիլքին մասին եւ այն բոլոր խորհուրդներուն, որ այդ յայտնութիւնը արթնցուցած է (եւ

տակալին կ'արթնցնէ) իմ մէջս: Ահա՛ այն կարգ մը բաները, գորս քաղած եմ:

Աստուած ինծի ցոյց չտուաւ էգ առիւծ մը՝ ակնկալելով, որ պատասխանեմ կրատրականութեամբ կամ վախով: Էգ առիւծին պատկերը մէջտեղ հանեց իմ սահմանափակ, վախկոտ դիրքս, որ հակասական էր անոր: Էգ առիւծը գործիք մըն էր, որ բացաւ աչքերս աւելի լայն տեսարանի մը եւ ընդլայնեց շարժումի տարածքս:

Ճամբորդութիւններուս ընթացքին տեսած եմ շարք մը հոյակապ արձաններ: Դանիան, Հռոմը, Լոնտոնը եւ Փարիզը ունին յուշարձաններ, որոնք յարգանքի տուրք կը մատուցանեն իրենց պատմութեան ընթացքին տեղի ունեցած ոյժի ցուցադրութեան առիթներու եւ կը տօնեն անցեալի յաղթանակներ եւ պատմական ազատագրութիւններ: Ես լուսանկարած եմ այդ արուեստի գործերը եւ հիացմունքով դիտած զանոնք՝ տեսնելով, թէ անոնց վայելչութիւնը եւ յաւերժական գեղեցկութիւնը ինչպէս տակալին կը խօսին:

Բայց իմ տեսիլքիս էգ առիւծը արձան մը չէր. ան յայտնութիւն մըն էր:

Յայտնութիւնները կը պարունակեն բացայայտումի եւ անակնկալի մասնիկներ: Էգ առիւծը վստահաբար անակնկալի բերաւ եւ բացայայտեց զիս՝ մինչ անոր առջեւ կեցած էի յղի վիճակով եւ դողդղալով իմ գիշերանոցիս մէջ: Հակառակ անոր որ ան բնաւ չշարժեցաւ, ան աւելի կենդանի էր քան ես: Անոր գեղեցկութեան եւ ոյժի լոյսին տակ, անդրադարձայ, որ ես ինչ կորսնցուցած էի: Վախի պատճառով ես կորսնցուցած էի ոյժ, կեանք եւ գեղեցկութիւն: Կորսնցուցած էի իմ ճշմարիտ ինքնութեանս գիտակցութիւնը, եւ այդ կորուստով Աստուծոյ ինծի համար ուզածներուն մեծ մասը չէր իրագործուած կեանքիս մէջ:

Միտքս կու գան իսրայէլացիները, թէ ինչպէս իրենք զիրենք մարախներու պէս տեսան, իսկ Քանանի բնակիչները՝ հսկաներու: Բայց Թիւերու Գիրքի 23-րդ գլուխէն գիտենք, որ Քանանի բնակիչները իսրայէլացիները տեսան իբրեւ արու առիւծ մը եւ էգ առիւծ մը, որոնք ոտքի կ'ելլեն:

Տեսակէտի եւ իրականութեան միջեւ այդ հակասութիւնը

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

Կը տեսնենք երբ մենք մեր առիծ քոյրերը կը բաղդատենք մենք մեզի հետ: Կրնամ իրեն պէս ըլլալ: Երբեք պիտի ըլլանք կիներ, որոնք հանդարտ են իրենց ոյժին հետ եւ հանգիստ՝ իրենց իշխանութեան: Արդեօք մեր գեղեցկութիւնը հանգիստ կերպով պիտի հագնինք:

Պէտք է որդեգրենք հանգիստի դադարներ առնելով ոյժ գործածելու պատկերը էգ առիծի:

Երբ ժամանակը հասաւ, էգ առիծը ոտքի ելաւ: Ժամանակն է, որ դուն գիտնաս, թէ ո՛վ ես: Ժամանակն է, որ դուն քեզ արծարծես, գրգռես, դրդես եւ արթնցնես:

Ես յայտնաբերած եմ, որ *ոյժի հետ հանդարտ եւ իշխանութեան հետ հանգիստ* ըլլալու այդ վիճակը շատ ազդու եւ գեղեցիկ պատկեր մըն է բարեպաշտ կնոջ: Սիրելիներ, ես ձեզի արտօնութիւն կու տամ, որ հանդարտ ըլլաք ձեր ոյժին հետ եւ հանգիստ՝ ձեր իշխանութեան հետ:

Ընդհանրապէս *ոյժի հետ հանդարտ ըլլալու եւ իշխանութեան հետ հանգիստ ըլլալու* զուգակցութիւնները ժամանակի ընթացքին կու գան: Անոնք կը միաձուլուին մինչ կը սկսիս անդրադառնալ, որ զօրութիւն մը կայ, որ կը բնակի մէջդ: Ճիշդ ինչպէս արդարութիւնը վիճակ մըն է, որուն մէջ կը հանգչինք, կայ մարդ մը, ուր ոյժը ապաստանարան մըն է եւս: Հանգիստը կը յայտնաբերենք երբ կը դադրինք ճիգ թափելէ:

Դուք դարձի գալով

եւ հանգստանալով պիտի փրկուիք:

Ձեր զօրութիւնը հանդարտութեան

ու վստահութեան մէջ պիտի կայանայ: (Եսայիի

30.15, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Ահա՛: Ուրիշ աւելի լաւ ձեռով չէի պատկերացնել ըսել: Հանդարտի՛ր, վստահէ՛ ինձի եւ զօրութիւնդ պիտի գայ: Երբ կը դադրինք պայքարելէ մեր անձնական կարողութեամբ, մեր ճշմարիտ զօրութիւնը կը յայտնուի: Աստուած զօրութիւն չի պահեր քեզմէ. ան կը շնորհէ գայն:

Մեր բարեկամ էգ առիծի օրինակին հակառակ, ես տեսած եմ մեծ թիւով կիներ, որոնք կը սարսափին իրենց ոյժէն: Անոնք կը նահանջեն վախով եթէ գաղափարներ, հարցումներ

Չտեսնուած Ոյժ մը

կամ բուռն փափաքներ անկոչ կերպով արթննան իրենց մէջ: Ոյժէն պէտք չէ վախնանք. անիկա պէտք է ընդունինք, որդեգրենք: Մի սխալի կարծելով, որ հեզութիւնը տկարութիւն է: Անիկա կոփուած ոյժ է կամ հակակշիռի տակ եղող զօրութիւն:

Մովսէս թէ՛ հեզ եւ թէ՛ խոնարհ կոչուեցաւ, բայց ան հզօր ղեկավար մըն էր եւ ոյժ մը, որ նկատի պէտք էր առնուէր: Ես ինծի կը մտածեմ, թէ արդեօք ատիկա անոր համար էր, որ ան հանդիպած էր Անոր, որ նեցուկ կը կենար իր իրաքանչիւր խօսքին:

Բարիի եւ չարի մեկուսացուած գիտակցութիւնը ծանր կու գայ մեր մարդկային մերկութեան, որ կ'աղաչէ աստուածային պատասխան ունենալ: Աստուծմէ դուրս բարիի մարզին մէջ քալելը կը սահմանափակէ մեզ: Մեր ներկայի աշխարհի հարցերը այնքան շատ են, որ պէտք ունին անսահման պատասխաններու:

Մովսէսի նման մենք ալ պէտք ունինք Աստուծոյ բարութեան մասին յայտնութեան մը՝ հանդարտեցնելու համար մեր դողդղացող երկիրը:

Ուստի, սիրելիս, պիտի համարձակիս հաւատալ, թէ դուն կրնաս մէկ մասը ըլլալ այդ բարիի յայտնութեան եւ հետեւաբար ուրիշներու հետ հաւաքուիլ եւ ռազմավարութիւններ դնել, որպէսզի Աստուծոյ բարութիւնը տեսանելի ըլլայ մեր միջոցաւ:

ԱՌԱՔԻՆԻ ԵՒ ԿԱՐՈՂ

Ես դիտումնաւոր կերպով «բարի»ն չեմ սահմանափակած «ազնի»ի կամ նոյնիսկ «ապահով»ի մարզերուն մէջ: Անիկա ոյժ մըն է վերջ ի վերջոյ: Ես նաեւ լսած եմ, որ *առաքինութիւնը* կը նկարագրուի իբրեւ ոյժ մը:

Առաքինի կինը ղվ կրնայ գտնել.

Անոր գինը մարգարիտներէն շատ աւելի է:

Անոր ամուսինին սիրտը անոր վրայ վստահութիւն ունի,

Եւ աւարի կարօտ չ'ըլլար: (Առակներու 31.10-11)

Ամուրի կիններ, նախքան որ մտածէք, որ այս համարը ձեզ դուրս կը ձգէ, յիշեցէք, որ Յիսուս է ձեր փեսան: Յատուկ կիներու մասին չի խօսիր. բոլորիս մասին կը խօսի:

Հարցումը, որ կը ծագի այն է, թե՛ մեզի կարելի՞ է վստահիլ այդ պարտականութիւնը: Պիտի հարստացնենք մեր շուրջիններուն կեանքերը: Նոյն ատեն թէ առաքինի եւ թէ կարող պիտի ըլլանք: Կամ ան մեզ պիտի գտնէ խումբերու վերածուած. խումբ մը, որ առաքինի է եւ ուրիշ մը, որ կարող է: Անոնցմէ մէկուն դրսեւորումը միայն բաւարար չէ: Մենք պէտք ունինք պատուաւոր հաւաքը առաքինի կիներու, որոնք նաեւ կարող են: Ինչ բանի կարող պէտք է ըլլանք: Պարզապէս որեւէ բանի եւ ամէն բանի: Մենք պէտք է ըլլանք դուատրեր, որոնք կարող են ամէն բանի, որ անհրաժեշտ է:

Վերջին տասնամեակին եւ հանդիպած եմ մեծ թիւով հիանալի կիներու, որոնք կը քաջալերեն ուրիշները, որ իրագործեն այն բանը, որ կարող են: Կարիքի հետզհետէ աճող գիտակցութեան շնորհիւ կիներ դիտումնաւոր կերպով իրենց կրթական հետապնդումները կը կեդրոնացնեն յատուկ նիւթերու վրայ եւ կը զարգացնեն ձիրքեր յատուկ մարզերու մէջ, որպէսզի կարենան ազդու պատասխան տալ հարցերու:

Անոնք բաւարար չափով փայլուն են հարցումներ հարցնելու՝ խորաթափանցութեան եւ պատշաճութեան լուսաւորուած տեսակէտէ մը: Անոնք սորված են իրենց կարողութիւններուն վրայ աւելցնել անհրաժեշտ յատկանիշները, որպէսզի կարենան աճիլ եւ ըլլալ այն բոլորը, որ իրենք իրապէս են: Այդ կիները տաղանդաւոր եւ շնորհալի են, անվախ՝ բայց յարգանքով, կապի մէջ՝ բայց նաեւ ինքնամփոփ, ներկայ՝ սակայն նաեւ հեռուն հասնող, գթասիրտ՝ բայց նաեւ կատաղի, մաքուր՝ բայց ոչ միամիտ, զօրաւոր եւ մեղմ, պարզ՝ սակայն մեծապէս ռազմավարական:

Եթէ մեր ծրագիրները եւ յայտագիրները ազդու կերպով չեն թարգմանուիր եւ ազդեցութիւն չեն բերեր երկրի վրայ, ուրեմն անոնք միայն տեսութիւն են: Ծրագիրները պէտք է կենդանանան: Անոնք

Բաւարար չէ թուղթի վրայ նախագծել հսկայական ծրագիրներ: Ես պէտք է իմ գաղափարներս գրեմ երկրի վրայ:

– Էմիլի Փիրեր

Չտեսնուած Ոյժ մը

արդիւնք կու տան միայն եթէ մեր ձայնը, ձեռքերը եւ ոտքերը տանք անոնց:

Մեր աշխարհը ենթարկուած եղած է զանազան ոյժերու ազդեցութեան: Դարերու ընթացքին մեր երկիրը խոցուած է բնութեան ոյժերով, ինչպէս՝ որոտամարիկներ, ցունամիներ եւ փոթորիկներ: Երկրի պատեանը ճեղքուած է եւ անոր հիմերը՝ ցնցուած երկրաշարժներով: Անոր վրայ բանակներ հաւաքուած են՝ թէ՛ ազնուական եւ թէ՛ չարական շարժառիթներով եւ նպատակներով: Անոնք իրարու հետ բախումներ ունեցած են եւ կործանում ձգած իրենց ետին:

Հապա այն ոյժը, որ չի յոխորտար ահարկութիւն պատճառելու, սպառնալու կամ կործանելու իր զօրութեամբ... Այդ ոյժի անդամները կ'ունենան ռազմավարական եւ իրայատուկ դերեր՝ ոմանք տեսանելի, ուրիշներ անտեսանելի, բայց բոլորը արժէքաւոր: Հապա եթէ այդ ոյժը անձնուրաց է իր շարժառիթներուն մէջ եւ պարզ՝ իր նպատակակէտին մէջ: Ինչ կերպարանք եւ ձայն կրնայ ունենալ այդպիսի ոյժ մը:

Մեծն Աղեքսանդր ըսած է.

Ես չեմ վախնար առիւծներու բանակէ մը, որ
կ'առաջնորդուի ոչխարի մը կողմէ. կը վախնամ
ոչխարներու բանակէ մը, որ կ'առաջնորդուի առիւծի
մը կողմէ:

Ո՛րքան հիանալի պատկեր մըն է մեր մասին: Մենք ոչխարներու բանակ մըն ենք՝ Առիւծի մը կողմէ առաջնորդուող: Քանի որ կը հետեւինք Առիւծին, պէտք չէ պատերազմինք երկչոտ ոչխարներու պէս: Մենք հեզ ենք մեր հետեւելուն մէջ եւ կատաղի՝ մեր պատերազմելուն մէջ: Այդպիսով, մեղմը եւ կատաղին կը հանդիպին իրարու եւ հանգիստ են իրարու հետ: Եթէ սերտենք բնական ընթացքը եւ պատմութիւնը մարդկային զօրութիւններու, կրկնուող ձեւ մը կը տեսնենք հոն. իշխանութեան գլուխ գալ, ոյժի չարաշահում, իշխանութեան կորուստ եւ ներքին փլուզում:

Հապա եթէ ըլլայ ուրիշ ձեւ մը... Հապա եթէ կայ չկազմուած եւ տակաւին չարտայայտուած ոյժ մը...

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻՇՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

Ես այս տողերը կը մեքենագրեմ շատ անելի մեծ չափի գիրերով քան ինչ որ դուք պիտի կարդաք տպուած գիրքին մէջ, քանի որ ինծի համար հետզհետէ դժուար կը դառնայ տեսնել պզտիկ գիրերը եւ մօտիկը: Սակայն մեծ բաներու եւ հեռաւոր բաներու իմ տեսողութիւնս անչափելիօրէն լաւացած է:

Հեռուն կը տեսնեմ երկու հակասական պատկերներ. մեծ դժուարութիւններ եւ փառաւոր յաղթանակ: Մօտիկ եւ հեռաւոր ասիերու վրայ կը տեսնեմ խորունկ եւ խաւար ճնշում, բայց նաեւ կը տեսնեմ փառաւոր ապստամբութիւն մը: Կը տեսնեմ կոպիտ չարութեան եւ համաշխարհային անարդարութիւններու բացայայտումը եւ յաղթահարումը շատ մը ճակատներու վրայ՝ Աստուծոյ անխուսափելի լոյսին եւ անժխտելի արդարութեան հետ հանդիպումով: Կը տեսնեմ Աստուծոյ դուստրերը կը ձգտին դէպի առջեւ՝ ցատկելու պատրաստուող էգ առիւծներու նման: Այդ բոլորը կը տեսնեմ մեր ապագային մէջ: Կասկած չունիմ, որ ըսածներէս ոչ մէկը զարմացուց ձեզ: Ձեզի պէս ես ալ այդ բաները չեմ տեսներ որովհետեւ օրաթերթ կը կարդամ, այլ՝ զանոնք կը տեսնեմ, որովհետեւ ունիմ Հոգիով տեսնելու աչքեր:

Բայց ես միայն չեմ տեսներ... կը լսեմ ալ: Լսած եմ աղաղակներ հեռուէն եւ աղաղակներ մօտիկէն: Լսած եմ դժուարութիւնները անյոյսներուն՝ փակուած խաւարի բանտերու մէջ: Իրաքանչիւր օր պայքար մըն է խեղդող ճնշումի դէմ, որ կը սպառնայ լռեցնել իրենց ծայները եւ ապա անելի անդին երթալով՝ խեղդել իրենց զաւակներուն աղաղակները: Այդ յուսահատ մայրերուն միակ յոյսը այն է, որ իրենց զաւակները անելին ունենան: Երիտասարդ մայր մը աղաչեց, որ իր ուրիշ տարեկան աղջնակը առնենք, որովհետեւ այդ փոքրիկը անկողինին տակը կը պահուրտէր մինչ ինք իր ծառայութիւնները կը մատուցանէր իր յաճախորդներուն: Երախտապարտ ենք, որ *Լայֆ Աութրիչը*՝ Ճէյմզ եւ Պեթի Ռոպինսոններուն առաքելութիւնը, ազատեց այդ աղջնակը, բայց մայրը՝ որ վախցաւ հեռանալու, կը շարունակէ մնալ այդ հանրատան մէջ՝ ճգմուած յուսահատութեան տակ:

ՀՈՎԻ ԲԱՌԵՐ

Կան ժամանակներ երբ ես ալ կը ծանրաբեռնուիմ իմ լսածներովս: Ինչո՞ւ:

Աւելի դիւրին է չտեսնելը եւ չլսելը: Որովհետեւ հետեւեալը ճիշդ է, որ մարդոց մեծ մասը իրենց աչքերը եւ ականջները կը դարձնեն այդ նեղացուցիչ ձայներէն ու պատկերներէն եւ արագօրէն զանոնք կը լեցնեն զիրենք շեղող բաներով: Ճիշդ այդ պատճառով է, որ զբօսաշրջութիւնը կը բարգաւաճի սեռային մաքսանենգութեան կողքին: Տեսած եմ ինչպէս Թայլանտ այցելող օտարները կը ձեռացնէին, թէ իրենց տեսածը յաւերժական խնճոյք մըն էր: Ամերիկացի գործարար մը, որուն հետ խօսեցայ այնպէս կը վարուէր, որ կարծես իր անառակութիւնը կը խթանէր Թայլանտի տնտեսութիւնը:

Ան, որ լսելու ականջներ ունի պէտք է մտիկ ընէ եւ հասկնայ: (Մատթէոսի 11.15, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Նիւ Լիվինկ Թրանսլէյշըն* տարբերակէն)

Այդ կոչը վերջ չգտաւ երբ Յիսուս՝ Մարդու Որդին, համբարձաւ եւ իր իրաւացի տեղը առաւ իբրեւ Աստուծոյ Որդի: Յայտնութեան Գիրքին մէջ ան դարձեալ կը բացատրէ մտիկ ընելու քաջութիւնը ունեցող ժողովուրդի մը հրատապութիւնը եւ անհրաժեշտ կարիքը:

Ականջներդ արթօն են: Մտիկ ըրէ: Մտիկ ըրէ այն Հովի Բառերը, որ Հոգին կը փչէ եկեղեցիներուն: (Յայտնութիւնը 2.7, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Պէտք է պատասխանենք անոր հարցումին: Մեր ականջները արթօն են:

Տակաւին աւելին՝ կ'ուզե՞նք, որ մեր ականջները արթնան: Սիրելիներ, բոլորս ալ ոչ միայն լսելու այլեւ իրապէս մտիկ ընելու գործընթացին մէջ ենք: Մինչ կ'արթանան, կը մշտեմ քեզ հարցնելու համար՝ «Լսեցիր այդ ձայնը»:

Դժբախտաբար կը վախնամ, որ մենք քնոտ հարսի մը պէս ենք, որ շարունակ կը դառնայ իր շքեղ անկողինին մէջ՝

բարձերով շրջապատուած, փորձելով խեղդել այն ծայնը, որ կրնայ արթնցնել զինք: Ո՞րքան բարձր պէտք է ըլլայ մեր ժամանակի ահազանգը, որպէսզի ցնցուինք եւ լման արթուն ըլլանք:

Մեր տառապող աշխարհի բացայայտ ճիշին կողքին, կայ ուրիշ ծայն մը, որ կը կանչէ մեզ: Բայց անիկա չի գոռար: Ամբողջ աղմուկով հանդերձ, անիկա այն ծայնն է, որ պէտք է լարուիս, որպէսզի լսես: Անիկա Հոգիին մեղմ, թեթեւ ծայնն է: Այդ ծայնը հետզհետէ կը բարձրանայ մինչ կ'ընտրենք ընդառաջել անոր:

Կը սիրեմ «Հովի Բառեր» արտայայտութիւնը: Աստուած իր Խօսքը հովերուն վրայ դրած է: Սուրբ Հոգին կը նմանցուի հովի կամ օդի հոսանքի, որ կը կրէ բառեր, որոնք կեանք եւ զօրութիւն կը փսփսան: Մենք չենք կրնար տեսնել հովը, բայց կը տեսնենք անոր ազդեցութիւնը: Հովը ունի զօրութիւնը բաներ փշելու դէպի՛ քու աշխարհդ կամ անկէ դ՛րս: Հովի զօրութիւնը կը մտրակէ ծովերը եւ կը մաշեցնէ լեռները: Կան հակառակ ուղղութեամբ փչող հովեր եւ կան ետեւէն փչող հովեր, որոնք կ'արագացնեն մեր ընթացքը: Հովերը շարունակ կը շրջին մեր աշխարհի շուրջը՝ երբեմն արագ երբեմն կամաց:

Հովը մէկ տեղէն միւսը կը տանի Աստուծոյ փսփսուքը:

Երբեմն մեր շուրջի արուեստական աղմուկը կը բթացնէ Հոգիին *Հովի Խօսքերը* լսելու մեր կարողութիւնը:

Ուրիշ բան մըն ալ կայ, որ արգելք կ'ըլլայ մեր լսելու կարողութեան: Արդէն իսկ լսած ըլլալու ծանօթութեան զգացումը: Երբ բան մը կրկին եւ կրկին կը լսենք, կրնանք ուշադրութիւն չընել անոր եւ դադրինք մտիկ ընելէ:

Եթէ գիտնանք, թէ մէկը ինչ պիտի ըսէ, տարբեր ձեւով մտիկ կ'ընենք: Քանի մը տարի առաջ ինքզինքս գտայ ճիշդ այդ ձեւի կացութեան մը մէջ մինչ Աստուածաշունչ կը կարդայի: Այնքան ծանօթ էի Աստուածաշունչի որոշ տարբերակի մը, որ երբ կը կարդայի, գիտէի ինչ պիտի յաջորդէ կարդացածիս: Թերեւս ձեզի հետ ալ պատահած է ատիկա: Ատիկա պատճառ եղած էր, որ կորսնցնեմ Աստուծոյ Խօսքին հանդէպ իմ մանկական հետաքրքրութիւնս: Լուծելու համար իմ անտարբերութեանս հարցը, սկսայ սուզուիլ *Տը*

Մատեճ տարբերակին մէջ, որ վերափոխուած (*փարաֆրէյզ*) տարբերակ մըն է:

Ինչո՞ւ: Կ'ուզէի զարմանալ: Այդ պատճառով է, որ յաճախ մէջբերումներ կ'ընեմ այդ տարբերակէն, որպէսզի դուք ալ այդպիսի զարմանքի մը փորձառութիւնը ունենաք: Ես Աստուածաշունչը անպայմանօրէն պիտի չուզէի վերափոխուած տարբերակով մը փոխարինել: Ես պարզապէս հետաքրքրուած եմ անոր լեզուի նորօրեայ ոճով եւ յաւելեալ ուսումնասիրութիւնով: Դուք ազատ զգացէք ձեզի ծանօթ եւ ձեր նախընտրած Աստուածաշունչի տարբերակէն եւս կարդալու մէջբերուած հատուածները:

Ես աստիկա ըրած եմ, որովհետեւ ձեզի նման ես ալ կ'ուզեմ իրապէս լսել: Երբ մեր ականջները կը բացուին, մենք ուրիշ բան չենք կրնար ընել բացի մեր ձայնը տալու ուրիշներու կարիքներուն:

Համարձակօրէն խօսէ անոնց համար, որոնք չեն կրնար իրենք իրենց համար խօսիլ.

Արդարութիւն ըրէ անոնց համար, որոնք կը ճզմուին:

Այո՛, համարձակօրէն խօսէ աղքատներուն եւ անօգնականներուն համար,

Եւ այնպէս ըրէ, որ անոնք արդարութիւն գտնեն:
(Առակներու 31.8-9, բառացիօրէն թարգմանուած
Աստուածաշունչի *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն*
տարբերակէն)

Այս հատուածին մէջ Սողոմոնի մայրը՝ Բեթսաբէ, իր որդիին՝ թագաւորին կը պատուիրէ, որ իր թագաւորական ձայնը տայ անոնց, որոնք ճզմուած են անարդարութեան ծանրութեան տակ: Ասիկա նաեւ ենթահողն է առաքինի կնոջ մասին համարներուն (տէս Առակներու 31.10-31): Սողոմոնի մօր մնան, մենք ալ պիտի քաջալերենք մեր աշխարհի տղամարդիկը, որ համարձակօրէն խօսին անոնց համար, որոնց ձայնը լռեցուած է: Աստուած մեզ թագաւորներ եւ քահանաներ ըրաւ իր առջեւ: Ուստի նոյնիսկ եթէ ուրիշներ լուռ մնան, մենք պէտք է արտայայտուինք:

Իբրեւ «մեծ» մայր, կ'ուզեմ գիտնալ, որ որդիներուն եւ դուստրերուն ժառանգելիքը իրապէս «մեծ» պիտի ըլլայ: Աշխարհի շուրջ կատարուող ուսումնասիրութիւնները հետզհետէ ասելի եւ ասելի կը մատնանշեն կարեւորութիւնը սեռերու հաւասարութեան՝ շեշտելով, որ անիկա կրնայ դադրեցնել աշխարհի շուրջ աղքատութեան եւ նոյնիսկ ահաբեկչութեան ալիքը: 2001-ին Համաշխարհային Դրամատունը հրապարակեց *Զարգացում Յառաջ Բերել՝ Իրաւունքներու, Աղբիւրներու եւ Ձայնի մէջ Սեռային Հաւասարութեան Միջոցաւ* վերնագիրով ազդեցիկ ուսումնասիրութիւն մը, որ կը փորձէր փաստել, թէ սեռերու միջեւ հաւասարութիւն քաջալերելը ճակատագրական է աշխարհի շուրջ աղքատութեան դէմ պայքարելու համար: «Աղջիկներու կրթութեան մէջ ներդրում ընելը կրնայ ըլլալ, որ ամէնէն շահաբեր ներդրումը ըլլայ զարգացող աշխարհին մէջ», գրեց Լորրնս Սամըրզ երբ Համաշխարհային Դրամատան գլխաւոր տնտեսագէտն էր: «Հարցումը այն չէ, որ երկիրներ այդ ներդրումը ընելու կարողութիւնը ունին կամ ոչ, այլ՝ թէ անոնք կրնան արտօնել ուսումէ զերծ պահել աղջիկները»»: Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Զարգացման Ծրագիրը եւս կատարեց ուսումնասիրութիւն մը, որ եզրակացուց, թէ՛ «Կիներ լիազօրելը կ'օգնէ տնտեսական արտադրողականութեան բարձրացման»:

Մեր ժամանակներուն տեղի ունեցող ահաբեկչական շարժումները պատճառ դարձան, որ մասնագէտներ սեռերու մասին ուսումնասիրութիւններ ընեն, եւ հետեւեալը յայտնաբերեցին.

Այսքան մեծ թիւով իսլամ ահաբեկիչներու գոյութիւնը, պնդեցին անոնք, շատ կապ չունի *Քուրան*ին հետ, այլ՝ կապ ունի շատ մը իսլամական երկիրներու տնտեսութեան եւ ընկերութեան մէջ կիներու առողջ մասնակցութեան չգոյութեան հետ... Կիները լիազօրելը, պնդեցին բանակային շարքերուն մէջ եղողներ, կ'ուժազրկէ ահաբեկիչները:

Այդ ճակատագրական, խորաթափանց եւ ընդարձակ

Չտեսնուած Ոյժ մը

ուսումնասիրութիւնները կատարելը մեծ գին եւ ջանք պահանջեց: Միշտ ահով կը լեցուիմ երբ մեր մարդկային իմաստութիւնը դարձեալ կը մատնանշէ ի սկզբանէ Աստուծոյ ըսածները: Աշխարհի հարց ըսուած բան մը գոյութիւն ունենալէ առաջ, գոյութիւն ունէր աշխարհին համար պատասխան մը. կինը:

Լաւ չէ, որ Ադամ մինակ ըլլայ. անոր օգնական մը ընեմ՝ իրեն յարմար: (Ծնունդներու 2.18)

Մարդը առանձինը լաւ չէր: Այսօր ալ, այն ատենուան պէս, կեանքի հաւասարութիւններուն (*իքուէշընզ*) մէջ կիները ատելցնելը բազմապատկութիւն կը բերէ եւ լաւութիւն կամ բարիք կը բերէ տղամարդոց, կիներուն, պզտիկներուն եւ այն աշխարհին, զոր բոլորս կը բաժնեկցինք: Մեկուսացած կեանքը կը հրաւիրէ այն՝ որ «լաւ չէ»: Մարդիկ ստեղծուած են իրարու հետ կապակցութեան մէջ ըլլալու համար: Սակայն ընդհանրապէս միայն տղամարդոց միջեւ դաշնակցութիւնները կը թօփն պատճառ ըլլալ կամ ծնունդ տալ հաւանական աղէտներու կամ տագնապներու: Ծնունդներու Գիրքի եւ ժամանակակից ուսումնասիրութիւններու խորաթափանց գաղափարներէն կրնանք եզրակացնել, թէ գերիշխող տղամարդոց կողմէ կառավարուող մշակոյթները անառողջ են բազմաթիւ մակարդակներու վրայ:

Դուն չես ստեղծուած ստրուկ ըլլալու. դուն ժառանգակից ես: Կիները Աստուծոյ կողմէ տրուած պատասխաններ են: Կիներու ձայներուն յաւելումը կ'ատելցնէ կրթութեան առիթները բոլոր պզտիկներուն համար, կը խթանէ տնտեսութիւնը եւ ըստ երեւոյթին նաեւ կը նուազեցնէ ահաբեկչութեան վտանգը:

Բայց կիներու պատասխան ըլլալու այդ հանգամանքը ինչ ձեւով է կամ ինչ երեւոյթ ունի:

Երբ ես յայտնաբերեցի եւ տօնել սկսայ իմ իգական ստեղծագործութիւնս, անդրադարձայ, որ ես երկրորդական գաղափար մը չէի: Իբրեւ դուստր, կին եւ մայր, ես պատասխան մըն էի: Եթէ ես պատասխան մըն էի, ուրեմն միայն տրամաբանական էր, որ կեանքս շրջապատող

քոյրերն ալ պատասխաններ ըլլային: Մենք երկրորդական քաղաքացիներ չենք Աստուծոյ աչքին: Դուն, սիրելիս, ունիս կարողականութիւնը ըլլալու կենդանի, շնչող լուծում մը մարդկութեան հարցերուն:

Մինչ կը ճամբորդեմ եւ կը հոչակեմ այդ պարզ ճշմարտութիւնը կիներու կեանքերուն վրայ՝ երիտասարդ եւ տարեց, չեմ կրնար բացատրել այն պատասխանը կամ կեցուածքը, որ կը տեսնեմ անոնցմէ: Կիներ ոչ միայն ըսածս կը լսեն դողդղացող սիրտերով, այլեւ կ'արտասանեն զանոնք բարձրաձայն եւ կը հաւատան անոր:

«Ես պատասխան մըն եմ»:

Այդ պահուն ձգտում մը տեղի կ'ունենայ. յայտնութիւն մը կու գայ: Անոնց աչքերը նոր արեւելում մը կը գտնեն եւ կը բացուին՝ տեսնելու իրենց իգական անձը այնպէս ինչպէս Աստուած միշտ ալ տեսած է զիրենք... այսինքն՝ իբրեւ ան, որ կը լրացնէ:

Եւ սակայն այդ անդրադարձումը պարզապէս մեր սկիզբն է:

Կիները տնտեսական հաւաքական խթան ըլլալէն աւելին են: Եւ լուծումներ բերելու մեր կարողութեան հետ միասին նոր հարցումներ պիտի ծագին: Մենք նոր իրաւունքներու օրինագիծ մը կը գրենք, որուն համաձայն կիները մարդկութեան բարեկամներն են: Մենք կը հաւաքուինք՝ գծելու համար աշխարհ մը, ուր կիները եւ պզտիկները կ'ողջունուին, ոչ թէ կը շահագործուին:

Ահա կարգ մը բաներ, որ գիտեմ երկինքի դուստրին մասին.

Ան սիրելի է, խելացի եւ կարող:

Անոր կեանքը կապակցութիւններ ունի, ոչ թէ մեկուսացուած է:

Ան սիրուած է Աստուծոյ կողմէ, եւ ատելի է Սատանային համար:

Ան ճգնուած է ամբողջ աշխարհի տարածքին թէ՛ ծածկուած եւ թէ՛ բացայայտ միջոցներով:

Հարցումը կը մնայ. Ինչ կրնան անոնք ըլլալ հաւաքաբար եթէ ստանան պէտք եղած նեցուկը եւ ունենան նազմավարութիւն:

ԱՐԹՆՅՈՒՐ ԱՆՊԱՐՈՒՆԱԿԵԼԻ ԲԱՆ ՄԸ

Ես պատիւը ունեցած եմ այցելելու Հարաւարեւելեան Ասիա եւ Հնդկաստան՝ իբրեւ ծառայակից *Լայֆ Աութօրիչի*, յոյս ունենալով հանդիպիլ պատմութիւններու, որոնք կեցուածք կը գրգռեն ուրիշներու մէջ: Ես տեսած եմ աղքատութեան խարազանը եւ սեռային մաքսանենգութեան աղէտը՝ Քամպոտիա, Թայլանտ եւ Մումպայ այցելութիւններուս ընթացքին: Ես նաեւ տեսած եմ յոյս եւ վերականգնումի խոստումը մինչ մարդիկ կ'ընդառաջեն առատածեռնութեամբ եւ մինչ կազմակերպութիւններ կը սկսին իրարու հետ գործել:

Համագործակցութեան եւ պէտքին ընդառաջելու խիստ կարիքը կայ: Ուքրանիա կը գտնուէի եւ նախաճաշ կ'ընէիք բարեկամի մը հետ երբ շատ գեղեցիկ կին մը ներս մտաւ: Ատիկա արտասովոր բան մը չէր երկրի մը համար, որ ծանօթ է իր գեղեցիկ կիներով: Բայց այդ կինը տղամարդու մը հետ էր, որ կը թուէր ըլլալ իր վաթսունականներուն մէջ: Իր բարձր կրունկներով եւ նեղ տափատով, ան 18-էն աւելի չէր թուեր ըլլալ: Անոնք մեր քովը սեղան մը գրաւեցին: Իրենց կը դիտէի մինչ տղամարդը կը լափէր իր կերակուրը, իսկ ինք իր առանց կաթի սուրճը կը խմէր՝ ումպ առ ումպ, դատարկ նայուածքով պատուհանէն դուրս նայելով: *Պիւֆէի* սեղանին ետեւը նստած երիտասարդները կը փսփսային, կը ծիծաղէին եւ զինք կը մատնանշէին: Երկար ժամանակ չանցած աղջկան կրկնակի տարիքը ունեցող ուրիշ տղամարդ մը միացաւ իրենց: Կ'ուզէի լալ: Աղջիկը այնքան միայնակ կ'երեւէր, այնքան կորսուած: Բացայայտ էր, որ ան սուղ վճարուող պոռնիկ մըն էր, բայց մեր առջեւ կը տեսնէինք սիրոյ քաղց ունեցող դուստր մը, որ տարուած էր գեղեցիկ հագուելով եւ զարդարուելով՝ նստած երկու հեշտասէր գործարարներու միջեւ, որոնք կը լափէին անոր կեանքը:

Ես ուղղակիօրէն խօսած եմ մեր քոյրերէն ոմանց հետ, որոնք մաքսանենգութեան զոհեր էին: Այո, այդպէս են. մեր քոյրերն են: Անոնք իրենց ընտրութեամբ պոռնիկ չեն եղած. անոնք զոհեր են եւ քաջ վերապրողներ:

Հնդկաստանի մէջ երկար, խոնաւ օրուան մը ընթացքին ես տեսի տեսի սրտաճմրիկ պատմութիւններ լսեցի երիտասարդ

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

աղջիկներու եւ անլի տարիքոտ կիներու խումբի մը կողմէ, որոնց *Լայֆ Աութթիչը* հաւաքած էր պզտիկ յարկաբաժինի մը մէջ: Իրաքանչիւրը իր պատմութիւնը պատմեց քիչ մը տարբեր ձեւով՝ ոմանք արցունքներով, ուրիշներ առանց որեւէ բացայայտ զգացումի:

Վստահ եմ, որ անոնք իրենք իրենց հարց կու տային, թէ ինչո՞ւ կ'ուզէի լսել իրենց պատմութիւնները: Կարեկցութիւն ունէի իրենց հանդէպ: Կը դատէի զիրենք: Արդե՞ծք բնաւ կը հասկնայի զիրենք: Պատասխաններ ունէի իրենց համար:

Այդ քաջ կիներէն մէկը, զոր Սամա պիտի կոչեմ, կը յիշէր իր պատանեկութեան օրերը Նեփալի հեռաւոր գիւղի մը մէջ, երբ սիրտը լեցուն էր երազներով եւ մօրը պատճառով ունեցած յուսախաբութեամբ: Օր մը մօրեղբայրներէն մէկը լսած էր իրենց վիճաբանիլը եւ մէկ կողմ քաշած էր Սաման: Առաջարկած էր իրեն հետ տանիլ զինք Մումպայ, ուր կրնար ունենալ առիթներ, ուսում եւ իր երազները իրականացնելու հաւանականութիւն:

Խոստումը անդիմադրելի էր:

Արեւածագէն առաջ Սամա եւ իր մօրեղբայրը սողոսկեցան իրենց պզտիկ գիւղէն դուրս: Աղջիկը քաջաբար անցաւ այդ երկար եւ վտանգաւոր ճամբաներէն՝ Նեփալէն դուրս գալով Հնդկաստան մտնելու համար:

Մումպայ հասնելով, մօրեղբայրը ձգեց զինք, որ հանգչի խեղճուկրակ *մոթէլի* մը մէջ: Մինչ ան կը քնանար, մօրեղբայրը ծախեց զինք:

Սամա արթնցաւ շփոթի մէջ՝ օտար մարդոցմով շրջապատուած: Ժամանակն էր, որ աշխատէր՝ այդ մարդոց վերադարձնելու համար այն գումարը, զոր վճարած էին իր մօրեղբօրը:

Սաման տարին տեղական հանրատուն մը եւ կղպեցին զինք մութ սենեակի մը մէջ: Ան ոչ մէկ գաղափար ունէր շուտով պատահելիքներուն մասին: Ան նոյնիսկ այդ շրջանի լեզուն չէր խօսեր: Դուռը բացուեցաւ եւ յաճախորդ մը ներս մտաւ՝ ծառայութիւն ակնկալելով: Երբ Սամա դէմ դրաւ անոր, չորս կիներ բռնեցին զինք մինչ ինք բռնաբարուեցաւ:

Սամա 13 տարեկան էր:

Ժամանակ անցաւ: Սամա սորվեցաւ շրջանի լեզուն եւ աշխատելով իր պարտքը գոցեց: Այդ ընթացքին ան դարձաւ ճարպիկ գործարարուի մը: Որեւէ ուրիշ հեռանկար չունենալով եւ ուրիշ երթալու տեղ չունենալով, Սամա սկսաւ բարձրանալ այդ հանրատան համակարգին մէջ՝ ըլլալով անոր վարիչներէն մէկը: Ան եղաւ երիտասարդ աղջիկներ գնողը եւ ծախողը: Իր հրամանով այդ պատանի աղջիկները կը բռնէին եւ ինք կը հովանաւորէր անոնց բռնաբարումը եւ հպատակեցնելու համար անոնց ծեծի ենթարկուիլը:

Երբ ես հանդիպեցայ Սամային, դժուար էր հաւատալ, որ այդ պատմածներէն որեւէ մէկը կրնար ճիշդ ըլլալ: Ան այլեւս այդ գործին մէջը չէր. ան զուսպ, միջին տարիքի կին մըն էր: Մէկը Աստուծոյ սէրը բաժնեկցած էր անոր հետ, եւ ան Քրիստոնէայ դարձած էր: Անոր առիթ մը ընծայուած էր դուրս գալու այդ վայրէն, եւ ան քաջաբար ձգած էր այդ հանրատունը: Այսօր ան անխոնջ կերպով կ'աշխատի ազատագրելու համար այն աղջիկները, զորս ժամանակին կը հարստահարէր:

Երբ կը խօսէինք, ես կը փորձէի հասկնալ, թէ Սաման ինչպէս հանրատան վարիչ եղած էր: Արդեօք ան մոռցած էր, որ ժամանակին ինքն ալ 13 տարեկան սարսափահար աղջիկ մը եղած էր: Հարցուցի իրեն:

«Սամա, ինչպէս կրցար դիտել երբ այդ աղջիկները կ'առեւանգուէին, կը բռնաբարուէին եւ ծեծի կ'ենթարկուէին»:

Ան հառաչելով իր գլուխը այս եւ այն կողմ շարժեց:

«Ըրինք այն ինչ որ պէտք ունէինք ընելու... գոյատեւելու համար»:

Շատեր միայն գոյատեւել կ'ուզեն:

Ես մաքրցած եմ աղբի լեռներ: Քալած եմ աղտոտ թաղերու մէջէն՝ երկու կողմերը շարուած տուններով այնքան անկայուն եւ կցկտուր, որ զարմանալի չէ, որ անոնց մէջ ապաստան գտնողները անյուսութեան մէջ կ'ապրին: Ես ծպտուած կերպով մտած եմ հանրատուներ: Ես տեսած եմ ընկճող անհոգութիւնը աննպատակ կիներու Արեւմուտքի մէջ: Տեսած եմ ինչպէս աղբիւրներ վատնուած են, որովհետեւ մենք մոռցած ենք, թէ ո՛վ ենք: Ես ականատես եղած եմ առկայ

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

հարցերուն, եւ իմ բուն յոյս է, որ նաեւ տեսնեմ անոնց պատասխանները կամ լուծումները:

Ահա մղիչ կոչ մը «Հալֆ տը Սքայ» վերնագիրով գիրքի եզրափակիչ հատուածէն.

Պատմութեան ալիքը կիները բեռ կրող անասուններ եւ սեռային խաղընկերներ ըլլալէն կը վերածէ լիիրաւ մարդ արարածներու: Կիները լիազօրելու տնտեսական առաւելութիւնները այնքան ընդարձակ են, որ կը համոզեն երկիրներուն, որ այդ ուղղութեամբ ընթանան: Երկար ժամանակ պիտի չտուէ երբ մենք սեռային ստրկութիւնը, պատիւի համար սպանութիւնները եւ *ասիտ* թափելու արարքները պիտի սեպենք այնքան աներեւակայելի բաներ, որքան ոտքերուն չափը փոխելու համար զանոնք կոտորելու եւ ամուր կերպով կապելու չինական սովորութիւնն է: Հարցումը այն է, թէ ի՞նչքան ժամանակ պիտի առնէ այդ փոփոխութիւնը եւ քանի՞ աղջիկներ տակալին պիտի առեանգուին եւ հանրատուններու ծախուին նախքան, որ այդ փոփոխութիւնը իրագործուի, եւ թէ՛ մենք այդ պատմական շարժումին մաս պիտի կազմե՞նք կամ դիտորդներ պիտի ըլլանք:

Այդ է իւրաքանչիւրիս առջեւ դրուած հարցումը:

Կը գրեմ՝ ձեզ այս յայտնութեան մէջ ներգրաւելու համար: Բուն աղօթքս է, որ իմ խօսքերս մէջդ արթնցնեն անպարունակելի բան մը, որ պահուած էր: Կը յուսամ, որ դուն ոտքի կ'ելլես էգ առիծի մը զօրութեամբ եւ Աստուծոյ հրաշքները կը բերես ճիշդ, որ երթաս: Այդպիսով, միասնաբար մենք պիտի ըլլանք այն ոյժը, որ այս աշխարհը երբեք չէ տեսած: Շարունակեցէք կարդալ, իմ առիծ քոյրերս, եւ արթնցէք:

Վտանգաւոր Կերպով Արթուն

Լաւ վարուելակերպ ունեցող կիները
 հազուադէպօրէն պատմութիւն
 կերտողներ կ'ըլլան:

ԼՈՐԸԸ ԹԱՋԸՐ ՈՒԼՐԻԻՄ



Էգ առիւծները ուսումնասիրելու համար եւ կարգացի գիրքեր, յօդուածներ եւ դիտեցի տեսապնակներ, վաւերագրական վիդէոներ եւ նոյնիսկ *Եու-Թյուպի* կարճ վիդէոներ, որպէսզի տեսնեմ էգ առիւծները տարբեր միջավայրերու, բեմերու եւ վիճակներու մէջ: Հակառակ անոր որ Ափրիկէի մէջ *սաֆարիի* ալ մասնակցած էի, էգ առիւծներու մասին գիտութիւնս շատ սահմանափակ էր: Հիմա իսկ ինքզինքս էգ առիւծներու մասին մասնագէտ չեմ համարեր, բայց սքանչացած դիտորդ մըն եմ:

Դիտած վաւերագրական *ֆիլմերէս* մէկը ցոյց կու տար երկու էգ առիւծներու եւ մէկ արու առիւծի վերաբնակեցումը Հարաւային Ափրիկէի մէջ իրենց համար յատկացուելիք նոր պաստպարանի մը (*ռիզըրվ*) մէջ: Առիւծը իրենց խումբի *ալֆա* կամ առաջնորդ արուն էր, որ երկու էգ առիւծներուն օգնութեամբ յաջողութեամբ հաստատած էր իր իշխանութեան տարածքը: Երեքը միասնաբար կ'իշխէին հարաւային ափրիկեան այդ պաստպարանի մեծ մասին վրայ:

Խումբին շարժումներուն եւ յառաջդիմութեան հետեւելու

համար, յատուկ վզնոց մը դրած էին արուին վիզին շուրջը: Երկու տարի ետք ժամանակն էր հանելու վզնոցը: Այլեւս պէտք չկար հետեւելու այդ առիծին: Առաւել, վզնոցը կը խանգարէր անոր բաշին, եւ պէտք էր ելլէր, որպէսզի բաշը իր ամբողջական մեծութեամբ երեւէր: (Առիծներու բաշին մեծութիւնը շատ կարեւոր է, քանի որ անոր լայնութիւնը չափելով առիծները կ'որոշեն, թէ կրնան մարտահրաւէր ուղղել ուրիշ առիծի մը դէմ տարածքի մը տիրապետութեան համար կամ ոչ: Եթէ հակառակորդին բաշը շատ մեծ երեւէր մարտահրաւէր ուղղողին աչքին, աստիկա կը նշանակէր, թէ ինք պիտի չկարենար իր ծնօտներուն մէջ առնել անոր կոկորդը, եւ հետեւաբար առճակատումի պիտի չդիմէր:)

Այն առիծը, որուն վիզին շուրջ այդ վզնոցը դրած էին երկու տարի առաջուայ այն տարիքով փոքր, հնազանդ եւ դիւրութեամբ վախցող առիծը չէր այլեւս: Ան արդէն հզօր առիծ մը դարձած էր: Էգ առիծներուն օգնութեամբ, ան յաջողութեամբ հաստատուած էր եւ կը պաշտպանէր խումբը յափշտակիչներէ՝ շարունակ փաստելով փորձառու պահապան մը ըլլալը: Ան այլեւս դիւրութեամբ չէր բռնուեր՝ սորված ըլլալով վայրի, անվախ եւ ազատ կերպով թափառիլ: Անտառապահները պէտք էր, որ անզգայացնէին զինք, որպէսզի վզնոցը հանէին: Գտան անոր տեղը, եւ ապահով հեռաւորութիւն մը պահելով՝ թմրեցուցիչ նիւթ պարունակող նետը արձակեցին անոր վրայ: Առաջին նետը հազիւ ազդեց անոր. քիչ մը ետ գնաց եւ իր փառաւոր, ոսկեայ նայուածքը դարձուց իրենց: Անգամ մը եւս կրակեցին: Առիծը տատանեցաւ եւ ապա գետին պառկեցաւ: Անտառապահները անմիջապէս գործի լծուեցան. ինքնաշարժով մօտեցան ինկած առիծին՝ կտրելով իրենց ճամբուն մէջ գտնուող մացառները եւ ցատկելով թումբերու վրայէն՝ հասնելու համար հոն, ուր առիծին հսկայ, ոսկեգոյն մարմինը ինկած էր:

Հազիւ պիտի ցատկէին *ճիւլէն* վար եւ հանէին վզնոցը, ի՞նչ կը կարծէք յայտնուեցաւ: Առիծին *ալֆա* էգ առիծը, որ բնաւ միտք չունէր ընդունելու եղածը: Իր միջավայրին մէջ անհետանալու էգ առիծին կարողութեան շնորհիւ, անտառապահները չէին նկատած անոր ներկայութիւնը մինչեւ այն ատեն, որ ինք ընտրած էր յայտնուիլ անոնց:

Անոնց զինք չնկատելը չէր նշանակեր, որ ան ալ զիրենք չէր նկատած: Հազիւ որ անդրադարձաւ, որ իր առիծը գետին ինկաւ, ոտքի ելաւ իր ապաստանարանէն եւ տեսանելի դարձաւ: Ան համարձակօրէն իր ներկայութիւնը յայտնի դարձուց անտառապահներու խումբին: Ինքզինք ինկած առիծին եւ նախանձախնդիր անտառապահներուն միջեւ մտցնելէ ետք, ան սպառնական ձեւով մոնչեց՝ ետեւառջեւ քալելով իր զոյգին ինկած մարմինին դիմաց: Յցուած ականջներով եւ տնկուած մորթի մազերով, ան մարդոց հասկցուց, որ ինք ուրախ չէր:

Անտառապահները կարճ ժամանակ ունէին առիծին հասնելու եւ վզնոցը հանելու նախքան թմրեցնող նիւթին ազդեցութեան երթալը, բայց էգ առիծը անկարելի կը դարձնէր իրենց համար ատիկա ընելը: Անտառապահները թմրեցնող նիւթի մէկ չափաբաժին (*տոզ*) եւս ունէին: *Արու առիծին հասնելու համար, պէտք պիտի ունենային էգ առիծը եւս քնացնելու:* Նշանաձիգը վերցուց իր զէնքը եւ ուշադրութեամբ նշան առաւ: Երբ նետը հարուածեց էգ առիծին, կատղած էգ առիծը դարձաւ դէպի անտառապահները եւ ապա ինկաւ գետին՝ թմրեցնող նետին վրայ: Երբ անտառապահներու խումբը մօտեցաւ թմրած առիծին, մթնոլորտին մէջ լարուածութիւնը շօշափելի էր: Իր էգ առիծին նման, արու առիծը անշարժացած էր, բայց ոչ անգիտակից, եւ անոր աչքերը կը հետեւէին անտառապահներուն ամէն մէկ շարժումին:

Փսիսալով խօսելով եւ իր ձեռքը երկարելով առիծի բաշին ետեւի կողմը, անտառապահ մը սուր որսորդի դանակ մը գործածելով կտրեց հանեց վզնոցը եւ ապա հանեց նաեւ երկու թմրեցնող նետերը առիծին մարմինին վրայէն: Ապա անտառապահները հեռացան անոր քովէն եւ իրենց ուշադրութիւնը դարձուցին էգ առիծին: Պէտք էր արագօրէն հեռանային այդ վայրէն նախքան որ այդ հսկայ կատուններէն մէկը արթննար: Էգ առիծը իր մէկ կողմին վրայ պառկած էր, եւ տեսան, որ կուրծքերուն շուրջի մորթը թանձրացած էր, ինչ որ կը նշանակէր, թէ յի էր: Զգուշութեամբ անտառապահները վերցուցին անոր մարմինը եւ արագօրէն հանեցին նետը:

Արու առիծը սկսած էր մրմռալ եւ կը փորձէր ելլել, բայց տակաւին անկարող էր ոտքերուն վրայ կենալու: Անտառապահները արագօրէն վերադարձան ինքնաշարժ՝ բնաւ իրենց կռնակը չտալով առիծներուն: *Ճիւղը* աշխատուցին եւ լսելի ծայնով արտաշնչեցին՝ իբրեւ թեթեւալու նշան, եւ հեռացան այդ վայրէն: Նախկին հանդարտ եւ լուռ ոճէն իր բնական ծայնին վերադառնալով, պատմողը բացատրեց. «Չկայ աւելի վտանգաւոր բան քան ըլլալ ամբողջովին արթուն առիծներու ներկայութեան»:

Թմրած Քրիստոնեաներ

Երբ լսեցի «վտանգաւոր» եւ «ամբողջովին արթուն» եզրերը մէկ նախադասութեան մէջ, ատիկա իմ ուշադրութիւնս գրաւեց: Ինչ պիտի պատահէր եթէ մենք՝ առիծներուն նման, վտանգաւոր եւ ամբողջովին արթուն ըլլայինք: Այդ ատեն եւ միայն այդ ատեն սպառնալիք պիտի ներկայացնենք խաւարին, որ շատերը գերի կը պահէ:

Սիրելիներ, այս պահուն կ'աղօթեմ, որ իւրաքանչիւրս անդրադառնանք, որ մենք իրապէս վախ կը պատճառենք մեր թշնամիին, եւ որ ան ամէն միջոց ի գործ կը դնէ մեզ սահմանափակելու համար: Ան գիտէ, որ չի կրնար մեզի այնքան մօտենալ, որ կարենայ բռնել եւ շղթայել մեզ եթէ ամբողջովին արթուն ըլլանք եւ շարժուն: Այդ պատճառով ան կը թմրեցնէ մեզ, որպէսզի չընենք այն բաները, որ Աստուած կանչած է մեզ, որ ընենք: Բայց իմ տեսիլքիս էգ առիծին պէս, մենք պէտք է արթնանք, ոտքի ելլենք, յիշենք, թէ ո՛վ ենք եւ լոյսով դէմ դնենք այս աշխարհի չարին:

Անզգայացած՝ Առօրեայով

Բայց չըլլայ որ այնքան ներգրաւուիք ձեր ամենօրեայ պարտականութիւններուն մէջ եւ սպառիք անոնց պատճառով, որ չանդրադառնաք ժամանակին եւ քնանաք՝ անուշադիր ըլլալով Աստուծոյ: Գիշերը գրեթէ իր աւարտին հասած է, եւ արշալոյսը կը բացուի: *Արթուն եղէք եւ գիտակից՝ թէ Աստուած ինչ կ'ընէ:* Աստուած

Վտանգաւոր Կերպով Արթուն

վերջին մանր-մունր աշխատանքները կ'ընէ այն փրկութեան գործին մէջ, որ սկսաւ այն ատեն երբ հաւատացինք: Չենք կրնար մէկ վայրկեան իսկ վատնել: Պէտք չէ վատնենք ցերեկի ժամերը թեթեւութեամբ եւ հաճոյասիրութեամբ, սեռային յարաբերութիւններ ունենալով եւ անառակութեամբ, վիճաբանութիւններով եւ մեր դիմացը ելածը յափշտակելով: Ելէք անկողինէն եւ հագէք ձեր հագուստները: Մի ծուլանաք եւ յապաղիք՝ սպասելով մինչեւ վերջին վայրկեանը: Քրիստոսը հագէք եւ գործի վրայ եղէք (Հռոմայեցիներուն 13.11-14, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Նկատի առէք գործածուած բառերը. «Մի ներգրաւուիք եւ սպառիք *ձեր* ամենօրեայ պարտականութիւններով»: Անոնք քու ժամանակիդ արժէքը կը կողոպտեն կամ պատճառ կ'ըլլան, որ քնանաս: Այդ կեանքի խօսքերը շտապ կոչ մըն են ոտքի ելլելու եւ զգաստ ու արթուն ըլլալու՝ Աստուծոյ ըրածներուն նկատմամբ: Երբ արթուն ըլլաս Աստուծոյ ըրածներուն նկատմամբ, կը գիտնաս, թէ ինչ պէտք է ընես: Յապաղելու կամ ձգձգելու ժամանակը անցած է: Ժամանակն է գործելու: Ժամացոյցին զանգակը ժամեր առաջ հնչեց...

Այդպիսի արթնութեան մը կարիքը յատուկ կերպով ընդգծուեցաւ վերջերս բարեկամուհիի մը հետ հեռաձայնային խօսակցութեան մը ընթացքին: Ան պատմեց, թէ ինչպէս ինք եւ իր ամուսինը ճաշի գացած էին ականաւոր ռաբունական ուսուցիչի մը հետ: Ան բացած էր իր սիրտը եւ խօսած այն բեռան մասին, որ ունէր իր սիրտին մէջ՝ հրեայ ամերիկացիներուն դժուար կացութեան վերաբերեալ: Այդ ռաբբին ամբողջ Ամերիկայի տարածքին կը ճամբորդէ եւ դասախօսութիւններ կու տայ հրէական ժողովարաններու մէջ եւ խորհրդաժողովներու ընթացքին՝ աղաչելով հրեայ ամերիկացիներուն, որ աղօթեն, որ ամերիկացի Քրիստոնէաները միասնաբար ոտքի ելլեն եւ գործի լծեն ազդեցութիւն բերելու իրենց զօրութիւնը: Ան մտահոգ է, որովհետեւ մեր երկրի հրեայ համայնքը շատ պզտիկ է, որ

առանձինը կարենայ ոտքի ելլել եթե Քրիստոնեաները իրենց կողքին չըլլան իբրև ջատագովներ՝ արմատախիլ ընելու համար այն հակա-սեմական եւ հակա-Քրիստոնեական այլքը, որ կը բարձրանայ մեր բոլորիս դէմ:

Մեզմէ շատերը յուսալքուած են, անզգայացած կամ ցաւալիօրէն անգիտակից, թէ ճիշդ ինչ տեղի կ'ունենայ աշխարհի մէջ: Ատոր պատճառը կրնայ ըլլալ այն, որ մենք շատ երկար ժամանակէ ի վեր կը լսենք թմրեցնող կամ անզգայացնող եւ պատասխանատուութենէ խուսափիլ քաջալերող ատետարան մը, որ շատ քիչերը կը մղէ կորսուածները փրկութեան առաջնորդելու: Արդեօք երկարատեն շարժումի մէջ չըլլալը եւ հոգեւոր մարզանք չընելը մեզ քնոտ եւ անտարբեր դարձուցած է: Արդեօք օրինապաշտական ճնշումը կամ մեղքի հանդէպ անփութութիւնը դանդաղեցուցած են մեր քայլերը՝ պատճառ դառնալով, որ մեր պատասխանները ուշանան կամ բութ ըլլան: Կրնայ ըլլալ, որ Աստուած կը պատրաստուի ցնցել մեզ, որպէսզի բարձրացնէ եւ վտանգաւոր կերպով արթուն դարձնէ մեզ: Եթէ այդ է պարագան, ատիկա առաջին անգամը պիտի չըլլայ, որ ան այդպիսի բան մը կ'ընէ:

Իսրայէլի որդիները պէտք եղածէն աւելի երկար ժամանակ շրջեցան անապատին մէջ: Անոնք աննպատակ կերպով ճամբորդեցին, չափազանց մեծ թիւով ոչխարներու նման: Երբեմն շեղեցան եւ գանգատեցան, երբեմն ալ հնազանդօրէն հետեւեցան ամպին ցերեկ ատեն եւ բանակ դրին կրակի սինին հովանիին տակ գիշերը: Երբեմն անոնք մտիկ ըրին իրենց հովիւին՝ Մովսէսի, երբեմն ալ չըրին: Բայց երբ բանակ դնելու համար հաւաքուեցան Մովսէսի տափաստաններուն վրայ, որ սահմանակից էր իրենց խոստացուած երկիրին, անոնց հաւաքուիլը յայտնի եղաւ: Շուրջի ազգերը տեսան անոնց գալը: Այդ անհմուտ անապատի թափառողներուն հանգիստի համար կանգ առնելը այդ շրջանի բնակիչներուն թուեցաւ իբրև հզօր պատերազմիկներու հաւաք մը:

Այլեւ բռնաբարուած ստրուկներու հաւաքածոյ մը չէին, այլ՝ իսրայէլացիները վերագտած էին իրենց ինքնութիւնը իբրև Աստուծոյ թագաւորական ժողովուրդը (Իսրայէլ կը նշանակէ՝ «Աստուծոյ իշխան»): Անապատին մէջ երկար տարիներ

Վտանգաւոր Կերպով Արթուն

թափառելէ ետք, անոնք կը պատրաստուէին հաստատուելու: Թերեւս նոյնիսկ այդ ատեն Աստուծոյ զաւակներէն վրիպեցաւ այն ինչ որ պայծառ կերպով բացայայտ էր թագաւորներուն, Բաղասամ մարգարէին եւ Իսրայէլի շուրջ գտնուող թշնամի ազգերուն: Անոնք այլեւս թափառական չէին, այլ՝ ընտրուած Աստուած պաշտողներ եւ պատերազմիկներ, որոնք սակայն անգիտակից էին ատոր:

Դժբախտաբար, առանց իրենց իրապէս ո՛վ ըլլալու գիտակցութիւնը եւ զիրենք շրջապատողներուն (թշնամի ազգերուն) նկատմամբ ճիշդ տեսակէտը ունենալու, Աստուծոյ զաւակները կորսնցուցին իրենց տեսիլքը եւ նպատակը: Անոնք մէկկողմ դրին իրենց նախկին սուրբ զսպուածութիւնը եւ դատողութեան ցնցիչ սխալ մը ըրին: Նախքան Խոստացուած Երկիր մտնելը, անոնք անմտօրէն կարգ մը անսուրբ դաշնակցութիւններ ըրին: Անոնց սխալը մեզի գգուշացում մըն է. վտանգաւոր է արթննալ, բայց մոռցած ըլլալ ո՛վ ըլլալդ:

Պարզ ձեւով ըսելով, անոնք շուայտութիւն (խմբային հեշտասիրութիւն կամ սեռային արարքներ) ըրին անապատին մէջ: Իսրայէլի տղամարդիկը անսանձ սեռային յարաբերութիւններ ունեցան մովաբացի կիներուն հետ, որոնք իրենց բանակատեղին դրկուած էին Բաղասամ մարգարէին խորհուրդով (տես Թիւերու 25.1-2, 31.16: Յայտնութիւնը 2.14): Կիները իսրայէլացի տղամարդիկը հրաւիրեցին մասնակցելու Մովաբի սեռային/կրօնական պաշտամունքին: Արդիւնքները աղէտալի եղան, եւ Աստուծոյ ժողովուրդը ժամանակաւորապէս շեղեցաւ կամ ելաւ իր ճամբայէն: Պատմութեան շարունակութեան մէջ կը տեսնենք պատուհաս մը, նախանձախնդիր քահանայ մը եւ թշնամի մը՝ մադիանացիներուն յայտնուիլը: Աստուած պատուիրեց Մովսէսին, որ մարդահամար կատարէ, եւ ապա անոնք վերախմբուեցան:

Սակայն Իսրայէլի թշնամիները չկրցան նուաճել զիրենք: Երբ իսրայէլացիները հնազանդ կ'ըլլային, յաղթանակ կ'ապահովուէր: Բայց երբ Աստուծոյ ցուցմունքներէն դուրս ելան, դատաստան հասաւ իրենց վրայ: Անոնք զղջացին, եւ Աստուած վերցուց պատուհասը իրենց վրայէն, բայց ոչ նախքան քսանչորս հազար հոգիի մեռնիլը:

Ինչ է ատկէ քաղուելիք դասը մեզի համար: Եթէ մեր թշնամին չի կրնար մեզ թմրած կամ անզգայացած պահել (անշարժ, հլու եւ անգործունեայ), ապա ան պիտի հրապուրէ մեզ, որ պղծենք մեր հանգիստի վայրը եւ մասնակից ըլլանք անպարկեշտ եւ այլասեռած պաշտամունքի: Ինչ երեւոյթ կ'ունենան թմրած կամ անզգայացած Քրիստոնեաները: Հետեւեալ ձեռի բաներ կ'ըսեն.

- «Աշխարհը անդունդն ի վար կը գլորուի... Յուսամ Յափշտակութիւնը շուտով տեղի կ'ունենայ, ոպէսզի բոլորս կարենանք փախուստ տալ»:
- «Ինչո՞ւ ամուսինս եւ ես պէտք չէ դիտենք ուրիշ ամուսնացած զոյգերու սեռային յարաբերութիւնը ցոյց տուող դաստիարակչական վիպէտներ»:
- «Շատ վախնալիք է: Ես իմ աչքերս պիտի ծածկեմ (յօրանջել), եւ հիմա որ աչքերս գոց են, կարծեմ պիտի մրափեմ»:
- «Աստուած գիտէ, որ ես պարզապէս մարդ արարած մըն եմ եւ ունիմ սեռային պէտքեր, որոնք չեն գոհացուիր զոյգիս կողմէ: Գիտեմ, որ պէտք չէ ընեմ, բայց վերջ ի վերջոյ ես արդէն ներուած եմ...»:
- «Ես այս նախագահին չէ, որ քուէ տուի: Չեմ ուզեր աղօթել իրեն համար»:
- «Սեռային մաքսանենգութիւնը սոսկալի բան մըն է, բայց արտասահմանեան հարց մըն է, չէ՞»:
- «Ո՛րքան ողբերգական է, որ այդքան մարդ մեռած է Հայթիի եւ Չիլիի երկրաշարժներուն պատճառով: Ինչ աղուոր բան է, որ հոշակաւոր մարդիկ դրամ կը հաւաքեն՝ անոնց օգնելու համար»:

Երբեմն կ'ուզեմ լալ՝ վախնալով, որ մոռցած ենք, թէ ո՞վ ենք: Մեր անձերը մերը չեն. մենք Աստուծոյ կը պատկանինք: Մենք սուրբ ժողովուրդ մըն ենք՝ զատուած իրեն եւ իր նպատակներուն համար: Մենք ցիրուցան եղած, դժուարութիւններու մէջ եղող, անհայր գաղթականներ չենք, որոնք նուաճուած են մեղքին կողմէ եւ կը կասկածին Աստուծոյ գոյութեան վրայ: Մենք Քրիստոսի հաւաքական

Մարմինն ենք, եւ իբրեւ այդպիսին մեզի վիճակուած է նուաճել, յաղթանակել եւ նշաններ ու սքանչելիքներ տեսնել: Դժբախտաբար մեր քոյրերէն ոմանք տակաւին չեն գիտեր ատիկա:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ, Ո՛Չ ՀԱՐՑԵՐ

Արդէն կարճ կերպով անդրադարձանք այն իրականութեան, որուն մասին գրեցի 2005-ին՝ *Կռուիք Աղջկայ մը պէս* վերնագիրով գիրքիս մէջ, թէ՛ «Դո՛ւն, դուստր, պատասխան մըն ես, ոչ հարց մը»: Մինչ կ'աւարտեմ գրել *Երբ Կին Առիծները Կ'արթննան*ը, հրատարակուած կը գտնենք կարեւոր եւ հետաքրքրաշարժ գիրք մը՝ *Երկինքին Կէսը* վերնագիրով, որուն մէջ հետեւեալ հաստատումը կայ. «Կիները հարցը չեն, այլ՝ լուծումը»: Այդ գիրքը գրուած է Նիքոլաս Տի. Քրիսթօֆ եւ Շերիլ ՈւուՏան Փուլիճըր Մրցանակին արժանացած լրագրող զոյգին կողմէ: Անոնք գրեցին շտապ պէտքի մը համար աշխարհը արթնցնելու մտադրութեամբ, որն է՝ լիազօրել կիները հաւասար արժէքով, կրթութեամբ եւ տնտեսական հնարաւորութեամբ: Երախտագիտութեամբ կ'ըսեմ, որ իրենց աշխատութիւնը շարժում մը ստեղծած է դերասաններու, հանրային գործիչներու եւ մամուլի աշխարհին մէջ:

Հոս այդ նիւթը կը բանամ, որովհետեւ քիչ մը տխուր եմ, որ Եկեղեցին չեղաւ սեռային հաւասարութեան հարցին մասին առաջին խօսողը: Այնպէս կ'երեւի, որ մենք Յովսէանի նման ենք՝ այն քնոտ մարգարէն հին ժամանակի, որ նաւուն խորշը խորունկ կը քնանար մինչ նաւուն անձնակազմը խենթի պէս կը փորձէր նաւը կանգուն պահել մահացու փոթորիկին մէջ: Մենք պէտք է առաջինը ըլլայինք նաւուն տախտակամաճին վրայ՝ Աստուծմէ լուծում փնտոելով այն բացայայտ անարդարութեան համար, որ հաւասարակշռութեան խախտում մը կ'ընէ մեր աշխարհին մէջ: Բայց Յովսէանի պէս մենք մեկուսացած նաւի մը մէջ չենք, որ փոթորիկ կը դիմագրաւէ ծովուն մէջ: Ամբողջ աշխարհը տագնապի մէջ է մինչ կենսոլորտային փոթորիկներ կը հարուածեն երկիրը եւ ֆինանսական երկրաշարժներ կ'ապակայունացնեն

աշխարհի տնտեսությունները: Անարդարությունները պատճառ կ'ըլլան, որ մեր երկիրը ցնցուի եւ ճօճուի: Ահազանգի վիճակի մէջ մարդիկ կը դառնան Քրիստոնեաներու եւ կը հարցնեն. «Ինչպէս պատահեցաւ ասիկա»: Գերին, ցաւի մէջ եղողը եւ շփոթի մէջ եղողը կը դառնան մեզի եւ կը հարցնեն, թէ ինչպէս կրնանք քննալ երբ պէտք է աղաղակենք Աստուծոյ, որ ծրագիր մը տայ մեզի, որպէսզի մասնակցինք անոր ըրած միջամտություններուն նախքան որ շատ ուշ ըլլայ: Բայց շատ շատեր եկեղեցիին մէջ արտօնած են, որ ներկայի շարժումը օրօրէ գիրենք եւ տանի անհանգիստ քունի մը մէջ կամ ալ մղէ գիրենք վիճաբանելու անկարելի բաներու մասին:

Յովնանի օրերուն Աստուած փոթորիկ մը ղրկեց՝ մարգարէն արթնցնելու համար իր անհնազանդութենէն եւ անոր յիշեցնելու համար, որ Նինուէի ժողովուրդը սխալ ճամբու մէջ էր: Աստուած բնաւ չ'ուզեր ձգել մարդիկը, որ վսաս կրեն, սակայն Յովնան չէր ուզեր արգելք ըլլալ այն կործանումին, որ այդ հինաւուրց քաղաքին վրայ պիտի հասներ: Ուստի ան գնաց եւ պահուրտեցաւ նաու մը խորշին մէջ: Երբ ան կը ճամբորդէր ճիշդ հակառակ ուղղութեամբ այն վայրէն, ուր Աստուած ըսած էր իրեն, որ երթար, ան քնացաւ: Աստուած այնքան մեծ փոթորիկ մը ղրկեց, որ այն նաւը, որուն վրայ կը գտնուէր Յովնան գրեթէ ջախջախուելու վրայ էր: Յովնան ինչո՞ւ փախուստ տուաւ: Ան չուզեց փրկութեան միջոց ըլլալ անոնց համար, զորս ինք անարժան կը տեսներ: Տեսէք Աստուծոյ հետ անոր ունեցած խօսակցութիւնը իր եւ քաղաքին խնայուելէն ետք:

Յովնան չափազանց դժգոհեցաւ ու բորբոքեցաւ: Ուստի Տէրոջ աղօթելով ըսաւ. «Ո՛հ, Տէր, միթէ ասիկա չէր ինչ որ կ'ըսէի, երբ դեռ իմ երկիրս էի. ասոր համար նախապէս Թարսիս փախայ: Արդարեւ գիտէի, թէ դուն ողորմած, գթած, համբերատար եւ շատ կարեկից Աստուած ես, ու չարիքէն կը հրաժարիս»: (Յովնանի 4.1-2)

Յովնան կ'ուզէր, որ Աստուած դատաստան ղրկէր եւ պատժէր այդ քաղաքը, բայց Աստուած կ'ուզէր շնորհք եւ ողորմութիւն ցոյց տալ: Յովնան համաձայն էր, որ Աստուած

ոչնչացնէր ամբողջ քաղաք մը՝ լեցուն մարդոցմով, բայց ինք շատ նեղացաւ եւ ուզեց մեռնիլ երբ իրեն շուք տուող ծառը չորցաւ:

Աստուած Յովսէֆին ըսաւ. «Միթէ լա՛ւ է այդպէս բորբոքիլդ՝ տղենիին համար»: Ան ալ պատասխանեց. «Լաւ է մեռնելու աստիճան բորբոքիլս»: Այն ատեն Տէրը ըսաւ. «Դուն տղենիին վրայ խղճացիր, որուն համար չաշխատեցար ու զայն չաճեցուցիր. ան մէկ գիշերուան մէջ բուսաւ, եւ մէկ գիշերուան մէջ փճացաւ: Հապա ես պիտի չխղճամ Նինուէի՝ այդ մեծ քաղաքին վրայ, որուն մէջ հարիւր քսան հազարէն ատելի մարդիկ կան՝ որոնք չեն կրնար իրենց աջ ձեռքը զատորոշել ձախ ձեռքէն, նաեւ շատ անասուններ»: (Յովսէֆին 4.9-11)

Հելճ: Արդեօք մենք ալ նոյնպէս կորսնցուցմձ ենք Աստուծոյ համար կարեւոր բաներու մեր հասկացողութիւնը: Արդեօք մենք ատելի մտահոգ ենք մեր հանգիստով եւ պատասպարանով քան Աստուծոյ արժէք տուած բաներով: Բարձրեալը վերը երկինքի մէջ նստած չէ՝ խանդավառուած երկրի վրայ գալիք կործանումով: Ան կը փափաքի ազատել բոլոր անոնք, որոնք վատ ճամբու մէջ են: Եկէք չարգիլենք յոյսը անոնցմէ, զորս Աստուած կ'ուզէ փրկել: Կ'աղօթեմ, որ արտօնես, որ Աստուած արթնցնէ առիծը քու մէջդ եւ քեզ դնէ ուրիշները ազատելու, ոչ դատելու, դիրքի մը մէջ. ազատելու այն չարէն, որ կը սպառնայ նուաճել եւ կործանել զանոնք:

Ժամանակն է Աստուծոյ կանչին հնազանդելու: Ան մեզի վստահեցաւ երկրին համար բարի լուրի պատգամը: Ան պատուիրեց, որ զիրար սիրենք: Ան պատուիրեց, որ հոգ տանինք այրիներուն, որբերուն, օտարներուն եւ աղքատներուն: Ներկայիս ան կը քաջալերէ դուստրերը՝ երիտասարդ եւ տարեց, որ մեր լուծումները բերենք աշխարհի հարցերուն: Ան կը հրաւիրէ մեզ, որ մեր տարբերութիւնները մէկ կողմ դնենք եւ միասին աշխատինք Աստուծոյ գործին մէջ:

Մեզմէ ոմանք տակաւին աշխատանք կը տանին ուրիշներու հետ ազնիւ ըլլալու համար: Ուրիշներ շատ

զբաղած են իրենց կորուստներուն վրայ լալով: Եւ շատ շատեր կը կռուին անհերթեթ վարդապետական հարցերու շուրջ՝ Քրիստոսի Մարմինի միւս բաժիններուն դէմ արտայայտուելով:

Սիրելիներ, չեմ ուզեր, որ մեզ արթնցնող զանգակը ըլլայ Յովնանի ծովը նետուելուն կամ իսրայէլացիներուն անապատին մէջ թափառելուն պէս բան մը: Ուստի եկէք նայինք Չարին եւ աշխարհի հարցերուն, եւ թող աստիկացնելով արթնցնէ մեզ: Հոգիիս մէջ կը տեսնեմ ժողովուրդ մը, որ արթնցած է, գրգռուած եւ պատրաստ փոխելու իր աշխարհը:

ՔՈՒ ԻՒՐԱՅԱՏՈՒԿ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆԴ

Այս գիրքը գրելու ատեն խմբագիրներս քաջալերեցին զիս, որ բաժնեկցիմ օրինակներ կիներու, որոնք ամբողջապէս արթուն են, որպէսզի տեսնէք, թէ ամբողջովին արթուն եղող կին մը ինչ կրնայ իրագործել: Բայց չեմ ուզեր միայն մեր տեսածներուն շուրջ սահմանափակել իրականութիւնը: Ամբողջովին արթուն եւ վտանգաւոր եղողներու այս պատմութիւնը տակաւին կը գրուի: Կը հաւատամ, որ աշխարհը տակաւին պիտի տեսնէ, թէ ճիշդ ինչ կը նշանակէ Քրիստոնեայ կիներու՝ անհատապէս եւ հաւաքաբար, ամբողջապէս արթուն եւ վտանգաւոր ըլլալը:

Երկու անգամ Աստուած ինձի պատուիրեց, որ սկսիմ Քրիստոնեայ կիները *արթնցնելու գործընթացը*: Ես գաղափար չունիմ, թէ այս բոլորը ինչ պատկեր պիտի ստանան երբ մենք *ամբողջովին արթուն* ըլլանք, բայց ես բաւական վստահ եմ, որ մենք վտագաւոր պիտի ըլլանք խաւարին մէջ եւ փառաւոր լոյսին մէջ: Այդ մասին բաւական խորհելէ ետք, ես եկած եմ հաւատալու, որ Քրիստոնեայ կնոջ մը ընդմէջէն կատաղի, վայրի էգ առիւծի մը արտայայտութիւնը տակաւին պիտի բացայայտուի:

Ես նաեւ եկած եմ անդրադառնալու, որ մարդիկ կը սիրեն երբ իրենց կ'ըսես, թէ ինչ ընեն: Բայց ամէն բանի ընելու ձեւը եւ քայլ առ քայլ ընթացքը բացատրելը մեզ կը զրկէ Աստուծոյ հետ գործելու խորհրդաւորութենէն: Ուստի այս

գիրքը ինչը ինչպէս ընելու պատգամ մը չէ: Ես կ'ուզեմ, որ դուն *արթննաս*՝ ոտքի ելլես իբրեւ էգ առիծ մը եւ քալես քեզի յատուկ արտայայտութեամբ: Միայն դուն եւ Աստուած կրնաք սահմանել էգ առիծին պատկերը երբ անիկա ամբողջովին արթուն ըլլայ քու մէջդ:

Վերջերս իմ անձնակազմէս խնդրեցի, որ ինծի դրկեն այն բառերը, որոնք իրենց միտքը կու գան երբ կը մտածեն էգ առիծի մասին: Ես չզարմացայ բնաւ երբ նկատեցի, որ իրենց պատասխանները կը տարուբերէին *շնորհքի* ու *քնքշութեան* եւ *կատարողի* ու *անվախի* միջեւ: Նոյնքան ալ այլազան եւ ընդարձակ կրնան ըլլալ արտայայտութիւնները կիներուն, որոնք կ'ընդառաջեն արթննալու կոչին:

Աստուածաշունչը սերտելու ատեն նկատած եմ, որ Աստուած իր ժողովուրդին կամ մարգարէներուն յաճախ կ'ըսէ. «Այսինչ տեղը գնա՛, այսինչ բանը ըրէ՛, այսինչ բանը ըսէ՛», առանց ատկէ յետոյ պատահելիքին մասին որեւէ յստակ բացատրութեան: Ատոր մէկ օրինակը կը տեսնենք կեանքին մէջ Եղիսէի, որ այրի կնոջ մը թելադրեց՝ «*Գնա՛, դուրսէն՝ բոլոր դրացիներէդ պարապ անօթներ ուզէ քեզի համար. քիչ մի՛ ուզեր: Ապա տոնո՛ղ մտիր, վրայէդ եւ որդիներուդ վրայէն դո՛ւր գոցէ, իւղդ այդ բոլոր անօթներուն մէջ պարպէ՛, ու լեցուածը վերցո՛ւր*» (Դ.Թագաւորներուն 4.3-4): Ատիկա բաւական անորոշ կը թուի ըլլալ: Ատիկա ինչպէս պիտի լուծէր պարտատէրներուն հարցը, որոնք կը սպառնային իբրեւ ստրուկ առնել այդ կնոջ որդիները: Սակայն երբ կինը ըրաւ այն ինչ որ ըսուեցաւ իրեն, վերադարձաւ Աստուծոյ մարդուն, որ ըսաւ կնոջ. «*Գնա՛, իւղը ծախէ՛ ու պարպո՛ղ վճարէ՛, եւ մնացածով դուն ու որդիներդ ապրեցէ՛ք*» (Դ.Թագաւորներուն 4.7):

Ես ինծի հարց կու տամ, թէ արդեօք հրքան հրաշքով մեզի գալիք մատակարարումներ կը վրիպին մեզմէ որովհետեւ կ'ուզենք գիտնալ երկրորդ, երրորդ եւ չորրորդ քայլերը նոյնիսկ նախքան առաջին քայլը առնելը: Ուստի ասիկա համարեցէք գիրք մը, որ ձեզի կ'ըսէ. «Կարդա՛ գրուածները, աղօթէ՛ եւ արտօնէ՛, որ Աստուած ինքզինք լեցնէ այն բոլոր անօթներուն մէջ, որ իր առջեւ դրած ես»: Խնդրէ՛ Աստուծմէ, որ լեցնէ միտքդ էգ առիծի գաղափարով՝ ինչ ալ ձեւ, կերպար

կամ անօթ, որ կ'ուզէ գործածել քեզ ներշնչելու համար:

Մի վախնար մեր էգ առիծ ըլլալու կամ Յիսուսի առիծ ըլլալու պատկերներէն: Անիկա տարբեր չէ Յիսուսի մեր հովիւր եւ մեր անոր ոչխարները ըլլալու ներկայացումէն: Արդեօք մենք բառացիօրէն ոչխար ենք, կամ Աստուած կ'ուզէ, որ իրեն հետեւինք եւ վստահինք իբրեւ ոչխարներ: Նոյնպէս ալ Յիսուս մեր փեսան է, եւ մենք՝ իր հաւաքական հարսը: Ատիկա այլաբանական պատկեր մըն է: Յիսուս նոյն ատեն Հովիւ է, Թագաւոր, Աստուած, Մարդ, Փեսայ, Եղբայր, Առիծ, Գառնուկ ինչպէս նաեւ Սկիզբն ու Վախճանը: Զարմանալի է, որ ան ուզէ ձգել (կամ քաշելով ընդլայնել) մեզ: Փափաքս է, որ ընդառաջես քու իրայատուկ ըմբռնումներուդ համաձայն ինչպէս նաեւ ոյժի եւ ազդեցութեան տեղէր:

ԱՐԹՆՑՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Համալսարանի օրերուս աղջկանց ընկերութեան (*սորորիթի*) տունը ունէր քնանալու պատշգամբ մը: Վստահ չեմ, թէ ինչն այդպէս կը կոչուէր, քանի որ շէնքին դուրսի բաժինը չէր, ոչ ալ որեւէ ձեւով դէպի դուրս կը նայէր: Անիկա երկար, մթնցուած, երկրորդ յարկի սենեակ մըն էր՝ լեցուն երկյարկանի անկողիններով: Անոնցմէ ոմանք շարուած էին պատին քով, մինչ ուրիշներ մթնցուած պատուհաններու շարքի մը դիմաց շարուած էին ուղղահայեաց կերպով:

Քանի որ շատերս կը բաժնեկցէինք այդ հասարակաց սենեակը, մեզի արտօնուած չէր զարթուցիչ ժամացոյց գործածել: Փոխարէնը կարգով կը ստանձնէինք իմ ամէնէն չսիրած պարտականութիւնս. արթնցնող ըլլալու պարտականութիւնը: Ամէն գիշեր քնանալէ առաջ աղջիկները կ'արձանագրէին իրենց արթննալու ժամերը: Այսինքն՝ արթնցնելու պարտականութիւնը ստանձնած աղջիկը պէտք էր գիտնար իր քոյրերէն իրաքանչիւրը ո՞ր քնացած էր: Արթնցնելու պարտականութիւնը ստանձնած գիշերը, այդ աղջիկը ուրիշ սենեակ մը կը քնանար, ուր կրնար զարթուցիչը լարել:

Երբ իմ կարգս ըլլար, ես զարթուցիչս ամէնէն առաջինը արթննալ ուզող քրոջմէս կէս ժամ առաջ կը լարէի, որպէսզի

կարենայի լոգնալ: Առանց սպասման շարքին մէջ սպասելու լոգանք առնելը միակ առաւելութիւնն էր բոլորէն առաջին արթննալու:

Երբ արթնցնելու գործընթացը սկսէր, յառաջիկայ երկու կամ երեք ժամը պիտի անցընէի ամէն տասնհինգ վայրկեանը կամ կէս ժամը մէյ մը երթալ եւ աղջիկներ արթնցնելով: Կը մտնէի-կ'ելլէի այդ մթնցուած քնանալու պատշգամբէն ներս եւ դուրս՝ միեւնոյն ատեն փորձելով նախաճաշ ընել եւ ես ինքս ալ պատրաստուիլ: Բազմաթիւ անգամներ լուռօրէն սողոսկած եմ ներս, դուռը ետեւէս գոցած, խարխափելով անցած անկողիններուն քովէն զգուշութեամբ՝ չուզելով արթնցնել քնացող քոյրերը իրենց քովէն անցած ատենս: Երբ կը գտնէի ուզած քոյրս կամ քոյրերս, նրբօրէն բայց ամուր կերպով կ'արթնցնէի զանոնք:

Պատասխանատուութեան զգացում մը կը տիրէր վրաս, որովհետեւ գիտէի, որ քոյրերէն իւրաքանչիւրը ինծի վստահած էր, որ արթնցնէի զինք: Դասի պէտք էր ներկայ ըլլային, գրաւորներ ընէին, գրաքննական հանդիպումներու ներկայ ըլլային, որոնք կարելի չէր փախցնել, եւ անշուշտ սիրահարներ, որոնց հետ պէտք էր հանդիպէին:

Մէկ անգամ երբ տակաւին նորեկ էի, չէի կրցած արթնցնել քոյր մը: Ես շատ մեղմօրէն փորձած էի արթնցնել զայն՝ վարանած ըլլալով ցնցել աւագ քոյր մը: Ան բաներ մը մրթմրթաց, ես ալ կարծեցի, որ արթուն էր: Բայց իրականութեան մէջ արթուն չէր, եւ պարզապէս քունին մէջ կը խօսէր: Այդ օրը կէսօրին, ան զայրացած գրոյց մը ունեցաւ ինծի հետ՝ ինծի յստակ դարձնելով, թէ իմ պարտականութիւնս ազդու կերպով չկատարելս ինչ գին վճարել տուած էր իրեն: Կան սխալներ, որոնք չես ուզեր երկու անգամ գործել: Ուստի շուտով սորվեցայ, որ կային քոյրեր, որոնց լաւ մը պէտք է ցնցէիր, ուրիշներ ամենանուրբ հպումէն իսկ կ'արթնային եւ տակաւին ուրիշներ, որոնք ամբողջովին արթուն վիճակի մէջ կը նստէին իրենց անկողինին մէջ եթէ քոյր մը իրենց անունը փսփսար միայն: Կարգ մը քոյրեր շնորհակալութիւն կը յայտնէին ինծի, իսկ ուրիշներ կը հայիոյէին եւ կը հրամայէին, որ երթամ իրենց քովէն:

Ամէնէն խաբուսիկները անոնք էին, որոնք կը թուէին

արթուն ըլլալ եւ նոյնիսկ կ'ըսէին՝ «Լաւ, լաւ, արթուն եմ», եւ ապա նորէն քունի կ'անցնէին: Ես սորվեցայ, որ այդ տեսակի քնոտ քոյրերուն պարագային պէտք էր դիրքս չծգէի մինչեւ որ զանոնք երկու ոտքի վրայ կանգնած չտեսնէի գետինին վրայ:

Ուրիշ խնդիր մըն էր սխալ քոյր մը արթնցնելու հարցը: Հակառակ անոր որ կը փորձէի լուռ ըլլալ եւ զգոյշ, երբեմն քոյր մը արթնցնելու ընթացքին կ'արթննար նաեւ անոր վրայի կամ քովի անկողինին մէջ քնացած քոյրը: Յանկարծ կը նստէր անկողինին մէջ, ինծի անակնկալի բերելով թեւս կը բռնէր եւ կը փսփսար. «Հէյ, արթնցայ: Անունս հանէ ցանկէդ»:

Կ'ամչնամ ըսելու, բայց այն օրերուն ես հայիոյող, դժուար արթնցողներուն շարքին էի: Գրեթէ միշտ երկրորդ յիշեցումի մըն ալ կարիքը կ'ունենայի: Ես ալ ինքս այդ պարտականութիւնը ըրած ըլլալով, գիտէի օրէնքները: Եթէ քոյր մը երկու անգամ արթնցնէիր եւ ան տակաւին անկողինին մէջ մնար, քեզմէ պահանջուած չէր երրորդ անգամ մըն ալ փորձել: Այդ օրէնքը ստիպողականութիւն մը կը դնէր արթնցնելու երկրորդ փորձին վրայ, որովհետեւ գիտէիր, որ անիկա վերջին առիթդ պիտի ըլլար: Մէյ մը, որ քոյրերս լման արթուն եւ շարժումի մէջ կ'ըլլային, այլեւս պատասխանատու չէի անոնց հսկելու: Անոնք արդէն շարժումի մէջ եղող քոյրեր էին: Այլեւս պէտք էր երթայի եւ իմ պատրաստութիւններս ասարտէի:

Մեր առատածեռն Աստուածը չի գործեր մեր այդ աղջկանց ընկերութեան օրէնքներով: Ան անելի քան ուրախ կ'ըլլայ մինչեւ վերջին վայրկեան մեզ շարունակ արթնցնելով, սակայն կարելի չէ ուրանալ կացութեան հրատապութիւնը: Կը զգամ, որ այս պահուն կարգ մը քոյրեր կ'ընդառաջեն իրենց շուրջ եղող քնոտ կիները արթնցնելու կոչերուն:

ԿԱՏԱՂԻ ԲԱՆ ՄԸ ԱՐԹՆՅՈՒԻ

Կը կարծեմ, որ ծիծաղելի է, որ կեանքիս այս եղանակին ես արթնցնելու պարտականութիւն ստանձնած եմ, միայն այս անգամ շատ անելի բան գրաւի դրուած է: Երբեմն այնպէս կը զգամ, որ կարծես տակաւին կը պտտիմ երկյարկանի

Վտանգաւոր Կերպով Արթուն

անկողիններուն միջեւ մթնցուած սենեակներու մէջ, ուր թերթերէն կը ցնցեմ, յամառօրէն կը սպասեմ, եւ երբեմն-փառաւոր ժամանակներ կ'ըլլան անոնք- պարզապէս կը փսփսամ քոյրերուս անունները եւ անոնք կ'արթննան եւ ոտքի կ'ելլեն:

Գիտեմ, որ առանձին չեմ այս արթնցնելու պարտականութեան մէջ, եւ Աստուծոյ դուստրերէն իւրաքանչիւրը պիտի ընդառաջէ զինք իր քունէն արթնցնելու տարբեր միջոցներու եւ մեթոտներու: Իմ պարագայիս, ինծի պարտականութիւն տրուած է ձեր առջեւ վայրի սկզբունքներ եւ գեղեցիկ պատկերներ դնել: Իմ աղօթքս է, որ վեհութեան եւ ոյժի այս հետաքրքրաշարժ յայտնութիւնը ունենայ զօրութիւնը կատաղի բան մը արթնցնելու մէջդ, որպէսզի երբ ամբողջովին արթննաս, գիտնաս ինչ պիտի ընես:

Աշխարհը պէտք ունի քեզի, սիրելի առիծ քոյր, ոչ միայն արթննալու, այլեւ արտայայտելու քու աստուածատուր, կատաղի կողմդ: Ինչ տեսակ կ'ըլլայ *Կապաղի Քրիստոնեայ* կին մը: Արդեօք կը պոռայ, կը կանչէ, կը ճանկէ եւ կից կը զարնէ: Ժամանակ մը կայ ատոր համար: Գիտեմ, որ եթէ զաւակներէս կամ թոռներէս որեւէ մէկուն դէմ յարձակում մը ըլլայ, ատոնք եւ ատկէ աւելին կ'ըլլայ իմ հակազդեցութիւնս: Աստուած մամա արջի եւ էգ առիծի այդ ձեւի հակազդեցութեան մը մասին կը խօսի Ովսիայի Գիրքին մէջ եւ կ'ըսէ, թէ ինք այդպէս պիտի ընէ:

Արջի մը պէս, որուն ձագերը առնուած են իրմէ,
Ես պատռելով դուրս պիտի հանեմ ձեր սիրտը:
Պիտի լափեմ ձեզ անօթի էգ առիծի մը պէս
Եւ պիտի պատառեմ ձեզ վայրի գագանի մը
պէս: (Ովսէէի 13.8, բառացիօրէն թարգմանուած
Աստուածաշունչի *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն*
տարբերակէն)

Ո՛հ: Այս համարը յստակօրէն կը նկարագրէ վայրենի, վայրագ երեսը *Կապաղիին*, բայց պատառելու վայրագութենէն աւելին կայ այդ զօրաւոր խօսքին մէջ: *Կապաղիին* իմաստը ամբողջացնող ուրիշ բառեր են՝

բուռն, զօրաւոր, հզօր, մոլեգին, ուժգին, կրակոտ եւ *յարձակողական*: Չեմ կրնար պատկերացնել բառերու ուրիշ խումբ մը, որ աւելի ճշգրտօրէն կը նկարագրէ այն ինչ որ կը զգամ ներսիդիս: Վստահ եմ, որ մոլեգին բան մը արդէն իսկ արթնցած է՝ իրեն հետ բերելով աւելի մեծ յստակութիւն եւ զօրութիւն, ինչպէս փոթորիկ մը, որ հետզհետէ ոյժ կը հաւաքէ կամ կը զօրանայ: Այդ ոյժը անձնական իրարանցում չէ բերած. անիկա կեդրոնացում բերած է: Աւելի մեծ կեդրոնացումով, ես հետզհետէ աւելի եւ աւելի եռանդ ունեցայ բաներու հանդէպ, որոնցմէ նախապէս անտեղեակ էի:

Այդ զարթնումի պահերէն շատերը քիչ մը անակնկալի բերած են զիս: Անոնցմէ մէկը պատահեցաւ 2007 թուականի Հոկտեմբերի վերջաւորութեան կամ Նոյեմբերի սկիզբը: Լուացարանն էի, ամսաթերթ մը կը կարդայի, կարծես ուրիշ աւելի լաւ տեղ մը չկար ատիկա ընելու համար... Մինչ էջերը կը դարձնէի, առաջին անգամ ըլլալով կարդացի Թայլանտի մէջ սեռային մաքսանենգութեան վայրագութիւններուն մասին: Աւարտեցի յօդուածը եւ կարգ մը պարբերութիւնները անգամ մը եւս կարդացի՝ գրեթէ անկարող հաւատալու, որ կարդացածս ճիշդ էր: Մարդիկ կրնան այդքան անգութ ըլլալ: Իրապէս այդ բաները կը պատահին եւ անտեղեակ եմ: Սկսայ լալ (լուացարանին մէջ, կարծես ուրիշ աւելի լաւ տեղ մը չկար ատիկա ընելու համար), եւ յետոյ աղօթեցի՝ *Աստուած, եթէ ես կրնամ այդ հարցին տալ որեւէ ոյժ կամ ձայն, պատրաստ եմ: Այդ աղօթալի զարթնումով, բան մը փոխուեցաւ:*

Քանի մը շաբաթ անցաւ եւ հեռաձայն մը ստացայ *Լայֆ Աութրիչ*էն. «Լիսա, մենք խումբ մը կը կազմենք Թայլանտ երթալու՝ սեռային մաքսանենգութիւնը արգիլելու համար դրամահաւաք ընելու եւ արթնութիւն բերելու համար, եւ մտածեցինք քեզ ալ տանիլ»: Երեք ամիս ետք ուղղուեցայ Թայլանտ՝ մաս կազմելու համար մարդկային մաքսանենգութեան դէմ *Լայֆ Աութրիչ*ի առաջին նախաձեռնութեան:

Ինչ պիտի ըլլար եթէ ես այդ օրը աղօթած չըլլայի: Եթէ միայն լայի, գլուխս շարժէի եւ շարունակէի էջերը դարձնել: Շուտով զբաղած պիտի ըլլայի մորթի հոգատարութեան ամենավերջին հնարքներով, հագուստի

վերջին նորաձեւութիւններով կամ սննդականոնի վերջին գաղտնիքներով: Եթէ շարունակած ըլլայի կարդալ փոխանակ աղօթելու, շատ հաւանաբար անկողին մտնէի այդ գիշեր առանց ձայնս երկինք բարձրացնելու, եւ երբ հարցը դարձեալ իմ ուշադրութեանս յանձնուէր, հաւանաբար այս ձեւի բան մը ըսէի. «Այո, լսեցի այդ մասին... Ամսաթերթի մը մէջ կարդացի... Շատ, շատ ցաւալի է եղածը»:

Բայց երբ *արթնցած* ես, չես կրնար *չընդառաջել*: Արթնցած ըլլալը մի՛ շփոթէք վրդոված ըլլալու հետ: Եթէ բան մը կը վրդովէ ձեզ, կրնայ ըլլալ, որ հակազդես այդ պահուն, բայց վրդովիլը չունի զօրութիւնը արգելք ըլլալու, որ էջերը դարձնես: Կրնաս վրդոված ըլլալ, բայց ո՛չ արթնցած: Բայց չես կրնար ամբողջովին արթուն ըլլալ՝ եւ հետեւաբար զգաստ կերպով գիտակից աշխարհի հարցերուն, եւ չընդառաջել: Ատոր համար երբ կարդացի պարմանուիիններու մասին, որոնք կ'առեւանգուէին եւ հանրատուներ կը նետուէին, պէտք էր աղօթէի եւ Աստուծոյ ըսէի, որ պատրաստ էի ընելու այն ինչ որ կ'ուզէր, որ ընէի՝ դէմ դնելու համար այդ վայրագութեան: Աղօթքս մեծ նշանակութիւն տուաւ ինձի եկած այդ առիթին: Կրնայի՞ն ուրիշ առիթներ ալ ըլլալ: Թերեւս, բայց այդ առիթը փախցուցած կ'ըլլայի:

ԱՍՏՈՒԱԾ ՉՓՐԿԵՑ ՔԵՉ, ՈՐՊԵՍՉԻ ԸՆՏԱՆԵՑՆԷ ՔԵՉ

Աստուած մեզի չի յայտներ իր անսահմանութիւնը, որպէսզի մեզ սահմանէ: Ճիշդ հակառակը: Ան կ'ուզէ իր սիրտը դնել մեր մէջ: Ընկերուիս՝ Քրիստինը շատ աղուոր ձեւով կը բացատրէ ատիկա, ըսելով՝ «Աստուած չփրկեց քեզ, որպէսզի ընտանեցնէ քեզ»:

Աստուած չի փնտռեր մարդիկ, որոնք կը վարուին Քրիստոնէաներու նման: Ան կ'ուզէ, որ *ըլլանք* Քրիստոնէաներ: *Քրիստոնէայ* կը նշանակէ՝ «օծեալ կամ Քրիստոսանման մէկը»: Յիսուս չըջեցաւ «բարի ըլլալով»: Ան «չըջեցաւ բարիք գործելով» եւ արձակելով անոնք, որոնք ճնշուած էին: Ինչ ընելու համար օժած է ան քեզ:

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

Տէրոջ Հոգին իմ վրաս է.

Որովհետեւ օձեց զիս աղքատներուն
աւետարանելու,

Ղրկեց զիս կոտրած սիրտ ունեցողները բժշկելու,

Գերիներուն՝ ազատ արձակում եւ կոյրերուն
տեսողութիւն յայտարարելու

Հարստահարութիւն կրողները ազատ արձակելու,

Տէրոջ բարեհաճութեան տարին յայտարարելու:
(Ղուկասի 4.18-19)

Եթէ Աստուծոյ Հոգին Յիսուսի վրայ եկաւ այդ բոլոր բաները ընելու համար, եւ եթէ մենք այդ նոյն Հոգիէն ծնած ենք, ապա պէտք է ընենք այն ինչ որ ինք ըրաւ. աղքատներուն աւետարանել, հարստահարուածները ազատ արձակել եւ Տիրոջ բարեհաճութեան տարին յայտարարել: Ես կը հաւատամ, որ ամէն տարի Աստուծոյ բարեհաճութեան տարին է, եւ թէ ան տակաւին կը սպասէ, որ գործենք իրեն համար:

Այդ յանձնարարութեան լոյսին տակ, Աստուած չ'ուզեր շարք մը ընտելացուած դուստրեր, որոնք իրենց օրերը թխելով եւ լաւ տան աղջիկներ ըլլալով կ'անցնեն: Սխալ բան մը չկայ թխելուն մէջ, բայց եթէ միայն ատիկա կ'ընենք, Աստուած պիտի չգործածէ մեզ պատմութիւնը փոխելու համար:

Գիտեմ, որ այս վերի մէջբերումը կամ խօսքը դժուար ընդունելի պիտի ըլլայ ձեզմէ ոմանց համար: Անիկա ինձի համար ալ դժուար ընդունելի եղաւ երբ առաջին անգամ կարդացի: Անիկա չարածնի ըլլալու յորդոր մը չէ, այլ՝ յորդոր մըն է անդրադառնալու, թէ փոփոխութիւնը յաճախ կու գայ ներկայի կարգավիճակին ասպարէզ կարդալով:

Լաւ վարուելակերպ ունեցող կիները հազուադէպօրէն պատմութիւն կերտողներ կ'ըլլան:

– Լորըլ Թաչըր Ուլրիխ

Ամերիկայի հարաւային նահանգներու մշակոյթին եւ հանրային փոխադրակառքի ընկերութեան աչքին, Ռոզա

Փարքսի ըրածը լաւ վարուելակերպ չէր համարուեր երբ ան մերժեց իր նստարանը զիջիլ եւ փոխադրուիլ սեւամորթներու համար յատկացուած փոխադրակառքի ետեւի բաժինը: Մէկ կին կեցուածք առաւ՝ մերժելով ելլել իր նստարանէն, եւ ատիկա փոխեց ցեղային խտրականութեան վերաբերեալ մեր ամբողջ երկրին տեսակէտը: Ես լրջօրէն կը կասկածիմ, որ այդ պահուն ան կ'անդրադառնար, որ պատմութիւն կը կերտէր: Ժամանակը միայն ունի զօրութիւնը յայտնաբերելու շարժառիթները եւ հետեւանքները կատարուած ընտրութիւններուն: Թերեա Ռոզան պարզապէս յոգնած էր լուսանցքայնացուելէ եւ մարդկային արժանապատուութեան աստուածատուր իրաւունքէն զրկուելէ:

Հապա Դեբորան, Յայէլը, Թամմրը, Եսթերը, Բեթսաբէն, Աբիգեան, Ռախմբը եւ նոյնիսկ Մարիամը: (Ասոնք պարզապէս աստուածաշնչական քանի մը օրինակներ են. ուրիշներ ալ կան:)

Արդեօք Դեբորան լաւ վարուելակերպ կ'ունենար իր ժողովուրդը գերիշխող թշնամիի մը դէմ հրահրելով եւ տղամարդոց հետ ձի հեծած պատերազմի երթալով: Իր օրուան ղեկավարներուն համաձայն ոչ, ատիկա լաւ վարուելակերպ չէր կնոջ մը համար: Ամբողջ բանակ մը ելաւ անոր ըմբոստութեան դէմ ղնելու համար, բայց չկրցան նուաճել զինք: Երբ Աստուծոյ ընտրած տղամարդ ղեկավարը՝ Բարակ, վարանեցաւ, Դեբորա Աստուծոյ պատուէրը կատարեց իր գիտցած լաւագոյն ձեւով:

Ինչ կրնանք ըսել Յայէլի մասին: Պէտք էր վրանի ցից մը գործածէր՝ իր թշնամին սպաննելու համար: Չէր կրնար զայն պարզապէս բարձր իշխանութիւններուն յանձնել մինչ ան կը քնանար: Հաւանաբար կրնար, բայց չըրաւ ատիկա: Աստուած հարց չունէր անոր ընտրութեան հետ, եւ երգ մը յօրինուեցաւ՝ անոր քաջագործութիւնը հռչակելու համար:

Ապա կայ Թամարը: Այդ երկու անգամ այրիացած կինը ձեւացուց պոռնիկ մը ըլլալ եւ պառկեցաւ իր այրիացած աներիօր հետ՝ նահապետ Յուդայի: Թամարի վարմունքը ցնցիչ է շատ մը մակարդակներու վրայ: Փաստ չկայ, որ Աստուած իրեն թելադրեց, որ ատիկա ընէ: Ինք ընտրեց ատիկա ընել: Բայց այդ յամառ կինը տեղ կը

գրաւէ Քրիստոսի ազգաբանութեան մէջ, եւ ան արդար հռչակուեցաւ:

Եսթեր խախտեց օրէնք մը, որուն համաձայն միայն թագաւորին կողմէ հրաւիրուելու պարագային մէկը կրնար անոր առջեւ ներկայանալ: Անհնազանդութիւնը Ասուերոսի առաջին կնոջ Վաշթիի վերջը բերաւ: Եսթեր այդպիսի սխալ պէտք չէր գործեր: Բայց թագաւորին ներքին գաւիթին մէջ անոր սխալ վարմունքը պատճառ եղաւ, որ իր ժողովուրդը փրկուի:

Բեթսաբէ շնութիւն գործեց եւ եղաւ մայրը Սողոմոն իմաստունի: Ռախաբ պրոռնիկ մըն էր, որ սուտ խօսեցաւ իր թագաւորին եւ թշնամիին լրտեսները պահեց: Անոր հաւատքի քայլերը ոչ միայն փրկեցին անոր ընտանիքը Երիքովի կործանումէն, այլեւ անոր որդին Դաւիթի եւ Յիսուսի ազգաբանութեան մէջ եղաւ: Աբիգեա խաբեց իր ամուսինը: Անոր ըրած ընտրութիւնը փրկեց իր ամբողջ տունը եւ շահեցաւ Դաւիթ Թագաւորի սիրտը:

Այնպէս կը թուէր, որ Մարիամ ապօրինի զաւակ մը կը կրէր, բայց Աստուծոյ Որդին ծնաւ: Ինչ պիտի պատահէր եթէ ան ըսէր. «Առանց ամուսնանալու յղի մնալս վատ պիտի երեւի: Չի կրնար այս ծրագիրը սպասել մինչեւ որ ամուսնանամ, որպէսզի լաւ կնոջ պատկերս չաղաւաղուի»:

Պատմութիւնը միայն արդարացուց այդ կիներուն ըրած ընտրութիւնները: Անոնց սիրտերը արթնցան եւ արծարծուեցան:

Դուն ինչպէս պիտի վարուիս երբ ամբողջովին եւ վտանգաւոր կերպով արթուն ըլլաս: Դուն ինչ պատմութիւն պիտի կերտես: Արդեօք դուն ալ, այդ կատաղի առիծին պէս, պիտի արթնանս թմրած վիճակէդ եւ ոտքի ելլես՝ պաշտպանելու համար ընտանիքդ, համայնքդ, աշխարհդ: Դուն արթուն ես: Նոյնիսկ այս պահուս ինչ կ'արծարծուի սիրտիդ մէջ:

Վախի եւ Սքանչելի Գումարը

Ահաւոր ու սքանչելի կերպով
ստեղծուեցայ.

Քու գործերդ սքանչելի են:

ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ 139.14



Էգ առիծները զօրաւոր եւ սլացիկ են: Անոնք կը շարժին վարպետութեամբ եւ նպատակով՝ գիտակից ըլլալով, որ իրենց գոյութիւնը եւ իրենց ձագերուն գոյատեւելը կախեալ են ձիրքի եւ զօրութեան աւանդէ մը: Անոնց մորթը ալիքներու երեւոյթ կ'ունենայ երբ քալեն: Անոնք մեզի պէս մտահոգ չեն իրենց մորթին թուլնալովը կամ իրենց պոչին պէտք եղածէն աւելի երկար ըլլալովը կամ նոյնիսկ անով, որ բոլորը իրարու կը նմանին: Անոնք հանգիստ են իրենց անձով:

Էգ առիծները սքանչելի են:

Զանոնք իրենց բնական միջավայրին մէջ տեսած ըլլալով, կը հաւատամ, որ անոնք *գիտեն* ատիկա: Տարբերութիւնը թէ՛ մենք մեզ ինչպէս կը տեսնենք եւ թէ էգ առիծ մը ինքզինք ինչպէս կը տեսնէ, պիտի կարենայինք գիտնալ եթէ մարդիկ եւ առիծները կարենային իրարու հետ խօսիլ: Եկէք պահ մը ձեռացնենք, որ կրնանք խօսիլ իրարու հետ:

«Առիծ, դուն սքանչելի ես»:

Առիծը կը պատասխանէ. «Գիտեմ: Կ'ուզեմ տեսնել, թէ ինչ կրնամ ընել»:

Ոգետրուած կը պատասխանենք. «Այո»:

«Կը տեսնեն թաթերս,» կ'ըսէ ան, նշան ընելով, թէ բան մը կ'ուզէ ցոյց տայ մեզի: «Ասիկա տես»:

Կ'ապշինք մինչ առիծը իր մագիլները կ'արծակէ իր դէպի վեր նայող թաթէն:

«Այս թաթով ես կրնամ տապալել եղնիկ մը, որպէսզի սնունդ ըլլայ իմ ձագերուս եւ կերակրէ խումբս»: Եւ յետոյ կ'ըսէ. «Ասիկա ալ տես»: Ան ետ կը քաշէ իր մագիլները, եւ թաթը դարձեալ թաւշեայ կամ սահուն կը դառնայ: «Այս թաթով կը խաղամ պզտիկներուն հետ եւ կը մարզեմ զիրենք, որպէսզի զօրաւոր ըլլան»:

Մենք գլուխով հաւանութեան նշան կու տանք եւ կը նայինք մեր եղունգներուն, որոնց ներկը ծայրերէն ելած է:

Առիծը նորէն կը խօսի. «Տես ակռաներս»:

Դէպի ետ քայլ կ'առնենք՝ ապշած այդքան այլազան եւ սուր այդ ակռաներէն:

«Այս ակռաներով ես կը պաշտպանեմ, կը սպաննեմ եւ կ'ուտեմ: Եւ սակայն նոյն այս ակռաներով ձագերս կը փոխադրեմ մէկ տեղէն միւր՝ առանց վնասելու իրենց»:

Մենք դարձեալ գլուխով հաւանութեան նշան կու տանք՝ նկատելով հակասութիւնը:

Յետոյ մեր էգ առիծը գոհունակութեամբ կը հառաչէ մինչ կ'ամփոփէ իր գեղեցկութիւնը. «Ահաւոր ու սքանչելի կերպով ստեղծուեցայ»:

Իրապէս կրնանք համաձայնիլ, որ ան ապրող գումարն է վախի եւ սքանչելիի: Բայց մէկ վայրկեան... Մենք ալ այդպէս ենք:

Ահաւոր ու սքանչելի կերպով ստեղծուեցայ.

Քու գործերդ սքանչելի են: (Սաղմոսներու 139.14)

Փորձէ աստիկա բարձրաձայն ըսել հիմա որ էգ առիծի օրինակը ունիս: Անկեղծօրէն, սիրելիս, դուն Աստուծոյ հրաշալի մէկ գործն ես, եւ նոյնպէս են շուրջիդ տղամարդիկն ու կիները: Հարցը այն է, որ շատերս մոռցած ենք, թէ մեր սքանչելիութիւնը վերջ չի գտներ երբ արգանդէն դուրս կու գանք:

Վախի եւ Աքանջելիի Գումարը

Երբ էր վերջին անգամը, որ կնոջ մը հետ ունեցար խօսակցութիւն մը, որ որեւէ ձեւով նման էր մեր էգ առիծին հետ վերի խօսակցութեան:

Շտտեալը աւելի հաւանական օրինակ մըն է կնոջ մը ուրիշ կնոջ մը հետ ունենալիք խօսակցութեան:

«Դուն գեղեցիկ ես»:

«Շնորհակալ եմ, բայց իրականութեան մէջ չեմ կրցած կորսնցնել վերջին զաւակիս յղութեան ատեն վրաս դրած ամբողջ կշիռը»:

Ուեւ կին, որ զաւակ մը ծնած է (կամ տեսած է մանուկի մը ծնունդը) պէտք է անդրադառնայ, թէ մենք իրապէս ահաւոր եւ սքանչելի կերպով ստեղծուած ենք: Ձեւով մը մեր միտքէն ելած է աստիկա, բայց էգ առիծին միտքէն՝ ոչ: Ան գիտէ, որ իր գեղեցկութիւնը կը յայտնուի իր զօրութեան մէջ: Ան լաւ գիտէ, որ իր մարմինը իրականութեան մէջ ինչ կրնայ ընել, եւ որ միայն տեսք չէ: *Անոր գրաչութիւնը անուրանալի է, որովհետեւ անոր զօրութիւնը անվիճելի է:* Ան գիտէ, թէ իր մարմինը ինչ կրնայ ընել եւ ան կը ցնծայ անոր սքանչելիութեամբ: Էգ առիծին ցնծութիւնը փառք կը բերէ իր Ստեղծիչին: Ան հզօր է եւ հմուտ, եւ կը մարզէ իր խումբի ձագերը, որ նոյնպէս ըլլան:

Կարեւոր է, որ յիշենք ոյժի եւ գործելու գեղեցկութիւնը: Չեմ խօսիր ֆիզիքապէս աւելի նիհար ըլլալու մասին: Կը խօսիմ ֆիզիքապէս եւ հոգեւորապէս արթուն եւ ուշիմ ըլլալու մասին՝ կեդրոնացած ըլլալու մասին, եւ հետեւաբար պատրաստ՝ որեւէ պարտականութեան համար, որ Աստուած կու տայ մեզի, որ ընենք: Եթէ պիտի ըլլանք ճշմարիտ էգ առիծներ, պէտք է զօրութիւն ունենանք: Տակաւին վերջերս յայտնաբերեցի, թէ ճիշտ դիւրութեամբ սխալած կ'ըլլանք մեր իրական զօրութեան վերաբերեալ մեր համոզումին մէջ:

ԻՆՔՉԻՆՔԴ ՊԱՅ ԿԱՐԾԵԼ

Ահա ինչպէս սկսաւ իմ մէկ շաբթուան ցնորքս: Յոգնած էի Աստրալիոյ մէջ շարք մը ծառայութիւններ աւարտելէ ետք: Հինգ ծառայութիւններ ըրինք, եւ արդէն Կիրակի գիշեր էր եւ հանգստանալու ժամանակ: Հրաւիրուած էի հանդիպելու

խորհրդաժողովի ղեկավարության խումբին հետ, որոնք անխոնջ կերպով աշխատած էին՝ իրականացնելու համար այդ ձեռնարկը: Բոլորս ալ զուարթ տրամադրության մէջ էինք եւ մանր-մունր անմտութիւններ կ'ընէինք՝ անքնութեան, շատ կերակուր ուտելու եւ Աստուծոյ բարութեան պատճառներով:

Այդ հանգիստ վիճակին մէջ ղեկավարներէն մէկը ինծի հետ բաժնեկցեցաւ ծառայութիւններուն ընթացքին իր սորվածները եւ ունեցած ներըմբռնումները, եւ ըսաւ. «Գիտէ՞ք, իմ ծանօթներս ինծի “ճակտէն զարնողը” կ'ըսեն: Եւ այսօր՝ Կիրակի առտուայ ծառայութեան ատեն, ճիշդ ճակտէն զարկի, թէ որո՞ւ կը նմանցնեմ քեզ»:

«Որո՞ւ,» հարցուցի:

Առանց պահ մը վարանելու, ան յայտարարեց. «Դուն *բուն* Սառա Քանըրին կը նմանիս»:

Պահ մը լուռ մնացի, ըսածը հասկնալ փորձելու համար: «Մէկ վայրկեան... ան խարտեաշ չէ՞ր», ըսի հակառակելով եւ չհամոզուած:

«Այո, այո, հարցը անոր մազերը չեն,» ըսաւ ան գլուխը շարժելով եւ ըսածս անտեսելու ձեռքի շարժումով մը: «Նմանցուցածս անոր դիմագիծի ձեւն է, անոր կեցուածքը եւ անոր կարծես... *պաֆնէսը* [անգլերէնի մէջ *պաֆ* բառը կը նշանակէ՝ մարզուած, ամուր մկաններով, զօրաւոր երեւցող-Թարգմանիչ],» բացատրեց ան՝ իր կզակը քիչ մը դուրս ցցելով եւ ահարկու կեցուածք մը ցոյց տալով:

Ան *պաֆնէս* ըսաւ:

Ուրեմն, նախ ըսեմ, որ ասիկա շինծու բառ մըն է անգլերէնի մէջ, բայց ան յաջողեցաւ գրաւել իմ ամբողջ ուշադրութիւնս: Հակառակ անոր որ այդ նմանութիւնը քիչ մը հեռու էր իրականութենէն, իր ըսելէն ետք ես ուզեցի նմանիլ այդ Սառա Քանըրին: Գլուխս շարժեցի հաւանութեան նշանով՝ չուզելով հեռացնել որեւէ գաղափար կամ պատկեր, որ զիս կը ներկայացնէր իբրեւ *պաֆ*: Սրբագրելու նպատակով յաւելեալ միջամտութիւններ չըրի նիւթին մէջ, բայց որոշեցի, որ երբ Միացեալ Նահանգներ վերադառնայի, պիտի փնտռէի՝ տեսնելու համար, թէ ո՞վ էր այդ *պաֆ* կինը *Տը Թըրմիսէյթըր ֆիլմէն*:

Տուն հասնելէս ետք տղուս՝ Ալեքին դիմեցի, որ այդպիսի բաներու մասնագէտ մըն է:

«Կրնամ ինծի համար գտնել բուն Սառա Քանըրը: Պէտք է տեսնեմ այդ կինը: Մարդիկ կ'ըսեն, որ իրեն կը նմանիմ,» ըսի իրեն:

Ան վստահ չէր, որ պիտի կարենար գտնել, բայց յաջողեցաւ մէջտեղ հանել Սառա Քանըրի մէկ որմագոյն, որուն մէջ ան հագած էր անթաւ շապիկ (*թենք թափ*) մը, աչքերուն դրած էր կլոր ապակիով ակնոցներ եւ ձեռքին ունէր հրացան մը: Վստահ: Ան կատաղի, մարզուած/կատարելագործուած եւ մկանուտ կ'երեւէր: Չեմ կրնար ըսել, որ անմիջապէս տեսայ անոր մայրական կողմը: (Ատիկա կարեւոր է ինծի համար, քանի որ ես կը խօսիմ զաւակներու կրթութեան եւ մայրութեան նիւթերու մասին:) Բայց արդեօք մայրութեան պատկերը կացութեան համեմատ չի փոխուիր: Ինչ կրնայ ասելի մայրական ըլլալ քան *պաֆ* ըլլալը եւ զէնք գործածելու մէջ վարպետ ըլլալը եթէ կեանքիդ նպատակը պաշտպանել է որդիդ մարդասպան մարդ-մեքենաներէ:

Ալեքը ինծի համար գտաւ կարճ *վիպէտներու* հաւաքածոյ մը: Կարծեմ 1980-ական թուականներու այդ *վիպէտներու* հաւաքածոն խենթացուց զիս: Տեսայ ինչպէս Սառա Քանըր շարժակաւոր հեծելանի (*մոթոր*) կը քշէր, մէկ ձեռքով հրացանը կը լիցքաւորէր եւ *փուլ-ափներ* կ'ընէր [մարզանքի ձեւ մը, որուն ընթացքին անձը երկու ձեռքերով իր հասակէն ասելի բարձր տեղ մը հորիզոնական ձեւով ամրացուած երկաթ ձող մը բռնելով մարմինի ամբողջ ծանրութիւնը դէպի վեր կը հանէ եւ կ'իջեցնէ- Թարգմանիչ] իր հակառակ դարձուցած երկու հոգինոց անկողինին վրայ, մտային հիանդներու հիանդանոցի իր սենեակին մէջ: Այդ պահուն ես ինքն էի...

Անշուշտ կրնայի իմ շփոթիս վերջ դնել ճիշդ այդ պահուն եթէ միայն ես ինծի հարցնէի հետեւեալ պարզ հարցումը. *Լիսա, արդեօք կեանքիդ մէջ բնաւ փուլ-ափ ըրած ես:*

Բայց չհարցուցի: Ձգեցի, որ երեակայութիւնս թռչէր եւ երթար իր ուզած տեղը: Մինչ կը դիտէի Սառա Քանըրը *փուլ-ափներ* ընելու ատեն, սկսայ պատկերացնել, որ թելերս անոր թելերուն չափ զօրաւոր էին, եւ թէ՛ ճիշդ

շարժառիթը եթէ ունենայի, էս ալ կրնայի ճիշդ իրեն պէս *փուլ-ափին*եր ընել: Վստահ որ ես ալ գրեթէ անոր չափ *պաֆ* էի: Նկատի մի՛ առնէք այն *իրականութիւնը*, որ նոյնիսկ ֆիզիքապէս ամենալաւ վիճակիս մէջ եղած ատեն՝ երկրորդական վարժարանի օրերուս, հազիւ կրնայի ֆիզիքական առողջութիւնդ չափող պարտադիր մարզական քննութիւններուն մէջի *ֆլէքս-արմ հանկը* ընել [թելերով կախուիլ հորիզոնական ձողէ մը՝ կզակդ անոր վրայ դրած, դիմացկունութիւն չափելու համար- Թարգմանիչ]: (Այդպէս կախուած կը դիմանայի միայն որովհետեւ կը պատկերացնէի, որ տակս կոկորդիլոսներ կային:)

Ձեռով մը մոռցած էի, որ երկու ուսերս ալ վիրաւորած էի. մէկը դահուկելու ատեն իսկ միւսը արկածով մը, որ այնքան տարօրինակ էր, որ կարելի չէ անգամ բացատրել:

Հիմա որ կը մտածեմ այդ մասին, ես քնաւ *փուլ-ափ* չեմ ըրած կեանքիս մէջ: Բայց առոնք կարելոր չէին: Այդ պահուն եթէ Սառա ըրաւ ատիկա, էս ալ կրնայի ընել:

Ես ոչ միայն կ'ուզէի անոր նմանիլ, այլեւ հիմա կ'ուզէի անոր նման վարուիլ: Ամերիկեան շարժապատկերի *աքշըն ֆիլմ*երու առաջին կին հերոսը ինչո՞ւ մարզանք կ'ընէր: Որպէսզի երբ իր արձակման ժամանակը գար, զօրաւոր եւ պատրաստ ըլլար փրկելու եւ պաշտպանելու իր որդին: Օ՛: Կը սիրեմ այն կիները, որոնք գիտեն ինչպէս լաւագոյն ձեռով օգտագործել դժուարութեան եղանակները՝ ոյժ հաւաքելու համար: Սառան եւ էս: Ինչո՞ւ ոչ... Գրեթէ քոյրեր էինք:

Այդ ցնորքին մէջ, ըրի բան մը, որ երբեք չէի ըրած: Հեռաձայնեցի *Կոլտր'զ Ճիմ* կոչուած մարզանքի սրահը:

Յիշեցի, որ տեղ մը լսած էի հոն աշխատող բացառիկ մարզիչի մը մասին, եւ խնդրեցի անոր հետ խօսիլ: Մարզանքի սրահի հեռաձայններուն պատասխանող պաշտօնեան փոխանցեց գիծը: Չէի կրնար զսպել խանդավառութիւնս երբ Ռոպըրթին հարցուցի եթէ մարզումի որեւէ ազատ ժամ ունէր այդ օրն իսկ: Պատկերացուցի, որ քանի մը անձնական մարզումի պահեր կ'ունենամ՝ երեք, թերեւս չորս ամենաշատը, եւ Սառան եւ ես զոյգ քոյրերու պէս կ'ըլլանք: Այո, զոյգ քոյրեր... տարբեր մազի գոյնով, որովհետեւ ես բոլորովին կը մերժեմ շիկահեր ըլլալ, բայց

պատրաստ էի մարզանք ընելու, որպէսզի մեր մկանուտ եւ պաՖ բազուկները իրարու նմանէին:

Ռոպըրթ համաձայնեցաւ տեսնել զիս քանի մը ժամ ետք՝ վիճակս գնահատելու հանդիպումի մը համար:

Գնահատել բառը պէտք էր ինծի համար բաւարար պատճառ ըլլար կանգ առնելու, բայց այդպէս չեղաւ: Հեռաձայնը գոցեցի խանդավառութեամբ լեցուն, եւ Ալեքէն խնդրեցի, որ ինծի համար պատրաստէ հաւաքածոյ մը մաքուր երգերու, որոնք խանդավառող կշռոյթ ունէին: Երբ ատիկա ալ եղաւ, յայտարարեցի. «Մարզանքի սրահ կ'երթամ: Ո՛վ կ'ուզէ հետս երթալ»:

Երկու զարմացած որդիներ յայտնուեցան, եւ միասնաբար գացինք մարզանքի սրահ: Նոր լիցքատրուած *այ.Փոպոլ*ս, թնդալով պիտի մտնէի մարզանքի սրահ: Թերեւս յաջորդին ես ալ անթեւ շապիկ հագնէի, որպէսզի անլի դիրին ըլլար մարզիչիս համար, որ Սառա Քանըրի նմանութիւնը տեսնէր:

Խանդավառութեանս մէջ, քիչ մը կանուխ հասայ եւ ապագայ մարզիչս տեսայ հեռուն: Ան շատ պիտի ուրախանար իր նոր աշակերտին հետ հանդիպելով: Անկասկած որ ան թէ՛ խանդավառ եւ թէ՛ թերեւցած պիտի զգար, որ կը մարզէր մէկը, որ այնքան մօտիկ էր իր հասնելիք նպատակակէտին:

Կամ ես այդպէս կ'երեւակայէի:

Ռոպըրթ յաճախորդի մը հետ կ'աշխատէր եւ ձեռքով ինծի նշան ըրաւ դէպի քալելու գործիքը, որպէսզի սկսէի տաքնալ: Քալելու գործիքը կ'արտօնէր զարիվեր ալ քալել, եւ նկատեցի, որ Ռոպըրթի յաճախորդը կին մըն էր, որ կը թուէր իմ տարիքիս մօտիկ ըլլալ, եւ ամէն բան, որ կ'երեւակայէի ըլլալ... ան էր:

Ոչ միայն մկանուտ էր, այլեւ արեւէն գոյն առած թուխ մորթով: Ան Սառայական տեսք մը ունէր՝ իր անթեւ շապիկով եւ զինուորական տափատով: Այդ պահուն ապրեցայ շարք մը անկումի զգացումներէս առաջինը: Բազուկներս քննեցի մարզանքի սրահի ճերմակ լոյսին տակ եւ նկատեցի, որ անոնք թոյլ, տժգոյն եւ թերեւ մը կանաչ էին:

Մէկ վայրկեան: Շուտով պիտի չլուսալքուէի: Եթէ քիչ մը

աւելի ազատ ժամանակ ունենայի, եւ ալ կրնայ թուիս ըլլալ: Յամառօրէն քանի մը աստիճանով արագացուցի գործիքին վրայ քալելու ընթացքս: ՊաՖ անձս պահուած էր տեղ մը՝ պարզապէս սպասելով յայտնուելու ժամին: Քանի մը մարզանքի պահ եւ քիչ մը արեւին տակ ժամանակ, եւ ես այդ կնոջ պէս կ'ըլլայի: Վերջապէս Սառա արեւ կը տեսնէր իր բանտի խուցին մէջ:

Ուրիշ կողմ դարձուցի գլուխս, այ. Փոլոս աշխատացուցի եւ սկսայ լրջօրէն քալել:

Երկար ժամանակ չէր անցած երբ մարզիչս եկաւ քովս եւ քաջալերական ժպիտով մը ըսաւ. «Տասնհինգ վայրկեան քալէ եւ յետոյ կը նստինք իրարու հետ՝ նպատակակէտերդ քննարկելու համար: Մինչ այդ ես յաճախորդի մը հետ եմ»:

Տասնհինգ վայրկեան: Լհորջ էր: Յիշեցի, որ տեղ մը կարդացեր էի, որ ութ վայրկեանը բաւարար էր, բայց չուզեցի յուսախաբ ընել կամ սրբագրել մարզիչս մեր աշխատանքի առաջին օրը, ուստի պարզապէս ժպտացի եւ ենթարկուեցայ:

Երբ տասնհինգ վայրկեանս վերջացաւ, իջայ գործիքէն վար եւ գացի կիներու հանդերձարանը՝ ինքզինքս կշռելու համար: Մոռցած էի տունը ատիկա ընել, եւ ենթադրեցի, որ մարզիչս պէտք կ'ունենար այդ տեղեկութեան: Ատիկա ընելու համար, պէտք է անցնէի այդ ճշմարտապէս *պաՖ* կնոջ քովէն: Քովէն անցնելու ատեն, ան կանչեց զիս:

«Հէյ, Ռոպըրթին հետ կը մարզուիս,» հարցուց հեալով: Գլուխով հաւանութեան նշան տուի մինչ անփոյթ կերպով շարունակեցի ջուր խմել շիշէս:

«Ան հոգիս կը հանէ,» ըսաւ դժուարութեամբ շունչ առնելով մինչ կը շարունակէր քալել աստիճան բարձրանալու մեքենային վրայ: «Ես վարժ եմ մարզանք ընելու, բայց Ռոպըրթը բոլորովին ուրիշ մակարդակ է»:

Սառեցայ: «Բայց դուն *պաՖ* ես...»:

Ան իր գլուխը շարժեց «Ոչ»ի նշանով, կարծես հարցումիս պատասխանելը աւելի ոյժ կը պահանջէր քան ինչ որ ինք ունէր այդ պահուն:

Ռոպըրթ անունս կանչեց մարզանքի սրահին միւս կողմէն եւ ձեռքով նշան ըրաւ, որ երթամ իր սենեակը: Մօտեցայ

բաւական աւելի նուազ ինքնավստահութեամբ քան երբ նոր մարզանքի սրահ մտած էի:

«Կ'երթայի ինքզինքս կշռելու,» մրմռացի:

Բայց ան հետաքրքրուած չէր իմ կշիռքովս: Ռոպըրթ կ'ուզէր գիտնալ, թէ որքան զօրաւոր էի:

«Անձեռոց բերամ՞ ես հետդ,» հարցուց:

«Ոչ,» պատասխանեցի եւ յետոյ բացատրեցի, որ ես հազուադէպօրէն կը քրտնիմ երբ մարզանք կ'ընեմ: Յետադարձ ակնարկով մը, հաւանաբար աւելի ճշգրիտ պիտի ըլլար եթէ ըսէի, թէ հազուադէպօրէն մարզանք կ'ընէի:

ՆԻՎԱՐ ԲԱՅՑ ԳԵՐ

Չեմ յիշեր, թէ նուաստացման գործընթացը ճիշդ ինչպէս ընթացաւ, բայց ահա իմ լաւագոյն յիշողութիւնս: Զիս առաջնորդեցին մարզանքի սրահին մէջտեղը, փոխանակ անձնական սենեակ մը, ուր կ'ակնկալէի, որ ֆիզիքական վիճակի գնահատումը ըլլար: Երբ հասանք պարապ տարածութիւն մը, Ռոպըրթ թելադրեց, որ իրեն «տասը տամ»:

Գիտէի, որ *փուշ-ափի* մասին կը խօսէր, բայց պարզապէս վստահ չէի, թէ որ տեսակը կ'ուզէր: «Ըսել կ'ուզես աղջկայ տեսակի, չէ՞: Ծունկերուս վրայ»:

«Ոչ, պարզ,» պատասխանեց ան անջատուած ձեւով մը մինչ վերցուց իր նշադրութեան թղթակալը եւ իր սպառնալից մատիտը պատրաստեց իր ձեռքին մէջ:

Գետին իջայ եւ ըրի տասը թոյլ, երերուն եւ վատ ձեւաւորուած *փուշ-ափ*ներ:

Առանց դադարի, մտերմութեան պահի մը կամ «Ապրիս, Լիսա»յի, ան աւելցուց. «Իսկ հիմա քսան հինգ *ճամփինկ ճեքեր*»: [*Ճամփինկ ճեքը* մարզանքի ձեւ մըն է, որ անձը կ'ընէ ցատկելով ոտքերը բանալով եւ միաժամանակ ձեռքերով գլխուն վրայ ծափ զարնելով- Թարգմանիչ]:

Ես իրար անցայ: Գիտէի, որ *ճամփինկ ճեքերը* դիրին են, բայց չէի յիշեր, թէ ինչպէս պիտի ընէի զանոնք:

«Ձեռքերս պիտի դպչին իրարու վերը,» հարցուցի: Ռոպըրթ չպատասխանեց:

Ըրի ինչ որ կը կարծէի, որ քսան հինգ *ճամփինկ ճեքեր* էին: Մինչ կը ցատկոտէի տարօրինակ կերպով, նկատեցի, որ կը գրաւէի ուրիշ մարզանք ընողներու ուշադրութիւնը: Նոյնիսկ տղաքս իրենց գլուխը կը շարժէին եւ կը խնդային՝ իմ կողմն նայելով:

«Իջիր եւ տասը հատ եւս ինծի տուր,» ըսաւ Ռոպըրթ:

Շունչս կտրած եւ փորձելով ժամանակ շահիլ, հարցուցի. «Այս անգամ ալ *փուշ-ափ* ըսել կ'ուզես կամ *լանճեր* կամ ուրիշ բան մը»: [*Լանճ* կ'ընես մէկ ոտքով դէպի առջեւ քայլ առնելով իսկ միւս սրունքը ետեւը ուղիղ պահելով- Թարգմանիչ]:

«*Փուշ-ափ*,» պատասխանեց:

Գետին իջայ, բայց այս անգամ անելի դժուար էր: Թեւերս կը դողային: Խղճալի վիճակի մէջ էին, եւ ես գրեթէ միայն փորս վեր եւ վար կ'ընէի եւ ոչ թէ պէտք եղածին պէս *փուշ-ափ*ներ:

Ռոպըրթ բան մը չըսաւ: «Քսանհինգ *ճամփինկ ճեք* նորէն»:

Կ'ուզէի այս անգամ ճիշդ ձեւով ընել զանոնք, ուստի նորէն հարցուցի. «Ձեռքերս գլխուս վերեւ իրարու պէտք է դաչին»:

Ձայնս զարմանալիօրէն լարուած էր:

«Կարեւոր չէ... Սկսէ,» հրամայեց ան:

Բայց ինծի համար կարեւոր էր... Ատիկա կարեւոր էր նաեւ տղոցս համար, որոնք կը կծկուէին ամօթի մէջ մինչ իրենց մայրը թափափած *ճամփինկ ճեքեր* կ'ընէր ամբողջ մարզանքի սրահին առջեւ:

Ատիկա տակաւին սկիզբն էր տառապանքիս, որ շարունակուեցաւ յաջորդ շատ հանրային տարածքին մէջ, ուր պէտք էր փորձէի սրունքի մարզանքներ (*լէկ լիֆթս*) ընել աթոռի մը օգնութեամբ: Գիտէի ինչպէս ընել ատոնք:

Ելայ սարքին վրայ եւ սպասեցի հրահանգի: «Տասնհինգ սրունքի մարզանք կ'ուզեմ»:

Ծունկերս բարձրացուցի մինչեւ մէջք, եւ այդ ամբողջ ժամանակին ընթացքին կը մտածէի, որ շատ հիանալի տեսք ունէի:

«Ոչ, այդպէս չէ,» հրամայեց Ռոպըրթ: «Կ'ուզեմ, որ սրունքներդ ուղիղ ձեւով բարձրացնես վեր... եւ մինչեւ այս բարձրութեան հանես», եւ ան իր ձեռքը հանեց իմ մէջքէս անելի վեր բարձրութեան մը:

Վախի եւ Աքանջելիի Գումարը

Արունքներս կրցածիս չափ վեր բարձրացուցի, բայց չկրցայ հասնիլ իր ձեռքին: «Աւելի բարձր,» քաջալերեց ան:

Կատանկ կ'ընէր: Տասնհինգ հատ: Չէի կրնար նոյնիսկ մէկ հատ ընել: Յաջողեցայ միայն քանի մը անգամ դաչիլ ձեռքին... Լաւ, թերեւս զերօ անգամ, բայց կը կարծեմ, որ ան իր ձեռքը կամաց-կամաց վեր կը հանէր...

Կը հաւատամ, որ ծանրութիւններ վերցնելը յաջորդ հանգրուանն էր, բայց յիշողութեանս մէջ ամէն բան պղտոր է: Նստայ նստարանի մը վրայ մինչ Ռոպըրթ գնաց ինծի համար ծանրութիւններ ընտրելու: Ան վերադարձաւ զոյգ մը երեք *փաունս* (1,36 *քիլոկրամ*) կշռող ծանրութիւններով: Ժպտացի: Այս անգամ պիտի զարմացնէի զինք իմ զօրութիւնովս:

«Ռոպըրթ, ես ընդհանրապէս կը գործածեմ 12.5 *փաունս* (5,67 *քիլոկրամ*) կշռող ծանրութիւններ,» բացատրեցի: «Եկուր ասոնցմով սկսիմք,» պատասխանեց Ռոպըրթ:

Ծանրութիւններս առի քրտինքոտ, դողդղացող ձեռքերուս մէջ:

«Այս ձեւով վերցուր զանոնք»:

Գլուխս շարժեցի գիտցողի պէս:

Դիւրութեամբ բարձրացուցի զանոնք:

«Ոչ, այդպէս չէ: Ա՛յսպէս,» ըսաւ ան՝ թեթեւ մը փոխելով թելիս ձեւը: «Մինչեւ ամէնէն վեր եւ մինչեւ ամէնէն վար»:

Ախալ բան մը կար. չէի կրնար քանի մը *ինչէ* ւաւելի բարձրացնել ծանրութիւնները: Հաւանաբար պատճառը նախապէս ըրած *փուշ-ափներ*ն էին, որովհետեւ թելերս ուղղակի չէին գործեր: Դէպի վար թօթուցի թելերս եւ նորէն փորձեցի: Տակաւին չէի կրնար ծանրութիւնները մէկ կամ երկու *ինչէն* ւաւելի վերցնել: Յնցուած՝ Ռոպըրթին նայեցայ, բայց ան արդէն իսկ կ'երթար ւաւելի թեթեւ կշիռքով ծանրութիւններ բերելու: Իրականութեան մէջ ամէնէն թեթեւները բերաւ: Ինչպէս կրնար այդպիսի բան պատահիլ:

«Անկեղծ կ'ըսեմ, որ ես ընդհանրապէս կը վերցնեմ 12 *փաունս* (5,67 *քիլոկրամ*) կշռող ծանրութիւններ եւ երբեմն նոյնիսկ 15,» ըսի կմկմալով:

«Սխալ ձեւով կը վերցնէիր մինչեւ հիմա,» եզրակացուց ան:

Երբ տառապանքը վերջապէս վերջ գտաւ, Ռոպըրթ

առաջնորդեց զիս իր սենեակը: Կը հեալի, սրունքներս կը դողային եւ այն Սառա Քանըրի նմանութեան պատկերը, որ ունէի անձիս համար, ամբողջութեամբ անհետացած էր:

Ֆիզիքական գնահատումի որեւէ մարզի մէջ յաջողած չէի:

Հանդիսաւոր կերպով Ռոպըրթ բացաւ տեղեկութիւններու նոր տախտակ մը: Հարցուց կշիռքս եւ ապա թիւեր արձանագրեց այդ տախտակին մէջ: Հարցուց ստացած վնասուածքներուս մասին, եւ *եունիսիքսի* (երկու սեռերուն համար) տուփիկը նշանակեց իր թուղթին վրայ: Բացատրեցի, թէ քիչ մը հարց կ'ունենայի ձախ ծունկիս եւ ձախ ուսիս հետ: Վնասուածքներս նշուեցան: Ապա ան ինծի տուաւ իմ *նեմեսիսս* [թշնամի կամ մէկու մը ձախողութեան պատճառ հանդիսացող բանը- Թարգմանիչ]: Անիկա ձեռքով բռնուելիք գործիք մըն էր, որ անմեղօրէն կը նմանէր *Նինթենտոյի* ձեռքի սարքին:

«Ասիկա երկու ձեռքով բռնէ՝ ձեռքերդ ուղիղ դէպի առջեւ երկարելով,» թելադրեց Ռոպըրթ: «Անիկա ելեկտրական հոսանք մը պիտի դրկէ մարմինիդ մէջ եւ ճշգրիտ տեղեկութիւններ տայ իւրի տոկոսիդ մասին»:

Ան կոխեց սկսելու կոճակը եւ կարճ ժամանակ մը ետք թիւ մը յայտնուեցաւ գործիքին պզտիկ պաստառին վրայ:

Ես շատ ալ չզարմացայ, բայց Ռոպըրթ ցնցուեցաւ տեսնելով, թէ որքան բարձր էր իւրի տոկոսը մարմինիս մէջ:

«Թերեւս ճիշդ չէի բռնած գործիքը,» առաջարկեցի:

Կրկնեցինք գործողութիւնը եւ ձեռով մը իւրի տոկոսը մէկ տոկոսով բարձրացաւ նոյնիսկ:

«Թերեւս գործիքը արուած է կամ ես ջուրի պակաս ունիմ»:

Գրեթէ այդ ատեն Ալեքը մտաւ սենեակ: «Ես փորձեմ,» հարցուց:

Պում: Անոր իւրի տոկոսը շատ համեստ թիւ մըն էր՝ 5.2:

«Քուկդ ինչ ելաւ, Մամ»:

Առանց իրեն պատասխանելու, ձեռքով նշան ըրի, որ դուրս ելլէ:

Գլուխը շարժելով, Ռոպըրթ դիմացս դրաւ թուղթ մը, որուն վրայ կային երկու նկարներ: Անոնք միսի կտորներ էին: Մէկը առանց իւրի եւ բարակ էր, միւսը՝ ոչ: Ես «ոչ»ն էի:

«Դուն անոնցմէ ես, որոնց սիրալիրօրէն կը կոչենք՝ «Նիհար Բայց Գեր»,» ըսաւ ան:

Ես սարսափեցայ եւ անմիջապէս սկսայ առարկել, ըսելով, որ ես շատ գործունեայ եւ հաւանաբար նաեւ չափէն աւելի բազմազբաղ մէկն էի: Բնաւ պատրաստ չէի նստելու մարզասրահի այդ *փլասթիք* աթոռին վրայ եւ արտօնելու, որ մէկը զիս «բազմոցի գետնախնձոր» (*քաուչ փոթէյթօ*) կոչէր...

Ռոպըրթ գլուխը շարժեց հասկնալու նշանով: «Քանի որ գործունեայ ես եւ միշտ բազմազբաղ, հաւանաբար բաւարար բնասպիտ (*փրոթին*) չես ուտեր, որպէսզի մարմինիդ պահանջած ոյժը հայթայթէ, ուստի մարմինդ մկաններդ կ'այրէ ոյժ հայթայթելու համար փոխանակ իւղդ այրելու»:

Նկատելով ցնցուիլս, ան շարունակեց. «Ատիկա կը նմանի միս ուտելու: Ինչ կ'ընես: Իւղը կը կտրես, կը հանես, եւ յետոյ միւսը կ'ուտես: Մարմինդ ալ նոյնն է: Մարմինդ միսդ կ'ուտէ, այսինքն՝ մկաններդ, եւ երբ մկան կը կորսնցնես, ոյժ կը կորսնցնես: Միակ ձեւը, որով կրնաս մկաններդ վերականգնել, դիմադրողական մարզումն է (*ռեզիսթընս թրէյնինկ*), որ կը վերակառուցանէ մկաններդ»:

Ան անարգանք աւելցուց վիրաւորանքիս վրայ՝ մատնանշելով քանի մը կիներ, որոնք բաւական աւելի գիրուկ էին ինձմէ եւ ըսելով, որ հակառակ անոր որ մարդ կրնայ մտածել, թէ անոնց իւղի տոկոսը աւելի բարձր պէտք է ըլլայ, իմինս հաւանաբար անոնցմէ աւելի բարձր էր... Ան նաեւ ըսաւ, թէ իմ իւղիս մեծ մասը (հոս սկսած էի բաւական նեղ կացութեան մատնուիլ...) մարմինիս մէջտեղի բաժինին կամ զիստերուս մէջը չէր: Թեւերուս մէջն էր...

Դժբախտաբար մարմինիս այն բաժինը, որ կը կարծէի, թէ ամէնէն *պաֆ*ն էր, ամէնէն վատը դուրս եկաւ...

Միտքիս մէջ Սառա Քանըրի եւ իմ *փուլ-ափներ* ընելու բոլոր պատկերները յանկարծ անհետացան: Իրական ընտրութիւն մը կար առջեւ: Արդեօք կ'ուզէի, որ մարմինս շարունակէ իւղ այրել եւ անդամալուծել ապագայի ոյժի կարողականութիւնս: Արդեօք ուրախ էի «Նիհար Բայց Գեր» կամ «Կեղծ Պաֆ» տիտղոսով: Կամ պատրաստ էի իրապէս զօրաւոր ըլլալու: Իմ այդ վատ կացութեանս մէջ, վճռեցի ըլլալ

զօրաւոր: Ինձի համար հարցը բնաւ հագուստներուս մէջ լաւ երեւիլը չէր: «Նիհար Բայց Գեր»ը ատիկա կ'իրագործէր: Այլ՝ հարցը կը վերաբերէր տկարութիւնս գտնելուն եւ մարմինիս խոցելի շրջանները ոյժի եւ զօրութեան աղբիւրներու վերածելուն:

Ես պէտք չունէի կշիռք կորսնցնելու: Պէտք ունէի ուժովս:

Անդրադարձայ, որ միայն կշիռքս ճշգրիտ արտացոլացումը չէր իմ բաղադրութեանս: Ինչ բանէ բաղկացած էր մարմինս: Դժուար կացութիւններու մէջ արդեօք բաւարար ոյժ պիտի ունենայի քննութենէն անցնելու: Կրնայի կարճ տարածութեան վրայ արագ վազք ընել այնքան ատեն, որ զարիվեր չէր անիկա: Բայց եթէ տարածութիւնը երկարէր կամ զարիվեր ըլլար, տեղի կու տայի: Ինչո՞ւ: Որովհետեւ շատ տկար էի կարենալ շալկելու համար այդ յաւելեալ ծանրութիւնը:

Ես կրնայի միայն թեթեւ ծանրութեամբ կշիռքներ վերցնել, սահմանափակ ձեւերով: Ատոր համար չկրցայ ծանրութիւնները վերցնել երբ Ռոպըրթ քիչ մը փոխեց վերցնելու ձեւս: Իմ ոյժս բաւարար չեղաւ երբ ան առանձնացուց մկաններու խումբ մը, որ տկար էր եւ խոցելի՝ շատ չգործածուելուն պատճառով:

Այնքան փոփոխութիւն կայ իմ վարմունքիս մէջ, որ նոյնիսկ այս պահուն, որ կը գրեմ այս տողերը, մեծ դժուարութեամբ ետ կը մղեմ երթալ մարզանք ընելու մղումներս: Ես մարզանքի սրահ գացի, որպէսզի հաստատեմ, թէ ես պա՛ֆ եմ, եւ ոչ թէ լսելու, թէ տկար եմ: Չսիրեցի լսածս: Բայց որքան հրաշալի էր գիտնալ ճշմարտութիւնը եւ արտօնել, որ անիկա գործէր կեանքիս մէջ, որպէսզի տկար տեղերս զօրացնէի: Մէջս կայ բաժին մը, որ կ'ուզէ գիտնալ տկարութիւններս, որպէսզի կարենամ նաեւ յայտնաբերել, թէ ինչպէս կրնամ զօրաւոր ըլլալ:

Ես այդ մարզերը առանձինս պիտի չկարենամ յայտնաբերել: Տարբեր մարզիչներու պէտք ունիմ, ինչ որ պիտի պահանջէ քիչ մը նիւթական ներդրում եւ շատ ցաւ քաշել:

ԱՆՊԱՐՏԵԼԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՄԸ

Այդ դէպքէն յետոյ ես սկսայ մտածել, թէ արդեօք մեզմէ քանիննր «նիհար բայց գեր» են. ոչ թէ ֆիզիքապէս այլ՝ հոգեւորապէս: Մենք առանց իւղի կ'երեւինք, բայց եթէ շատ ծանրութիւն աւելցուի մեր կեանքին վրայ, չենք կրնար շալկել զանհկա: Լաւ ենք երբ տափակ մակերեսներու վրայ կը քալենք՝ հանգիստ արագութեամբ մը: Բայց կեանքը քալելու մեքենայ մը (*թրէյն*) չէ, զոր մենք կը կառավարենք: Մենք ճամբու մը մէջ ենք Աստուծոյ հետ, եւ ես կը զգամ, որ ճամբուն թերութիւնը եւ մեր ընթացքին արագութիւնը կ'աւելնան:

Ինչո՞ւ այս բոլորը բաժնեկցեցայ ձեզի հետ: Որովհետեւ կը հաւատամ, որ Քրիստոսի Մարմինը ամբողջական վերափոխումի սեմին է ինչպէս նաեւ անպարտելի վերելքի մը: Բայց այս գաղափարը միայն իմ գաղափարս չէ: Աստուած կ'ըսէ.

Ուրբի՛ ել, ո՛վ Սիոնի աղջիկ: Կամնուի՛ր յարդէն,
Մաքրուի՛ր աւելցուքներէն:
Ես քեզ կը վերաշինեմ, որ ըլլաս անպարտելի:
(Միքիայի 4.13, բառացիօրէն թարգմանուած
Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Նկատի առէք, որ Աստուած չ'ըսեր անտեսանելի (անզերէնով՝ *ինվիզիպըլ* (invisible)): Կ'ըսէ անպարտելի (*ինվինսիպըլ* (invincible)): Աստուծոյ դուստրերը պէտք է զօրատր ներկայութիւն ունենան երկրի վրայ: Վերջին անգամ երբ էր, որ անպարտելի զգացիր ինքզինքդ: Թերեւս ատիկա երկար ժամանակ առաջ էր երբ կը վազվզէիր եւ կը խաղայիր իբրեւ փոքրիկ աղջիկ մը: Դուն ստեղծուած չես պահուրտելու մութին մէջ՝ յուսալով փախուստի ճամբայ մը գտնել: Դուն ստեղծուած ես ըլլալու լոյս եւ յոյս կրող մը: Դուն ստեղծուած ես ըլլալու անյաղթելի, աննուաճելի եւ անշարժելի Սիոնի աղջիկ մը: Հիմա կը լսեմ ձայն մը, որ կ'ըսէ. «Ուրբի՛ ել, դուստր, եւ հանգիստդ գտի՛ր քու նոր դիրքիդ մէջ: Աստուած կ'ուզէ, որ անպարտելի ըլլաս»:

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

Յաճախ մենք հոգեւոր զօրութիւն կը զարգացնենք կամնելու եւ զտելու ժամանակներուն: Միքիայի 4-ը կ'օգնէ, որ հասկնանք, թէ այդ ծանրութիւն վերցնելու մարզանքը ճիշդ ինչ երեւոյթ կրնայ ունենալ:

Աստուած քեզի նոր կեանք պիտի տայ նորէն:

Ան պիտի փրկէ քեզ քու թշնամիներէդ:

Բայց հիմա անոնք քեզի դէմ հաւաքուած են,

Բազմաթիւ անաստուած ժողովուրդներ, եւ կ'ըսեն.

«Հարուածեցէք զինք մինչ գետին ինկած է: Պղծեցէք զինք:

«Կ'ուզենք տեսնել Սիոնը, որ ցեխերու մէջ կը տապլտկի»:

Այս ամբարիշտները բնաւ գաղափար չունին,

Թէ Աստուած ինչ կը մտածէ եւ կ'ընէ ասոր մէջ:

Անոնք չեն գիտեր, որ ասիկա Աստուծոյ ժողովուրդին շինութեան համար է,

Թէ՛ անոնք ցորենի պէս կը կամնուին, եւ ոսկիի պէս կը զտուին:

(Համարներ 10-12, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Կը սիրեմ այս հատուածին մէջ գտնուող խոստումը: Երբ ինկած ես, երբ այնպէս կը թուի, թէ թշնամիներդ վրադ կու գան՝ քեզ սպաննելու համար, Աստուած գործի վրայ է՝ կը զտէ քեզ ոսկիի նման: Աստուած դժուարութիւնները կը գործածէ իբրեւ օգնող ազդակ՝ իր ժողովուրդը մաքուր, թանկարժէք եւ դիմացկուն դարձնելու համար:

Երբեմն երբ մամուլը կամ անհատներ կը քննադատեն Քրիստոնեաները, քիչ մը ճշմարտութիւն կայ անոնց ըսածներուն մէջ: Պէտք է այդ քննադատութիւնները ընդունինք խոնարհութեամբ եւ նկատի առնենք զանոնք՝ գնահատելու համար, թէ ինչն է ճիշդը անոնց մէջ: Եթէ մէկը ըսէ, որ մենք կոպիտ ենք, դատողական կամ ոչ-սիրալիր, փոխանակ ուղղակի մերժելու այդ գնահատականը, պէտք է մենք մեզի նայինք Աստուծոյ Խօսքին լոյսին տակ: Պէտք է ստուգենք մենք մեզ եւ ներողութիւն խնդրենք եթէ պէտք է:

Վախի եւ Աքանջելիի Գումարը

Ապա կան մեր թշնամիին՝ Չարախօսին, նախատալից ամբաստանութիւնները: Երբեմն անոր յարձակումները կ'ըլլան ուղղակի սուտի վրայ հիմնուած, ինչպէս երբ մեր Տիրոջ դէմ հայհոյական խօսքեր կ'ըսեն: Ուրիշ անգամներ անոր յարձակումները ուղղակի չար են, ինչպէս երբ Աստուծոյ գաւակներուն կ'ըսուի, թէ պէտք է ուրանան իրենց Տէրը կամ մահուան դատապարտուին (պատկերացուցէք, թէ ինչ քննութիւն է ասիկա): Այդ յարձակումներուն ատեն բանակցութիւններ պէտք չէ կատարուին, այլ՝ անոնք պէտք է յաղթահարուին ճշմարտութեան եւ Աստուծոյ հաւատարմութեան համարձակ հռչակումներով: Ատոր մասին ակնարկութիւն կը տեսնենք Յայտնութեան Գիրքին մէջ.

Անոնք յաղթեցին անոր՝ Գառնուկին արիւնով
եւ իրենց վկայութեան համարձակ խօսքով:
Անոնք սիրահարուած չէին իրենք իրենց հետ.
անոնք պատրաստ էին մեռնելու Քրիստոսի համար:
(Յայտնութեան 12.11, բառացիօրէն թարգմանուած
Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Երբ կարդացի Միքիայի 4.13-ը, կարծես լսեցի, որ Աստուած կ'աղաղակէր. «Կը բաւէ: Դուն կարծեցիր, որ կործանեցիր իմ ժողովուրդս, բայց չես ըրած ասիկա: Փոխարէնը օժանդակած ես անոր պատրաստուելուն»: Իսրայէլ մեր օրինակն է: Երբ իսրայէլացիները շեղեցան իրենց հաւատքէն, անոնց թշնամիները ոյժով իրենց դէմ ելան: Եւ այդ դժուարութիւնը գտում մը բերաւ իրենց կեանքին մէջ: Եւ ճիշդ այն ատեն երբ թշնամիները կարծեցին, որ յաղթած են, Աստուած մէջտեղ հանեց իր ժողովուրդը՝ վերաշինուած եւ յաղթական:

ԴԱԻԱՃԱՆԵԼ՝ ԲԱԶՄԱԶԲԱՂ ԸԼԼԱԼՈՎ

Ուստի ինչպէս կը սկսինք այդ գորանալու մարզումը: Կը սկսինք մեր հաւաքական եւ անհատական հոգեւոր վիճակի անկեղծ գնահատումով մը: *Նիհար Բայց Գեր* եզրը շատ ազնիւ արտայայտութիւն մըն է Մարգիչ Յիսուսի խօսքերուն

հետ բաղդատաբար: Կարդացամք էք Յայտնութեան Գիրքին մէջ նշուած անոր գնահատումները: Եօթը եկեղեցիներէն միայն երկուքը յաջողեցան անոր զօրութիւն չափող խիստ քննութեան: Ահա այդ քննութեան չյաջողած եկեղեցիներէն երկուքին տրուած գնահատականը.

Կը տեսնեմ քու գործերդ: Դուն համբաւ շահած ես կայտառութեանդ եւ խանդավառութեանդ համար, բայց դուն իրականութեան մէջ մեռած ես:

Ուրբի ել: Խորունկ շունչ մը ան: Թերեւս տակաւին կեանք կայ մէջդ: Բայց ես աստիկ չեմ տեսներ քու անհերթեթ գործերուդ ընդմէջէն. Աստուծոյ գործերէն որեւէ մէկը չէ ամբողջացած: Քու վիճակդ ծանր է: Ատաբերէ այն պարզելը, որ ժամանակին ձեռքբերող մէջ էր՝ այն Պատգամը, որ լսեցիր ականջներովդ. անգամ մը եւս բռնէ՛ գանիկա եւ դարձի՛ր Աստուծոյ: (3.1-3, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի Տը Մասէճ տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Ճիշդ ինչպէս իմ ամբողջ ֆիզիքական աշխատանքս կը նուազեցնէր եւ ոչ թէ կը շատցնէր իմ մկանի ոյժս, նոյնպէս ալ հոգեւորապէս բազմազբաղ ըլլալը հոգեւոր ոյժ չի շինէր: Անիկա կը շեղէ մեզ Աստուծոյ գործէն եւ կը սպառէ մեր ոյժը: Դարձեալ Յիսուս կը խօսի եկեղեցւոյ յառաջխաղացքին մասին.

Ես քեզ շատ լաւ կը ճանչնամ, եւ զիս հաճեցնող շատ քիչ բան կը գտնեմ մէջդ: Ոչ պաղ ես, ոչ տաք. ասելի լաւ կ'ըլլար եթէ կամ պաղ ըլլայիր կամ ալ տաք: Օթեկ ես: Լճացած ես: Փսխելս կու գայ քու պատճառովդ: Կը յոխորտաս ըսելով՝ «Ես հարուստ եմ, յաջողած եմ եւ բարեկեցիկ կեանք կ'ապրիմ, ոեւէ մէկէ որեւէ բանի պէտք չունիմ», մոռցած ըլլալով, որ իրականութեան մէջ դուն խղճալի, կոյր մուրացկան մըն ես, ցնցոտած եւ անտուն: (3.15-17, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի Տը Մասէճ տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Վախի եւ Աքանջելիի Գումարը

Ինչ է ասիկա: Աստուած տուներու մէջ ապրող այդ մարդիկը անտուն կը կոչէ, եւ այդ հարուստ մարդիկը՝ օթեկ եւ լճացած: Երկու եկեղեցիներուն ալ համայնքները իրենք զիրենք որոշ ձեւով մը կը տեսնէին երբ Յիսուս ցնցեց զիրենք՝ իրենց իրական վիճակին մասին յայտնութիւնով մը: Ինչո՞ւ արդեօք մեր Բարի Հովիւը այդպէս... ինչպէս ըսենք... կոպիտ կամ խիստ է: Ան կը պատասխանէ այդ հարցումին.

Այն մարդիկը, զորս կը սիրեմ հաշուետուութեան կը հրաւիրեմ. կը մխտեմ, կը սրբագրեմ եւ ուղղութիւն կու տամ անոնց, որպէսզի իրենց լաւագոյն կեանքը ապրին: Ուրքի՛ ելէք ուրեմն: Ձեր ընթացքը փոխեցէ՛ք: Աստուծոյ ետեւէն վազեցէ՛ք: (3.19, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատեճ* տարբերակէն)

Աստուած անկեղծ կ'ըլլայ մեր հոգեւոր վիճակին վերաբերեալ, որովհետեւ ան կը սիրէ մեզ: Կը մարզէ մեզ, որպէսզի կարենանք ապրիլ կեանքը լաւագոյն մակարդակի վրայ: Այդ փոխակերպումը իրագործելու համար, Յիսուս պատրաստ է ցնցելու մեզ, որպէսզի քայլ առնենք: Պէտք չկայ Յիսուսի յորդորին դիմաց ամօթ, յանցաւոր կամ դատապարտուած զգալու: Փոխարէնը եկէք քայլ առնենք, դառնանք եւ Աստուծոյ վազենք ամբողջ ոյժով:

ԲԵՌԸ ՀԱՒԱՍԱՐԱԿՇՈՒԵԼ

Նախապէս ըսի, որ ձախ ուսս եւ ձախ ծունկս կ'անհանգստացնէին զիս: Ֆիզիքական գնահատումիս ընթացքին գիտցայ, թէ ինչո՞ւ: Անոնք նեղութիւն կու տային ինձի, որովհետեւ ամէն անգամ, որ ճամբորդէի եւ ինքս իմ պայուսակներս օդանաւ կը հանէի եւ ասիկա կ'ընէի մարմինիս գրեթէ միայն ձախ կողմը գործածելով: Հանգիստ ընելով, ձախ ուսս եւ ծունկս ժամանակ ունեցան բուժուելու, եւ մարզանքով ձախ կողմս աւելի զօրացաւ: Պայուսակներս եւ համակարգիչս մարմինիս երկու կողմերուն օգնութեամբ շալկելով, դարձեալ հաւասարակշռութեան մէջ դրի մարմինս:

Մեզմէ քանինէր վնասուած են հոգեւորապէս որովհետեւ բեռներ կը շալկենք կամ մեր մարմինին միայն մէկ կողմը կը գործածենք՝ բեռը կրելու համար: Ատիկա ոչ միայն ցոյց կու տայ Քրիստոսի Մարմինի երկու կողմերուն՝ թէ՛ տղամարդոց եւ թէ՛ կիներուն, միասնաբար ծանրութիւն շալկելու անհրաժեշտութիւնը, այլեւ ցոյց կու տայ, թէ ինչպէս մենք՝ իբրեւ անհատներ, պէտք է զօրացնենք մեր ամբողջ անձը. մեր հոգին, միտքը եւ մարմինը: Ժամանակն է, որ դադրինք հին վնասուածքներ պահելէ եւ յառաջ երթանք Աստուծոյ հետ:

Սաղմոս 144-ին մէջ Աստուած կը գծէ գեղեցիկ պատկեր մը, թէ ինչպէս կ'ըլլայ երբ իր որդիները եւ դուստրերը երկուքն ալ որոշ ծանրութիւն կը շալկեն եւ բեռը միասնաբար կը կրեն, հոգեւոր իմաստով:

Որպէսզի մեր որդիները իրենց երիտասարդութեան մէջ ըլլան մեծցած տունկերու պէս,

Ու մեր աղջիկները պալատի շէնքին համար քանդակուած անկիւնաքարերու [անգլերէն տարբերակին համաձայն՝ սիւներու- Թարգմանիչ] պէս ըլլան: (Համար 12)

Նոր Կենդանի Թարգմանութիւնը (NLT) կ'ըսէ. «Թող մեր որդիները *ծաղկին իրենց երիտասարդութեան օրերուն*» (բառացի թարգմանութիւն, շեշտադրումը՝ մեր կողմէ): Մտածէ՛ ասոր մասին. որդիներու սերունդ մը, որ կը ծաղկի, այսինքն՝ կ'աւելցնէ, կը բարգաւաճեցնէ, կ'աճեցնէ եւ նոյնիսկ ճոխութեամբ կը ցուցադրէ Աստուծոյ բարութիւնը իր երիտասարդութեան օրերուն: Որքան հակառակ է այն երեւոյթին, զոր մարզուած ենք ակնկալել. պատանի եւ երիտասարդ տղաք, որոնք կը վատնեն իրենց երիտասարդական ոյժն ու կենսունակութիւնը:

Դուստրերը հոս կը նկարագրուին իբրեւ սիւներ: Բառարանին մէջ նայեցայ *սիւնի* սահմանումին եւ տեսայ, թէ անիկա ունի երկու հիմնական իմաստներ. առաջինը՝ նեցուկի համակարգ մը, ինչպէս մոյթ, կայմ, յենակ կամ ցից: *Սիւնի* երկրորդ գլխաւոր սահմանումը *անաջնորդն* է: Այս անունին տակ գտայ վերը նշուած բոլոր բառերը:

Վախի եւ Աքանջելիի Գումարը

Կը հաւատամ, որ Աստուած իր տան ճարտարապետական պատկերը կը գծէ այս հատուածին մէջ: Մենք՝ կիներս, պատրմատ ենք գործածուելու զարդարանքէ բացի ուրիշ բանի մը համար: Պատրմատ ենք վեր պահելու Աստուծոյ տան տանիքը:

Եւ ատիկա մեզ կը վերադարձնէ ոյժի նիւթին ինչպէս նաեւ այն մարզումին, զոր կը պահանջուի՝ զանիկա ձեռք ձգելու համար:

Վազեցէք յաղթելու համար: Բոլոր լաւ մարզիկները ծանր մարզումներու կ'ենթարկուին: Անոնք ատիկա կ'ընեն ոսկի մետալ մը ստանալու համար, որ կ'աղօտանայ եւ կը տժգունի: Դուք կը վազէք յաւիտենական ոսկիի համար:

Զեմ գիտեր դուք ինչ կ'ընէք, բայց ես կը վազեմ ճնշելով՝ դէպի ասարտի գիծը: Ատիկա կ'ընեմ ամբողջ էութեամբս: Անփոյթ կեանք չկայ ինծի համար: Զգաստ կը մնամ եւ լաւագոյն վիճակի մէջ: Պիտի չբռնուիմ մրափելու վրայ, եւ այդ բոլոր զգուշացումները ընելէ ետք յանկարծ ես թերանամ: (Ա.Կորնթացիներուն 9.24-27, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

ՄԷԿ ԿՈՂՄ ԴՆԵԼ ՆԱԽԿԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Ես երբեք լաւ մարզիկ չեմ եղած: Երկրորդական վարժարան յաճախելու ընթացքին լողի խումբին մէջն էի, քանի որ կը սիրէի ջուրը, *լազանիա* եւ ընկերուիկներով մէկու մը տունը քնանալը: Բայց բնաւ չէի լողար յաղթելու համար: Միայն կը լողայի ասարտելու համար: Կը բաւարարուէի երրորդ կամ չորրորդ տեղը գրաւելով: Պարզապէս չէի ուզեր վերջինը ըլլալ: Կ'ատէի լողալու մրցումները, այնքան որ կը հիւանդանայի ամէն մրցոյթի նախօրեակին: Ինքզինքս հաւաքելու համար, ես ինծի կ'ըսէի. *Պարզապէս կրցածիդ չափ լաւ լողա մէկ վայրկեան, եւ յետոյ արդէն կը վերջանայ եւ*

Կրնաս ետ երթալ ընկերուհիներուդ քով:

Դժբախտաբար բնաւ չէի անդրադառնար, որ խումբս ինծի պէտք ունէր: Պարզապէս ես իմ մասիս կը մտածէի. իմ վախերս, իմ մղումի պակասս: Որովհետեւ բնաւ չէի մտածեր իմ խումբի ընկերներուս մասին, բնաւ ջանք չէի ըներ: Բնաւ չէի ակնկալեր, որ կը յաղթեմ, ատոր համար ալ բնաւ չէի յաղթեր: Խումբիս համար կարեւոր դերակատար մը չէի. արգելք մըն էի: Յետադարձ ակնարկով, կը հաւատամ, որ աւելի կը վախնայի յաղթելէն քան պարտուելէն: Եթէ գերազանցէի, ապա պէտք էր, որ շարունակէի գերազանցել, եւ ես պատրաստ չէի ատոր համար գին վճարելու: Ես նաեւ կը վախնայի, որ ամէն ինչս տայի եւ տակաւին թերի դուրս գայի: Ատիկա ցաւալի պիտի ըլլար, ուստի 70-80 տոկոս ջանք կը թափէի, ոչ աւելի: Ես չեմ գիտեր ճիշդ ինչնո՞ւ այդ ընտրութիւնները կատարեցի այն ատեն, բայց գիտեմ, որ անփութութիւնը այլեւս ընդունելի չէ ինծի համար. յատկապէս հոգեւոր անփութութիւնը: Երբ ունեցայ այն անդրադարձումը, որ կեանքս միայն «ես եւ իմս» չէր, սկսայ բոլոր նախկին սահմանափակումներու սահմանները հրել եւ ձգտիլ՝ անոնցմէ դուրս գալու համար:

Իբրեւ էգ առիժ ոտքի ելլելու համար, դուն ալ պէտք է նոյնը ընես: Կրնաս ծախողիլ ոյժ զարգացնելու առաջին քանի մը փորձերուդ մէջ, բայց ատիկա ալ մաս կը կազմէ սորվելու գործընթացին: Չեմ գիտեր մէկը, որ հմտութիւն մը ձեռք ձգած է առաջին փորձով:

Երկրորդ Պետրոսի 3.1 եւ 7-ը կ'ըսեն.

Ձեր միտքերը անշեղ ուշադրութեան վիճակի մէջ պահեցէ՛ք [...]:
Աստուած պատրաստ է իր խօսքը խօսելու նորէն, եւ սկսելու նշանը տալու ձեզի: (Բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակէն)

Նկատի՛ առ, որ *դին* եւ միտքդ ուշադիր պահելու պատասխանատուն: Ամէն օր իշխանութիւնը ունիս ընտրելու ըլլալ ուշադիր եւ կեդրոնացած կամ ձանձրացած եւ

Վախի եւ Աքանջելիի Գումարը

շեղած: Զգաստութեան ժամանակ է, որովհետեւ Աստուած պատրաստ է: Ան աշխարհի մէջ ամէն սխալ բան ճշդելու դիրքին մէջն է: Ան պատրաստուած է եւ յաղթանակը ստոյգ է: Երբ մեր Ամենաբարձր Աստուած նշանը տայ, էգ առիծին նման արդեօք դուն ալ զօրաւոր, ճկուն եւ պատրաստ պիտի ըլլամ նետուելու:

Արտօնէ՛ Սուրբ Հոգիին, որ քու զօրութիւնդ գնահատէ Աստուծոյ Խօսքին լոյսին տակ, եւ արտօնէ՛, որ դժուարութիւնները դառնան մարզումի պահ մը՝ գիտնալով, որ դուն անկէ դուրս պիտի գաս անպարտելի: Արտօնէ՛, որ Աստուծոյ Խօսքին ծանրութիւնը եւ Սուրբ Հոգիին կոփումը եւ մարզումը արագացնեն եւ զարգացնեն կեանքիդ տկար եւ վնասուած մարզերը: Կեդրոնացումդ փոխէ՛ հագուստներուդ մէջ ունեցած կերպարանքէդ դէպի հոգիիդ մէջ քու ինքնութիւնդ: Ամէն բանէ աւելի մի՛ վախնար քու զօրութենէդ: Էգ առիծին նման, զԱստուած փառաւորէ անով: Յիշէ՛, որ երբ ամբողջ աշխարհը լեցուած է վախով եւ հարց կու տայ, թէ ինչ կը պատահի, երկինքի եւ երկրի Աստուածը՝ ամէն բանի Ստեղծիչը, կը կանչէ քեզ ցուցադրելու իր ահաւոր սքանչելիութիւնը՝ քու կեանքը ապրելու ձեւիդ ընդմէջէն:

Կը հաւատամս ատոր: Ինչ կայ անձիդ կամ կեանքիդ մէջ, որ սքանչելի կը համարուի: Արդեօք դուն կրնաս «լսել» քու սիրտովդ: Հնուտ եւ ռազմավարութիւն մշակելու մէջ: Ձիրքեր ունիս կամ ստեղծագործ ես: Մայր ես կամ ուսուցիչ: Կրնաս սեմինար մը կամ ընտանեկան մեծ հաւաքոյթ մը ծրագրել: Կրնաս անկազմակերպ եւ թափթփած սենեակ մը գեղեցիկ սենեակի մը վերածել: Կամ արդեօք էջ մըն ես, որ կը սպասէ գրուելու:

Մեզմէ ոչ մէկը իրապէս բաւարարութիւն կը գտնէ մինչեւ որ իրագործէ իր տեղը՝ իբրեւ մէկը, որ շատերու զօրութիւն կու տայ: Սիրելի առիւծ քոյրս, պէտք ունինք քու անվախ զօրութեանդ: Անկա իրապէս հրաշալիօրէն գեղեցիկ է:

Զորութիւնը Ծառայութեան Համար Է

Բոլորս ալ պէտք է մեր շուրջիններուն բարիքին համար գործենք, մենք մեզի հարց տալով՝ «Ինչ ձեռով կրնամ օգնել»:

ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ 15.2
(ԲԱՌԱՑԻՕՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԸԻ ՏԸ ՄԱՍԷՃ
ՏԱՐԲԵՐԱԿԷՆ)



Կատաղի հանդարտութիւն մը կայ էգ առիծի աշխարհին մէջ, զոր հագուադէպօրէն կը տեսնենք՝ բացի եթէ իր բնագաւառին մէջ ըլլանք: Ես ասիկա նկատեցի երբ կը դիտէի վաւերագրական *Ֆիլմ* մը, որուն մէջ ցոյց կու տային ինչպէս վայրի կատուներու խումբ մը կը փոխադրէին Հարաւային Ափրիկէի մէկ շրջանը, որպէսզի հոն բնակութիւն հաստատեն: *Ֆիլմ*ին սկիզբը մեկնաբանը ընդհանուր գիծերու մէջ կը պատմէր պատմութիւնը առիծներու երկու խումբերու, որոնք կը փոխադրուէին նոր պատսպարան մը: Առաջին խումբին մէջ կային երկու երիտասարդ էգ առիծներ եւ երիտասարդ արու առիծ մը:

Երեք առիծները նախապէս կ'ապրէին պզտիկ, փակուած վայրի մը մէջ, որ ժամանակաւոր կերպով կցուած էր պատսպարանը շրջապատող ելեկտրական ցանկապատին: Պահակները դէպի ետ ոլորած էին ցանկապատին մէկ բաժինը, ինչ որ առիծներուն առջեւ բացած էր ընդարձակ, անձանօթ եւ չխուզարկուած մեծ հողատարածք մը: Շփոթած

ըլլալով ցանկապատին յանկարծ բացուիլը տեսնելով, այդ երեք առիծները չէին գիտեր ինչպէս վարուիլ:

Պահակները կ'ակնկալէին անոնց այդ հակազդեցութիւնը, հետեւաբար ռազմավարութիւն մը որդեգրած էին մղելու երիտասարդ առիծները, որ անցնին նոր բացուած այդ տարածքը: Որոշած էին քանի մը օր չկերակրել առիծները, որպէսզի իրենց ախորժակը մղէր զիրենք, որ ելլէին իրենց սահմանափակ բնակավայրէն եւ երթային դէպի իրենց նոր տունը՝ որսի խոստումներով:

Հետաքրքրութեամբ դիտեցի ինչպէս այդ տարածքի պահակները իրենց փոխադրակառքին ետեւէն այծեամի մը դիակը պարպեցին առիծներու նոր բնակատեղիին քիչ մը խորերը: Առիծները ուշադրութեամբ կը դիտէին եւ իրենց գլուխները վեր բարձրացուցին երբ այծեամին հոտը առին:

Հակառակ անոր որ այդ երիտասարդ առիծները անօթի էին, անոնք նաեւ զգուշաւոր էին: Արու առիծը իր ապահովութեան դիրքէն չշարժեցաւ բնաւ: Մինչ ան կը դիտէր պատահածները, երկու էգ առիծները մօտեցան ցանկապատի բացուածքին: Սկսան մէկը միւսին ճամբան կտրելով ետեւ-առջեւ քալել կասկածոտ քայլերով՝ կարծես ուզելով վերակառուցել նախապէս հոն զոյութիւն ունեցող ցանկապատը: Միասնաբար հոտուրտացին օդը, հոտուրտացին գետինը եւ ապա քաշուեցան ցանկապատին մէկ բաժինին ետեւը՝ բայց միայն վերադառնալու եւ բացուածքին դիմաց կանգ առնելու համար: Այնպէս կը թուէր, որ կարծես կը փորձէին հասկնալ, թէ ինչ էր պատահածը: Ինչո՞ւ այս բացուածքը կար հիմա իրենց առջեւ: Ի՞նչ խաղ կար ատոր ետին:

Վերջապէս էգ առիծներէն մէկը որոշեց քայլ առնել: Անոր անօթութիւնը յաղթեց անոր վարանումին: Ան համարձակօրէն կտրեց գիծը եւ մօտեցաւ մորթուած այծեամին: Ճամբուն կիսուն, ետ դարձաւ եւ նայեցաւ իր քրոջ՝ կարծես զայն եւս հրաւիրելով, որ միանար իրեն ցանկապատին միւս կողմը: Երկրորդ էգ առիծը պահ մը եւս անշարժ մնաց վերցուած ցանկապատի գիծին կամ սահմանին վրայ եւ ապա հասաւ իր քրոջը: Երկուքը միասին դարձան այծեամի դիակին շուրջը եւ հոտուրտացին զանիկա՝ վստահ ըլլալու համար, որ ամէն

բան ապահով էր: Բայց արու առիծը տակաւին իր տեղն էր: Մինչ անոնց կը դիտէր, էգ առիծները սկսան համտեսել կերակուրը: Միսը թարմ էր, բայց փոխանակ սկսելու իրենց խնճոյքին, հետաքրքրական բան մը ըրին: Անոնք այծեամին դիակը շալկեցին վիզէն եւ ոտքերէն եւ զանիկա քաշքշելով տարին իրենց նախկին տեղը՝ այդ փակուած բաժինը, ուր արու առիծը տակաւին էր, որպէսզի ան ալ իր բաժինը ուտէր: Անոնց այդ արարքը զիս պահ մը կանգ առնել տուաւ: Տպաւորիչ էր թէ՛ ինչպէս անոնք իրենց մէջ առին վարանող արու առիծը: Սիրեցի այն իրականութիւնը, որ անոնք չուզեցին խնճոյք ընել առանց անոր:

Գեղեցիկ է երբ կիներ այդպէս ընել կը գիտնան:

ՕԳՆԵԼ ՏԿԱՐԱՑԱԾՆԵՐՈՒՆ ԿԱՄ ՎԱՐԱՆՈՂՆԵՐՈՒՆ

Պիտի արտօնէնք, որ մեր քոյր առիծներուն ազնուական օրինակը խօսի մեզի եւ ներշնչէ մեզ մեր առնելիք քայլերուն, յարաբերութիւններուն եւ կեցուածքներուն մէջ: Պիտի ըլլանք այն տեսակի կիներ, որոնք ժամանակ պիտի յատկացնեն եւ ջանք ընեն իրենց գտած բարութիւնը տանելու համար այն նոր բացուած տարածքները, զորս Աստուած կը դնէ իր դուստրերուն առջեւ:

Այո, կը հասկնամ, որ ետեւ դառնալ եւ ուրիշներուն սպասելը կը դանդաղեցնէ ընթացքդ, բայց միայն սկիզբը: Երբ բարութիւն, առատաձեռնութիւն եւ իմաստութիւն կը տարածենք, միշտ շահող կ'ըլլանք վերջաւորութեան: Երբ Աստուած կը սկսի նոր կեանք եւ ազատութիւն փչել իր ժողովուրդին մէջ, մեզմէ ոմանք ուրախութեամբ եւ ակնկալութեամբ կ'ընդունին զանոնք: Ուրիշներ կը տատամսին՝ սպասելով, որ տեսնեն, թէ ինչ պիտի պատահի: Եւ տակաւին ուրիշներ կը դիմադրեն:

Ես կը յուսամ եւ կ'աղօթեմ, որ Աստուծոյ բոլոր դուստրերը ոտքի ելլեն եւ մտնեն այն ազատութեան եւ նպատակին մէջ, որ Աստուած կը դնէ մեր առջեւ: Եւ անոնք, որոնք ատելի զօրաւոր, ատելի ազատ եւ ատելի հաստատուած են ճշմարտութեան մէջ ետեւ կը դառնան եւ կը քաջալերեն

զանոնք, որոնք կանգ առած են սահմանի մը առջեւ՝ որ յառաջանան:

Այդ մասին կը կարդանք Հռոմայեցիներուն 15-րդ գլուխին մէջ:

Մեզմէ անոնք, որոնք զօրաւոր են եւ կարող են հաւատքի մէջ պէտք է քայլ առնեն եւ ձեռք երկարեն անոնց, որոնք տկար են, եւ ոչ միայն ընենք այն ինչ որ մեզի յարմար է: *Զօրութիւնը ծառայութեան համար է, ոչ կարգավիճակի:* (Համարներ 1-2, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն շեշտադրումը՝ մեր կողմէ)

Զօրաւորներուն եւ կարողներուն կը յանձնարարուի, որ քայլ առնեն եւ օգնեն անոնց, որոնք տկար են, ձեռք մեկնեն անոնց, որոնք կանգ կ'առնեն, կը տատամսին, կը վարանին կամ կը տկարանան իրենց որոշումներուն մէջ: Ես կը սիրեմ տեսնել ատոր կիրարկումը: Կան մեծ թիւով կիներ՝ երիտասարդ եւ տարեց, որոնք կը զգան, որ իրենց մէջ իրենցմէ մեծ բան մը կայ: Կ'ուզեն յառաջ երթալ եւ գրաւել զիրենք շրջապատող տարածութիւնը: Անոնք կանգնած են սահմանին, կը նային իրենց դիմացի տարածութեան, ուր կը կանչէ զիրենք Աստուած, սակայն կը վարանին:

Վերջերս սիրուն, ջերմեռանդ երիտասարդուի մը մօտեցաւ ինծի ծառայութենէ մը ետք: Աստուծոյ տուած երազը իր մէջ այնքան մեծ էր, որ մեր պատահական հանդիպումը բաւարար չեղաւ իրեն համար, որ բաժնեկցի ամէն բան: Ուստի ան տուն գնաց եւ մեծ հոգատարութեամբ գրեց երկար ե-նամակ մը, որ կ'արտայայտէր անոր բոլոր զգացածները եւ դրկեց ինծի: Ատկէ ետք ան քիչ մը վատ զգաց ըրածին համար, բայց պէտք չունէր վատ զգալու բնաւ: Երբ կարդացի անոր բառերը, հասկցայ անոր մտահոգութիւնը: Զարմացած էի, տեսնելով, որ անոր խօսքերը իր քան կ'արձագանգէին իմ զգացումներս երբ ես ալ նոյնանման անցումային եղանակի մը մէջ էի, եւ այդպէս ալ ըսի իրեն:

Յաճախ բաւարար է գիտնալ, որ ուրիշներ մեզմէ առաջ անցած են կամուրջէն եւ ապահովաբար միւս կողմ

հասած: Երբեմն տկարացածները պարզապէս պէտք ունին, որ ապահովաբար դիմացի կողմ անցած քոյր մը ետեւ դառնալով իրենց նայի: Դէպի ետեւ նայուածքը բաւարար է հաղորդակցելու համար: Անիկա կ'ըսէ. «Հէյ, քոյր: Ես հոս եմ, եւ ոչ միայն ամէն բան յստակ է... այլեւ ամէն բան լաւ է, բարի է»:

ԿՐՕՆԻ ԾԱՆՐՈՒԹԻՒՆԸ ՎԵՐՑՆԵԼ

Ուրիշ կիներ կը թուլնան եւ կը տատանին: Հակառակ անոր որ հետզհետէ աւելի մեծ թիւով կիներ կը գտնեն Աստուծոյ իրենց համար ունեցած ազատութիւնը, ոմանք տակաւին կը սայթաքին կրօնի կշիռքին տակ: Միայն վերջին տասնամեակին է, որ կիներ կը հրաւիրուին իբրեւ պատգամաբերներ՝ խօսելու երկսեռ հանդիսատեսի մը: Շատ մը կիներ եւ եկեղեցիներ տակաւին չեն ապրիր այդ ազատութիւնը: Ես ալ այդպէս էի:

Ես անվախ էի երբ կը խօսէի Աստուծոյ դուստրերուն առջեւ, բայց քանի մը տղամարդ աւելցուր բազմութեան մէջ եւ ես կը սկսէի քրտնիլ... բառացիօրէն: Յուզուած (ջղագրգիռ) ըլլալով եւ վախնալով սխալ մը գործելէ, լման տակնուվրայ կ'ըլլայի: Առտու մը թէ՛ զիս հրաւիրող հովիւր եւ թէ՛ անվախ ընկերուհիներէս մէկը ինծի ըսին, որ այլեւս պէտք էր վերջ տայի այդ վարմունքիս: «Ինչո՞ւ նոյն ձեռով չես վարուիր տղամարդոց առջեւ ինչպէս կիներուն,» ըսին:

Ճշմարտաբար պատասխանեցի. «Անկեղծօրէն չեմ գիտեր...»:

«Ուրեմն կրնամք քիչ մը արագ հասկնալ հետդ եղածը: Մենք կ'ուզենք, որ դուն այդպէս քաշուող եւ վարանող չըլլաս»:

Անոնց խօսքերը հարուածի պէս եկան ինծի: Կը հաւատամ, որ առողջ ըլլալու համար, եկեղեցիները պէտք ունին երկու սեռերու ձայնին: Իմ վարանումս կ'ականահարէր այդ համոզումը... Ես իմ ձայնս զօրութեամբ չէի բարձրացներ: Իրականութեան մէջ կարծես ներողութիւն կը խնդրէի տղամարդոցմէ կին ըլլալու համար: Երբ իմ այդ չկամենալս կամ քաշուիլս մատնանշուեցաւ ինծի, սկսայ ճեղքել այդ արգելքը:

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

Տակալին կը նախընտրեմ խօսիլ կիներու առջեւ, բայց այլեւս չեմ մերժեր տղամարդոց առջեւ խօսելու առաջարկները: Փորձառաբար գիտեմ, որ եթէ տղամարդ մը կ'առաջարկէ, որ խօսիս, ապա կ'ուզէ, որ ամբողջ ունեցածդ տաս: Կը գիտնաս, որ ճշմարիտ բարեկամներու հետ ես երբ անոնք կը բարձրացնեն, կը քաջալերեն, կը սրբագրեն եւ կը խթանեն քեզ: Դժբախտաբար շատ յաճախ հակառակը կը պատահի:

Փոխանակ Աստուծոյ Օրէնքը ձեզի տան կերակուրի եւ խմելիքի պէս, որոնցմով կրնաք խնճոյք ընել Աստուծմով, անոնք զանիկա կը ծրարեն օրէնքերու խուրձերու մէջ՝ բեռնաւորելով ձեզ անոնցմով՝ բեռնակիր անասուններու պէս: Այնպէս կ'երեւի, որ անոնք հաճոյք կը ստանան երբ կը տեսնեն ձեզ ինչպէս կը տատանիք այդ բեռներուն տակ, եւ չեն մտածեր նոյնիսկ իրենց մատը շարժել՝ ձեզի օգնելու համար: (Մատթէոսի 23.4, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատճ* տարբերակէն)

Յիսուսի օրուայ կրօնաւոր ղեկավարները հաճոյք կը ստանային տեսնելով մարդիկ կը ճգնին օրէնքներուն տակ: Ինչո՞ւ կը կարծէք անոնք այդպէս կը զգային: Կ'ենթադրեմ, որ իրենք զիրենք բարձրացած եւ գերադաս կը զգային երբ կը տեսնէին մարդիկ կը ճգնին բեռան տակ այն օրէնքներուն, զորս իրենք ստեղծած էին: Ատիկա իրենց ինքնագոհ եւ ձեւով մը Աստուծոյ մօտիկ կը զգացնէր:

Վերի հատուածը կարեւոր բան մը կը մատնանշէ: Աստուծոյ Օրէնքը սկզբունքով պէտք էր խնճոյքի պէս ըլլար եւ ոչ բեռի: Կերակուրը ոյժ կու տայ, բայց ճգնիլը կը սպառէ ոյժդ: Մենք կանչուած ենք ներկայացնելու զԱստուած՝ այն ինչ որ կ'ընէ եւ այն ամէնը, որ կ'ընձեռէ, իբրեւ խնճոյք մը, որուն բոլորը կրնան մասնակցիլ: Մենք պէտք է ուրիշներու ծառայենք Աստուծոյ բարութեան առատութենէն: Ատիկա երբեմն մեզմէ պիտի պահանջէ, որ հրաժարինք կարգ մը կրօնական բեռներէ, որոնք բեռցուած են Աստուծոյ որդիներուն եւ դուստրերուն վրայ:

Թերեւս կը մտածես. *Ըսել կ'ուզես, որ կրնամ ծառայել նոյնիսկ եթէ չամուսնացած փղամարդ մը կամ կին մըն եմ:* Այո՛: Եկէք մեր վրայէն հանենք այն կախուած պայուսակը, որ կ'ըսէ, թէ պէտք է ամուսնացած ըլլաս, որպէսզի կարենաս ծառայել Քրիստոսի Մարմինին մէջ: Պօղոս ամուսնացած չէր: Եկէք պարպենք այն պայուսակը, որ կ'ըսէ, թէ կիները կրնան պզտիկներու հետ աշխատիլ, բայց ոչ չափահասներու: (Արդեօք պէտք չէ՞ ասելի հոգատարութեամբ ընտրենք մեր պզտիկներուն հետ աշխատողները:) Կրնանք նաեւ պարպել շոգենալին բեռներու սնտուկը, որ կ'ըսէ, թէ պէտք է կատարեալ ըլլանք նախքան որ Աստուծոյ խոստումները հոշակելու դիրքին մէջ ըլլանք: Ոչ ոք կատարեալ է, եւ երբ կը պնդենք, թէ այդպիսին ենք պատճառ կը դառնայ, որ մեր շուրջի աշխարհին սիրտը խառնուի: Հրաժարինք մեր դիմակներէն: Եկէք բոլորս ալ ընդունինք մեր սխալները, սորվինք անոնցմէ եւ յառաջ երթանք՝ Յիսուսը վեր բարձրացնելով:

Պատրանստ ենք մեր ազատութիւնը գործածելու՝ վերցնելու համար այն ծանրութիւնը, որ կրօնը սխալ կերպով դրած է ուրիշներու վրայ: Ամէն անգամ որ Աստուած կը կանչէ մեզ ընելու նոր բան մը՝ նոր գետին մը գրաւելու կամ անծանօթ տարածք մը մտնելու, մենք հակամէտ ենք սայթաքելու եւ իյնալու: Եկեղեցին մեծ յառաջադիմութիւն արձանագրած է վերջին տասը տարիներուն, եւ ատիկա խանդավառութիւն կը պատճառէ, բայց ամէն մարդ նոյն արագութեամբ չ'ընթանար: Աստուած կը շարունակէ գործել՝ բանալով նախապէս փակ դռներ, եւ ծարաւ կը ստեղծէ մարդոց սիրտերուն մէջ, որպէսզի կարենան յաղթահարել իրենց վախերը:

Վերջերս ե-նամակ մը ստացայ կնոջմէ մը, որ երեք կամ չորս տարի առաջ լսած էր իմ մէկ ուսուցումս թէ՛ սրբացուած, օծեալ կիներ կրնան եւ պէտք է ձայն մը ունենան Աստուծոյ տան մէջ: Այդ գաղափարը սկիզբը վրդոված էր զինք, որովհետեւ անիկա հակառակ էր այն բոլոր բաներուն, որ ինք գիտէր մինչեւ այդ ատեն: Ան հեռացած էր՝ շփոթած եւ անհանգիստ իր լսածներուն պատճառով: Ժամանակ կ'անցնի եւ մինչ ան շարունակ կը սերտէ Աստուծոյ Խօսքը եւ կ'աղօթէ, Աստուած կը սկսի հաստատել իմ ուսուցումս իրեն, եւ նոյն

դուռը կը բանայ իր առջեւ: Այդ ատեն ան կ'անդրադառնայ, որ իմ պատգամս լսելու ատեն իր զգացած ներքին տագնապը Աստուծմէ էր: Իր անհանգստութիւնը արդիւնքն էր այդ նիւթին մասին Աստուծոյ իրեն հետ խօսելուն: Տարիներ առաջ խօսած խօսքերս հունտի դեր կատարած էին այդ կնոջ կեանքին մէջ եւ միայն հիմա էր, որ պտուղ կու տային:

Մեզի յանձնարարուած է ճշմարտութիւնը խօսիլ սիրով եւ ապրիլ այնպիսի ձեւով մը, որ մեր կեանքը ուրիշները կը հրաւիրէ, որ մեզի ուղեկցին: Մենք պէտք չէ տկարները եւ անօթիները ետին ձգենք:

Եզեկիէլի 19.2-ն հետեւեալ հարցումը կը հարցնէ. «Ինչ է քու մայրդ: Էգ առիծ մը՝ առիծներու մէջ» (բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* տարբերակէն):

Երբ առաջին անգամ կարդացի ատիկա, մտածեցի. *Ինչ կը նշանակէ ասիկա*: Աւելի լաւ հասկնալու համար կարդացի Եզեկիէլի 19-րդ գլուխը՝ անոր պարունակը հասկնալու համար: Անիկա կը պատկերէ էգ առիծ մը, որ կը մեծցնէ իր երկու կորիւնները, որպէսզի ըլլան զօրաւոր եւ հզօր առիծներ: Մտածեցի. *Կ'ուզեմ տրվիլ էգ առիծ մը ըլլալ առիծներու մէջ...* Ո՛վ չ'ուզեր ըլլալ այն տեսակի կին մը, որուն կեանքը եւ ընտրութիւնները զօրութիւնը ունին մեծցնելու զօրաւոր դուստրեր եւ որդիներ: Ես պատիւը ունիմ ընդունուած ըլլալու այսքան մեծ թիւով կիներու աշխարհին մէջ, բայց կ'ուզեմ կարեւոր դեր ունենալ այն տղամարդոց կեանքերուն մէջ, որոնք ես իմ կեանքիս մէջն են: Կ'ուզեմ բարձրացնել բոլոր անոնք, որոնք վախի մէջ են, տկար կամ դժուարութիւններու մէջ: Եւ գիտէք ի՞նչ: Դո՛ւն ալ ատիկա կ'ուզես: Աստուած իր դուստրերուն մէջ դրած է ուրիշները մեծցնելու փափաքը:

ՅՈՅՍ՝ ԱՆՅՈՅՍՆԵՐՈՒՆ

Երբեմն տատանող անծի մը ձեռք մեկնելը յոյս տալ է անոր: *Լայֆ Աուօրիչի* հետ դէպի Քամպոտիա վերջերս կատարած մէկ այցելութեանս ընթացքին, գիշերով ճամբայ իջայ քալելու՝ փորձելով խօսիլ պոռնկութեան մէջ բռնուած աղջիկներու հետ: Երբ որ կը մօտենայի այդ գիշերը շրջագայող աղջիկներուն,

անոնք զգուշաւոր էին եւ գրեթէ ծաղրանքով կը խօսէին հետս: Այդ արհամարհական վերաբերումը նոյնն էր երբ կը մօտենայի անհատ աղջկայ մը կամ խումբի մը: Իմ հարցումներուս կու տային մէկ բառնոց պատասխաններ եւ կը ծիծաղէին իրարու միջեւ: Վստահ եմ, որ իրենք իրենց հարց կու տային, թէ ինչո՞ւ միջին տարիքի ճերմակամորթ ամերիկացի կին մը իրենց հետ կը խօսէր: Բայց քիչ մը իրենց հետ խօսակցելէ ետք, կը հարցնէին իրենց երազներուն մասին:

«Ինչ կ'ուզէք ձեր կեանքին համար: Եթէ կարենայիք ըլլալ կամ ընել որեւէ բան, ի՞նչ պիտի ըլլար ատիկա»:

Բոլորին պարագային ալ անխտիր, երեսները կը փոխուէին երբ կ'առաջարկէի, որ երազեն եւ յոյս ունենան, որ իրենց կեանքերը կրնան անելին ըլլալ: Իրենց մղձաւանջին մէջ մէկը իրապէս իրենց կ'ըսէր, որ երազէն: Յանկարծ անոնք պատասխաններ կ'ունենային եւ հետս եղող թարգմանողը հազիւ կը հասնէր ինծի թարգմանելու:

«Ես կ'ուզեմ մազ շինել»:

«Ես կ'ուզեմ ճաշարան մը բանալ»:

«Կ'ուզեմ շուկային մէջ իմ կրպակս ունենալ, ուր գեղեցիկ բաներ կրնամ ծախել»:

«Կ'ուզեմ ընել որեւէ գործ, որուն մէջ մարդիկ չեն վարկաբեկեր զիս»:

«Կ'ուզեմ բաւարար դրամ շահիլ, որ ղրկեմ ընտանիքիս»:

Աղջիկները չէին դադրեր խօսելէ: Իրենց վրայէն թօթափեցին գայթակղեցուցիչ կեցուածքները եւ քանի մը վայրկեանի համար դարձան այն դեռահաս աղջիկները, որ էին:

Այդ աղջիկները գիտէին, թէ ի՞նչ կ'ուզէին, միայն եթէ իրենց վանդակին դուռը բաց ըլլար: Երբ որ կարելի ըլլար, մենք կ'առաջարկէինք օգնել, որ փախչին իրենց բանտէն, եւ անոնցմէ քանի մը հոգին ընդունեցին մեր օգնելու առաջարկը: Բայց միայն անոնք, որոնք իրենց ամօթէն անդին կրցան անցնիլ՝ կրցան առջեւ երթալ: Յանցաւորի եւ ամօթի զգացումները այդ աղջիկներէն շատերը նոյնքան գերի կը պահէին որքան զիրենք աշխատցնողները գերի կը պահէին զիրենք:

Այդ ձեւի յուսալքիչ կացութիւններու մէջ, երազելը եւ

գիտնալը, թէ ինչ կ'ուզես, բաւարար չեն: Ընդհանրապէս երբ մէկը այդքան ծուղակի մէջ եւ այդքան պարտուած կը զգայ ինքզինք, կը պահուրտի զինք բանտարկած պատերուն մէջ նոյնիսկ երբ դուռը լայն բացուած ըլլայ: Ուստի պոռնկութենէ ելք մը առաջարկելնուս կողքին մենք Ամենալաւը բերինք իրենց բանտերուն մէջ: Մենք անոնց ծանօթացուցինք Յիսուսը: Ըսինք, որ ան իրենց կողքին էր եւ թէ ինք միայն վերջնական յոյսն էր անյոյսին:

Թէ պիտի հրաւիրէին զինք իրենց սիրտերուն մէջ, ատիկա իրենց կը մնար որոշելու: Դուն եւ ես կրնանք քալել ուրիշներու կողքին եւ քաջալերել զիրենք, որ յառաջ երթան, բայց վերջ ի վերջոյ որոշումը իրենցն է:

ԷԳ ԱՌԻԻԾԻՆ ՄԱՍԻՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ ՄԸ

Պահ մը վերադառնանք այս գլուխի սկիզբը նշուած վաւերագրական *ֆիլմի* էգ առիւծներուն: Ինչո՞ւ այդ այծեամի դիակը իրենց հետ ետ բերին, որպէսզի արու առիւծը ուտէր անկէ: Վստահ որ ուրիշ ընտրութիւններ ունէին: Տարօրինակ էր, որ անոնք այդ հսկայ այծեամի դիակը քաշքշելով բերին իրենց ցանկապատէն ներս, որպէսզի արու առիւծն ալ մասնակցէր իրենց խնճոյքին: Աւելի յարմար պիտի ըլլար, որ իրենք կուշտուկուռ ուտէին եւ ապա ձգէին մնացորդը արու առիւծին, որ երբ որ ուզէր անցնէր ցանկապատէն անդին եւ ուտէր իր բաժինը: Կամ ալ իրենք կրնային կշտանալու չափ ուտել եւ մնացորդը բերել արու առիւծին: Շատ անելի դիւրին պիտի ըլլար այծեամի դիակին մէկ մասը փոխադրելը քան ամբողջը: Անտառի օրէնքը նկատի ունենալով, անոնց վարմունքը կը թուի մեր ակնկալածին հակառակը ըլլալ: Եթէ անասուններու թագաւորութիւնը հիմնուած է գոյատեւելու վրայ, ինչո՞ւ այդ էգ առիւծները այդքան առատածեռն էին: Վերջապէս անօթի առիւծի մը հետ կերակուր բաժնեկցիլը կը նշանակէր անելի քիչ կերակուր իրենց համար:

Թերեւս այդ էգ առիւծերը գիտէին բան մը, որ մենք մոռցած ենք: Հակառակ անոր որ երիտասարդ եւ տհաս էին, անոնք բնազդաբար հասկցան, թէ իրենց ապագան եւ իրենց ձագերուն գոյատեւումը կապուած էր արու առիւծին հետ իրենց յարաբերութենէն: Անոնք ընտրեցին վարուիլ այնպիսի

ձեռով մը, որ արու առիծը յիշէր ասիկա իր ապագայի զօրութեան եղանակին: Անոնք պատուեցին այն հզօր առիծը, զոր անիկա օր մը պիտի ըլլար՝ անտեսելով ցանկապատին ետին պահուրտած անոր ներկայի վիճակը: Օրը պիտի գար երբ ան ամբողջական ձեռով պիտի մեծնար եւ անվախ պիտի ըլլար: Ան պիտի յիշէր, որ էգ առիծները կերակուր բերած էին իրեն երբ ինք տակաւին տհաս էր եւ վախցած էր առնելու այն ինչ որ իր իրաւունքն էր: Այդ օրը ան պիտի գիտնար, որ կրնայ վստահիլ անոնց եւ կեանք կերտել անոնց հետ: Էգ առիծներուն բնագոյը պիտի պահէր իրենց խումբը եւ շահէր արու առիծին յարումը (սիրտը):

Մեզմէ քանիններ այդ նոյն վարմունքը կ'ունենան:

Աւելի ճիշդը՝ արդեօք *ես* ունիմ այդ վարմունքը:

Կամ արդեօք մենք գոյատեւումի ւաւելի նուազ ազնուական կեցուածք մը որդեգրած ենք: Արդեօք մեր կեցուածքը այսպիսի բան մըն է. «*Հէ, հոն մնալը քոն հարցդ է: Ես լաւ վիճակի մէջ եմ հոս: Աստուած խնճոյք մը պատրաստած է իր դուստրերուն համար: Եթէ պատրաստ չես մեզի միանալու, հոն կեցիր եւ գիտցանձո՞ղ ըրէ*»:

Իմաստուն կ'ըլլանք եթէ ճշմարտութիւնը գիտնանք. *այսօր ւաւելի քիչ բաժին ունենալ չի նշանակեր ւաւելի քիչ ունենալ ապագային*: Պատուելու արարքները բնաւ չեն կորսուիր:

Մեզի զօրութիւն կը տրուի ծառայութեան համար, ոչ թէ դիրքի (տես Հռոմայեցիներուն 15.2): Ես ինծի հարց կու տամ, թէ արդեօք ճիշտն խնդիրներ պիտի շրջանցուէին աշխարհի մէջ եթէ ամէն մարդ գիտնար եւ գործադրէր այդ սկզբունքը: Ինչ պիտի ըլլար եթէ գիտնայինք, որ մեր զօրութիւնը ծառայել էր տկարներուն, վախի մէջ եղողներուն կամ երկչոտներուն: Ամէն բան լաւ պիտի ըլլար: Կը հաւատամ, որ այս կեանքի վերջաւորութեան բոլորս ալ կ'ուզենք լսել, որ Յիսուս կ'ըսէ. «Ապրի՛ս, բարի եւ հաւատարիմ ծառայ»:

ՈՏՔԻ ԵՒ՝ ԳԵՐԱԶԱՆՑ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Այս ծառայութիւն բառը բազմաթիւ իմաստներ ունի: Թէ՛ բայ է եւ թէ՛ անուն: Իբրեւ բայ, կը նշանակէ՝ «նորոգել, ստուգել, ներդաշնակել եւ քննել»: Յիսուս մեծ «ծառայութիւն» մը ըրաւ մեզի համար՝ մեզ պատշաճ դարձնելով կենալու

սուրբ Աստուծոյ մը առջեւ: Մենք կ'ապրինք այնպիսի ձեւով մը, որ կ'արտացոլացնէ այդ կեանք տուող ծառայութիւնը: Ան կոտորուեցաւ, որպէսզի մենք նորոգուինք: *Ծառայութիւն* բառին իբրեւ անուն գործածութիւնը կրնայ նշանակել՝ «արարողութիւն, ձէս կամ եկեղեցական խորհուրդ»: Երբեմն կարծես կը մոռնանք, որ եկեղեցւոյ մը *ծառայութեան* նպատակը սորվիլ է ինչպէս լաւ կերպով ծառայել Աստուծոյ եւ մէկս միւսին: Մեծ թիւով Քրիստոնեաներ կը հաւաքուին սխալ ակնկալութեամբ: Կու գան լսելու, թէ Աստուած ինչպէս պիտի ծառայէ իրենց: Փոխարէնը եկէք հաւաքուինք ձեռք մեկնելու համար տկարներուն կամ թուլցածներուն՝ թէ՛ մեր եկեղեցիին մէջ եւ թէ՛ անկէ դուրս:

Ազատութեան, շնորհքի եւ մեր առջեւ բացուելիք նոր առիթներու խոստումով, եկէք յառաջ երթանք Աստուծոյ բաներուն մէջ, որպէսզի ոչ մէկը ետեւ մնայ: Կը սիրեմ հետեւեալ յանձնարարութիւնը.

Մեզ՝ առաջնորդներս, մի՛ պատկերացնէք այնպիսի ձեւով մը, որ մենք չենք: Մենք Քրիստոսի ծառաներ ենք, ոչ իր տէրերը: Մենք ուղղութիւն կու տանք դէպի Աստուծոյ ամէնէն վսեմ գաղտնիքները, եւ ոչ թէ պահակներ ենք՝ կարգուած զանոնք պաշտպանելու համար: Լաւ ուղղութիւն տուողի մը համար կը պահանջուի վստահելիութիւն եւ ճշգրիտ գիտութիւն ունենալ: (Ա.Կորնթացիներուն 4.1-2, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Մենք պէտք է ըլլանք ուղղութիւն տուողներ կամ առաջնորդներ եւ ոչ պահակներ: Մենք պէտք է ուրիշները հրաւիրենք Թագաւորութեան մէջ եւ ոչ թէ զանոնք դուրս պահենք Աստուծոյ խորհուրդէն: Մեզի յանձնարարուած է ըլլալ վստահելի ուղղութիւն տուողներ կամ առաջնորդներ՝ ճշգրիտ գիտութիւնով: Եկէք ուշադիր ըլլանք, որ կանգ առնենք այն բացութիւններուն դիմաց, զորս Աստուած մեզի համար ստեղծած է եւ եթէ պէտք ըլլայ դէպի ետեւ ձեռք մեկնենք, որպէսզի ուրիշները ետեւ չմնան:

Իբրեւ դուստրը Ամենաբարձրին, քու ձեռք մեկնելը պէտք է

Զօրութիւնը Ծառայութեան Համար Է

ըլլայ թէ՛ առատաձեռնօրէն եւ թէ՛ ազնուականօրէն: Աստուծոյ կեանքը կ'ազատագրէ, մինչ Օրէնքը կը բեռնաւորէ: Դուն արձակուած ես «աչքի տեղ՝ աչք եւ ակռայի տեղ՝ ակռայ»ի մօտեցումէն՝ դէպի Քրիստունէութիւն: Սակայն կան մեծ թիւով մասնակի կոյրեր եւ առանց ակռայի մարդիկ Քրիստոսի Մարմինին մէջ:

Բնաւ մի՛ մոռնար, թէ՛ ղ՛վ ես դուն. զօրաւոր, մեծաշուք, անվախ, կատաղի, պաշտպանող, հանգիստ եւ հանդարտ (ոչ մտահոգ): Աստուած շարունակ իր արքայական զաւակներուն ոյժը համեմատեց առիւծներու հետ:

Առիւծի մը նման Իսրայէլ կը ծոխ եւ կը պառկի.
Էգ առիւծի մը նման, ղ՛վ կը համարձակի արթնցնել
գայն: (Թիւերու 24.9, բառացիօրէն թարգմանուած
Աստուածաշունչի *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն*
տարբերակէն)

Եթէ մոռնաս քու կատաղի եւ անվախ բնութիւն ունենալդ, ապա բոլոր անոնք, որոնք քեզի կը նային պաշտպանութեան եւ առաջնորդութեան համար պիտի վտանգուին: Քրիստոսի Մարմինը կազմուած է ազնուական, հզօր պահապաններով, որոնք կը գիտակցին, որ Աստուած ընդարձակ տարածք մը բացած է մեր առջեւ:

Սիրելի քոյրեր, առիւծներ եւ բարեկամներ...

Ձեմ կրնար ըսել, թէ՛ ի՞րքան կը փափաքիմ, որ մտնէք այս ընդարձակ, լայն կեանքը: Մենք ձեզ ցանկապատներու մէջ չդրինք: Այն պզտիկութիւնը, որ կը զգաք ձեր մէջէն կու գայ: Ձեր կեանքերը պզտիկ չեն, բայց դուք զանոնք պզտիկ ձեւով կ'ապրիք: Կը խօսիմ կրցածիս չափ պարզ ձեւով եւ մեծ սիրով: Բացէ՛ք ձեր կեանքերը: Ապրեցէ՛ք բաց կերպով եւ ընդարձակօրէն: (Բ. Կորնթացիներուն 6.11-13, բառացիօրէն թարգմանուած
Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Լսեցիք: Մենք հրափրուած ենք մտնելու վայրի, ընդարձակ տարածութիւնները Աստուծոյ: Ասիկա կոչ մըն է ապրելու ընդարձակ կերպով հիմա հոս: Պէտք չունիս սպասելու, որ երկինք երթաս, որպէսզի տեսնես երկինքի զօրութիւնը կ'արձակուի երկրի վրայ: Աստուած չէ, որ քեզ ցանկապատներու մէջ կը դնէ:

Բայց էգ առիծները իրենց փակուած տեղէն դէպի դուրս չչարժեցան մինչեւ որ իրենց անօթութիւնը գերազանցեց իրենց ապահով ըլլալու փափաքին: Նոյնպէս ալ մեր տեսիլք չունենալը կամ աւելիին համար անօթի չըլլալը կրնայ սահմանափակել եւ ետ պահել մեզ վայրի տեղերու մէջ քայլ առնել: Մեր անձին, մեր աշխարհին եւ մեր Աստուծոյ մասին մեր տեսակէտը կամ համարձակութիւն կու տայ մեզի կամ ալ կը կապէ մեզ: Դուրսի աշխարհը կրնայ վախնալիք թուիլ եթէ զանկապատկերացնես իբրեւ խաւար եւ վախնալիք վայր մը:

Բայց աչքերդ եւ յիշէ, թէ ո՛վ ես դուն. լոյս կրող ոսկեայ արարած մը, որ ունի իշխանութիւնը խաւարը փարատելու ո՛ր որ կ'երթայ: «Ձեր մէջ եղող Հոգին շար աւելի զօրաւոր է քան որեւէ քան աշխարհի մէջ» (Ա.Յովհաննէսի 4.4, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն): Բաղդատութենէ դուրս է անգամ: Քու մէջդ գտնուող Հոգին չափազանց աւելի զօրեղ է քան որեւէ ընդդիմութիւն, որուն կրնաս հանդիպիլ այս աշխարհի մէջ: Ամենաբարձրն է, որ քեզ կը կանչէ, որ դուրս գաս դէպի աշխարհ: Ան իր Որդին դրկեց, որ մեռնի խաչի վրայ, որպէսզի դուն մահէն կեանքի անցնիս եւ այս աշխարհի սահմանափակ վայրերէն՝ դէպի յաւիտենական տարածութիւն: Նոյնիսկ քու առաջին շունչդ առնելէդ առաջ, ան միջոց մը տուած էր՝ քեզ գերութենէ արձակելու: Ան ընտրեց ինքզինք սահմանափակել եւ ապրիլ մեր փոքր, ցանկապատուած կեանքը, որպէսզի դուն կարենաս միանալ իրեն՝ իր թագաւորութեան ընդարձակ ազատութեան մէջ:

Հիմա ալ ան մեզմէ իւրաքանչիւրը կը կանչէ, ըսելով. «Այս կողմ անցէք եւ ներս եկէք»:

Նոյն Առաքելութեան Տակ

Ամէն անգամ, որ կին մը
կ'ազատագրենք, տղամարդ մը
ազատագրած կ'ըլլանք:

ՄԱՐԿԱՐԷԹ ՄԻՏ



Առիւծներու աշխարհին մէջ սեռի շփոթ չկայ: Արու
առիւծները չեն փորձեր ըլլալ էգ առիւծներ, եւ էգ առիւծները
չեն փորձեր ըլլալ արու առիւծներ: Սեռերէն ոչ մէկը կը փորձէ
ընդօրինակել միւսին դերը կամ մրցիլ անոր հետ: Երկուքն ալ
հանգիստ եւ ինքնավստահ են, եւ կը ճանչնան մէկը միւսին
իրայատկութիւնները: Արու եւ էգ ըլլալուն կողքին, տուեալ
առիւծներու խումբի մը մէջ կայ *ալֆա* կամ առաջնորդ արու
առիւծը եւ *ալֆա* կամ առաջնորդ էգ առիւծը, բայց դիրքերու
այդ տարբերութիւնը ընդհանրապէս ի յայտ կու գայ կերակուր
ուտելու ատեն:

Առիւծները կատուններու ընտանիքի միակ անդամներն
են, որոնց արունները եւ էգերը յայտնի, տեսանելի
տարբերութիւններ ունին: Ատոր կ'ըսենք՝ սեռային
երկձեւութիւն: Աւելի պարզ ձեւով կրնանք ըսել, թէ՛ անոնց
սեռը գիտնալու մէկէ աւելի ձեւեր կան:

Արու առիւծները մեծ բաշ մը ունին իրենց վիզին շուրջը, որ
կը շրջանակէ իրենց դէմքը: Այդ բաշը կ'ընդգծէ այն որոշակի

Եւ յատուկ դերը, որ առաջնորդ արու առիծը կը խաղայ խումբին մէջ, ինչպէս նաեւ անոր կու տայ ահարկու տեսք մը: Բաշ չունենալուն պատճառով էգ առիծը ասելի միագոյն է, ինչ որ կ'օգնէ, որ գրեթէ անտեսանելիօրէն հետապնդէ իր որսը: Բաշին յաւելեալ կշիռքն ալ չունենալով, ան կրնայ ասելի երկար տարածութեան վրայ հալածել իր որսը:

Առողջ արու եւ էգ առիծները գիտեն, որ իրարու պէտք ունին: Բնաւ չեն պատկերացներ կեանքը ապրիլ առանց մէկը միւսին: Իրենց աշխարհին մէջ մէկ իւրայատկութիւնը կամ զօրաւոր կէտը նուազ կարեւոր չէ քան միւսը: Արու առիծը կը պաշտպանէ, էգ առիծը կը հայթայթէ: Այդ վճռորոշ հաւասարակշռութիւնը կը նշանակէ, թէ առողջ, զօրաւոր *ալֆա* արու առիծները չեն փորձեր անգամ ապրիլ առանց խումբ մը հզօր էգ առիծներու օժանդակութեան: Առիծներու աշխարհին մէջ արուները կը կռուին՝ շահելու համար խումբ մը էգ առիծներ, եւ հետեւաբար մտնելու անոնց տարածքէն ներս: Ինչո՞ւ: Նոյն ընտանիքին պատկանող էգ առիծներն են, ոչ թէ արուները, որոնք կը տիրեն իրենց տարածքին վրայ: Տուեալ խումբ մը առաջնորդող արու առիծներու դաշնակցութիւնը կը փոխուի ամէն երկու կամ երեք տարին մէջ մը, բայց էգ առիծները կը մնան:

Արու *ալֆա* առիծը գիտէ, որ եթէ կ'ուզէ ծաղկիլ (ոչ միայն գոյութիւն ունենալ), պէտք է իր ոյժովը ինքզինք փաստէ էգ առիծներուն աչքին: Ապա եթէ կ'ուզէ, որ իր սերունդը պահէ խումբին տարածքը, ան պէտք ունի զօրաւոր եւ կարող էգ առիծներու: Ան ինքզինք չի շրջապատեր տկար եւ չեզոք առիծներով՝ զանոնք բռնադատելով իրեն ենթարկելու յոյսով: Ան կը փնտռէ շատ մասնագիտացած համագործակցող էգ առիծներու կազմ մը:

Ան կ'ողջունէ անոնց ոյժը եւ դիտումնաւոր կերպով կ'ընտրէ անոնք, որոնք փաստած են իրենց ձիրքը եւ կորովը՝ որսալու եւ իրենց ծագերը պահելու, եւ հետեւաբար նաեւ պահելու եւ ընդարձակելու իրենց տարածքը: Ան կը փնտռէ անոնք, որոնք ցոյց կու տան իրենց զօրաւոր ըլլալը՝ գիտնալով, որ անոնք են, որ լաւ հայթայթողներ պիտի ըլլան ամբողջ խումբին համար եւ կարող մայրեր՝ իր ծագերը մարզելու: (Ոչ թէ որովհետեւ արու առիծները յատկապէս

խնամող են. անոնք այդպէս չեն:) Իբրեւ յաւելեալ օգուտ մը, առողջ, զօրաւոր էգ առիւծները պատրաստ կ'ըլլան անելի յաճախ ծննդաբերելու, ինչ որ արու առիւծին առիթը կու տայ զուգաւորուելու անոնց հետ եւ հաստատելու անելի զօրաւոր սերունդ մը:

Էգ առիւծը չի ծննդաբերեր եթէ վախնայ, որ պիտի չկարենայ հոգալ իր ձագերուն կամ պիտի չկարենայ լաւ կերպով պաշտպանել զանոնք: Ատոր համար, էգ առիւծները կը գրաւուին դէպի զօրաւոր *ալֆա* արուները եւ ոչ տկարները: Առաջնորդ արու առիւծը կամ առիւծները (յաճախ նոյն ընտանիքին պատկանող եղբայրներու խումբ մը) պէտք է շահին իրաւունքը վայելելու այն պարտնը, զօրութիւնը եւ խնամքը, որ էգ առիւծները կը բերեն իրենց խումբին: Այդ առանձնաշնորհումը կը շահուի արու առիւծներու խումբերու միջեւ ոյժի բաց ցուցադրութեամբ մը:

Մրցումը կ'աւարտի երբ անելի տկար առիւծները կը փախչին կամ կը վտարուին զօրաւորներուն կողմէ: Երբեմն *ալֆա* արու առիւծը կը սպաննէ իր մրցակիցը: Եթէ անելի տկար առիւծը չսպաննուի եւ վերապրի, ան կ'արտաքսուի եւ դուրս կը դրուի խումբին տարածքէն, ինչ որ կը նշանակէ կորսնցնել որակաւոր որսորդութեան կարելիութիւնը: Ան կամ պիտի երթայ եւ փնտռէ էգ առիւծներու ուրիշ խումբ մը ուրիշ տեղ կամ ալ պիտի իջնէ աղբ հաւաքողի մը մակարդակին:

Էգ առիւծները կը դիտեն կողմէն: Անոնք կ'ուզեն, որ ամէնէն հզօր առիւծը ըլլայ հայրը իրենց ձագերուն եւ պաշտպանէ իրենց խումբը ընդդէմ յարձակումներու եւ ոտնձգութիւններու: Անոնք նաեւ իրարու դէմ կը լարեն արուները, որպէսզի այնպէս ընեն, որ ամէնէն զօրաւորը յաղթէ եւ յետոյ իրենք յաղթողը ընդունին իրենց մէջ: Իր տարածքը շահելով, արու առիւծը կը փաստէ, որ իր ծինային կազմութիւնը արժանի է եւ անելի հաւանական է, որ գոյատեւէ վայրի բնութեան խստութեան դիմաց:

Երբ գերակայութիւնը կ'որոշուի, էգ առիւծներուն հաւատարմութիւնը կ'ապահովուի: Որեւէ ուրիշ արու առիւծ, որ կայ խումբին մէջ կրնայ ըլլալ, որ վտարուի: *Ալֆա* արու առիւծը պատրաստ կ'ըլլայ հրաժարելու անոնցմէ, բայց անկարելի է, որ հրաժարի էգերէն: Անիկա զանոնք

չ'ուզեր միայն զուգաորուելու համար: Անոնք կերակուր հայթայթողներն են ինչպես նաեւ համայնք ստեղծողները: Որքան անելի զօրաւոր եւ տպաւորիչ ըլլայ իր էգ առիծներու խումբը, այդքան անելի հզօր եւ ապահով կ'ըլլայ արու առիծը՝ անասուններու փառաւոր թագաւորը:

Հարկ չկայ տիրապետելու երբ շուրջինների գիտեն, որ կարելիութեանդ սահմաններուն մէջ ամէն բան պիտի ընես զիրենք պաշտպանելու համար: Արու առիծին ոյժը ապահովութիւն կը նշանակէ թէ էգ առիծներուն եւ թէ իրենց ձագերուն համար: Միայն անոնք, որոնք վստահ չեն իրենց ոյժէն՝ կը փորձեն տիրապետել:

Իր դիրքը հաստատելէ ետք, հզօր արու առիծը հարկ չ'զգար ճնշում բանեցնելու էգ առիծներուն վրայ՝ իր ոյժը ցուցադրելու համար: Ինչ պէտք ունի փաստելու: Շահած է: Ո՛վ կայ իրմէ անելի գերակայ: Նոյնպէս ալ մեր Թագաւորը՝ Յուդայի Առիծը, չի տիրապետեր, այլ՝ կը բարձրացնէ:

«ՆՈՅՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՏԱԿ»

Արու առիծը կը հրաւիրէ էգ առիծները, որ հանգչին իր պաշտպանութեան շուքին տակ: Իսկ էգ առիծը կը հրաւիրէ արու առիծը, որ խնճոյք ընէ իր բերած բարիքներով եւ խոստումներով: Արուն կը պաշտպանէ էգին կեանքը, իսկ էգը անոր ժառանգութիւն կու տայ:

Պահ մը նկատի առ *հնազանդութիւն* բառը: Ինչ կու գայ միտքդ: Հաւանաբար Եփեսացիներուն 5.22-ն, որ կը խօսի կիներուն իրենց ամուսիններուն հնազանդելու մասին: Հետաքրքրականօրէն, շատ մը Քրիստոնեաներ այդ բառին համար ծայրայեղ ու սահմանափակ սահմանում մը ստեղծած են: Կը հաւատամ, որ *հնազանդութիւն* բառը աղաւաղուած է եւ հեռացած Աստուծոյ մտադրած իմաստէն: Շատ մը Քրիստոնեայ կիներ կը հաւատան, որ իրենց գլխաւոր արժէքը կը կայանայ տղամարդոց ծառայելու իրենց կարողութեան մէջ: Չեն անդրադառնար, որ եկեղեցիին մէջ խօսիլը, յարգալիր կերպով իրենց կարծիքները արտայայտելը կամ ղեկավարութեան դիրքի պատասխանատուութիւն վերցնելը *ծառայել է*:

Լսած եմ *հնազանդութիւն* [անգլերէնի մէջ՝ *սապմիշըն-Թարգմանիչ*] բառի սահմանում մը, որ կը վերաբերի բոլոր Քրիստոնեաներուն համար Աստուծոյ ծրագիրին, ոչ միայն զոյգերուն: Հետեւեալը նկատի առ. *սապ* նախամասնիկը կը նշանակէ՝ «տակը», եւ *միշըն* կը նշանակէ՝ առաքելութիւն կամ պարտականութիւն: Այդ երկուքը քով քովի դնելով, կրնանք եզրակացնել, որ հնազանդութիւն կամ *սապմիշըն* կը նշանակէ՝ «նոյն պարտականութեան կամ առաքելութեան տակ»: Անձնապէս Ճոնը եւ ես նոյն առաքելութեան տակն ենք: Մենք նուիրուած ենք բարեպաշտ զաւակներ մեծցնելու եւ առողջ, կենսունակ ամուսնութիւն մը կերտելու գործին: Եկեղեցւոյ մարզին մէջ մեր առաքելութիւնը գօտեպնդել է հովիւները եւ զօրացնել անհատներ:

Բայց մտածէ՛ պահ մը այդ մասին: Բոլորս ալ հաշտութեան պաշտօնեաներ չէնք... Աստուծոյ դեսպանները՝ չփրկուածներուն: Հետեւեալ երկու համարները կը նկարագրեն մեր առաքելութիւնը՝ իբրեւ Աստուծոյ տղամարդ եւ կին դեսպանները.

Աստուած աշխարհին հետ հաշտուեցաւ
Մեսիային միջոցաւ, աշխարհին շնորհելով նոր
սկիզբ մը՝ մեղքերու թողութիւն առաջարկելով:
Աստուած մեզի տուած է իր ըրածները բոլորին
յայտնելու պարտականութիւնը: Մենք Քրիստոսի
ներկայացուցիչներն ենք: *Աստուած կը գործածէ
մեզ՝ համոզելու համար տղամարդիկն ու կիները,
որ հրաժարին իրենց տարբերութիւններուն վրայ
կեդրոնանալէն եւ լծուին Աստուծոյ հետ հաշտուելու
գործին:* (Բ. Կորնթացիներուն 5.19-20, բառացիօրէն
թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ*
տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Այսինքն՝ մարդիկ պիտի գիտնան, որ մեր Յիսուսը իրական է երբ մենք սիրենք զիրար եւ լաւ ձեւով գործենք իրարու հետ: Ատիկա պէտք է ըլլայ միացեալ նպատակը բոլոր տղամարդոց եւ կիներուն, ըլլան անոնք ամուրի կամ ամուսնացած, առաջնորդ կամ պարզ մարդ: Անկումին

քաշողական ոյժը այլևս խափանուած է: Աստուծոյ ներումը ձրիաբար կ'առաջարկուի բոլորին: Պէտք չկայ մեղադրանք դնելու ոեւէ մէկուն վրայ եթէ Յիսուսի զոհաբերումը մեզ բոլորս անմեղ դարձուցած է: Աստուած կ'ուզէ բոլորս՝ տղամարդիկ եւ կիներ, որ ըսենք բոլորին, թէ *ինք ինչ կ'ընէ*: Փոխարէնը մենք աւելի զբաղած ենք իրարու ըսելով, թէ մե'նք ինչ կրնանք ընել կամ ինչ չենք կրնար ընել:

Ան կ'ուզէ, որ մենք իրարու հետ գործենք՝ իբրեւ համոզելու ձիրք ունեցող հանրային դէմքեր (*ինֆլուընսըրններ*)՝ քաջալերելու եւ համոզելու համար տղամարդիկն ու կիները, որ հրաժարին իրենց վէճերէն (ինչ ալ ըլլան անոնք) եւ մտնեն Աստուծոյ գործին մէջ: Տագնապներ լուծելու ձեւերը պէտք է կիրարկուին մարդկային յարաբերութեան եւ կապակցութիւններու ամէն մարզի մէջ: Այդ պատուէրը միայն սեռերուն վերաբերող նիւթ մը չէ. անիկա ցեղային, ընկերատնտեսական, ընտանեկան, եկեղեցիին եւ շուկային կամ առեւտուրի աշխարհին վերաբերող նիւթ է նաեւ: Աստուած հաշտութիւն կ'ուզէ բոլորին համար:

Հիմա մենք դէպի ներս կը նայինք, եւ ինչ որ կը տեսնենք այն է, թէ՛ ոեւէ մէկը, որ միացած է Մեսիային՝ նոր սկիզբ մը կ'ունենայ, նոր կը ստեղծուի: Հին կեանքը անցած է. նոր կեանք մը կը ծաղկի: Նայէ՛ անոր: Այդ բոլորը կու գան Աստուծմէ, որ իր եւ մեր միջեւ յարաբերութիւնը կարգաւորեց, եւ ապա կանչեց մեզ, որ կարգաւորենք մեր յարաբերութիւնը իրարու հետ: (Բ.Կորնթացիներուն 5.17-18, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

«Ոեւէ մէկը» կը նշանակէ... *ոեւէ մէկը*: Ոեւէ տղամարդ, ոեւէ կին, ոեւէ մանուկ, որ Քրիստոսի միացած է՝ վերստեղծուած է: Հին կեանքը կ'անհետանայ: *Կը ծաղկի* բայը, որ կը տեսնենք վերի համարին մէջ կը նշանակէ՝ (սունկի պէս) շատ արագ կերպով աճիլ եւ շատնալ [անգլերէնով՝ *թու մաշրում*, որ կը նշանակէ՝ սունկ- Թարգմանիչ]: Ատիկա բառի շատ հետաքրքրական ընտրութիւն մըն է, քանի որ

սունկերը պայթելու պէս կ'աճին. կը բազմապատկուին, կը բարգաւաճին, արագօրէն կ'աճին եւ կը ծաղկին տեղերու մէջ, ուր փտութենէ բացի ուրիշ ոչինչ կար առաջ: Քրիստոսի մէջ մեր նոր կեանքը փոխարինումի գաղափարէն աւելին է: Անիկա կեանք է, որ կը բազմապատկուի մարդուն ներսիդին, եւ անիկա տրամադրելի է բոլորին:

Արու եւ էգ առիւծները արդէն հաշտ են իրարու հետ իրենց յարաբերութիւններուն մէջ: Էգ առիւծները կը հասկնան, որ իրենք եւ արու առիւծը «նոյն առաքելութեան տակ» են: Ինչ է իրենց առաքելութիւնը: Անոնց առաքելութիւնն է հաստատել առիւծներու սերունդ մը՝ ամանդով եւ զօրութեամբ: Ատիկա ընելու համար, անոնք կը մեծցնեն, կը պաշտպանեն եւ կը հայթայթեն իրենց ձագերուն: Թէ՛ արու եւ թէ՛ էգ առիւծը դեր մը ունին խաղալու այդ առաքելութեան մէջ, եւ անոնցմէ ոչ մէկը կը յափշտակէ միւսին դերը:

Ես տեսած եմ ինչպէս բնութեան կարգը կը քաշուի դէպի երկու իրարու հակառակ ծայրայեղութիւններ: Պատկերին մէկ կողմը կիները կը ճնշուին՝ հնազանդութեան անունին տակ: Իսկ միւս կողմը կարգ մը կիներ իրենց իգականութիւնը բարձրացուցած են աստուածութեան մակարդակի: Այս մասին քիչ ետք աւելի կը խօսինք: Նախ կ'ուզեմ բաժնեկցիլ օրինակ մը հնազանդութեան աղաւաղումի:

ԹՈՒԻԹԸՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԻՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հաւանաբար լսած էք ելեկտրոնային հաղորդամիջոցներէն *Թուիթթըր*ի մասին կամ մասնակից էք անոր: Անիկա լաւ է տեղեկութիւններու, այսպէս ըսած, պատահներ առնելու համար եւ լաւագոյն պարագայի՝ պատուհաններ կը բանայ կեանքի վերաբերեալ նիւթերու ինչպէս նաեւ զանազան խորհուրդներու աշխարհէն ներս:

Օր մը հոն հրապարակեցի (*փոսթ* ըրի) գաղափար մը, որուն մասին մանրամասն խօսած էի *Կռուիք Աղջկայ մը պէս* գիրքիս մէջ: Ղեկավարութեան մասին մէջբերում մըն էր. «Սեռը միայն ղեկավար ըլլալու ատակ չի դարձներ տղամարդ մը, ճիշդ ինչպէս սեռը միայն պէտք չէ անատակ դարձնէ կին

մը: Արժանիքն է, որ ատակ կը դարձնէ թէ տղամարդը եւ թէ կինը»: Կը խնդրեմ, որ նկատի առնէք, որ ես այդ խօսքը միայն չէի սահմանափակած եկեղեցւոյ ղեկավարութեան կամ միայն ամուսնութեան: Ես պարզապէս նշեցի, թէ արժանիքը անհրաժեշտ յատկանիշ մըն է ղեկավարներուն համար, ըլլան անոնք տղամարդ կամ կին:

Ես զանիկա հրապարակեցի *Թուիթթրի* վրայ, ուրկէ նաեւ յայտնուեցաւ իմ Դիմատետրի (*Ֆէյսպուքի*) էջիս վրայ: Ապա սովորական ձեւով շարունակեցի օրս: Բնաւ չմտածեցի, թէ ըսածս խնդրայարոյց բան մըն էր: Ըստ ինծի, անիկա բացայայտ տուեալ մըն էր: Բնաւ գաղափար չունէի, թէ ինչ տեսակի աղմուկ պիտի բարձրացնէր իմ այդ խօսքս:

Երբ անելի քան հարիւր պատասխաններ ստացայ, հասկցայ, թէ զգայուն կէտի մը դպած էի: Մինչ ես զբաղած էի իմ առօրեայ գործունէութիւններովս, բանավէճ մը ծագած էր Դիմատետրի (*Ֆէյսպուքի*) վրայ. քանի մը Քրիստոնեայ կիներ բորբոքած էին:

«Ինչպէս կը համարձակիս ըսել, թէ կին մը կրնայ իր ամուսինին առաջնորդը ըլլալ եթէ անելի արժանիքներ ունենայ...», գրած էր կին մը:

Լաւ... Արդեօք այդ էր իմ ըսածս:

Ուրիշներ ամբաստանեցին զիս, թէ անտեսած էի աստուածաշնչական այն համարը, որ կ'ըսէ, թէ միայն տղամարդը կրնայ եկեղեցւոյ մէջ երէց ըլլալ: Արդեօք ես եկեղեցւոյ երիցութեան մասին բան մը ըսած էի: Ապա կար ընդհանրապէս ղեկավարութեան մասին քննարկում մը: Կարգ մը կիներ փորձած էին բացատրել Դիմատետրի (*Ֆէյսպուքի*) հանդիսատեսին, թէ կին մը *երբեք* պէտք չէ ղեկավարի կամ առաջնորդի դեր ունենայ:

Անկեղծ երիտասարդուիի մը՝ յստակութեան ակնկալութեամբ, հարցուցած էր. «Արդեօք կ'ըսէք, թէ ասագ հովիւի մը կինը ղեկավար կամ առաջնորդ չէ»: Պատասխանը բարձրաձայն՝ «Ո՛հ, ան ղեկավար մը չէ: Ան ունի իր ամուսինին նեցուկ ըլլալու պատիւը»:

Ես շուարեցայ: Մինչ կարծիքները օդին մէջ կը թռչէին, խօսակցութիւնը վերածուեցաւ հնազանդութեան մասին

քննարկումի մը: Ոմանք կը պնդէին, թէ ես ղեկավար մըն էի, ուրիշներ կ'ըսէին, թէ չէի, պարզապէս որովհետեւ կին մըն էի: Յետոյ ոմանք արտօնութիւն տուին, որ ըլլամ, որովհետեւ հնազանդ էին ամուսինիս եւ հետեւաբար ղեկավար էի՝ անոր ենթակայութեան տակ:

Եկէք կանգ առնենք եւ միասնաբար մտածենք: Ինչո՞ւ ամէն անգամ, որ սեռերու քննարկում մը կ'ըլլայ, անիկա կը յանգի կիներու տղամարդոց հնազանդելու հարցին: Եթէ ես ղեկավար մը կամ առաջնորդ մըն եմ, եմ որովհետեւ Աստուած զիս ըրաւ: Պարզ ձեւով ըսելով, ղեկավարները անոնք են, որոնք ունին մարդիկ, որ իրենց կը հետեւին: Մեզմէ ոմանք ղեկավարներ են՝ մեր փափաքով կամ ոչ: Ուստի թող Աստուած օգնէ մեզի, որ լաւ օրինակ ըլլանք մարդոց: Այդ շփոթը փարատելու համար, կարդանք Պօղոսի ղեկավարութեան պատուէրը Տիմոթէոսին:

Առաջնորդ մը պէտք է մարդոց կողմէ սիրուած մէկը ըլլայ, իր կնոջ նուիրուած, հանդարտ եւ զուսպ, հասանելի եւ հիւրասէր: Պէտք է գիտնայ իր խօսածը, ոչ գինի շատ սիրող, ոչ ինքզինք պարտադրող, այլ՝ մեղմ, ոչ շուտով նեղացող, ոչ դրամասէր: Պէտք է անոր անձնական կեանքը կարգին ըլլայ, ուշադիր ըլլայ իր զաւակներուն եւ անոնց կողմէ յարգուած ըլլայ: Որովհետեւ եթէ մէկը չկարենայ իր անձնական հարցերը կառավարել, ինչպէս կրնայ հոգ տանիլ Աստուծոյ եկեղեցիին: Ան պէտք չէ նորադարձ հաւատացեալ մը ըլլայ, որպէսզի առաջնորդի դիրքը չհպարտացնէ զինք եւ Չարախօսը խաբէ զինք՝ սխալի մէջ տանելով: Դուրսինները պէտք է լաւ կարծիք ունենան իր մասին, այլապէս Չարախօսը ձեւ մը պիտի գտնէ՝ զինք իր ծուղակին մէջ ձգելու համար:

Նոյնն է պարագան անոնց, որոնք կ'ուզեն ծառայողներ ըլլալ եկեղեցիին մէջ. լուրջ, ոչ խաբեբայ, ոչ շատ ազատ ըլլան ոգելից ըմպելիներու հետ, ծառայութիւն յանձն առած չըլլան իրենց համար անձնական շահ ապահովելու նպատակով: Անոնք պէտք է ակնածանք ունենան հաւատքի խորհուրդին

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

Նկատմամբ եւ չօգտագործեն իրենց դիրքը ամէն բան իրենց կառավարումին տակ առնելու համար: Նախ թող փաստեն իրենք զիրենք: Եթէ ցոյց տան, որ կրնան ընել, դիր գանոնք այդ պաշտօնին: (Ա.Տիմոթէոսի 3.2-10, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Վերի համարին մէջ, Պօղոս կը թուէ տղամարդ դեկավարի մը յատկանիշները: Ապա կը շարունակէ ըսելով.

Բացառութիւններ պէտք չէ ըլլան կիներուն համար. *նոյն յատկանիշները՝* լուրջ, վստահելի, ոչ վիրատորող լեզու ունեցող, ոչ գինի շատ սիրող: Եկեղեցոյ մէջ ծառայողները պէտք է նուիրուած ըլլան իրենց ամուսիններուն, ուշադիր՝ իրենց զաւակներուն եւ ժրաջան՝ իրենց անձնական կեանքի մանրամասնութիւններուն հոգ տանելու մէջ: Անոնք, որոնք այս ծառայութեան գործը կ'ընեն մեծ յարգանքի պիտի արժանանան եւ իրական արժէք մը ըլլան այս Յիսուսի հաւատքին համար: (Ա.Տիմոթէոսի 3.11-13, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Պօղոս ինչո՞ւ շարք մը յատկանիշներ պիտի թուէր կիներուն համար եթէ անոնց սեռը միայն անատակ կը դարձնէր զիրենք: Երբ Ճոնը եւ ես մեր գրասենեակին համար պաշտօնեայ մը գործի կ'առնենք, մենք շարք մը յատկանիշներ կը թուենք: Եթէ դիմողները անատակ են, գործի չենք առնէր զանոնք: Կարելոր չէ եթէ անոնք տղայ են կամ աղջիկ: Պօղոս չըսաւ՝ «Եթէ առաջնորդ մը տղամարդ չէ, գործ մի՛ վստահիր իրեն»: Ան ըսաւ՝ «Ըլլայ տղայ կամ աղջիկ, եթէ յատկանիշները չի լրացներ, մի՛ նշանակեր զինք»: Պօղոսի կեդրոնացումը յատկանիշներու ցանկի մը վրայ էր: Պօղոս ըսաւ, որ կիներուն պարագային բացառութիւններ պիտի չըլլան. անոնք ալ նոյն չափանիշները պէտք է ունենան: Կրնաս հարցնել, թէ ինչո՞ւ ուրեմն կ'ըսէ, թէ

երէցը պէտք է մէկ կնոջ ամուսին ըլլայ: Կիները մէկէ աւելի տղամարդոց հետ չէին ամուսնանար, ուստի այդ ցուցմունքը միայն տղամարդոց ուղղուած էր:

Առաջին Տիմոթէոսի 3.11-էն 13-ին մէջ Պօղոս Տիմոթէոսին ցուցմունքներ կու տայ ղեկավարութեան դիրքի մէջ եղող կիներուն համար, եւ ապա կը շարունակէ թուել եկեղեցւոյ մէջ կին ծառայողներուն կամ սարկաւագներուն յատկանիշները: Ինչպէս գիտեմ ատկկա: Եկէք կարդանք առաջին եւ երկրորդ համարները եւ տեսնենք, թէ ինչ ըսուած է նախքան տղամարդոց համար մանրամասն նկարագրութիւն տրուիլը:

Եթէ *ոեւէ մէկը* կ'ուզէ ղեկավարութիւն ընել եկեղեցիին մէջ, շատ լաւ: Բայց կան նախապայմաններ: (Ա.Տիմոթէոսի 3.1-2, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Նկատի առ «ոեւէ մէկը» եզրը: *Ինկլիշ Սթանպորդրոյ Կրթժընի*ն մէջ ալ նոյնպէս կ'ըսէ՝ «ոեւէ մէկը», իսկ *Նիու Լիվինկ Թրանսլէյշընի*ն մէջ կ'ըսէ՝ «մէկը»:

Ինչո՞ւ այնպէս կը կարծուի, թէ կիները կրնան ղեկավար ըլլալ ամէն տեղի մէջ բացի եկեղեցիին: Եթէ Աստուած հարց չունէր լիազօրելու կիները Անկումէն առաջ եւ վերջ, ինչո՞ւ վերապահ կ'ըլլանք զանոնք լիազօրելու փրկութենէն ետք:

Տեղ մը եկաւ, որ *Ֆէյսպուքի* բանավէճը կիներուն միջեւ այնքան բուռն դարձաւ, որ տղամարդ մը միջամտեց՝ հարցնելով. «Ինչո՞ւ դուք՝ կիներդ իրարու հետ կը վիճաբանիք: Մենք պէտք ունինք ձեր ներդրումին, իսկ դուք մէկդ միւսին արգելք կ'ըլլաք»: Ճիշդ էր անոր ըսածը: Մենք յաճախ արգելք կ'ըլլանք մէկս միւսին կամ կը պզտիկցնենք մէկս միւսը: Փոխանակ նեցուկ ըլլալու իրարու եւ քաջալերելու զիրար Քրիստոսի դատին համար, շարունակ ճնշում կը բանեցնենք ուրիշներու վրայ, ինչ որ մեզ անազդու կը դարձնէ՝ չարտօնելով, որ ըլլանք այն ինչ որ պէտք է ըլլանք իբրեւ կիներ եւ իբրեւ Քրիստոնէաներ:

Այդ ընկերային հաղորդամիջոցի դաշտին մէջ տեղի ունեցած անակնկալ դէպքը ինձի յիշեցուց, որ սեռերու մասին

Նիւթերը պէտք է քննարկուին ոչ միայն ընտանիքին մէջ, այլեւ եկեղեցիին: Այն աշխարհը, որուն մէջ կ'ապրինք պէտք ունի տեսնելու Աստուծոյ իրական սիրտը եւ անոր նախնական մտադրութիւնը՝ Աստուծոյ որդիներուն եւ դուստրերուն կեանքերուն եւ ղեկավարութեան միջոցաւ:

ԿԻՆԵՐՈՒ ՀԱՆԴԵՊ ՍԵՌԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Կ'ուզեմ այնպէս մտածել, որ այլեւս անհրաժեշտ չէ կիներու հանդէպ սեռային խտրականութեան նիւթը խօսիլ Ամերիկեան Եկեղեցիին մէջ: Այո, դիտումնաւոր կերպով կ'առանձնացնեմ իմ երկիրս: Մինչ կը ճամբորդեմ եւ անլի առիթ կ'ունենամ ընդարձակելու աշխարհահայեացքս, կը նկատեմ, որ ժամանակի ընթացքին սերունդէ սերունդ եկեղեցական ծառայութիւններու մէջ կիներու մասնակցութեան պակասը գոյութիւն չունի ուրիշ երկիրներու մէջ: Կարգ մը երկիրներու մէջ եկեղեցի գոյութիւն պիտի չունենար առանց կիներու ներդրումին:

Ամէն ինչ որ Աստուած ստեղծած է՝ բարի է, եւ պէտք է ընդունուի շնորհակալութեամբ: Ոչ մէկ բան պէտք է ծաղրուի եւ թափուի (մերժուի): Աստուծոյ Խօսքը եւ մեր աղօթքները ստեղծագործութեան մէջ ամէն բան կը սրբացնեն: (Ա.Տիմոթէոսի 4.4-5, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի Տը Մատճ տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Եթէ ամէն բան, որ Աստուած ստեղծած է՝ բարի է եւ պէտք է ընդունուի, ողջունուի երախտագիտութեամբ, իրքան անլի մարդիկ պէտք է ընդունուին այդ ձեով: Տղամարդիկը եւ կիները բարի են:

Եթէ բան մը Աստուծոյ կողմէ ստեղծուած է, ապա մեզմէ կը պահանջուի, որ չծաղրենք զանիկա կամ չթափենք (չմերժենք): Ծաղրել կը նշանակէ՝ հեզնել, արհամարհել, անարգել կամ վրան խնդալ: Այդ բոլորը կ'արժեզրկեն ապրանք մը, անձ մը կամ անոր դերն ու ներդրումը:

Աստուածաշունչի անգլերէն տարբերակին մէջ թափել կամ

մերժել բառը *թրոու աութ* (throw out) եզրն է: *Թրոու* բառը (նետել), ինքնայայտ է, բայց եկէք նայինք անոր անելի նուրբ իմաստներուն: Թաւալել, արձակել եւ աքացելուն կողքին, *նետել* կրնայ նշանակել նաեւ՝ շփոթի մատնել, շուարցնել, բարդացնել կամ կնճռել հարց մը: Աւելցնել *աութ* բառը (դուրս), որ կրնայ նշանակել՝ բացակայ դարձնել, եւ ահա կ'ունենաս *մերժումի* պատկեր մը: Կը վախնամ, որ ատիկա շատ յաճախ կը պատահի կիներուն եկեղեցիին մէջ: Անոնք մէկ կողմ կը նետուին, անոնց մասնակցութիւնը ողջունելի չ'ըլլար, ուստի անոնց ձայնը, արժէքը եւ ներդրումները բացակայ են: Եւ *երկու* սեռերն ալ կ'արտօնեն, որ ատիկա պատահի՝ հնազանդութեան անուան տակ:

Հետեւաբար թէ՛ տղամարդիկը եւ թէ՛ կիները արժէքի մեծ կորուստ կ'ապրին: Ըստ երեւոյթին, եկեղեցիին մէջ տղամարդիկը անելի յաճախ կ'ընդունուին բարձր ղեկավարութեան դիրքերու մէջ քան կիները, բայց երբեմն անոնք կ'անդամալուծուին՝ կիներու խորաթափանցութեան բացակայութեան պատճառով: Բայց արդեօք մենք երախտապարտ ենք տղամարդոց համար: Զանոնք կը տեսնենք ինչպէս Աստուած կը տեսնէ... բարի:

Կամ արդե՞ծք կը ծաղրենք անոնց վարմունքը: Չեմ խօսիր միասնաբար խնդալու մասին: Անկարելի է չխնդալ մարդոց ծիծաղաշարժ բաներուն վրայ: Միայն մեր գոյութիւնը իսկ ցոյց կու տայ Աստուծոյ ընդարձակ զուարթամտութիւնը: Հոս ես կը զգուշացնեմ սեռերէն որեւէ մէկը ծաղրելու կամ հեզնելու եւ ենթազնահատելու դէմ: Վստահ եմ, որ ատիկա կը պատահի քու գիտցածդ անելի անգամներ: Մեր զուարճութեան ճարտարարուեստը [*ֆիլմեր*, հեռատեսիլի եւ ձայնասփիւռի յայտագիրներ, գիրքեր եւ այլ հրատարակութիւններ-Թարգմանիչ] շարունակ կ'անպատուէ տղամարդիկը եւ սեռային ցանկութեան առարկայ կը դարձնէ կիները:

Մենք արտօնած ենք, որ կիներու հանդէպ սեռային խտրականութեան վերաբերումները մեզ հասցնեն տեղ մը, ուր իրենք զիրենք արժեզրկուած զգացող կիները դառնացած եւ զայրացած են տղամարդոցմէ: Ուրեմն ՚հոր կ'երթանք ասկէ ետք: Դժբախտաբար իբրեւ պատասխան կարգ մը կիներ զացած են դէպի սոսկալի ծայրայեղութիւն մը:

ԿԻՆ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ

Մինչ կը գրէի այս գիրքը, նկատեցի, որ «Ամազոն»ի վրայ երկու ուրիշ վերնագիրներ կային, որոնք իմ նախկին գիրքերէս մէկուն քովը կը յայտնուէին: Երկուքին ալ հեղինակները ջատագովներ էին «կին աստուածութիւն» աստուածաբանութեան. համոզում մը, որ կը հաւատայ կին աստուածներու կամ կնոջ մը ինքն իր վրայ աշխատելով, իր ամբողջ կարողականութիւնը իրագործելով աստուածուհի ըլլալու կարելիութեան: Լսեցի, որ Աստուած կը փսփսար ինծի. *Գնէ քու գիրքիդ աջին եւ ձախին եղող գիրքերը, եւ գիտցիր, թէ ինչո՞ւ մենք կորսնցուցինք անոնց ծայները:*

Մինչ էջերը կը դարձնէի եւ կը կարդայի հատուածներ ու հարցուած հարցումները, կը լսէի վիշտ եւ սրտաբեկութիւն: Այդ հեղինակները հզօր եւ ազդեցիկ կիներ էին, որոնք խորունկ կերպով վիրաւորուած էին եւ յուսախաբ եղած եկեղեցիէն: Կ'ուզէի լալ անոր համար, որ կորսնցուցած ենք անոնց փայլունութիւնը:

Ինչո՞ւ անոնք այնպէս զգացին, որ չունէին ուրիշ ընտրութիւն բացի Աստուծոյ տունէն դուրս աստուածուհիներու պաշտամունք հաստատելը:

Արդեօք անոնք ունէին հարցումներ, որոնք այնքան հատու եւ սուր էին, որ մարտահրաւէր ուղղեցին գոյութիւն ունեցող կարգավիճակին: Արդեօք անոնք այնքան խելացի եւ փայլուն էին, որ վախցուցին եկեղեցւոյ ղեկավարները: Արդեօք անոնց ծայնը խեղդուեցաւ եկեղեցիին մէջ՝ հնազանդութեան չափազանցուած սահմանումին կամ փրկութեան նուազեցուած ներկայացումին պատճառով:

Կասկած չունիմ, որ այդ կիները իրենց հարցումներով վախցուցին թէ տղամարդիկը եւ թէ կիները:

Թերեւս դուն բնաւ չես ապրած անոնց փնտռութիւնը եւ յուսախաբութիւնը, բայց ես վստահաբար ապրած եմ: Ես գիտեմ, որ առանձինս չեմ: Ես կը ստանամ նամակներ, ե-նամակներ եւ հարցումներ, որոնք կը կրկնեն «Անգամ մը ես ըսէ ինծի, թէ ինչո՞ւ արժէք ունիմ իբրեւ Բարձրեալին դուստրը» նիւթը:

Հետեւեալը խօսուն հատուած մըն է Սու Մոնք Քիտի

Այլախոհ Դուստրին Պարը գիրքէն: Իր սեփական բառերով, ան պատուհան մը կը բանայ աստարանական եկեղեցւոյ դուստրի մը սովորաբար ապրուած փորձառութեան մը վրայ:

«Կինը առաջին մեղք գործողն էր եւ երկրորդ ստեղծուածը,» ըսաւ քարոզիչը: Ապա շարունակեց խօսիլ Եայի մասին, թէ՛ ինչպէս ան ստեղծուած էր տղամարդուն օգուտին համար, թէ՛ ան անարժան էր, որովհետեւ անհնազանդ գտնուեցաւ Աստուծոյ եւ արգիլուած պտուղը Ադամին տուաւ...

Յուսախաբ եղայ: Եթէ կարենայի զգացումս բառերով արտայայտել, պիտի ըսէի. «Աստուած, ինչպէս *կրցար* այդպիսի բան մը ընել»:

Հեղինակը կը շարունակէ բաժնեկցիլ, թէ ինչպէս դժուարութիւն ունէր հաշտեցնելու Աստուծոյ մասին իր ըմբռնումը եկեղեցւոյ տեսակէտին հետ: Համաձայն եմ: Աստուած այդպիսի ընդարձակ, անյոյս ընդհանրացում մը պիտի չընէր ոեւէ մէկուս մասին. տղամարդ թէ կին:

Եթէ ըսենք, որ կիները ղեկավարներ ըլլալու առիթ պէտք չէ ունենան, որովհետեւ Եւան եւ անոր դուստրերը դիրութեամբ կը խաբուին, ապա պէտք է մեր դռները զոցենք Ադամի եւ անոր որդիներուն երեսին: Ադամ *գիտնալով* մեղանչեց եւ դաւաճանեց Աստուծոյ, որ իրեն վստահած էր երկիրը:

Ադամի եւ Եայի օրինազանցութիւններուն միջեւ եղող հակասութիւնը կրնայ նմանցուիլ զայրացած կամ գրգռուած ըլլալու պատճառով գործուած սպանութեան մը եւ կանխաւ ծրագրուած սպանութեան մը միջեւ գոյութիւն ունեցող տարբերութեան: Եւ անակնկալի եկաւ. Ադամ շատ լաւ գիտէր հետեւանքները:

Եթէ մեղանչես առանց գիտնալու, որ ինչ կ'ընես, Աստուած ատիկա նկատի կ'առնէ: Բայց եթէ մեղանչես լաւ գիտնալով, որ ինչ կ'ընես, ատիկա բոլորովին ուրիշ պատմութիւն է: (Հռոմայեցիներուն 2.12, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Ինչ տեսակի կրօնական աշխարհ մը ձեակերպած ենք մենք մեզի համար, որ խելացի, ճշմարտութիւն փնտռող կիները չեն կրնար պատասխաններ գտնել մեր դռներէն ներս: Եթէ այդ իրականութեան դիմաց գործի չլծուինք եւ կարգ մը պատասխաններ չգտնենք, ինչ պիտի պատահի մեր դուստրերուն եթէ համարձակին այդ ձեւի հարցումներ հարցնել:

Եւ Աստուած օգնէ տղամարդոց եթէ այս ընթացքին մէջ տակաւին շարունակենք: Տղամարդիկը չեն աճիր ըլլալու առողջ եւ զօրաւոր կիները լռեցնելու միջոցաւ: Տղամարդիկը կ'աճին ըլլալու զօրաւոր մեր ձայներուն աւելնալովը, որովհետեւ դուստրի մը հարցումներուն մարտահրաւէրը կը ծառայէ տղամարդիկը աւելի բարձրացնելուն, ինչ որ կ'ազատագրէ զանոնք: Կիներուն տեսակէտը կը կոփէ եւ կը գտէ տղամարդիկը երբ անոնք կը ստեղծեն միջավայր մը, ուր կիները կրնան ծաղկիլ եւ բարգաւաճիլ:

Մինչ ես կարդացի կին աստուածութեան փիլիսոփայութեան հեղինակներուն գրութիւնները, չկար քննարկում մը, որ անակնկալի բերաւ զիս: Սակայն անոնց ստացած պարապ պատասխանները սիրտս կոտրեցին:

Այնպէս կը զգամ, որ կարծես կիներու արցունքի ծով մը կը բաժնէ մեզ: Կը տեսնեմ զիրենք հեռաւոր ցամաքին վրայ եւ կը տխրիմ: Այս կիները իրենք զիրենք այլախոհներ եւ աստուածուիներ կը կոչեն, բայց ես կը նախընտրեմ զանոնք կոչել բարեկամներ եւ դուստրեր Ամենաբարձրի: Անոնց ըրած ամբաստանութիւնները բարձր կը հնչեն ականջներուս մէջ, որովհետեւ աւելի ճշմարտութիւն գտայ անոնց գանգատներուն մէջ քան անոնց տրուած պատասխաններուն:

Այդ կծու, խայթող էջերուն մէջ ես կարդացի շատ մը տխուր պատմութիւններ: Անոնցմէ մէկը մանկաբարձ-կնոջաբան բժիշկի մը պատմութիւնն էր, որ շարունակ կը տեսնէր ինչպէս ամերիկացի մայրեր իրենց ամուսիններուն ներողամտութիւնը կը խնդրէին երբ իրենց երկունքին իբրեւ արդիւնք ծնած կ'ըլլար դուստր մը: Իբրեւ մայրը չորս որդիներու, այդ գաղափարը անհասկնալի է: Ես իմ կեանքիս մէջ գանձ մը կը համարեմ իմ ամուսինս, որ կը սիրէ կիները: Հակառակ անոր որ մենք ցնծութեամբ տօնեցինք մեր որդիներէն

հրաքանչիւրին ծնունդը, ան միշտ կը յուսար աղջիկ ունենալ: Երբ այդ պատմութիւնները պատմեցի իրեն, ան ցնցուեցաւ: Եթէ մենք ունեցած ըլլայինք դուստր մը, մենք զայն պիտի հոչակէին սիրելի եւ բաղձալի:

Կրօնի դռներէն ներս պատասխաններ, արժէք եւ ներդրում ընելու առիթ չգտնելով, այդ դուստրերը պաշտամունքի մարզ մը հաստատեցին իրենց հայրապետական բռնատիրութիւն համարած կառոյցէն դուրս: Անտառներու մէջ եւ ծովեզերքներու վրայ հաստատեցին իրենք իրենց համար վայր մը, զոր համարեցին ւելի ազնիւ եւ մեղմ թագաւորութիւնը աստուած թագուհիներու:

Շունչ առ: Ես չեմ ջատագովեր, որ իրենց ընթացքին հետեւինք: Ես ո՛չ կ'ընտրեմ անոնց թագուհին, ոչ ալ կրօնի բարկացկոտ թագաւորը: Ես կ'ընտրեմ մեր Ստեղծիչը, Ամենաբարձր Աստուածը:

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԻ ՓՆՏՌՏՈՒՔ

Մտիկ ըրէք այս յուսահատ հրաւերին կին աստուածուհիներու ղեկավար Մարիան Ուիլիամսընի կողմէ՝ իր *Կնոջ մը Արժէքը* վերնագիրով գիրքէն:

Երբ կ'ըսեմ՝ «Գնա՛, Մարիամի հետ խօսէ՛», *ըսել կ'ուզեմ*, «Գնա՛, Մարիամի հետ խօսէ՛»: Այսինքն՝ գնա՛ եկեղեցի, մոմ մը վառէ, նստարանի մը վրայ նստէ եւ լրջօրէն մտածէ նիւթին մասին: Ըսէ՛ անոր. «Մարիամ, ես կ'ուզեմ գիտնալ, թէ ո՞վ եմ ես իբրեւ կին, ընկերուհի, մայր կամ դուստր: Կ'ուզեմ ըլլալ այն կինը, որ կարող եմ ըլլալու: Կ'ուզեմ ունենալ քու մաքրութիւնդ եւ յստակութիւնդ եւ լուսատրումի մակարդակդ: Թող իմ կնութեանս էութիւնը դառնայ ւելի փայլուն քան արտաքին անձս»:

Սխալ չէ աղօթել եւ խնդրել, որ ըլլաս այն կինը, որ կարող ես ըլլալու: Հարցը այն է, թէ որո՞ւ կ'ըսէ, որ ուղղենք մեր աղօթքները: Ուիլիամսըն ապա թոյլատրութիւններ կ'ընէ անոնց, որոնք հանգիստ չեն կաթոլիկութեան հետ:

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

Եթէ Մարիամի հետ խօսիլը հանգիստ չէ ձեզի համար, հարց չէ: Գտի՛ր յոյն աստուածուհի մը կամ հնդկական դիցաբանութենէն որեւէ կին մարմնառութիւն մը (*աւաթար*), որուն հետ կապ մը կը զգաս, կամ կին աստուածութեան որեւէ նշան մը եւ յարաբերութիւն մը սկսէ՛ անոր հետ:

Յարաբերութիւն մը անոր հետ: Այդ առաջարկէն անմիջապէս ետք, ան կը բաժնեկցի իր բարկութեան պատճառը:

Աշխարհը իր ներկայի վիճակին մէջ շատ քիչ կարիք ունի քու կնութեանդ: Դուն կը համարուիս անելի տկար սեռը եւ հետդ կը վարուին իբրեւ սեռային առարկայ մը: Դուն ամբողջութեամբ զանցառելի ես բացի զաւակ բերելէդ: Քու երիտասարդութիւնդ քու արժէքիդ չափն է, եւ քու տարիք առնելը չափն է քու անարժէքութեանդ: Մի՛ նայիր աշխարհին քու ապրուստիդ եւ իբրեւ կին քու ինքնութեանդ համար, որովհետեւ հոն պիտի չգտնես զանոնք: Աշխարհը կ'ատէ քեզ: Աստուած կը սիրէ քեզ:

Երախտապարտ եմ, որ ան կ'աւարտէ այն ճշմարտութեամբ, թէ՛ Աստուած կը սիրէ քեզ: Բայց բացայայտ է անոր ցաւը: Ան անյուսօրէն կը ցանկայ իգական աստուածութեան մը հետ իրական կապակցութիւն մը: Հոս ան նոյնիսկ կ'առաջարկէ յոյն չաստուածուհի մը՝ յուսալով, որ աստուածային, մնայուն իգական գեղեցկութեան եւ զօրութեան պատկերի մը դիմելը պիտի վերականգնէ այն ինչ որ այնքան անյուսօրէն կորսուած է մեր իրականութեան մէջ: Կ'աղօթեմ, որ ան գտնէ իր փնտռած ճշմարտութիւնը:

Իբրեւ նախկին կաթողիկէ մը, ես կը հասկնամ անոր առաջարկը: Ես անկեղծօրէն Մարիամի պաշտամունք չեմ ջատագովեր, բայց երբ Բողոքականները Մարիամը հանեցին աստուածութեան կարգավիճակէն (որ ան իրապէս չէ), անոնք հանեցին զայն կիներու համար օրինակ ըլլալու կարգավիճակէն եւս:

Մարիամ աստուած մը չէ, բայց ան բարեպաշտ էր: Ան արձան մը չէ, որուն առջեւ ուխտ ընելու միտումով մոմ պէտք է վառենք, բայց ան կին մըն է, որուն օրինակը կը լուսաւորէ մեր ճամբան: Ան նախանշանը տուաւ գալիքին... դուստրեր, որոնք պիտի գործակցէին Աստուծոյ հետ եւ յայտնաբերէին Յիսուսը:

Յիսուս ըսի: Հետաքրքրական կէտ մը: Ես *Կնոջ մը Արժէքը* գիրքին էջերուն մէջ փնտռեցի եւ գրեթէ ոչ մէկ տեղ նշուած տեսայ Յիսուսը՝ Մարիամի որդին: Մարիամ ինչպէս կրնայ վաւերական ըլլալ առանց Յիսուսի: Ուստի ինչ է իրական հրաւերը հոս:

Անիկա բառացիօրէն Մարիամի, Աթենայի կամ Աֆրոսիթի մասին չէ: Անիկա անանուն հոգիի մը մասին է, զոր մենք շինած ենք:

Կին աստուածութեան հեղինակները կը խօսին Աստուծոյ եւ աստուածուհիներու մասին, կրօնի եւ տղամարդոց, բայց հազուադէպօրէն՝ գեղեցիկ Փրկիչին՝ Աստուծոյ Որդիին, Յիսուս Քրիստոսի մասին: Անոնք կը խօսին թագուհիներու, կախարդուհիներու (հմայիչներու) եւ մայրական կրեաներու մասին, բայց ոչ Որդիին մասին, որ մեռելներէն յարութիւն առաւ: Ինչո՞ւ մայրերը պիտի խուսափէին որդիի մը յայտնութենէն: Անոնց բառերը կը դառնային Յիսուսի շուրջ, նոյնիսկ փոխ կ'առնէին անոր բառերը, բայց չէին նշեր անոր անունը:

Բայց ատիկա զարմանալի չէ: Եթէ ես ինքզինքս կրնամ բարձրացնել աստուածութեան, ինչո՞ւ պէտք պիտի ունենամ փրկիչի մը:

Աստուածուհիի մը դիրքը միայն զօրութեան կամ իշխանութեան դիրք մը չէ. անիկա պաշտամունք կը պահանջէ: Բայց մենք պէտք չէ պաշտենք մարդը կամ ստեղծագործութիւնը: Պէտք է պաշտենք Աստուած միայն: Կարիք չկայ ստեղծելու կին աստուածութիւն մը, որ կ'աւելցնէ կիներուն արժէքը, եթէ եկեղեցին քարոզէ ճշմարտութիւնը եւ նախնական մտադրութիւնը:

Երկինքի եւ երկրի Աստուածը՝ Ամենաբարձր Տէրը, բացայայտօրէն հռչակեց կիներուն արժէքը իր փրկագործական ծրագրին մէջ: Աստուած իր Որդիին ծնունդ տուաւ առանց տղամարդու մը սերմին: Յովսէփի

յանձնարարուեցաւ պաշտպանել Մարիամը եւ այն սուրբ զաւակը, որ ան կը կրէր իր մէջ: Աստուծոյ Հոգին կեանք յառաջացուց կոյս արգանդին մէջ երիտասարդ, քիչ մը վախցած եթրայեցի աղջկայ մը: Ան երգեր չէր յօրիներ եւ ինքզինք աստուածուի չէր կոչեր: Մարիամ պատրաստ էր (եւ նոյնիսկ կը կասկածէր) եթէ պիտի կարենար... Թող մենք ալ արծազանգենք անոր բառերը եւ թող անոնք ըլլան նաեւ մե՛ր բառերը. *Քու խոստումներուդ համաձայն թող ըլլայ մեզի, երկնատր Հայր: Կը հաւատանք, որ այն ինչ որ ըսիր, որ պիտի ընես՝ պիտի ընես: Վերցնոր երկրի ճնշումները եւ յայտնաբերէ քու Որդիդ մեր կեանքերուն միջոցաւ:*

Աստուածային նպատակի մեր փնտռութի պատասխանները պիտի չգտնենք մեր անձերը տղամարդոցմէ աւելի վեր բարձրացնելով՝ մինչ կը փորձենք իրագործել մեր մէջի աստուածուիին: Տղամարդիկը ճշմարիտ զօրութիւն կամ ազատութիւն չեն գտած կիներուն տիրապետելով: Եւ կիները ազդու չեն ըլլար երբ կ'արտօնեն, որ իրենց զօրութիւնը յափշտակուի չափազանցուած վարդապետութիւններով: Երկու սեռերն ալ դաշնակիցներ են եւ պահապաններ, ոչ թշնամիներ եւ աստուածներ:

Պաշտուելու ցանկութիւնը փորձութիւն մըն է բոլորիս համար: Այդ փորձութեան մէջ էր, որ Արուսեակ ինկաւ: Իշխանութեան (կամ զօրութեան) փափաքը սխալ չէ. իւրաքանչիւրս (տղամարդ եւ կին) կը տնտեսենք հաւատքի, իշխանութեան (զօրութեան) եւ ազդեցութեան չափ մը:

Մարդիկ բնաւ չեն ստեղծուած բացարձակ իշխանութեան համար: Անիկա դեր մը չէր, որ հրեշտակները կը համարձակէին յանձն առնել, եւ Յիսուս՝ ինքնին Աստուծոյ Որդին, չհամարձակեցաւ Աստուծոյ հետ հաւասարութիւն հռչակել: Փիլիպպեցիներուն ուղղուած նամակին մէջ Պօղոս մեզի կը պատուիրէ, որ չհետեւինք այդ հեթանոսներու իշխանութիւն բանեցնելու ձեւին:

Դուք ձեր մասին մտածեցէք այնպէս ինչպէս
Քրիստոս Յիսուս կը մտածէր ինքն իր մասին: Ան
հաւասար կարգավիճակ ունէր Աստուծոյ հետ, բայց
ինքն իրեն հանդէպ այնպիսի յամարում չուներ, որ

Նոյն Առաքելութեան Տակ

ամէն գնով կառչած մնար իր այդ կարգավիճակի առաւելութիւններուն: Բնաւ: Երբ ժամանակը եկաւ, ան մէկ կողմ դրաւ աստուածութեան առաւելութիւնները եւ ստրուկի մը կարգավիճակը իր վրան առաւ եւ դարձաւ *մարդ*: Մարդ դառնալով, ան մնաց մարդ: Ատիկա անհաւատալիօրէն խոնարհեցնող գործընթաց մըն էր: Ան յատուկ առաւելութիւններ չպահանջեց: Փոխարէնը, ապրեցաւ անձնուրաց, հնազանդ կեանք մը եւ ապա մեռաւ անձնուրաց, հնազանդ մահով մը. եւ ամէնէն գէշ տեսակի մահով՝ խաչելութեամբ:

Այդ հնազանդութեան համար, Աստուած բարձրացուց զինք եւ պատուեց զինք, երբեւէ ոեւէ ուրիշ անձէ կամ որեւէ բանէ աւելի, որպէսզի բոլոր ստեղծուած արարածները՝ երկինքի մէջ եւ երկրի վրայ, նոյնիսկ անոնք, որոնք շատոնց մեռած են եւ թաղուած, խոնարհին այս Յիսուս Քրիստոսի առջեւ եւ պաշտեն զայն, եւ փառաբանութեամբ աղաղակեն, թէ ինքն է Տէրը բոլորին, եւ ատիկա փառաւոր պատիւ պիտի բերէ Աստուած Հօր: (Փիլիպպեցիներուն 2.5-11, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատեճ* տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Մեր աշխարհը կարիք ունի ծառաներու: Ես չեմ պատկերացներ, որ իմ Յիսուսս, որ ծնեցաւ, որպէսզի վերցնէ բոլորը, ըլլայ այնքան պահանջկոտ որքան մեզմէ ոմանք են: Դժբախտաբար կը կարծեմ, որ մենք սխալ հասկցած ենք մեր Թագաւորին: Ուրիշ ինչ պատճառով կրնայ ըլլալ, որ աշխարհի խաղաղութեան ղեկավարները այնքան արդարանալի ըլլան երբ ըսեն՝ «Եթէ Քրիստոնէաները չըլլային, ես Քրիստոնէայ կ'ըլլայի [կամ այլ խօսքով՝ Քրիստոնէաներուն պատճառով Քրիստոնէայ չեմ-Թարգմանիչ]»: Եւ՝ «Ես կը սիրեմ ձեր Քրիստոսը: Ես չեմ սիրեր ձեր Քրիստոնէաները: Անոնք շատ տարբեր են ձեր Քրիստոսէն», ինչպէս Մահաթմա Կանտին ըսած է:

Կը լսեն աղաղակը եւ այն մեծ կարիքը, որ դուն ուղքի

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻՇՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

Ելլես իբրեւ անվախ փնտռող մը ճշմարտութեան: Մեզի յանձնարարուած է, որ դիտումնաւոր կերպով սիրենք, որ մեր անբերրութենէն դուրս գանք եւ հասնինք կորսուածներուն եւ տառապողներուն:

Եթէ եկեղեցին քեզի տեղ չի տար, դուն Յիսուսի սէրը ճամբայ իջեցուր եւ աշխարհ տար: Պէտք եղածէն աւելի կոտորուած եւ տառապող մարդիկ կան մեր պատերէն դուրս, որոնք պիտի ողջունեն քու մասնակցութիւնդ: Ձեռք մեկնէ համայնքիդ, շրջանիդ անտուններուն, արհեստավարժներուն, դպրոցի համակարգին... Ստեղծէ կեանք մը, որ այնքան մեծ եւ փայլուն ըլլայ, որ անդիմադրելի ըլլայ:

Ժամանակն է, որ բարձրանանք հասակի մը, որմէ մարդիկ օրինակ կրնան առնել:

Ինչ պիտի ընենք հիմա: Պիտի շարունակենք խնդիրի վերածել այն բաները, որոնք Աստուած արդէն որոշած կամ հաստատած է: Պիտի կարենանք հաւասարակշռել մեր մտածողութիւնը՝ խուսափելու համար մէկ կողմէ սխալ կերպով հնազանդութեան եւ միւս կողմէ կին աստուածութեան ծայրայեղութիւններէն: Պիտի կարենանք պատուել տղամարդիկը: Եկէք հետեւինք արու եւ էգ առիծներու օրինակին եւ միասնաբար բարձրանանք տղամարդոց հետ՝ ոչ իբրեւ ստորադաս ենթականեր, ոչ ալ իբրեւ զայրացած աստուածուիներ:

ԶՕՐԱԻՈՐ ԿԻՆԵՐՈՒ ԱՐԺԷՔԸ

Երբ կը գրեմ, *Թուիթթր*ի կամ *Ֆէյսպուք*ի վրայ պատգամ մը կամ խօսք մը կը հրապարկեմ կամ կիներու առջեւ կը կենամ եւ կը խօսիմ՝ հաղորդակցութիւնս ըլլայ ուղղակի հանդիսատեսի հետ կամ հեռարձակումի ձեւով, ես շարունակ ամէն առիթ կը գործածեմ կիներուն արժէքը հռչակելու համար: Ես դիտումնաւոր կերպով կը յիշեցնեմ անոնց, որ կարիքը կայ իրենց ձայնին եւ ներդրումին եկեղեցիին մէջ եւ եկեղեցիէն դուրս՝ տեղական եւ համաշխարհային մակարդակներու վրայ: Իմ աղօթքս է, որ անոնք ոչ միայն հաւատան ատոր եւ ուրախանան, այլեւ ապրին ատիկա:

Խօսելէս ետք շարունակ հետեւեալ հարցումը կը լսեմ.

«Հաճիս ասիկա տղամարդոց կ'ըսես»: Անոնք իրենց առաջարկները կամ կարծիքները գրեթէ փսփսալով կ'ըսեն, կարծես թէ վտանգաւոր պիտի ըլլար եթէ մէկը լսէր եւ գիտնար, որ իրենք համարձակած էին ինծի առաջարկելու, որ եւ բացայայտօրէն այդ նիւթերը բաժնեկցիմ:

Առաջ կը մտածէի, որ բաւարար էր միայն կիները քաջալերելը: Մեծ արժէք ունի մտերմիկ, ապահով միջավայրներու մէջ կիներու հետ խօսիլը: Բայց մինչ կը շարունակեմ Աստուծոյ դուստրերուն ծառայելու իմ ճամբորդութիւնս, եւ յայտնաբերած եմ, որ այդ ձեւի քաջալերական խօսքեր միայն կիներուն խօսիլը բաւարար չէ, ճիշդ ինչպէս մետաղէ դրամը սահմանափակ արժէք կ'ունենայ եթէ միայն մէկ կողմին տպագրութիւնը յստակ է:

Վերջին քանի մը տարիներուն իմ աշխարհս ընդարձակուեցաւ, եւ իմ ձայնս հրաւիրուեցաւ եւ ողջունուեցաւ եկեղեցւոյ Կիրակի առտուայ աշխարհին մէջ: Հոն անշուշտ կան նաեւ տղամարդիկ: Մինչ եւ ձայնս լսելի կը դարձնեմ երկսեռ միջավայրներու մէջ, եւ անոնց կը յայտնեմ, թէ կիները հիանալի են:

Հազուադէպօրէն կը տեսնեմ, որ տղամարդիկը կը հակառակին ասոր: Ես դիտմամբ անոնց նաեւ կ'ըսեմ, թէ տղամարդիկն ալ հիանալի են: Վերջին քանի մը տարիներուն շատ արցունքներ տեսած եմ մարդոց աչքերէն հոսող: Դիտած եմ ինչպէս ամուսիններ եւ կիներ կը ողջագուրուին եւ վերջ կը դնեն իրենց ըմբշամարտի մրցումներուն: Կը սիրեմ այն ինչ որ կը պատահի երբ իրարմէ ներողութիւն կը խնդրեն՝ իրենց անմիտ իշխանութեան պայքարներուն համար:

Սիրելի առիծ քոյրս, տղամարդիկը չեն մեր հարցը: Այդ հարցը շատ ւաւելի խորունկ է: Սատանան է մեր թշնամին, որ խաբող մըն է, եւ երկու սեռերն ալ կը մերկացնէ իրենց արժանապատուութենէն: Հակառակ անոր որ իրենք չեն հարցը, տղամարդիկը կրնան եւ պէտք է մաս կազմեն պատասխանին: Հզօր բան մը կը պատահի երբ տղամարդիկը իրենց ուսը կու տան կիներուն՝ արժանապատուութեան եւ իշխանութեան վերականգնումի բեռը միասնաբար վերցնելու համար:

Երբեմն ձայնդ լսելի դարձնելու դիրք մը որդեգրելը

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

ճակատամարտին կէտը շահիլ է: Աշխարհիդ մէջ գտնուող տղամարդիկը պէտք է լսեն քու ձայնդ, եւ պէտք ունին լսելու ուրիշներու, որոնք կը քաջալերեն տղամարդիկն ու կիները, որ միասին ոտքի ելլեն: Եթէ փոփոխութիւն տեղի պիտի ունենայ, բոլորս ալ նոյն բանը պէտք է ըսենք: Եկէք արծագանգենք Աստուծոյ կեցուածքը:

Ատիկա ընելու համար, կ'ուզեմ, որ խորունկ ձեռով նայինք Առաջին Կորնթացիներուն 11-րդ գլուխին: Ես պիտի բաժնեմ զանիկա անջատ եւ որոշակի կտորներու եւ ապա խօսիմ ամբողջ գլուխի տեսակէտին մասին: [Վարը տեղ գտած Առաջին Կորնթացիներուն 11-րդ գլուխի բոլոր հատուածները առնուած են Աստուածաշունչի *Տը Մասէճ* անգլերէն տարբերակէն, ուստի զանոնք կը ներկայացնենք բառացիօրէն թարգմանուած- Թարգմանիչ:]

Ի միջի այլոց, պէտք եղածէն աւելի կարեւորութիւն մի՛ տաք հոս նշուած տղամարդոց եւ կիներու տարբերութիւններուն: (Համար 10)

Պօղոս ասկէ ետք բոլոր գրածներուն վերաբերեալ պատուիրեց, որ պէտք եղածէն աւելի կարեւորութեամբ չառնենք սեռերուն միջեւ տարբերութիւնները: Այո, կան տարբերութիւններ, բայց անոնք բնաւ մեզ իրարմէ բաժնելու համար չեն: Անոնք կան՝ մեզ իրարու միացնելու համար:

Ոչ տղամարդը ոչ ալ կինը կրնայ առանձինը՝ առանց օգնութեան, գործել կամ ինքզինք առաջնահերթ հռչակել: (Համար 11)

Այս հաստատումով ան կը հռչակէ երկու սեռերուն իրարմէ կախեալ ըլլալը. եթէ երկկողմանի կախեալութիւն ըլլայ, ապա առաջնահերթութիւն չի տրուիր տղամարդուն կամ կնոջ:

Նախ տղամարդը ստեղծուեցաւ՝ իբրեւ գեղեցիկ, փայլուն արտացոլացումը Աստուծոյ. ատիկա ճիշդ է: Բայց կնոջ մարմինին վրայ գտնուող գլուխը յստակօրէն աւելի կը փայլի գեղեցկութեամբ քան անոր «գլուխ»ին՝ ամուսինին գլուխը: (Համար 11)

Նոյն Առաքելութեան Տակ

Նախ տղամարդը ստեղծուեցաւ իբրեւ արտացոլացումը Աստուծոյ. այդ բոլորը ճիշդ են: Յետոյ կու գայ «բայց»ը: Կնոջ գեղեցկութիւնը աւելի կը փայլի քան իր ամուսինինը: Նկատի առ, որ հետեւեալը որոշակի ձեւով կը խօսի ամուսին եւ կնոջ մասին:

Առաջին կինը յառաջ եկաւ տղամարդէն, այո, բայց
ատկէ ի վեր ամէն տղամարդ կու գայ կնոջմէ մը:
(Համար 12)

Դարձեալ, ճիշդ է, որ առաջին կինը՝ Եւան, տղամարդէն՝ Ադամէն, եկաւ: Ապա Պօղոս կը գործածէ «բայց» բառը նորէն՝ հաւասարակշռելու համար կշիռքի նժարին միւս կողմը, որ կ'ըսէ, թէ՛ «ատկէ ի վեր» բոլոր տղամարդիկը կու գան կիներէն:

Եւ քանի որ բառացիօրէն ամէն բան արդէն կու
գայ Աստուծմէ, եկէք հրաժարինք «ո՛վ է առաջինը»
հարցումէն: (Համար 12)

Հիմա որ նժարները կատարելապէս հաւասարակշռուած են, Պօղոս սեռերու միջեւ բանավէճէն աւելի վեր կը բարձրանայ եւ աստուածային տեսակէտը կու տայ. ամէն բան կու գայ Աստուծմէ, ուստի հրաժարեցէք նախապատուութեան շուրջ բանավէճերէն: Ասիկա շատ բան պէտք է լուծէ: Միայն Աստուած առաջինն է: Միայն ան սուրբ է, արդար, սէր, ճշմարտութիւն, ճամբան, կեանքը, սկիզբը եւ վերջը:

Բնաւ մի՛ պատկերացներ, որ Աստուած կ'ազդուի մեր յարանուանութիւններուն օրէնսդրութեամբ: Ան չի տպաւորուիր մեր կանոններով եւ արտօնած ու չարտօնած բաներով: Աստուած գործի կը լծուի, եւ երբ կը տեսնէ մարդիկը, որոնք իրաւացիօրէն կապուած են իրարու եւ կը հնազանդին իրեն, հոն է, որ կը տնօրինէ իր օրհնութիւնը:

Ո՛րքան հիանալի է, որքան գեղեցիկ երբ
Եղբայրներ եւ քոյրեր կը համաձայնին իրարու հետ:
Այո, հո՞ղ է, որ ԱՍՏՈՒԱԾ կը տնօրինէ օրհնութիւնը,

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

Յափտենական կեանք կը կարգէ: (Սաղմոսներու 133.1,3, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Ամբողջ պատմութեան ընթացքին Եկեղեցին բաժնուած է այս նիւթերուն շուրջ, բայց ես, օրինակի համար, պատրաստ չեմ, որ ատիկա մնայ մեր ասանդը: Բայց այն ինչ որ ես կը մտածեմ եւ կը զգամ պզտիկ բան մըն է բաղդատաբար գալիքին համար Աստուծոյ որոշումին: Բաներ պիտի փոխուին:

«Վերջին Օրերուն,» կ'ըսէ Աստուած,
«Իմ Հոգիս պիտի թափեմ
Ամէն տեսակի մարդոց վրայ.
Ձեր որդիները պիտի մարգարէանան,
Նաեւ ձեր դուստրերը,
Ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն,
Ձեր տարեցները երազներ պիտի տեսնեն:
Երբ ժամանակը գայ,
Հոգիս պիտի թափեմ
Անոնց վրայ, որոնք կը ծառայեն ինծի՝ տղամարդիկ
եւ կիներ,
Երկուքն ալ, եւ անոնք պիտի մարգարէանան:
Սքանչելիքներ պիտի դնեմ երկինքի վրայ
եւ նշաններ երկրի վրայ,
Արին եւ կրակ եւ բարձրացող ծուխ»:
(Գործերը 2.17-19, բառացիօրէն թարգմանուած
Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Վերջին օրերուն Աստուած իր ըսելիքը պիտի ըսէ: Արինի, կրակի եւ բարձրացող ծուխի այդ պատկերը կը յիշեցնէ եբրայական զոհի հին խորանները: Հոն էր, որ մարդիկ կը հաւաքուէին՝ բերելու համար այն ինչ որ ընդունելի էր Ամենաբարձր Աստուծոյ համար: Անոնք զոհը կը ներկայացնէին եւ անիկա դէպի երկինք կը թարգմանուէր կրակով:

Վերի Նոր Կտակարանի հատուածին մէջ չեն նշուիր խոյեր, երինջներ եւ արջառ, որոնք պէտք է սպառին կամ

իբրեւ զոհ մատուցանուին խորանին վրայ: Փոխարէնը կը տեսնենք որդիներու եւ դուստրերու, տարեցներու եւ երիտասարդներու բարձրացած ձայները՝ բոլորը ըլլալով խորաթափանց մարգարէական ծառաները Ամենաբարձրին: Մեր կրակը չի վառիր պաշտամունքի խորանին վրայ: Մեր կրակը կը բնակի մեր մէջ՝ մինչ կը սպառինք եւ գործի կը մղուինք իր Հոգիին կողմէ:

Անցեալ տարիներուն ես կրնայ ըլլալ, որ վախնայի սեռերուն վերաբերող հարցերու մասին այսքան ուղղակիօրէն խօսելու: Բայց կեանքիս այս հանգրուանին, պատրաստ եմ սահմանները հրելու եթէ պէտք ըլլայ: Իմ ամուսինս չի վախնար իմ զօրութենէս. ան կ'ողջունէ զանիկա: Իմ որդիներս չեն գրաւուիր տկար, անձայն եւ ճնշուած կիներու: Բայց ճիշդ է, որ ես այդքան մեծ նեցուկ կը վայելեմ մինչ ուրիշներ՝ ոչ: Մեր աշխարհը պէտք ունի կիներու, որոնք իրենց ձայնը պիտի բարձրացնեն անոնց համար, որոնք ճնշուած են ամէն տեղ: Այսինքն՝ պէտք է մէկս միւսին քով հանգիստ ըլլանք այն ինքնութեան մէջ, որ ստեղծուած ենք ունենալու:

Ժամանակն է, որ մէկ կողմ դնենք սեռերու միջեւ հարցերը եւ հեռանանք ծայրայեղութիւններէն, որոնք անազդու կը դարձնեն մեզ: Ժամանակն է, որ արթննանք այն ինքնութեան մէջ, որ Աստուած նպատակադրած է, որ ունենանք. ըլլանք զօրաւոր Աստուծով, տղամարդուն կեանքին մէջ կարելոր դեր ունեցող ըլլանք եւ փրկութեան ձայն մը՝ այս աշխարհի կորսուածներուն եւ տառապողներուն համար:

Ողջունել եւ Չիրար Լզելով Մտերմանալ



Գրաւիչ շրթունքներ ունենալու համար՝ ազնիւ խօսքեր խօսէ: Սիրուն աչքեր ունենալու համար՝ մարդոց մէջ բարին փնտռէ: Գեղեցիկ մազեր ունենալու համար՝ թող զաւակ մը իր մատները անոնց մէջէն անցընէ օրական մէկ անգամ: Լաւ կեցուածք ունենալու համար՝ քալէ այն գիտութեամբ, թէ՛ դուն երբեք առանձին չես քալեր:

ՍԱՄ ԼԵՎԻՆՍԸՆ

Երբ էգ առիծներ զիրար կը լզեն, ասիկա իրենց մէկզմիաը ողջունելու ձեւն է: Լզելու այդ վարժութիւնը կը սկսի երբ էգ առիծը տակաւին փոքր կ'ըլլայ: Երբ էգ առիծ մը կորին մը կը տեսնէ, փախուստ չկայ անոր պարտադիր համբոյրներէն: Չկայ կորին մը, որուն կ'արտօնուի հեռանալ առանց որ լզեն զինք: Այս ձեւի տեսարան մը կը պատկերացնեմ. մեծցած առիծներուն որսը դիտելով հետաքրքրական ժամանակ մը անցընելէ ետք, կորին մը կը վերադառնայ իր խումբի մտերմիկ մթնոլորտին մէջ: Յանկարծ կորինը կը վարանի, մտածելով.

Օ՛, ո՛չ, ահա կու գայ մօրաքոյրս: Հիմա պիտի լզէ զիս եւ իր լորձունքը պիտի քսէ ամբողջ երեսիս վրայ... Ճիշդ այն պարագային պէս երբ պատանի մը կը մտնէ սենեակ մը՝ լեցուն այցելութեան եկած իտալացի հօրաքոյրներով եւ մօրաքոյրներով:

Կորինները չեն միայն, որ կ'ենթարկուին այդ մտերմիկ, դէմ առ դէմ ողջոյնին: Էգ առիծներն ալ շարունակ այդ

մօտիկութեան մէջ են իրարու հետ: Այդ ողջոյնի ծէսը կարող կը դարձնէ զիրենք, որ ճանչնան զիրար: Ճիշդ ինչպէս մեզի համար բոլոր էգ առիծները իրարու կը նմանին, իրենց համար ալ այդպէս են: Միակ ձեւը, որով էգ առիծ մը վստահ կ'ըլլայ, որ ուրիշ էգ առիծ մը իր խումբէն է եւ ոչ օտար մը՝ հոտն է: Ինչպէս բոլորս գիտենք, արտաքին տեսքը կրնայ խաբուսիկ ըլլալ, բայց հոտը սովորաբար ճշմարտութիւնը կ'ըսէ:

Ամէն էգ առիծ իր յօնքերուն մէջ՝ աչքերուն ճիշդ վերը, գեղձեր ունի, որոնք կ'արտադրեն իրենց խումբին հոտը: Երբ էգ առիծները կը վերախմբուին, մտերմիկ ընկերային կապեր կը հաստատեն իրարու հետ՝ իրենց այտերը իրարու քսելով եւ քնքշութեամբ իրարու դպցնելով իրենց գլուխները: Այդ ողջոյնը ծանօթանալէ աւելին է: Ծանօթացումը առաջին հանդիպումն է, որ կ'ըսէ. «Ես այսինչն եմ: Դուն ո՞վ ես»: Բայց էգ առիծներուն ողջոյնը զօրութիւնը ունի սիրոյ կապեր ամրապնդելու, դաշնակցութիւններ կնքելու եւ ոտնձգութեան համար իրենց խումբէն ներս թափանցածները բացայայտելու:

Էգ առիծները կը հոտուրտան եւ ապա կը ճանչնան: Մարդիկը նախ կը ճանչնան եւ ապա կը հոտուրտան: Օրինակ մը. ամուսինս վերջերս զիս օդակայանէն առաւ: Տեսայ իր ինքնաշարժը կը մօտենար եւ սկսայ ձեռքս օդին մէջ շարժել: Բայց միայն երբ ան ինքնաշարժէն դուրս ցատկեց եւ փաթթուկ ըրաւ ինծի՝ ես իր հոտը առի:

«Շատ անոյշ կը հոտիս,» ըսի երբ ճանչցայ իր անուշահոտին հոտը: Չեմ պատկերացներ զինք ճանչնալ ատոր հակառակ ձեւով մը. տեսնեմ, թէ տղամարդ մը ինքնաշարժէն դուրս կը ցատկէ եւ դէպի ինծի կը քալէ, մօտենամ իրեն, որպէսզի հոտը առնեմ, վստահ ըլլամ, որ իմ ամուսինիս հոտը ունի եւ յետոյ զինք իմս հոչակեմ: Հոտ ճանչնալու էգ առիծներու այս կեդրոնացումը կը ծառայէ շարք մը նպատակներու:

Ողջոյնի եւ լզելով զիրար ճանչնալու ծէսը անոնց կու տայ բնական ձեւ մը ճանչնալու երբ անբաղձալի բան մը կամ մէկը մտած է խումբին մէջ: Ոչ միայն ատիկա, երբ էգ առիծները կ'ողջունեն զիրար եւ լզելով կը ճանչնան եւ կը մտերմանան իրարու հետ, անոնք ընդունելութիւն եւ պատկանելիութիւն

ցոյց կու տան: Իբրեւ Աստուծոյ դուստրերը, մենք ալ պէտք է նոյնը ընենք մեր կեանքին մէջ գտնուող մարդոց հետ:

ՈՂՋՈՒՆԵԼ ԶԱԻԱԿՆԵՐԴ ԵՒ ՄՏԵՐՄԱՆԱԼ ԱՆՈՆՑ ՀԵՏ

Երբ էգ առիծը կ'ողջունէ իր կորիւնը, ան ըսել կ'ուզէ. «Դուն մեզի կը պատկանիս: Կրնաս հանգիստ ըլլալ, յայտնաբերել զօրութիւններդ, եւ մեծնալ մեր միջեւ: Կերակուր եւ ապահովութիւն կայ քեզի համար հոս մեր խումբին մէջ»: Ան նաեւ այդ ողջոյնը կը գործածէ գիտնալու համար, թէ կորիւնները ո՞ր գացած էին: Մօտէն դիտելով, ան կը նկատէ, թէ կորիւնը ի՞նչ գործերով զբաղած էր քիչ առաջ, եւ անոր կրնայ հարցնել. «Ինչո՞ւ բորենիի հետքեր կը տեսնեմ վրադ»:

Երբ տղաքս դեռահաս էին եւ գիշերը դուրս կ'ելլէին, կ'ուզէի, որ անպայման հաբուրէին զիս՝ «Գիշեր բարի» ըսելու համար, երբ տուն վերադառնային: Այդ համբոյրը քանի մը նպատակներու կը ծառայէր: Առաջին, կը սիրեմ համբուրել տղաքս: Երկրորդ, պէտք չունէի արթուն մնալու՝ գիտնալու համար, թէ ճիշդ ո՞ր ժամուն վերադարձան: Եւ երրորդ, անիկա կ'արտօնէր, որ հոտուրտայի զիրենք:

Հետեւեալը կը պատահէր: Երբ տուեալ որդիս տուն կը վերադառնար, ննջարանիս դուռը կը բանար եւ կ'ըսէր. «Ես տուն եկայ: Գիշեր բարի, մամ»:

Քանի որ գիտէր, որ քնացած էի եւ իր ձայնէն արթնցայ, արագ մը դուռը կը գոցէր: Բայց ես կ'ըսէի. «Լաւ ժամանակ անցուցիր: Եկ՛ր համբուրէ զիս»:

Եթէ երկմտէր, կը կասկածէի:

Եթէ մօտենար եւ առնէի բերնի համ փոխող ծամոնի կամ շաքարի անանուխի զօրաւոր հոտը, կը գիտնայի, որ անփափաքելի բան մը ըրած էր: Երբ մօտենար, ձեռքս կ'երկարէի եւ զինք ասելի մօտիկ կը քաշէի՝ տեսնելու համար, թէ արդեօք որեւէ երկրորդական հոտ մը կմր վրան, զոր կը փորձէր ծածկել: Վերջապէս մայր մը կը գիտնայ իր գաւակներուն հոտը:

Տարօրինակ պիտի ըլլար տղոցս հետ այդ մտերմիկ պահը անցնելը մեր այդ կէս-գիշերային ստուգման ատեն

Եթէ արդէն իսկ մեր տան մէջ մեր առօրեայ կեանքին մէջ ողջունելու վարժութիւն մը հաստատած չըլլայի իրենց հետ: Մեր ընտանիքը ամէն առտու փաթթուկ կ'ընէ իրարու: Օրուան ընթացքին ալ փաթթուկներ կ'ընենք եւ զիրար «Գիշեր բարի» ըսելու աստեն կը համբուրենք: Յաճախ իրարու հետ ֆիզիքական հպում կ'ունենանք, ըլլայ անիկա տղոց միջեւ ըմբշամարտի մրցումներ, խոհանոցը մաքրելու աստեն հրմշտկելներ կամ փաթթուկ երբ տուն կը մտնենք կամ տունէն կ'ելլենք: Ողջունելու այս ձեւերը սկսան երբ մեր տղաքը տակաւին մանուկ էին եւ երբեք ալ չեն դադրած: Հաւանաբար ձեր տան մէջն ալ նոյնն է պարագան: Դուք ալ զիրար կը համբուրէք երբ իրարու «Բարի գիշեր» կը մաղթէք, փաթթուկ կ'ընէք զիրար բարեւելու աստեն, իրարու ուսը կը շոյէք, իրարու մազերը կը գզգզէք կամ բազմոցին վրայ իրարու վրայ յենած կը նստիք:

Յետագային երբ երէց որդիս տունը ձգեց եւ ամուսնացաւ, սկսայ լսել պատմութիւններ արկածախնդրութիւններու, որոնք աննկատ անցեր էին ինձմէ: Իրեն կը հարցնէի. «Երբ ըրիր այդ բանը: Ես ինչպէս չնկատեցի զանիկա»:

Ամչկոտ ժպիտով մը կը պատասխանէր. «Ատիկա պատահեցաւ երբ դուն ճամբորդած էիր» կամ «Ատիկա պատահեցաւ երբ ընկերոջս տունը քնացայ»:

Եթէ տունը ըլլայի, վստահաբար հոտը առած կ'ըլլայի անոր ըրածներուն: Ողջունելը կ'արտօնէ մայրերուն, որ գիտնան, թէ իրենց զաւակները անփափաքելի շփումներ ունեցած են կամ ոչ: Ատիկա կ'օգնէ, որ եթէ պէտք ըլլայ քայլ առնենք՝ սիրով, մարզումով եւ պատիժով: Եթէ կանոնաւոր կերպով զիրար չէք ողջուներ տան մէջ, կը քաջալերեմ, որ սկսիք այդ վարժութիւնը: Պզտիկներդ կրնան դիմադրել սկիզբը, բայց մի՛ յանձնուիր: Քու փաթթուկդ ոչ միայն պիտի ըսէ քու զաւակիդ, թէ կը սիրես զինք, այլեւ անիկա պիտի արտօնէ, որ գիտնաս եթէ զաւակիդ վրայ կայ հոտ մը, որ քու տունիդ հոտը չէ: Մայրեր, եթէ ձեր զաւակը սովորութիւնը ունէր փաթթուկ ընելու եւ յանկարծ սկսաւ դէմ դնել, ջանայ գիտնալ, թէ ինչո՞ւ: Մի՛ արտօներ, որ զաւակդ հանգիստ զգայ քեզմէ հեռանալովը:

Երբ զաւակներդ կը հասուննան եւ արդէն չափահաս

Ողջունել եւ Ձիրար Լզելով Մտերմանալ

կ'ըլլան, շարունակէ ողջունել զիրենք փաթթուկներով եւ համբոյրներով: Քու ֆիզիքական սէրդ կը ծառայէ իբրեւ յիշեցում մը, թէ անոնք միշտ պիտի պատկանին քու ընտանիքիդ: Այդ գիտութիւնը անոնց ապահովութիւն կու տայ մինչ անոնք կ'անցնին դէպի չափահասութիւն եւ կը կերտեն իրենց սեփական ընտանիքը:

ՁԻՐԱՐ ՈՂՋՈՒՆԵԼ

Երբ էգ առիծները կ'ողջունեն զիրար, անոնք ըսել կ'ուզեն. «Մենք ազգական ենք: Քու վրայէդ ես կ'առնեմ քոյրերէս առած ինծի ծանօթ հոտը: Ես կողքիդ եմ, եւ գիտեմ, որ դուն ալ իմ կողքիս կեցած ես»:

Մենք այդքան ալ տարբեր չենք մեր առիծ քոյրերէն: Երբ ջերմ ընդունելութիւն մը կը տեսնենք ուրիշներէն, ատիկա մեզի կ'ըսէ. «Մեզի հետ նստէ: Կը վստահինք քեզի եւ կ'ողջունենք քեզ»: Երբ ընդունելութիւնը պաշտօնական եւ վերապահ է, ատիկա մեզի կ'ըսէ. «Մեզի հետ քու կարգավիճակդ տակաւին վերանայումի մէջ է: Որեւէ անուանում կամ նշանակում վերապահուած պիտի ըլլայ մինչեւ որ ձեզ աւելի լաւ ճանչնանք»: Այդ ձեւի փոխանակումի մէջ թէ՛ բարեւոյրը եւ թէ՛ բարեւը ստացողը հանգիստ կ'ըլլան: Իսկ եթէ ընդհանրապէս բարեւել չըլլայ, ապա այցելուն կը զգուշանայ:

Տեսէք Պօղոս առաքեալ ինչ կ'ըսէ կորնթացիներուն մինչ անոնց թելադրանք մը կ'ընէ իրենց իրարու բարեւելու ձեւին մասին:

Ձիրար բարեւեցէք սուրբ ողջագուրումով մը: Այստեղի բոլոր եղբայրները եւ քոյրերը կը բարեւեն ձեզ:

Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի հիանալի շնորհքը, Աստուծոյ շնայլ սէրը, Սուրբ Հոգիին մտերմիկ բարեկամութիւնը ձեր բոլորին հետ ըլլան:

(Բ. Կորնթացիներուն 13.12-14, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակէն)

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

Երբ կը բարեւես քոջ մը, փաթթուկ ըրէ իրեն իբրեւ այդպիսին: Եթէ հանդիպիս կին առաջնորդի մը, բարեւէ եւ փաթթուկ ըրէ անոր այնպիսի ձեւով մը, որ իրեն կը հաղորդէ քու գնահատանքդ իրեն հանդէպ: Երբ կը հանդիպիս մէկու մը, որ վիրաւորուած է, փաթթուկ ըրէ անոր հոգածութեամբ: Երբեմն պէտք չկայ նոյնիսկ բառերու: Ժամանակի ընթացքին տեսած եմ, որ փաթթուկ մը շատ անլի բուժիչ է քան բարեւ մը:

Պօղոս վարպետօրէն ողջոյններ հիւսեց իր հոգատարութեան տակ եղող եկեղեցիներուն ուղղուած իր նամակներուն մէջ: Եթէ իր ողջոյնները թուղթին յանձնելը կարելոր էր Պօղոսի համար, ապա վստահաբար կարելոր է մեզի համար, որ ողջոյնները գործադրութեան դնենք:

Եկէք նայինք Կորնթոսի եկեղեցիին ուղղուած հետեւեալ ողջոյնին.

Ասիկա չեմ գրեր ձեզ վատ զգացնելու համար իբրեւ թէ ըլլայի թաղամասի մը բոլորին ծանօթ յանդիմանողը կամ մարդիկը անարգողը: *Կը գրեմ ձեզի իբրեւ հայր մը, իմ զաւակներս: Կը սիրեմ ձեզ եւ կ'ուզեմ, որ լաւ կերպով մեծնաք, ոչ թէ շփացած:* Կան շատ մարդիկ, որոնք անհամբեր կ'ըլլան ձեզի ըսելու, թէ ինչ սխալ բան ըրած էք: Բայց *չկան այնքան մեծ թիւով հայրեր, որոնք պատրաստ են ժամանակ տալու եւ քանք թափելու, որպէսզի օգնեն, որ մեծնաք:* (Ա.Կորնթացիներուն 4.14-15, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Պօղոս այս հատուածը կը սկսի կորնթացիներուն ըսելով, թէ իր նամակը ինչ է եւ ինչ չէ: Ան չէր յանդիմաներ զանոնք, որպէսզի ամչցներ: Այլ՝ ան սահմանեց իր յարաբերութիւնը անոնց հետ եւ թէ իրենք ո՛վ էին իրեն համար: Ան հայր մըն էր, եւ անոնք իր զաւակներն էին: Ապա Պօղոս բացատրեց, թէ հակառակ անոր որ Կորնթոսի մէջ շատեր կը սպասէին, որ հաւատացեալները ձախողէին, իբրեւ հայր մը՝ ան ինքզինք տրամադրած էր օգնելու իրենց, որ յաջողին: Անոր ողջոյնին մէջ տեսանք, թէ ո՛վ էր ան նամակը ստացողներուն

համար, անոնք ո՛վ էին իրեն համար, ի՛նչ կ'ըսէր նամակին մէջ, ինչո՞ւ կ'ըսէր անիկա, եւ թէ ինչո՞ւ պէտք էր մտիկ ընէին իրեն: Այդ բոլորը հաղորդեց իրենց նախքան որեւէ պատգամ փոխանցելը:

ԻՐԱՐՈՒ ՀԵՏ ՄՏԵՐՄԱՆԱԼ

Եթէ էգ առիծներուն ողջոյնը դրական կերպով ընթանայ, անիկա շուտով կը վերածուի լզելով իրարու մաքրելու եւ մտերմանալու յանպատրաստից պահի մը: Այդ զիրար լզելու վարժութիւնը ամուր կապ մը կը ստեղծէ էգ առիծներուն եւ յարաբերաբար մեծ կորիւններուն միջեւ, ինչ որ իր կարգին կ'օգնէ, որ խումբը իրարու կապուած եւ անեղծ մնայ:

Էգ առիծները գլխատրաբար կը լզեն իրարու գլուխները եւ վիզերը. այն տեղերը, ուր առիծ մը ինքնին պիտի չկարենար հասնիլ: Իրենց կարծր մակերես ունեցող լեզուներով, էգ առիծները իրարու վրայէն կը մաքրեն արիւն եւ ցեխ կամ աղս՝ միեւնոյն ատեն սանտրելով իրենց ընկերակիցին մորթը եւ այդպիսով նաեւ մաքրելով որեւէ տիզ կամ այլ մորթային մակաբոյծ: Երբ բան մը արիւն եւ սնունդ կ'առնէ մարմինէդ, այդ արարածը դանդաղօրէն բայց վստահաբար կեանքդ կը գողնայ: Մինչ լաւ է, որ արիւնը եւ աղտը կամ ցեխը մաքրուին մեր մարմինէն, շնորհակալութիւն Աստուծոյ մօրաքոյրներու եւ քոյրերու համար, որոնք պատրաստ են նաեւ տիզերը եւ ուրիշ մակաբոյծ միջատներ մաքրելու մեզմէ:

Էգ առիծներու այդ վարժութիւնը անգլերէնով *կրում* բառով կը նկարագրուի, որ կը նշանակէ՝ մաքրել, կարգի դնել, պատրաստել, խոզանակել, նորոգել, կոկել կամ դասաւորել, գեղեցկացնել, սանտրել, պատրաստել բանի մը համար, մարգել, ուսուցանել: Այս սահմանումին համաձայն, ես կրնամ եւ պէտք է *կրում* ընեմ ակռաներս, խոհանոցս եւ զաւակներս՝ թուաբանութեան մէջ:

Այդ *կրումինկի* կամ լզելով մաքրելու գործընթացը եթէ ուզենք մանրամասն բացատրել, անիկա նախ եւ առաջ կը սահմանուի իբրեւ «մաքրել» կամ «կարգի դնել»: Յիսուս Պետրոսի հետ այդպիսի մաքրելու եւ կարգի դնելու (*կրումինկի*) տեսակաւոր խօսակցութիւններ ունեցաւ: Յիսուս

ուզեց լուալ Պետրոսի ոտքերը: Պետրոս մերժեց: Ուստի Յիսուս Պետրոսի յայտնեց, թէ եթէ չարտօնէր ոտքերուն լուացումը, ապա Պետրոս բաժին պիտի չունենար Յիսուսի հետ: Պետրոս պէտք եղածէն անդին երթալով, Յիսուսի առաջարկը ծայրայեղութեան տարաւ եւ հրաւիրեց, որ Յիսուս զինք գլուխէն մինչեւ ոտքերը լուար: Մեր հիանալի Յիսուսը նիւթը վերադարձուց բուն կէտին:

Յիսուս ըսաւ. «Եթէ առտու լոգանք առիր, միայն պէտք ունիս ոտքերու լուացումի հիմա, որպէսզի գլուխէդ ոտքերդ մաքուր ըլլաս [...] Ուստի հիմա մաքուր ես»: (Յովհաննէսի 13.10, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատճ* տարբերակէն)

Քանի՛ որ մենք Յիսուսի կը պատկանինք, մենք մաքուր ենք: Բայց առով հանդերձ, օրուան ընթացքին, մեր ոտքերը կրնան աղտոտիլ եւ երբեմն մեր ո՛ր եղած ըլլալուն, ինչ ըրած ըլլալուն կամ ինչ հաքած ըլլալուն համաձայն, մեր ոտքերը նոյնիսկ կրնան հոտիլ: Մեր կեանքի ուղեւորութեան ընթացքին, մենք կրնանք կոխել աղտոտ տեղեր. գոնէ ես գիտեմ, որ ատիկա կ'ընեմ երբեմն: Օրուան վերջաւորութեան պէտք ունինք մեր ոտքերէն լուալ այդ օրուան ճամբորդութեան փոշին:

Ասոր համար Յիսուս կը շարունակէ ըսելով.

Ուստի եթէ ես, ձեր Տէրը եւ Ուսուցիչը, ձեր ոտքերը լուացի, դուք ալ հիմա պէտք է մէկդ միւսին ոտքերը լուաք: *Ես ձեզի տուի օրինակ մը: Ինչ որ ես ըրի, դուք ալ ըրէք:* Ես միայն յստակ եղածը կը մատնանշեմ: Ծառայ մը իր տիրոջմէն աւելի բարձր չի դասուիր. պաշտօնեայ մը հրահանգներ չի տար իր գործատիրոջ: Եթէ կը հասկնաք, թէ ինչ կ'ըսեմ ձեզի՝ գործադրեցէք անիկա, եւ օրհնեալ կեանք մը ապրեցէք: (Յովհաննէսի 13.14-17, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատճ* տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Յիսուս իր աշակերտներուն ոտքերը լուաց եւ մեզի պատուիրեց, որ նոյնը ընենք իրարու: Ես չեմ կարծեր, որ ան բառացիօրէն ըսել ուզեց, որ ամուսինս ամէն գիշեր ինծի *մինի փեղիքիւր* [ոտքերու խնամք] ընէ (հակառակ անոր որ ատիկա լաւ պիտի ըլլար, հոգիս...): Բայց հաւանաբար ոտք լուալը կը խորհրդանշէ, թէ ինչպէս կրնանք թարմացնել եւ վերականգնել մէկս միւսը, յատկապէս երբ այն ճամբաները, որոնց վրայէն կը քալենք՝ մեր ոտքերը կ'աղտոտեն:

Ես մասնակցած եմ ոտք լուալու քանի մը տարօրինակ արարողութիւններու, յատկապէս այն ժամանակ երբ կիներու *նայլոն* բարակ քուլպաները [քոլանները] ծառայութեան պահանջներէն մէկն էին: Բայց Յիսուսի օրերուն ոտք լուալը հիրերը ողջունելու բնական ձեւերէն մէկն էր երբ անոնք տունդ կը մտնէին, ճիշդ ինչպէս այսօր մենք կը փաթթուինք կամ կը համբուրենք զիրար:

Ես չեմ առաջարկեր, որ մենք դարձեալ ոտք լուալու ձեւը որդեգրենք այսօր: Այսօր մենք կ'ապրինք գոց կօշիկներու եւ սալայատակ փողոցներու ժամանակի մը մէջ, մինչ անոնք բաց կօշիկներով (կամ *սանփալներով*) կը քալին փոշոտ ճամբաներու մէջ: Իմ առաջարկածս այն է, որ երբ մենք կը մտնենք բարեկամի մը տունը կամ պաշտամունքի տուն մը, պէտք է պահ մը թօթափենք մեր վրայէն օրուան փոշին եւ պատրաստ ըլլանք յարաբերութիւններ շինելու հոն:

Էգ առիծին պէս մենք ալ պէտք ունինք մէկս միւսին, որպէսզի մաքրենք աղտը, տիգերը կամ մակաբոյծները մեր կեանքերէն:

Ինքզինքդ մի՛ պատկերացներ, որ ներկայանալի ես
երբ շաբաթներէ ի վեր չես լոզցած:

Մի՛ ըլլար ինքնահաւան
եւ կարծեր, որ բոլորէն աւելի լաւ ես դուն:

Մի՛ ըլլար ազահ,
անողորմ եւ անգութ ինչպէս գայլերն են,

Եւ մի՛ բզքտեր աղքատները եւ ուտեր անոնց միսը, եւ
մի՛ ծուատեր

կարիքաւորները՝ միայն զանոնք թափելու համար:

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

Տգրուկը զոյգ դուստրեր ունի,
որոնց անուններն են՝ «Տուր ինձի» եւ «Աւելի շատ
տուր ինձի»: (Առակներու 30.12-15, բառացիօրէն
թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատեճ*
տարբերակէն)

«Տուր ինձի»ն եւ «Աւելի շատ տուր ինձի»ն մակաբոյժներ
են, որոնք կը պակսեցնեն մեր սնունդը եւ կը կողոպտեն
մեզմէ մեր կեանքը: Ազահութիւնը եւ ինքնագոհացումը
վամպիրներու նման են: Երբ մաս կը կազմենք համայնքի մը,
որ կը մաքրէ (*կրում կ'ընէ*) մէկզմիւսը, մենք օգնած կ'ըլլանք
իրարու՝ մեր կեանքերը մաքուր պահելու մէջ:

Վերջերս պէտք ունէի որոշելու, թէ իրաւունք ունէի
երիտասարդի մը հետ անձնական խօսակցութիւն մը
ունենալու կամ ոչ: Ան շատ խոստումնալից առաջնորդ մըն է,
եւ ես մեծապէս կը յարգեմ զինք: Քանի որ նախանձախնդիր
եմ իր կեանքին մէջ Աստուծոյ կոչումին հանդէպ, ուզեցի
կարգ մը նիւթերու մէջ սրբագրութիւններ առաջարկել իրեն:
Բայց ատիկա կարենալ ընելու համար, ես պէտք էր նախ
հաստատէի, թէ իրեն հետ իմ յարաբերութիւնս ինչ բնոյթի
էր, որպէսզի տեսնէի, թէ ան ինձի մտիկ պիտի ընէր կամ
ոչ: Ուստի իրեն հարցուցի. «Դուն զիս ինչպէս կը տեսնես
եկեղեցիին մէջ»:

Առանց վարանելու պատասխանեց. «Ես ձեզ իբրեւ
առաջնորդ կը տեսնեմ»:

Անոր պատասխանէն հասկցայ, թէ կրնայի իրեն հետ
խօսիլ եւ ան մտիկ պիտի ընէր ինձի եւ ճիշդ պիտի հասկնար
ըսածներս: Եթէ ան տարբեր ձեւով պատասխանած ըլլար, ես
իմ խրատս պիտի չտայի իրեն:

Այդ տեսակի ոտք լուալը երկու կողմանի է: Ոչ թէ միայն
մենք պիտի խրատ տանք ուրիշներուն, այլեւ հրաւիրենք
ուրիշները, որ իրենց ներդրումը ունենան մեր կեանքին մէջ
եւ: Ես ունիմ շատ սիրելի բարեկամուի մը, որ մեծ քրոջ
մը պէս է ինձի: Ան բացառիկ հովի մըն է, ինչպէս նաեւ մեծ
ձիրք եւ փորձառութիւն ունի Աստուծոյ դուստրերը իրարու
հետ մէկտեղելու կամ հաւաքելու մէջ: Մենք այնքան երկար
ժամանակէ ի վեր մտերիմ բարեկամներ ենք, որ ան թէ իմ

զօրաւոր կէտերս գիտէ եւ թէ՛ տկարութիւններս:

Վերջերս զգացի, որ պէտք է դիտումնաւոր կերպով հրաւիրեմ զինք, որպէսզի մասնակից ըլլայ իմ մաքրուելու, յարդարուելու (*կրումիսկի*) գործընթացիս: Սուրճ խմելու ատեն իրեն ըսի. «Կ'ուզեմ, որ իմ մասիս կարծիքներդ տաս ինծի: Եթէ տեսնես կ'ընեմ անմիտ կամ անկարգ բան մը, կամ եթէ լսես կ'ըսեմ անմիտ կամ անկարգ բան մը, հաճիս ըսէ՛ ինծի: Ես բնաւ չեմ զգար, որ ես հոգեւորապէս հասած եմ արդէն ուր որ պէտք է հասնիմ, կամ որ սրբագրութենէ վեր եմ, բայց պէտք ունիմ մէկու մը, որ ատակ է ուղղութիւն տալու եւ իմաստութիւն խօսելու կեանքիս մէջ»:

Ան շնորհալի կերպով համաձայնեցաւ *կրում* ընել կամ մաքրել որեւէ տգեղ բան կեանքիս մէջ: Որպէսզի ատիկա իրապէս իրականանայ, ես պէտք է յարաբերութեան մէջ ըլլամ անոր հետ: Ես դիտումնաւոր կերպով կը կապուիմ իրեն հետ եւ մտիկ կ'ընեմ իր ցուցմունքներուն՝ իր գրած գիրքերը կարդալով եւ իր *փոպրասպները* մտիկ ընելով: (Պատճառ չկայ, որ ան ինծի անձնապէս ըսէ այն բաները, որոնք արդէն յստակ կերպով ըսած է իր հրապարակումներուն մէջ:) Ան զիս կամ կեանքս կառավարելու փափաք չունի բնաւ, այլ՝ պարզապէս կ'ուզէ վստահ ըլլալ, որ աղտ չկայ երեսիս վրայ: Բոլորս ալ մաս կը կազմենք ընկերային *կրումիսկի* մը, եւ գիտենք, որ երբ մենք ցեխոտ ենք, ատիկա կ'ազդէ ուրիշ քոյրերու վրայ եւս:

Եթէ պաշտամունքի տուն մը մտնես եւ նկատես, որ ողջունելու եւ յարաբերութիւններ հաստատելու միջավայր մը չկայ հոն քեզի համար, կը քաջալերեմ, որ գտնես եկեղեցի մը, ուր կայ խորունկ կապակցութիւններ եւ յարաբերութիւններ մշակելու միջավայր մը: Առանց խորունկ կապակցութիւններու, բարեկամութիւնները եւ եկեղեցիները պիտի չմաքրեն եւ ջարդարեն քեզ Աստուծոյ նպատակներուն համար: Երբ որ *կրումիսկի* պէտք ունենանք, ատիկա յայտնի կ'ըլլայ: Ես իմ այդ հովիւ-բարեկամուիիս հրաւիրեցի, որ իր կարծիքները տայ իմ անձիս եւ կեանքիս վերաբերեալ, որովհետեւ անդրադարձայ, որ ես պէտք ունէի այդ տեսակի *կրումիսկի*: Ես ինքզինքս մեկուսացած եւ սխալ հասկցուած կը զգայի: Ատոնք լաւ վիճակներ չեն, եւ գիտէի, որ ես

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

պէտք ունէի ուրիշի մը խորաթափանց օգնութեան՝ զանոնք սանտրելով հանելու համար իմ կեանքէս:

Այդ *կրումինկի* գործընթացը կրնայ կապակցութիւն հաստատելու գլխաւոր առիթ մը ըլլալ մեզի համար: Այնպէս կը թուի, թէ մեր մեծ կատու-ընկերները բնազդաբար գիտեն այն ինչ որ մենք մարդիկս կը սորվինք սուղ գին վճարելով. վտանգաւոր կրնայ ըլլալ դուն քեզ մաքրելը:

ՍՐԲՈՒԹԻՆ, ՈՉ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՄԱՔՐՈՒԹԻՆ

Յիշեցնեմ, որ Պետրոս նախ բողոքեց ոտքերուն լուացումին դէմ եւ ապա կամաւոր կերպով առաջարկեց, որ ամբողջ մարմինը լուացուի, մինչեւ որ Յիսուս անոր ըսաւ, որ պէտք չունէր այդքան բծախնդիր ըլլալու: Յիսուս ըսաւ.

Գիտես, իմ մտահոգութիւնս սրբութիւնն է եւ ոչ առողջապահական մաքրութիւնը (Յովհաննէսի 13.10, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակէն)

Յիսուսի մտահոգութիւնը պէտք է մեր մտահոգութիւնը ըլլայ. սրբութիւն, ոչ առողջապահական մաքրութիւն: Վերջ ի վերջոյ մենք ատոր համար պատասխան պիտի տանք: Երբ մեր կեդրոնացումը մեր անձին վրայ է, ազահութիւնը եւ ինքնազոհացումը սանձարձակ կը դառնան: Կարգ մը Քրիստոնէաներ կը սպառին՝ սրբութեան արտաքին երեւոյթ մը պահել փորձելով՝ մինչ ուրիշները կ'ամբաստանեն անմաքուր ըլլալով: Յիսուս ճիշդ ատոր կ'ակնարկէր երբ ըսաւ.

Դուք շատ զգոյշ էք գաւաթին եւ պնակին դուրսի կողմը մաքրելու, բայց ներքնապէս աղտոտ էք՝ ազահութեամբ եւ ինքնազոհացումով լեցուն: (Մատթէոսի 23.25, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* տարբերակէն)

Պէտք է մեծ պատկերին նայինք հոս. սրբութիւնը այդքան կապ չունի մաքրութեան հետ, որքան սիրտին:

Մեր ամենօրեայ կեանքին ընթացքը կրնայ մեր ձեռքերը եւ ոտքերը աղտոտել, բայց անհկա չ'աղտոտեր երբ Աստուած է մեզ մաքրողը: Միայն Ան է Տէր Աստուածը, որ մեզ սուրբ կ'ընէ:

Շփոթ կը ստեղծուի երբ մեր կեդրոնացումը կ'ըլլայ չարէն խուսափելու վրայ փոխանակ բարին ընելու: Այդ ատեն է, որ մեր պարապ կեանքերը կ'ըլլան անբաղձալի ներթափանցողներու եւ գիշատիչներու ներխուժումի վտանգին տակ: Յիսուս շրջեցաւ բարիք գործելով, ոչ թէ չարիքէն խուսափելով: Մեղքին հակառակը արժանիքն է:

Չարը կը յաղթուի բարիով: Չարը չի հեռացուիր օրէնքներով կամ անկէ պահուլտելով: Այո, մենք պէտք է սահմաններ ունենանք եւ իմաստութիւն գործածենք: Այո, մենք պէտք չէ մասնակից ըլլանք չար գործերու կամ Չարին գործերուն: Բայց արդեօք մենք քերթելով կը փորձենք հանել մեր վրայէն այն ինչ որ պէտք չէ հանուի: Եկէք մենք մեզ եւ ուրիշները չլուանք, որպէսզի զանոնք մաքրենք մեր կարծիքով սխալ բաներէն:

Ահա՛ Յիսուսի խրատը՝ մարմինը ազահութենէ եւ ինքնագոհացումէ մաքրելու համար:

*Ուստի ձեր ներսը մաքրեցէ՛ք աղքատներուն նուէրներ տալով, եւ ամբողջութեամբ պիտի մաքրուիք:
(Ղուկասի 11.41, բառացիօրէն թարգմանուած
Աստուածաշունչի Նիու Լիվինկ Թրանսլէյշըն
տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)*

Աստուծոյ կը հետաքրքրէ մեր ներքին մաքրութիւնը: Ժամանակէ մը ի վեր Ան կը քաջալերէ զիս, որ յորդորեմ իր Մարմինը՝ Եկեղեցին, թէ՛ ժամանակն է, որ գործի լծուինք եւ քիչ մը աղտ հաւաքենք մեր եղունքներուն տակը եւ մեր հագուստներուն վրան՝ դուրս ելլելով մեր չափազանց մաքուր շէնքերէն եւ ուրիշներուն օգնելով:

Ասիկա դաս մըն էր, զոր փարիսեցի Սիմոն պէտք ունէր սորվելու:

ՄԵԾԱԳՈՅՆ ՄԱՔՐՄԱՆ ԱՐԱՐՔԸ

Յիսուս հրափրուած էր ընթերելու փարիսեցի Սիմոնին տունը: Անհկա «մաքուրներու» հաւաքոյթ մըն էր մինչեւ որ յանկարծ քաղաքի պոռնիկը ներս խուժեց: Լսած էր, թէ Յիսուս հոն պիտի ըլլար, եւ ներկայացաւ: Կարծես աստիկա արդէն իսկ պէտք եղածին չափ վատ երեւոյթ մը չըլլար, ան հանեց սուղ իւղի սրուակ մը, ծունկի եկաւ Յիսուսի առջեւ եւ արցունքներու մէջ՝ այդ անուշահոտը թափեց Յիսուսի ոտքերուն վրայ: Խեղճ Սիմոն: Ամբողջ ուզածը ընթրիք մը կազմակերպել էր Յիսուսի եւ անոր բարեկամներուն համար, եւ յանկարծ այդպիսի բան մը պատահեցաւ: Երբ Սիմոն տեսաւ աստիկա, ինքն իրեն ըսաւ. «Եթէ այս մարդը էր այն մարգարէն, որ կը կարծէի, որ էր, պիտի գիտնար, թէ ինչ տեսակի կին մըն է ասիկա, որ ամբողջութեամբ վրան ինկած է» (Ղուկասի 7.39, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակէն):

Ապա Յիսուս հարցում մը հարցուց Սիմոնի: Ան ուզեց գիտնալ, թէ ո՞վ աւելի երախտապարտ պիտի ըլլար իր պարտքին ջնջումովը. անձ մը, որ քիչ պարտք ունէր, կամ մէկը, որ շատ պարտք ունէր: Սիմոն տուաւ ճիշդ պատասխանը երբ ըսաւ, թէ ան որուն շատ ներուած էր, աւելի երախտապարտ պիտի ըլլար:

Յանկարծ Յիսուս սկսաւ խօսիլ այդ պոռնիկին մասին. նիւթ մը, որ իրենք կ'ուզէին անտեսել:

Ապա կնոջ դառնալով բայց խօսքը Սիմոնի ուղղելով,
ըսաւ. «Կը տեսնեն այս կինը: Ես քու տունդ եկայ
եւ դուն ջուր չբերիր ոտքերուս համար: Բայց
ան արցունքները թափեց ոտքերուս վրայ եւ իր
մագերով չորցուց զանոնք: Դուն չ'ողջունեցիր զիս,
բայց իմ ժամանելէս ի վեր, ան չէ դադրած ոտքերս
համբուրելէ: Դուն թարմանալու համար բան մը
չտուրի ինձի, բայց ան ոտքերս հանգստացուց
անուշահոտով: *Տպատրիչ է, չէ:* Անոր շատ շատ
մեղքեր ներուեցան եւ ատոր համար ալ ան շատ շատ
երախտապարտ է: Եթէ ներումը նուազագոյն չափի է,

Ողջունել եւ Չիրար Լզելով Մտերմանալ

երախտագիտութիւնն ալ նուագագոյն չափի կ'ըլլայ»:
(Ղուկասի 7.43-47, բառացիօրէն թարգմանուած
Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն,
շեշտադրումը՝ մեր կողմէ)

Վերի համարներուն մէջ տեսանք, թէ Յիսուս ինչ ըսաւ
այդ կնոջ մասին կրօնի մասնագէտներուն: Բայց աւելի եւս
նշանակալից են այն խօսքերը, որ Յիսուս ըսաւ *կնոջ*:

Ապա խօսքը ուղղեց կնոջ. «*Կը ներեմ քու մեղքերդ*»:

Ատիկա պատճառ եղաւ, որ ընթրիքի հիւրերը անոր
ետեւէն խօսին, ըսելով. «Ինքզինք ղկ կը կարծէ, որ
մեղքեր կը ներէ»:

Յիսուս անտեսեց զանոնք եւ ըսաւ կնոջ. «Քու
հաւատքդ քեզ փրկեց: Գնա՛ խաղաղութեամբ»:
(Ղուկասի 7.48-50, բառացիօրէն թարգմանուած
Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն,
շեշտադրումը՝ մեր կողմէ)

Նկատի առնուելիք կէտ մըն է, որ Յիսուս այդ արձակումը
շնորհեց այն մէկ անձին, որ հրաւիրուած չէր ընթրիքին: Ինչհիւ:
Որովհետեւ ան Սիմոնի պէս չըրաւ: Ան ողջունեց զինք եւ
ոտքերը լուաց: Սիմոն ինքզինք պէտք եղածէն աւելի բարձր
դիրքի վրայ կը տեսներ եւ չխոնարհեցուց ինքզինք Յիսուսի
առջեւ: Բայց այդ կինը այդպէս չըրաւ:

Մեղքերու ներում տրամադրելի՞ էր Սիմոնին: Անշուշտ:
Անիկա տրամադրելի էր բոլոր ներկաներուն: Յիսուս
յայտարարած էր ատիկա իր բաժնեկցած առակին մէջ, բայց
այդ պահուն Սիմոն չանդրադարձաւ կարիքին կամ չճանչցաւ
կարիքը սիրտի մաքրութեան կամ *կրումինկի*, զոր Յիսուս
կրնար հայթայթել:

Երբ համոզուած կ'ըլլանք, թէ մենք սիրտի մաքրութեան
կարիքը չունինք, կը սկսինք ուրիշները դատել: Երբ կը
դատենք ուրիշները, զանոնք կը զրկենք այն բանէն, որուն
մե՛նք ինքներս պէտք ունինք: Ատիկա պատահեցաւ Սիմոնի
հետ: Ան պէտք ունէր ոտքերու լուացումի: Ան պէտք ունէր

խաղաղութեան ողջոյնի: Ան պէտք ունէր բուժիչ բալասանի մը բերած բժշկութեան: Բայց քանի որ կը կարծէր, թէ ինք այդ բոլորին կարիք ունենալէն աւելի վեր էր, ան ողջոյնի եւ մաքրութեան այդ ծէսերէն որեւէ մէկը չըրաւ իր հիւրերուն:

ՊԱՏԻԻ ՏԵՂ ՄԸ

Այս տողերը գրած ատենս ես ինծի հարց կու տամ, թէ արդե՞՞ք Յիսուս այսօր ալ իր դէմքը դարձուցած է կիներուն, մինչ հարցում մը կ'ուղղէ մեր օրուայ օրինապաշտ ղեկավարներուն, ըսելով. «Դուք կը կարծէք, որ կնոջ մեղքը այնքան մեծ է, որ արժանի չէ ճանչցուելու կամ գնահատուելու, ուստի կ'անտեսէք զինք: Դուք կը պատկերացնէք, որ ան ձեռով մը ատակ չէ Աւետարանը ներկայացնելու իմ պատուէրս կատարելու: Բայց այդ պոռնիկ կնոջ օրինակով, ես անպարտ արձակած եմ բոլոր կիները: Դուք կը պատկերացնէք, որ Եայի մեղքը աւելի մեծ է Ադամինէն, եւ հետեւաբար անոր դուստրերուն տեղ չէք տար իմ սեղանիս վրայ: Բայց մի՛ մոռնաք, որ անոնց, որոնց շատ բան ներուած է, շատ աւելի երախտապարտ են: Պատիկ տեղ մը պիտի գտնուի այդ դուստրերուն համար, նոյնիսկ եթէ ատիկա իմ ոտքերս լուալով եւ օծելով ըլլայ»:

Սիրելի էգ առիւծներ, ժամանակն է, որ դարձեալ մեր փառաւոր Տիրոջ տանք մեզմով հպարտանալու պատճառ մը: Ատիկա իրականացնելու համար, ես պատրաստ եմ լուալու ոտքեր եւ իմս ալ լուալ տալու: Իւրաքանչիւրս ալ պատրաստ ըլլանք ընելու որեւէ բան եւ երթալու որեւէ տեղ եթէ ատիկա պատճառ պիտի ըլլայ, որ Յիսուս հիացմունքով նայի մեր կողմ: Սիմոնի կարծիքով այդ անբարոյ կինը ինքզինք Յիսուսի վրայ կը նետէր, բայց Յիսուս այդ կնոջ տարօրինակ մօտեցումը սիրալիկ կոչեց: Մի՛ մտահոգուիր եթէ ըրածներդ քիչ մը տարօրինակ ըլլան սկիզբը: Պարզապէս որոշէ՛ սկսիլ: Կ'ուզեմ, որ բոլորս ալ այնքան տպաւորենք Յիսուսը, որ մեր մասին ըսէ. «Ա՛յնքան տպաւորուած եմ անոնց ինծի հանդէպ այնքան սէր ցոյց տալէն»:

Եկէք սքանչելիօրէն նշանակալից բան մը ընենք մեր Տիրոջ համար: Մինչ մենք առատօրէն ազնուութիւն, մաքրութիւն

եւ ողջոյն կը հայթայթենք ուրիշներու, երկրպագութիւն եւ պաշտամունք ըրած կ'ըլլանք անոր: Եկէք օծենք մէկս միւսը՝ անոր վերադարձին եւ մեր յարութեան համար: Եկէք լուանք մէկս միւսին ոտքերը՝ նոյնիսկ եթէ ատիկա պիտի ընենք մեր արցունքներով: Թող անոնք հոսին անարգելք մինչեւ որ բաւարար թացութիւն ըլլայ եկեղեցիին ոտքերուն փոշին եւ աղտը լուալու: Եկէք լանք մեր մեղքերուն համար եւ աղաղակենք աշխարհի շուրջ մեր քոյրերուն եւ պզտիկներու հանդէպ եղած անարդարութիւններուն համար: Եթէ առատութեամբ քեզի շնորհուած ողորմութիւնը բաւարար չէ, որ յուզէ քեզ, ապա արտօնէ, որ ստրկացուած դուստրերու ապրած տագնապի անգթութիւնը շարժէ քեզ: Քու արցունքներդ կը լուան ուրիշներու ոտքերը եւ կը մեծարեն մեր Տէրը:

Էգ առիծներու զիրար ողջունելը եւ մաքրելը կը խորհրդանշեն մեր ընդունելութիւն եւ պատկանելիութիւն ցոյց տալը իրարու: Մեր ինչպէս ողջունելը իրարու ցոյց կու տայ, թէ մենք ինչպէս կը տեսնենք զիրար (իբրեւ առաջնորդներ, բարեկամներ կամ աշակերտներ): Թէ ուրիշներ ինչպէս կը տեսնեն քեզ կ'որոշէ, թէ ինչպէս պէտք է մաքրուիս: Էգ առիծներու օրինակը մեզի ցոյց կու տայ, թէ մենք մեր վրայ արժէք կ'աւելցնենք երբ ուրիշները կը մաքրենք: Ատիկա ճանչնալով, մենք ցոյց կու տանք պատիւ, խոնարհութիւն եւ յարգանք: Մեր ողջոյնը պէտք է ըսէ. «Ես գիտեմ քեզ: Ես արժէք կու տամ քեզի: Ես հոս եմ քեզի համար: Իսկ ինչ կը վերաբերի այն ցեխին, որ քու վրադ կայ դժուար տեղէ անցած ըլլալու պատճառով, եկուր օգնեմ քեզի, որ լուանք ատիկա»:

Ես նոր վերադարձած եմ էգ առիծներու հետ իմ երկու օրուայ հերթական հանդիպումներէս մէկէն: Երբ մենք հանդիպինք, փաթթուկ կ'ընենք: Մենք հանգիստ եւ մխիթարուած կը զգանք մէկս միւսին ներկայութեամբ: Վեց հոգի էինք եւ առած էինք պանդոկի երկու սենեակներ: Միասին քնացանք եւ արթնցանք: Ամբողջ օրուան ընթացքին միասին սուրճ խմեցինք եւ կերակուր կերանք: Մեր գիշերանոցներով հաւաքուեցանք եւ ողջունեցինք ու մաքրեցինք զիրար մինչեւ ուշ գիշեր: Մենք սորված ենք ըլլալ բաց եւ մեր իրական անձին պէս վարուիլ իրարու

հետ: Ընկերուիներու այդ քաղցր կորիզին մէջ կան սիրտը կոտորած մայրեր, անորոշութեան մէջ ապրող մը, յոգնած պատերազմիկ մը եւ խանդավառ երագող մը:

Առաջին գիշերը անցուցինք զիրար ողջունելով: (Կը սիրեմ քեզ: Կարօտցած եմ քեզ:) Եւ յաջորդ օրը արթնցանք՝ սկսելու համար մաքրելու (*կրուսինկ*) գործընթացը: (Ինչպէս ես:) Մենք գիտենք մէկս միսի զօրաւոր կէտերը եւ տկարութիւնները: Կը հասկնանք, որ երբեմն մեր զօրաւոր կէտերը կրնան նաեւ մեր տկարութեան դռները ըլլալ: Մենք իրարու դժուար հարցումներ կը հարցնենք: Միասին կը խնդանք, կու լանք, կ'աղօթենք եւ կը խոստովանինք վախեր, մեղքեր եւ տկարութիւններ: Կը փակենք մէկս միսին, մեր զաւակներուն եւ մեր ապագային համար աղօթելով: Տուն կը վերադառնամ սպառած, բայց տիգերս մաքրուած, վրայիս փոշին թօթուուած եւ ոտքերս լուացուած:

Ես սորված եմ ընդունիլ այդ մաքրութեան գործընթացը, որովհետեւ գիտեմ, որ այդ առիւծ քոյրերս կը սիրեն զիս եւ միշտ հոն են ինծի համար: Ես գիտեմ, թէ ղվ են անոնք իմ կեանքիս մէջ, եւ անոնք գիտեն, թէ ես ղվ եմ իրենց կեանքին մէջ: Երբեմն չենք համաձայնիր կէտերու շուրջ, բայց ատիկա չի նշանակեր, որ մեր կապը կը խզենք կամ կ'անջատուինք իրարմէ:

Ո՞վ են այն կիները կեանքիդ մէջ, որոնք պէտք ունին ողջոյնիդ: Քու աշխարհիդ մէջ ղվ կրնայ օգտուիլ քնքոյշ կամ հոգածու մաքրուիլէ մը: Կայ մէկը, զոր կրնաս հրաւիրել, որ մաս կազմէ քու մաքրուելու գործընթացիդ:

Էգ Առիծները Ռազմավարական Են



Եռանդ եւ արդարութեան խորաթափանցութիւն՝ անոնց, որոնք կ'առաջնորդեն եւ որոշումներ կու տան, ոյժ եւ քաջութիւն՝ անոնց, որոնք կը պահպանեն եւ կը պաշտպանեն:

ԵՍԱՅԻԻ 28.6
(ԲԱՌԱՑԻՕՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՏԸ ՄԱՍԷՃ
ՏԱՐԲԵՐԱԿԷՆ)

Էգ առիծները արօտադաշտի ամենազօրաւոր արարածները չեն, բայց ինչ որ իրենց կը պակսի զօրութեան իմաստով տեղը կը գոցեն ռազմավարութեամբ եւ սիրտով: Մեր առիծ քոյրերը միասին կը գործեն իբրեւ իրարու ազգական եղող էգերու ռազմավարական խումբ մը: Խումբին մէջ կան քոյրեր, մօրաքոյրներ/հօրաքոյրներ, մայրեր, դուստրեր եւ զարմիկներ: Բոլորն ալ մօտիկ կամ հեռու ազգական են իրարու եւ հետեւաբար լաւ գիտեն մէկը միւսի զօրաւոր կէտերը եւ տկարութիւնները: Երբ հարցը կը վերաբերի կերակուրի համար որսի ելլելու, կորսուած կորին մը փնտռելու կամ խումբի կրտսերները մարզելու կամ պաշտպանելու, իրաքանչիւր էգ առիծ խումբին մէջ ունի իր դերը եւ ներդրումը: Եկէք սկսինք որսի ելլելու նիւթով: Երեք կարեւոր գործօններ կան էգ առիծներու որսի ելլելուն մէջ. ժամանակ, պահուլտիլ եւ մօտենալ: Էգ առիծին համար ճիշդ ժամանակը որոշելը ոչ միայն ճակատագրական է, այլեւ ատիկա ամէն բան է: Էգ առիծները սորված են հմտութիւն մը, որ լաւ կ'ըլլայ, որ մենք

ալ որդեգրենք. սպասել մինչեւ որ ժամանակը նպաստաւոր ըլլայ քեզի համար: Էգ առիծին համար ժամանակը եւ լոյսը կարեւոր են՝ գիտնալու համար, թէ Երբ պէտք է որսալ: Ան կ'որսայ երբ իր միջավայրը ամէնէն նպաստաւորն է իրեն համար. մթնշաղին եւ լուսաբացին: Ոչ ոք կրնայ անելի առջեւ բերել արեւնամուտը կամ ուշացնել արեւուն ելլելը, ուստի էգ առիծները կը համբերեն եւ միտումնաւոր կերպով կը գործեն: Երբ լոյսը թեթեւ կ'ըլլայ, ատիկա կ'օգնէ, որ ան անելի լաւ պահուըտի, ինչ որ կ'օգնէ, որ անելի մօտենայ իր որսին: Գիշերը ավիրիկեան տափաստաններու անասուններուն մեծ մասին տեսողութիւնը կը պակսի, մինչ առիծներունը եղածին պէս կը մնայ (ասոր մասին յետագային անելի պիտի խօսինք):

Լուսաւորումը ի նպաստ իրեն ըլլալով, անոր կեդրոնացումը կ'ըլլայ ճիշդ ժամանակը եւ առնելիք դիրքը որոշելու վրայ:

Ընդհանրապէս էգ առիծները կը պահուըտին բաց տարածքներու մէջ: Օրուայ լոյսին տակ գրեթէ բնաւ աչքառու չեն ըլլար: Անոնք իրենք զիրենք կը դիրքաւորեն իրենց որսին ետեւի կողմը: Երբ էգ առիծ մը իր լաւագոյն դիրքը գտնէ, կը ցածնայ: Նախիրի մը վրայ էգ առիծի մը ազդեցութիւնը սովորական չէ բնաւ: Անոր ներկայութիւնը հետզհետէ կը զգացուի տափաստանին վրայ եւ անոր ամէնէն մօտիկ եղողները խուճապի կը մատնուին եւ կը ցրուին: Վախի մէջ եղող այդ անասունները կը դառնան տեսնելու եթէ էգ առիծը սկսած է հալածել: Բայց ան չէ շարժած տակաւին: Ժամանակը չէ հասած: Ան անշարժ է եւ գրեթէ աննկատելի՝ ոսկեայ խոտերուն մէջ: Ան կրնայ մրափել իսկ սպասելու ատեն, բայց խորունկ քունի մէջ չի մտներ: Ան պարզապէս իր ոյժը կը հաւաքէ մինչ կը սպասէ ճիշդ ժամանակին, որպէսզի քայլ առնէ: Խրտչած նախիրը կը հանդարտի, եւ էգ առիծը կը մոռցուի: Նախիրները կը ցածնան երբ արածելու կը սկսին: Մարզուած համբերութեամբ մը, առիծը արդէն մէկ մասը դարձած է այդ բնապատկերին, եւ անոր որսը հանդարտած է եւ ինքզինք վտանգելու չափ հանգիստ կը զգայ արդէն անոր ներկայութեան մէջ: Եւ ահա ան ձեռք ձգած է այն անտարբերութեան մթնոլորտը, որուն կը յուսար: Հիմա էգ առիծը կը սկսի մտադրուած կերպով գործել:

Էգ Առիւծները Ռազմավարական Են

Մինչ մթնշաղը կը մօտենայ, էգ առիւծը սողոսկելով կը սկսի մօտենալ, դանդաղ եւ գետինին մօտիկ: Անոր մեծ թաթերը գրեթէ անձայն կերպով կը շարժին: Գլուխը ցած, ան չափուած դադարներ կ'առնէ՝ իր եւ իր որսին միջեւ գտնուող տարածութիւնը չափելու համար: Իր ոստումը յաջող ըլլալու համար, անակնկալի գործօնը եւ մօտիկութիւնը չափազանց կարեւոր են: Ան չի հասնիր այծեամի արագութեան:

Յանկարծ էգ առիւծը դուրս կը ցատկէ թուփին ետեւէն: Սարսափահար այծեամը կը ցատկէ իր տեղէն անդին՝ հազիւ ազատելով մարմինին ետեւի բաժինը էգ առիւծին սուր ճանկերովը բզկտուելէն: Հետապնդումը կը սկսի: Պահի սարսափէն տարուած, այծեամը չի գիտեր, թէ կ'երթայ դէպի ծուղակ: Ուրիշ էգ առիւծ մը կը կտրէ անոր ճամբան առջեւէն: Ան ճամբան կը շեղէ անկէ խուսափելու համար, բայց ուրիշ էգ առիւծի մը ճամբուն մէջ կը գտնէ ինքզինք: Սպաննելը արագ կ'ըլլայ եւ գրեթէ բարեգութ կերպով:

Արդեօք մեր առաջին էգ առիւծէն վրիպեցան այծեամը: Կրնայ ըլլալ, որ ան յաջողի, կրնայ ըլլալ նաեւ որ ձախողի, բայց մէկ բան հաստատ է, որ ան մաս կը կազմէ զգուշօրէն կազմակերպուած ծրագիրի մը: Էգ առիւծները միակ մեծ կատուններն են, որոնք միասնաբար կ'որսան: Վագրերը, ընձառիւծները, յովազները եւ *չիթաները* առանձին առանձին որսի կ'ելլեն, բայց էգ առիւծները՝ միասին: Անոնք շատ վարպետ որսորդներ են: Իրաքանչիւր էգ առիւծ իր դիրքը կ'առնէ եւ կը կատարելագործէ իր որսալու ձիրքերը՝ իր խումբի քոյրերուն ներկայութեամբ: Ծանօթ է, որ արու առիւծները կը ներխուժեն նախիրի մը վրայ՝ փորձելով բռնել ինչ որ կրնան: Առիւծը վերջապէս ահարկու սպաննող մըն է: Բայց էգ առիւծները չեն աճապարեր... կը պարեն: Անոնց համակարգուած որսը ապշեցուցիչ է: Ատոր համար է, որ էգ առիւծը կը համարուի *որսալու հմտութեան գագաթնակէտը*:

ՓՐՈՈՒԷՍ (ՀՄՏՈՒԹԻՒՆ)

Կը սիրեմ այս բառը՝ *հմտութիւն* [անգլերէնով՝ *փրոուէս*]: Կը սիրեմ անիկա արտասանելու ատեն անոր տուած զգացումը: Դուն ալ փորձէ, այո, արտասանէ՝ փրորրորոոոոււէէէսսսս:

Ժամանակն մըն է, որ ես *փրոուէսը*՝ հմտութիւն բառը դիտումնաւոր կերպով կը գործածեմ խօսակցութիւններուս ընթացքին: Միշտ ալ յօնքեր վեր կ'ելլեն երբ այդ բառը հնչէ: *Փրոուէսը* ուրիշ բառերու նման ձանձրացուցիչ ըլլալու չափ շատ գործածուած եւ իր իմաստը արդէն սպառած բառ մը չէ: Էգ առիծին նման *փրոուէսը* իր մէջ կը կրէ սքանչելիի չափ մը եւ անոր գիրերուն մէջ կայ խորհրդաւորութիւն մը:

Ինծի հետ միասին ճամբորդող երիտասարդուհիները յաճախ կը փորձեն այդ բառը ուրիշ բառերու հետ զուգորդել՝ տեսնելու համար, թէ որ բառերուն հետ կը յարմարի անիկա: Անոնք կը խօսին ճամբորդութեան *փրոուէսի*, ուղեբերի (ճամբորդութեան պայուսակներու) *փրոուէսի*, ուղեբերը լեցնելու *փրոուէսի* եւ աղօթելու եւ քարոզելու *փրոուէսի* մասին: Մենք կ'ուզենք, որ *փրոուէսը* ըլլայ նոր նորոյթ բառը:

Աւելի լուրջ ըլլալով, *փրոուէսը* ունի իմաստներ, զորս կ'ուզեմ, որ կիները ուսումնասիրեն եւ արտայայտեն: *Փրոուէսը*՝ կամ հմտութիւնը, որսալ բառին հետ կապելու կողքին (ինչպէս նախապէս ըսինք, թէ՛ էգ առիծը կը համարուի որսալու հմտութեան գազաթնակէտը), կ'ուզեմ նաեւ *փրոուէս* բառը կապել կատաղի, ռազմավարական, նորարարական, կրթութիւն, ոճ եւ հաղորդակցութիւն բառերուն հետ:

Ընտրութիւնները անվերջ են: Բայց էգ առիծը չի խօսի *փրոուէսի* մասին. ինք *փրոուէսն* է:

Եթէ *փրոուէսը* ունենար ձեւ մը, անիկա վստահաբար կատուի ձեւ կ'ըլլար: Հակառակ անոր որ ես ավելի շուները կը սիրեմ, չեմ կրնար *փրոուէսը* նմանցնել իմ *տորքի* տեսակի շունիկիս: Եթէ *փրոուէսը* ունենար գոյն մը, կը պատկերացնեմ, որ ոսկեգոյն կ'ըլլար: Մակերէնը: Ալիքի տպաւորութիւն տուող մորթ մը: *Փրոուէսը* պիտի քալէր նպատակաուղիւ ձեւով, եւ երբ պէտք ըլլար՝ գողի պէս զգոյշ եւ պահուրտելով: *Փրոուէսը* (Հմտութիւնը) կարելի չէ պարտադրել կամ կեղծել, բայց անիկա կարելի է եւ պէտք է զարգացուի: Եթէ ունիս *փրոուէս*, գործածէ՛ զանիկա: *Փրոուէսն* է, որ էգ առիծը հզօր կը դարձնէ: Ան չի վախնար իր ոյժէն: Ընդհակառակը անիկա կը մխիթարէ զինք:

Ըստ իմ համակարգիչիս վրայ *էնքարթա*

Էգ առիծները Ռազմավարական Են

համայնագիտարանին, *փրոուէսը* իր մէջ կը պարունակէ՝ կարողութիւն, ծիրք, փորձագիտութիւն, ձեռնհասութիւն, ճարտարութիւն, ընդունակութիւն եւ ատակութիւն բառերը: Առաւել, սիրեցի հետեւեալ երկսայրի սահմանումը. «1. Բացառիկ կարողութիւն, ծիրք եւ ոյժ: 2. Բացառիկ արիութիւն կամ քաջութիւն»:

Էգ առիծին նման, դուն ալ *փրոուէս* ունիս: Բացառիկ կարողութիւն, ոյժ կամ քաջութիւն կան, որոնք կը սպասեն, որ իրականացուին կեանքիդ մէջ: Անիկա կրնայ պահուրտած ըլլալ՝ սպասելով, որ մէկը քաջալերէ, որ զարգացուի, բայց բնաւ մի՛ կասկածիր անոր հոն ըլլալէն: Աստուած ծիրքեր եւ կարողութիւններ կը պահէ մեր խորերը: Մեր պարտականութիւնն է զանոնք մէջտեղ հանել եւ մարգել: *Փրոուէսը կ'ըսէ. Ամէն բան չեմ գիտեր, ամէն բան չեմ կրնար ընել, բայց այն ինչ որ գիտեմ, կ'ընտրեմ լաւ ձեւով ընել:* Մեր հմտութեան (*փրոուէսի*) մարգերը մէջտեղ կ'ելլեն խաղերու միջոցաւ՝ մարզախաղեր կամ երեակայական խաղեր: Մէջդ կայ բան մը, որ կ'ուզէ դուրս ելլել եւ խաղալ: Քու հմտութեանդ մարզը կրնայ ըլլալ այն բանը, որ կը խանդավառէ քեզ երբ կը դիտես էգ առիծներուն ըրածները: Ըլլայ որսալը, պաշտպանելը կամ մարգելը, անոնք կ'ընեն այն ինչ որ լաւ գիտեն ընել:

Եւ ինչո՞ւ էգ առիծները կը համարուին որսալու հմտութեան գազաթնակէտը: Անոնք միասնաբար կ'որսան՝ առանց մրցակցութեան եւ առանց միասնականութիւնը կոտրելու: Ոչ մէկ կնոջ բաժինը կամ ներդրումը ատելի կարեւոր է քան ուրիշինը: Մենք պէտք ունինք, որ դուն *դուն ըլլաս*: Ուրիշի մը տաղանդները կրկնօրինակելը ոչ մէկուն օգուտին կը ծառայէ, եւ ամէնէն քիչը քու օգուտիդ: Իրայատուկ ըլլալը չի ծնիր բաղդատութիւններու, ընդօրինակելու կամ մրցակցութեան միջոցաւ: Իրաքանչիւր էգ առիծ կը սրէ կամ կը մարգէ իր անձնական ծիրքերը: Լաւ կ'ըլլայ, որ մենք ալ անոր օրինակին հետեւինք:

Ուստի քանի որ ձեակերպուած ենք իբրեւ Քրիստոսի մարմինի գերազանցօրէն կազմուած եւ հրաշալիօրէն գործող անդամները, *եկէք պարզապէս յառաջ*

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

Երթանք ըլլալու այն ինչ որ ստեղծուած ենք ըլլալու, առանց նախանձելով կամ հպարտօրէն մենք մեզ իրարու բաղդատելու կամ փորձելու ըլլալ բան մը, որ չենք: (Հռոմայեցիներուն 12.5-6, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի Տը Մասէճ տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Յաճախ մաս կը կազմեն խորհրդաժողովներու, որոնց ընթացքին կը ծառայեն շատ տաղանդաւոր պատգամաբերներ: Անոնց պատգամներէն ետք խօսք առնելը քիչ մը կը վախցնէ զիս: Բայց փորձելով տեսած եմ, որ լաւագոյն բանը իմ լաւագոյն տարբերակս ըլլալն է: Յիշեցէք, որ ոչ ոք ձեզ կը հրաւիրէ իր աշխարհէն ներս, որպէսզի ձեռացնես ըլլալ ուրիշ մէկը: Ան քեզ կ'ուզէ:

Երբ կը կարդամ «գերազանցօրէն կազմուած եւ հրաշալիօրէն գործող» եզրը վերի համարին մէջ, կը յիշեմ մեր բառը՝ *փրոուէս* եւ այն իրականութիւնը, որ քու ստեղծումդ կ'արտայայտէ թէ՛ վախ եւ թէ՛ սքանչելիք: Աստուած քու մէջդ վախի հոգի մը չդրաւ, այլ՝ սիրոյ, զօրութեան եւ զգաստութեան հոգի մը (տես Բ.Տիմոթէոսի 1.7): Դուն ահաւոր կերպով ստեղծուած ես, ոչ թէ ահի (վախի) մէջ կամ վախկոտ: Դուն, սիրելիս, երկրի վրայ դրուեցար այնպիսի ժամանակի մը մէջ երբ Աստուծոյ սքանչելիութիւնը արտայայտելը սարսափ կը պատճառէ աշխարհի շուրջ: Դուն կանչուած ես ըլլալու մարմինին հրաշալիօրէն գործող մէկ մասը, որ իմ կարծիքովս ուրիշ արտայայտութիւն մըն է *փրոուէսի*:

Աստուած բոլորը կը հրաւիրէ, որ իրենց դիրքերը առնեն, էգ առիծներուն պէս, իւրաքանչիւրը իր տեղին մէջ, իւրաքանչիւրը իր զօրութեան մէջ:

Էգ առիծի որսալու գերակայութիւնը կը մեծարուի շատ մը ափրիկեան երկիրներու մէջ: Նշանաւոր պատերազմիկներու կամ որսորդներու կը շնորհուի «էգ առիծի մը որդին» տիտղոսը: Էգ առիծն է, որ որսորդութեան մէջ կը մարզէ կորիւնները, թէ՛ արունները եւ թէ՛ էգերը: Սուրբ Գիրքերուն մէջ նոյնիսկ կը նշուի ատիկա.

Էգ Առիւծները Ռազմավարական Են

Ինչ էգ առիւծ մըն էր

Մայրդ առիւծներուն մէջ:

Ան կը նստէր երիտասարդ առիւծներու խումբի մը մէջ:

Անոր կորիւնները մեծցան:

Ան իր կորիւններէն մէկը մեծցուց

Եւ հասունութեան հասցուց՝ ուժեղ երիտասարդ առիւծ մը,

Որ սորվեցաւ որսալ: (Եզեկիէլի 19.2-3, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակէն)

Բայց էգ առիւծներուն հոգածութիւնը սահմանափակուած չէ միայն իրենց կորիւններուն. շատ մը անասուններ իրենց ձագերուն հոգ կը տանին: Էգ առիւծները նաեւ հոգ կը տանին իրենց խումբին մէջ աւելի տարեց կամ վիրաւորուած էգ առիւծներուն: Անոնք են այն սոսինձը (փակցնելիքը), որուն շնորհիւ առիւծներու խումբը կը շարունակէ գործել իբրեւ առողջ միաւոր մը:

Արու առիւծը երեւելի ներկայութիւն մըն է, որ չի վախնար իր ներկայութիւնը յայտնի դարձնելէ: Ասոր հակառակ, էգ առիւծին զօրութիւնը գրեթէ անհետանալու իր կարողութեան մէջն է: Որսալու ատեն իր ներկայութիւնը յայտնի դարձնելը չի ծառայեր իր նպատակին: Եւ երբ հարցը կը վերաբերի կորիւններուն կերակուր հայթայթելուն, պահուրտիլը արդիւնք բերող առաւելութիւն մըն է: Եթէ իր կորիւնները վտանգի մէջ ըլլան սակայն, ատիկա բոլորովին ուրիշ պատմութիւն է:



Կրնան սորվեցնել էգ առիւծին, որ դարանակալ կ'ըլլայ՝ որսալու համար

Եւ գոհացնէ ւխորժակը իր կորիւններուն,

Մինչ անոնք նստած կ'ըլլան իրենց որջին մէջ: (Յոր 38.39, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակէն)

Այս հատուածը Աստուծոյ եւ Յորի միջեւ խօսակցութիւն մըն է: Այդ խօսքերու փոխանակումէն կը հասկնանք, թէ Աստուած է, որ էգ առիւծին որսալ, դարանակալ ըլլալ եւ

իրեն սպասող կորիւններուն համար կերակուր հայթայթել կը սորվեցնէ: Արդեօք աստիկա ինչպէս կը կատարուի: Արդեօք մեր փառաւոր Աստուածը բանալիներ եւ նշաններ դրած է էգ առիծին միջավայրին մէջ, որպէսզի շարունակ մարզէ կամ սրէ անոր ձիրքերը: Արդեօք ստեղծագործութեան մէջ Աստուծոյ շունչով դրուած տարրերը կը սորվեցնեն էգ առիծին որսալ եւ խնամե՞լ, ճիշդ ինչպէս ստեղծագործութեան սքանչելիութիւնը կ'արթնցնէ մեր փափաքը զԱստուած փնտռելու եւ մէկս միւսը սիրելու:

ԿԱՏԱՂԻ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

Կ'ուզեմ ընդլայնել որսալու ձեր գաղափարը: Որսալը միայն *սպաննելը* եւ յետոյ *ուրելը* չէ: *Որսալը* նաեւ իր մէջ ունի հետապնդում, փնտռտուք կամ նոյնիսկ օգնութեան հասնիլ: Որսալ բայը կը նշանակէ՝ ետեւէն վազել կամ հալածել, հետապնդել, դարանակալ ըլլալ, հետեւիլ կամ սպասման մէջ ըլլալ: Հետաքրքրական կը գտնեմ, որ այդ բայերը կը գործածուին նաեւ մեր զԱստուած փնտռելուն հետ կապակցաբար:

Աստուած, Աստուած, քեզի կը վազեմ՝ կեանքի համար.

Կատաղիօրէն կը հետապնդեմ: (Սաղմոսներու 7.1, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Ա՛յդ որսը խանդավառող է: Ես կը սիրեմ «կատաղի կերպով զԱստուած հետապնդել»ու գաղափարը: Այդ նկարագրութիւնը քիչ մը հեռու է առաւօտեան կէս քուն կէս արթուն վիճակի մէջ Աստուծոյ հետ ժամանակ անցընելէն: Այդ բառերը կը նկարագրեն հրատապութիւն, արագութիւն եւ կեդրոնացած հետապնդում: Այս համարին կարելի է մօտենալ ուրիշ անկիւնէ մը եւս: Անիկա կրնայ ըլլալ նկարագրութիւնը կատաղի եւ վտանգաւոր բանէ մը փախչելու կամ ալ՝ վայրի հետապնդում մը Աստուծոյ: Երկուքն ալ կ'ըլլան: Երկուքն ալ խանդավառութիւն կը պատճառեն, հակառակ անոր

Էգ Առիւծները Ռազմավարական Են

որ կը նախընտրեն կատաղի, վտանգաւոր հետապնդումը Աստուծոյ: Ես նաեւ կը սիրեմ այն գաղափարը, որ ան կրնայ կատաղիորէն զիս հետապնդել: Երբեմն երբ պատուհանէս դուրս նայելով կը տեսնեմ մեր դիմացի լեռնաշղթան, կը փսփսամ. «Աստուած, ի՞նչ ես դուն: Ես կ'ուզեմ ինքզինքս ճանչնալ քու չարքաշ զօրութեանդ մէջ»:

Վստահաբար ոչ ոք կը պատկերացնէ, որ կրնայ որսալ զԱստուած: Ծիծաղելի է նոյնիսկ մտածել, թէ մէկը կրնայ պատճառ դառնալ, որ Աստուած իր հաւասարակշռութիւնը կորսնցնէ: Բայց մենք կրնանք անոր մէկ նշոյլը տեսնել: Իր մէջ կը գտնուի ամէն բան, որ ես կրնամ փնտռել: Սիրելիս, ես ասկէ առաջ չեմ զգացած որսի ելլելու այս ձեւի հրատապ կոչ մը: Ժամանակն է, որ կատաղի կերպով հետապնդենք զԱստուած:

Ճիշդ ինչպէս էգ առիւծը համբերութեամբ կը սպասէ, ճիշդ ժամանակով սպասելն ալ մաս կը կազմէ զԱստուած հետապնդելուն: Սաղմոսողը գրեց.

Առտուն մտիկ ըրէ իմ ձայնիս, Տէր:

Ամէն առտու ես իմ խնդրանքներս քեզի կը բերեմ
եւ կը սպասեմ ականկալութեամբ (Սաղմոսներու 5.3,
բառացիորէն թարգմանուած Աստուածաշունչի *Նիոյ*
Լիվինկ Թրանսլէյշըն տարբերակէն)

Որսալ նաեւ կը նշանակէ՝ նայիլ, փնտռել կամ բանի մը ետեւէն ըլլալ: Ասոնք կ'արձագանգեն ամէն ինչ որ պատմեցինք: Վերջապէս, *որս* կը նշանակէ նաեւ՝ փնտռող մը, որոնում, հետապնդում կամ հետախուզութիւն:

Իբրեւ Ամենաբարձրին դուստրերը, մենք կ'որսանք պատասխաններ, իմաստութիւն եւ զօրութիւն: Մենք կը հետապնդենք զԱստուած, որպէսզի ան բռնէ մեզ. մէյ մը որ բռնուինք, մենք անոր լոյսն ու կեանքը պիտի արտացոլացնենք ուրիշներու:

Քու գեղեցկութիւնդ եւ սէրդ կը հետապնդեն զիս

Կեանքիս բոլոր օրերուն:

Ես կը վերադառնամ տուն՝ Աստուծոյ տունը

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

Կեանքիս մնացեալ օրերուն: (Սաղմոսներու 23.6,
բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը
Մասէճ* տարբերակէն)

Կրնաս իմաստութիւն եւ խրատ գտնել եթէ ընկերանաս կիներու, որոնք ոչ միայն զԱստուած հետապնդած են, այլեւ Աստուծոյ կողմէ՛ ալ հետապնդուած են: Այդ կատաղիօրէն արթնցած կիներէն իրաքանչիւրը ունի Աստուծոյ սիրոյ եւ գութի մէկ մասը՝ զանոնք ուրիշներու արտայայտելու համար: Երկիրը կը սպասէ տեսնելու, թէ ինչ կը պատահի երբ Աստուծոյ գեղեցկութիւնը եւ սէրը ոչ միայն լեցուցած կ'ըլլայ այլեւ զօրաշարժի կ'ենթարակէ խումբ մը կիներ: Դուն, սիրելիս, մաս կը կազմես ճշմարտութեան հետախուզութեան մը եւ լուծումներու յայտնաբերումի մը: Աստուածային կապերու մեր փնտռուողքը վերջաւորութեան կու գայ մեր Առիծին՝ Յիսուսի յայտնութիւնով: Կան հարցումներ, որոնք միայն կիները գիտեն ինչպէս հարցնել: Կան պատասխաններ, զորս Աստուած մեզի վստահած է, որ յայտնաբերենք: Ատիկա իրագործուած տեսնելու համար մենք կը հաւաքուինք:

Մեր առիծ քոյրերը նախքան որ որսի ելլեն, կը հաւաքուին: Հանգիստ կ'ընեն միասին, կ'անօթենան միասին, իրենց մկանները կը ձգտեն եւ ոտքի կ'ելլեն միասին: Միասնաբար կ'առնեն իրենց որսի դիրքերը, եւ երբ կ'աւարտեն՝ միասնաբան խնճոյք կ'ընեն: Ապա պատմութիւնը ինքզինք կը կրկնէ: Դիրքերը կրնան փոխուիլ, բայց վերջաւորութեան էգ առիծները բոլորը միասին կ'ըլլան:

Մարկարէթ Միտ փայլուն մշակութային մարդաբան մըն էր, որ երկար տարիներ այլազան մշակոյթներու մէջ մխրճուելէ ետք ըրաւ հետեւեալ դիտարկութիւնը. «Քոյր ըսուածը հաւանաբար ամէնէն մրցակցական յարաբերութիւնն է ընտանիքին մէջ, բայց երբ քոյրերը կը մեծնան, անիկա կը դառնայ ամէնէն զօրաւոր յարաբերութիւնը»:

Երբ կարդացի այդ բառերը, մտածեցի՝ *ճիշդ արիկա տեղի կ'ունենայ: Մենք կը մեծնանք իրարու հետ:*

Երբ կը գրէի *Սնուցանել* վերնագիրով գիրքս եւ ուսումնասիրութիւններ կ'ընէի անոր համար, նկատեցի, որ չկային աստուածաշնչական օրինակներ քոյրերու,

Էգ Առիւծները Ռազմավարական Են

որոնք ռազմավարական կամ նպատակաուղղուած կերպով կ'ապրէին այս կեանքը միասնաբար: Իրականութեան մէջ յուսահատութիւն մը տիրեց վրաս եւ կը մտածէի, թէ ո՛րկէ կրնայի գտնել օրինակ մը կիներու, որոնք մտերիմ ընկերներ էին եւ կը վստահէին իրարու: Շատ կ'ուզէի գիտնալ: Գիտէ՞ք, մենք ոտքի պիտի չելլենք էգ առիւծներու նման բացի եթէ Աստուծոյ Հոգին առաջնորդէ մեզ այդ ընթացքին:

Մինչ Սուրբ Գիրքերուն մէջ օրինակ մը կը փնտռէի, զգացի, որ Աստուծոյ Հոգին կը փսփսայ ինծի. *Դուստրերու վերաբերող գլուխը հիմա կը գրուի: Ըսէ՛ իմ դուստրերուս, որ իրենց կեանքերը լաւ կերպով գրեն:*

Ես չեմ ուզեր, որ դուն քու ներդրումիդ ո՛րքան ճակատագրական եւ ո՛րքան կարեւոր ըլլալը չգիտնալու վտանգին մէջ ըլլաս: Կը հասկնամ, թէ ինչ կը նշանակէ ատիկա: Մենք անհատաբար եւ հաւաքական կերպով կը գրենք պատմութիւնը Աստուծոյ դուստրերուն. նոյն ընտանիքին պատկանող քոյրերու խումբ մը, որոնք կը հաւաքուին՝ իրենց կեանքը լաւ կերպով գրելու համար եւ որոնք իրենց իրաքանչիւր բառը, արարքը եւ ընտրութիւնը կարելի եղածին չափ ազդեցիկ կը դարձնեն: Այդպէս հաւաքուելով, կը տեսնեմ ինչպէս Աստուծոյ էգ առիւծները ոտքի կ'ելլեն կատաղի զօրութեամբ, շնորհքով եւ ձիրքով:

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ՀԵՏԱՊՆԴԵԼ

Մենք ոչ միայն միասնաբար ոտքի կ'ելլենք զԱստուած եւ անոր պատասխանները հետապնդելու համար, այլեւ ժամանակն է, որ մենք ոտքի ելլենք նաեւ արդարութեան հետապնդումի համար: Արդարութիւն հետապնդելը չի պահանջեր, որ մէկը իրաւաբանութեան մէջ համալսարանական վկայական ունենայ: Արդարութիւնը պէտք է ապրելակերպ մը ըլլայ: Մեր երկիրը հիմնուեցաւ իբրեւ պատսպարան անարդարութեան զոհերու: Մեր օրինական համակարգը մեր դատարանները հաստատեց իբրեւ ճշմարտութեան սրբարաններ: Վերջին շրջանին տրուած վճիռները մեզի մտածել կու տան, թէ անոնք վերածուած են խաբեբայ փաստաբաններու խաղավայրներու:

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

Եռանդ եւ արդարութեան խորաթափանցութիւն՝
անոնց, որոնք կ'առաջնորդեն եւ որոշումներ կու տան,
Ոյժ եւ քաջութիւն՝ անոնց, որոնք կը պահպանեն
եւ կը պաշտպանեն: (Եսայիի 28.6, բառացիօրէն
թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ*
տարբերակէն)

Այս համարը շատ կարեւոր բան մը կը յայտնէ:
Արդարութիւնը շարք մը օրէնքներ գործադրելէ աւելին
է: Անիկա կը պահանջէ մտածողութիւն եւ եռանդ: Մենք
պէտք ունինք իմաստութեան խորաթափանցութեան,
որպէսզի թէ՛ դատաւորը եւ թէ՛ *ժիրին* յանգին վճիռներու,
որոնք վերջաւորութեան երկիրը եւ անոր քաղաքացիներուն
արարքները պիտի առաջնորդեն անարդարութենէ՝
արդարութեան: Ճշմարիտ արդարութեան պահպանումը կը
պահանջէ զօրաւոր եւ գերազանց պաշտպաններ:

Կար ժամանակ մը երբ *արդարութիւն* բառը կը գործածուէր
մեր երկիրը նկարագրելու համար: Երբ փոքր էի, մեր
գերհերոսներէն մէկուն կարգախօսն էր՝ «Ճշմարտութիւն,
արդարութիւն եւ ամերիկեան ձեւը»:

Դատաստանը նորէն պիտի հիմնուի արդարութեան վրայ,
եւ առաքինի սիրտ ունեցողները պիտի հետապնդեն
զանիկա: (Սաղմոսներու 94.15, բառացիօրէն
թարգմանուած Աստուածաշունչի *Նիու Լիվին*
Թրանսլէյշըն տարբերակէն)

Մենք պէտք ունինք արդարութեան վերարթնութեան: Կը
վախնամ, որ մեր դատական համակարգը կորսնցուցած
է իր արդարութեան գիտակցութիւնը: Առաքինի սիրտերը
արդարութիւն կը հետապնդեն: Երբ սիրտդ արդար է,
անարդարութիւնը զգուելի կը դառնայ քեզի համար: Եւ
ատիկա ոչ միայն դատական համակարգին մէջ. անիկա
պէտք է տիրէ կեանքի ամէն մարզի մէջ: Մինչ կը սպասենք
կառավարութեան, եկեղեցիին կամ ուրիշ մէկու մը, որպէսզի
մեր աշխարհի սխալները սրբագրեն, կիներ եւ պզտիկներ
կը մեռնին: Առնուազն կը կարծեմ, որ բոլորս ալ կրնանք

Էգ առիծները Ռազմավարական Են

համաձայնիլ, թէ արդարութիւն գործադրելուն մէջ կայ նաեւ պզտիկները վսասէ փրկելը:

Իրենց *փրոուէսը* (հմտութիւնը) գործածելով, էգ առիծները միասնաբար կը գործեն՝ պաշտպանելու համար խումբի կորիւնները: Երբ վտանգ կը սպառնայ կորիւններուն, էգ առիծը կը դառնայ ռազմավարական պատերազմիկ մը: Դիտեցի վաւերագրական *վիպէօ* մը, ուր *քոպրա* մը յաջողած էր մտնել առիծներու խումբի մը մէջ: Էգ առիծները հանդարտ մնացին հակառակ անոր որ մահաբեր *քոպրա* մը կար իրենց միջեւ: Իբրեւ հակադարձութիւն, անոնք հանդարտօրէն, կանոնաւոր կերպով եւ անմիջապէս կորիւնները փոխադրեցին ապահով վայր մը: Իւրաքանչիւրը բռնեց իրեն մօտիկ եղող կորիւնը անոր վիզէն, եւ արագօրէն իրենց պզտիկները հեռացուցին այդ մահաբեր օձէն: Էգ առիծներէն մէկը մնաց կորիւններուն հետ մինչ անոր քոյրերը վերադարձան միանալու անոնց, որոնք հոն մնացած էին հետեւելու համար օձին շարժումներուն:

Մեծապէս տպաւորուած էի անով, որ էգ առիծները իմաստութիւնը ունէին գիտնալու, թէ պէտք չէր օձին հետ գործ ունենային մինչ կորիւնները իրենց շուրջն էին: Կորիւնները ոչ միայն վտանգի մէջ պիտի ըլլային, այլեւ անոնք իրենց պիտի խանգարէին: Կորիւնները ապահով տեղ տանելէ ետք, ժամանակն էր դիմագրաւելու *քոպրան*: Էգ առիծներու այդ բնագոյային մօտեցումը մեծապէս մարտավարական եւ ռազմավարական էր:

Էգ առիծները կատաղաբար պաշտպանողական վերաբերում ունին իրենց խումբի *բոլոր* կորիւններուն նկատմամբ: Էգ առիծը երբեք պիտի չվտանգէ ուրիշ էգ առիծի մը կորիւնները ճիշդ ինչպէս երբեք պիտի չվտանգէ իր կորիւնները: Էգ առիծները միայն չեն որսար միասնաբար. անոնք կորիւններուն ալ կը հոգան՝ անոնց մայրութիւն կ'ընեն միասնաբար: Նոյնպէս ալ մենք պէտք է յանձնառութիւն վերցնենք երկրի բոլոր պզտիկները հեռու պահելու համար ամէն բանէ, որ կը վտանգէ անոնց կեանքը կամ կը սպառնայ անոր: Բաւարար չէ մտահոգուիլ միայն մեր զաւակներով: Այսինքն՝ պէտք է ճակատամարտեր մղենք մեր երկրին մէջ

եւ արտասահմանի: Եկէք ոտքի ելլենք մեր դրացիներուն համար, թէ մօտիկ եւ թէ հեռու:

Էգ առիծի պաշտպանելու այդ մղումը այնքան զօրաւոր է, որ ան կորիւններուն պաշտպանութիւնը ի մտի կ'ունենայ նոյնիսկ նախքան յղանալը: Բնութեան մէջ դրուած աստուածային մէկ նախատեսութեամբ, էգ առիծները ունին կարողութիւնը ներդաշնակելու իրենց վերարտադրութեան շրջանները: Ատիկա կ'արտօնէ իրենց, որ նոյն ատեն յղանան եւ նոյն ատեն ծննդաբերեն:

Ուստի հիմնականօրէն ամբողջ խումբը միասնաբար կը յղանայ: Էգ առիծները գիտեն, թէ նոյն տարիքի կորիւնները ատելի մեծ հաւանականութիւն ունին գոյատեւելու՝ նոյն չափի կերակուր եւ մարզում ստանալուն համար: Նոր քալել սկսած ըլլալով ասդին եւ անդին ինկող այդ բոլոր ոսկեայ կորիւններուն գոյութիւնը կը նշանակէ, թէ կաթ տուող մայրերու պակասութիւն չկայ բնաւ: Քանի որ առիծներու խումբ մը կը բաղկանայ նոյն ընտանիքին պատկանող էգ առիծներէ, էգ առիծները կաթ կու տան մէկը միւսին կորիւններուն եւս եւ կը մարզեն զանոնք: Մեծ առաւելութիւն կայ խումբին մէջ նոյն փորձառութիւնը եւ չափը ունեցող ուրիշ եղբայր-քոյրերու հետ մեծնալուն մէջ: Ատիկա կը նշանակէ նոյնանման կշռոյթ՝ ուտելու, հանգիստի, խաղալու եւ մարզումի, ինչ որ վերջ ի վերջոյ կ'արտադրէ զիրար լրացնող ձիրքի մակարդակներ, ինչ որ կ'օգնէ ոչ միայն կորիւններուն այլեւ իրենց ապագայ խումբի գոյատեւման:

Էգ առիծները իրենց կորիւնները կը մարզեն՝ անոնց առջեւ ճիշդը ընելով: Վայրի բնութեան մէջ շատ տեղ չկայ սխալելու: Եթէ մայրերուն ձիրքերը կորիւններուն չփոխանցուին, կորիւններուն գոյատեւումը սպառնալիքի տակ կ'ըլլայ եւ խումբին ապագան կը վտանգուի:

Էգ առիծները որսալ կը սորվին խաղալու ձեւով: Երբ տակաւին փոքրիկ կորիւններ են, կը սորվին տարրերը: Մայր առիծները երկնցած կ'ըլլան մինչ փոքրիկները կը ցատկոտեն եւ կը խաղան: Մայրերն ալ կը մասնակցին անոնց խաղին: Մայրերը ոչ միայն կ'ըմբշամարտին կորիւններուն հետ, այլեւ անոնք իրարու հետ ալ լաւ կը խաղան: Անոնք կ'արտօնեն, որ կորիւնները իրենք զիրենք զօրաւոր զգան

Էգ Առիւծները Ռազմավարական Են

մինչ կը գլորուին, խաղալով իրարու վրայ կը յարձակին եւ կը ցատկոտեն: Եթէ կորին մը հեռանայ խումբէն, մայր առիւծ մը միշտ հոն կ'ըլլայ՝ այդ անկարգ կորինին երեսին մոնչալու կամ թաթով զարնելու:

Այդ ամբողջ ուրախ խաղի ժամանակը նպատակի մը կը ծառայէ. անիկա երեսան կը հանէ խումբի իւրաքանչիւր անդամի զօրաւոր կէտերը: Աստուած կը սիրէ երբ մենք կը խնդանք եւ կը զուարճանանք: Կրնանք ըսել, որ երբ կը խաղանք, մենք մեզ կարծես «նորէն կը ստեղծենք» [զուարճանալուն անգլերէն բառը *ռիքրիէյշըն* է, որ կազմուած է *ռի* (նորէն) եւ *քրիէյշըն* (ստեղծագործութիւն) բառերէն-Թարգմանիչ]:

Որովհետեւ դուն միշտ իմ կողքիս կեցար,
Ես ազատ եմ վազելու եւ խաղալու: (Սաղմոսներու
63.7, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի
Տը Մատճ տարբերակէն)

Երբ գիտցայ, որ էգ առիւծները միասնաբար կը յղանան եւ կը ծնանին որպէսզի բաժնեկցին իրենց պզտիկները կերակրելու եւ մարզելու գործերը իրարու հետ, լսեցի Աստուծոյ Հոգին կը փսփսայ. *Լիսա, ամէն զաւակ արժանի է գոյատեւման հաւասար առիթի: Ամէն զաւակ պէտք է պաշտպանուի, սնուցանուի, մարզուի եւ իր պէտքը ստանայ: Աշխարհի պզտիկներուն բարօրութիւնը մեր պարտականութիւնն է: Մենք պէտք է ռազմավարական ձեւով շարժինք անոնց համար արդարութեան մեր հետապնդումին մէջ:*

ԿԱՏԱՂԻ ՊԱՏԱՍԽԱՆ

Ո՞րքան ասելի մարդ-մայրը պէտք է փրկէ իրենը չեղող զաւակները:

Մայր մը կրնայ մոռնալ իր կաթնկեր մանուկը:
Կրնայ ան սէր չզգալ իր ծնած զաւակին հանդէպ:
Բայց նոյնիսկ եթէ ատիկա կարելի ըլլար,

Ես քեզ չեմ մոռնար: (Եսայիի 49.15, բառացիորէն թարգմանուած Աստուածաշունչի *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Այնքան աներեւակայելի է, որ մայր մը կարենայ մոռնալ իր զաւակը, որ կենդանի Աստուած կ'ըսէ. «Նոյնիսկ եթէ ատիկա կարելի ըլլար...»: Այս համարը կ'ընդգծէ, թէ ճիշտն անբնական է կիներուն համար, որ չսնուցանեն զաւակ մը կամ գիտակցաբար վնաս հասցնեն անոր: Յաւով կ'ըսեմ, որ կ'ապրինք ժամանակի մը մէջ երբ աներեւակայելին իրականութիւն դարձած է: Բարձրացած է յաճախականութիւնը այն լուրերուն, որոնք կը վերաբերին մայրերու, որոնք կը վտանգեն իրենց զաւակներուն ապահովութիւնը եւ բարօրութիւնը՝ թմրանիւթերու, ալքոլի կամ դրամի համար:

Վերջերս լրատուամիջոցները լուսարձակի տակ առին դժուար կացութիւնը երկու աղջիկներու, որոնք առեւանգուած էին երկու տարբեր զոյգերու կողմէ: Քաջ աղջիկներէն մէկը գերի բռնուած էր տասնութ տարի, եւ այդ սարսափելի ժամանակաշրջանին ան ծնունդ տուած էր երկու դուստրերու եւ խնամած էր զանոնք: Միւս աղջիկը առեւանգուած էր իր ընտանիքի տունէն եւ պահուած ինը ամիս: Այդ երկու աղջիկներն ալ բռնաբարուած էին եւ չարչարանքի ենթարկուած չար յափշտակողներու կողմէ: Երկու պարագաներուն ալ անզաւակ կիները ամբաստանուեցան իբրեւ մեղսակից իրենց ամուսիններուն ոճիրներուն:

Երբ տղաս Ալեքը գիտցաւ, որ կիներ ալ օգնած էին այդ ոճիրներու գործադրութեան, ցնցուեցաւ: «Ինչո՞ւ կիները չփրկեցին այդ աղջիկները,» հարցուց ան՝ չկարենալով պատկերացնել աշխարհ մը, ուր կիներ չուզեցին փրկել ազտիկներ:

Միակ պատասխանը, որ կրցայ տալ այն էր, որ այդ երկու կիները վատառողջ էին: Անոնք ընտրութիւն ունէին եւ որոշեցին լուռ մնալ: Պատճառով մը երկուքին մէջ ալ մայրական սիրտը չէր արթնցած:

Մենք ընդհանրապէս կը մտածենք, թէ կիները

տղամարդոց կողմէ կը ճնշուին, բայց միշտ այդ չէ պարագան: Այդ կիները գիտէին, թէ ինչ տեղի կ'ունենայ եւ ոչ մէկ բան ըրին: Իրականութեան մէջ անոնք կարելի դարձուցին այդ աղջիկներուն բռնաբարումը:

Հետաքրքրական է նշել, թէ երկու տղամարդ բռնաբարողներն ալ սխալ ծեով մեկնաբանելով աստուածաշնչական համարներ՝ ենթակայութեան ոչ-առողջ տեսակէտներ գործածած էին թէ՛ իրենց կիները եւ թէ՛ այդ աղջիկները խաբելու համար: Իրենց ամուսինները հաճեցնել ուզող այդ կիներուն մեղսակցութիւնը ցնցեց ամբողջ երկիրը:

Ատոր հակառակ, երբ իր կորիւններուն վտանգ մը կը սպառնայ, էգ առիծը ինքզինք կը դնէ անոնց եւ վտանգին միջեւ: Ես կարդացած եմ պատմութիւններ, ուր էգ առիծները նոյնիսկ իրարու հետ գործակցած են ընդդէմ իրենց խումբի արու առիծներուն երբ արու առիծներուն արարքները սպառնալիք կը հանդիսանային խումբի կորիւններուն համար:

Բնաւ չէ եղած ժամանակ մը երբ ւելի կարետոր ըլլար, որ կիները ճիշդ կերպով բացատրէին Աստուծոյ Խօսքը եւ զանիկա ապրէին: Պէտք է իմաստուն եւ մտածուած տեսակէտ մը հաստատենք սեռի (տղայ/աղջիկ), ենթակայութեան եւ առանց պայմանի ամուսնական հնազանդութեան նման նիւթերու մասին: Աստուծոյ միտքը բնաւ անիկա չէր, որ այդ սկզբունքները ուրիշները վտանգի մէջ դնեն: Անոնք առողջութեան եւ բարիքի համար եղած են:

Մեր պատասխանատուութիւնն է պաշտպանել պզտիկները եւ խոցելի վիճակի մէջ եղողները: Էգ առիծին նման մենք ալ պէտք է միշտ աշխատինք պզտիկները հանել վտանգի ճամբայէն: Աստուածատուր բնագոյով մը էգ առիծները կը հասկնան այն ինչ որ կարգ մը կիներ մոռցած են. մայրեր կը փրկեն պզտիկները նոյնիսկ եթէ իրենց զաւակները չեն անոնք:

Ըստ երեւոյթին, պարզապէս ծնունդ տալը քեզ մայր չ'ըներ: Քանի մը ամիս առաջ մեր երկիրը ապշած մնաց անուշիկ, ժպտադէմ հինգ տարեկան աղջնակի մը պատմութեան դիմաց, որուն մայրը ծախած էր զինք սեռային ստրկութեան համար: Գտնուեցաւ աղջնակին դիակը Հիսիսային

Քարոլայնայի անտառոտ շրջաններուն մէջ գիւղական ճամբու մը քով: Կը սարսռամ երբ կը մտածեն, թէ լուրերէն ուրիշ ինչեր պիտի լսենք մինչեւ այս գիրքը տպագրութեան երթայ:

Ես շնորհակալութիւն կը յայտնեմ Աստուծոյ, որ մեր մեծամասնութեան համար, այդ տեսակի մայրական անջատում տակալին աներեակայելի է: Սուրբ Գիրքերը կը կանխագուշակեն, որ պիտի գան դաժան ժամանակներ երբ իրենց ուղին կորսնցուցած մարդիկ պիտի մոռնան, թէ ինչ կը նշանակէ մարդ ըլլալ (տես Հռոմայեցիներուն 1.26): Մարդ ըլլալ կը նշանակէ ըլլալ աստուածանման եւ մեր մէջ ունենալ խիղճ մը եւ Աստուծոյ սիրտէն չափ մը: Աստուած կը բարկանայ երբ կեանքը այդպէս կ'արժեզրկուի եւ երբ սեռային առարկաներու կը վերածուին պզտիկներ, որոնք իր պատկերին նմանութեամբ ստեղծուած են: Գիտնալով, որ ատիկա է անոր կեցուածքը, մենք ալ պէտք է նոյնպէս ունենանք կատաղի եւ սիրալիր հակազդեցութիւն մը: Մեզմէ ոմանք պէտք է իրենց տունը բանան՝ որդեգրութեան ճամբով եւ ներս առնեն վտանգի մէջ եղող կամ անցանկալի պզտիկներ: Պէտք է առատաձեռն ըլլանք եւ կախեալ չըլլանք կառավարութենէն ճշդելու համար այն ինչ որ սխալ կը տեսնենք: Եկէք ճշմարտապէս սիրենք մեր դրացիները:

Եթէ լուռ մնանք ճնշումի եւ անարդարութեան դիմաց, օր մը անոնցմէ յաղթուելու վտանգին դիմաց կրնանք գտնել մենք զմեզ: Ես կը փափաքիմ տեսնել, որ եկեղեցին ոտքի կ'ելլէ ճշդելու մարդկային մաքսանենգութեան եւ սեռային ստրուկներու առետուրի անարդարութիւնները: Անոնք երբեք չեն հեռանար իմ միտքէս եւ յաճախ պատգամներուս մէջ տեղ կը գտնեն: Վերջերս օդանաւին մէջ քովս նստած կնոջ հետ կը բաժնեկցէի իմ մեծ փափաքս տեսնելու ամբողջ աշխարհի կիները կը միանան ձեռով մը եւ դէմ կը դնեն այդ հարցերուն: Ան ինձի դարձաւ եւ խիստ ոճով մը ըսաւ. «Ինչ իշխանութեամբ կը խօսիս այդ նիւթին մասին»:

Անոր հարցումին լրջութիւնը ամբողջութեամբ անակնկալի բերաւ զիս: Յնցուած, պահ մը կանգ առի եւ ապա ըսի. «Ինչ իշխանութեամբ պիտի համարձակիմ լուռ մնալ»: Ոճը մեղմացնելով, փորձեց բացատրել, թէ կ'ուզէր գիտնալ, թէ որեւէ ուսումնական կամ արհեստավարժական

ատակութիւններ ունէի կամ ոչ: Առանց աչքերս շեղելու, ուղղակի իրեն նայելով բացատրեցի, թէ ըստ իմ գիտցածիս, օրէնք չկար անարդարութեան դէմ ձայն բարձրացնելու դէմ, եւ թէ հասկցածիս համաձայն մէկ «արհեստավարժ» պատասխան չկայ այդ նիւթին համար: Այդ ոճիրներուն հսկայութիւնը պիտի պահանջէ շատերու մասնակցութիւնը:

Կոպիտ անարդարութիւն մըն է պզտիկներէն առնել իրենց անմեղութիւնը եւ զանոնք դարձնել չափահասի մը սեռային ցանկութիւններուն եւ անառակութեան ստրուկը: Ինչպէս կրնայ *մեզմէ՛ նեւէ մէկը* լուռ մնալ երբ այդքան մեծ թիւով պզտիկներու ձայները լռեցուած են:

Ինչպէս կրնանք չաղաղակել այդ հարցին համար: Տակաւին քանի՛ անգամ պէտք է լսենք «Միակ բանը, որ անհրաժեշտ է, որպէսզի չարը յաղթէ այն է, որ բարի մարդիկ բան մը չընեն» խօսքը, որպէսզի ոչ միայն հաւատանք անոր, այլեւ գործենք անոր հիման վրայ: Երբ արտասահման կ'ըլլամ եւ կը քալեմ չափազանց աղքատ վայրերու մէջ, մայրերուն աչքերուն կը նայիմ եւ կը փորձեմ կռահել, թէ ինչ կը մտածեն: Արդե՞ծք կը հարցնեն. *Իմ զաւակս ատելի նում՛զ արժէքաւոր է քան քուկինդ:*

Պէտք չէ արտօնենք, որ անոնք այդպէս մտածեն: Երբ Հարաւային Ասիա էի, մայր մը երկու անգամ իր զաւակը առաջարկեց ինծի: Ուրիշ մայր մը նոյնիսկ իմ թեւերուս մէջ դրաւ իր զաւակը: Երբ շալկեցի այդ մանուկը, մայրը մարմինի շարժումներով հասկցուց ինծի, թէ ինչ կ'ըսէր, մինչ խօսքեր կը խօսէր, որոնք անհասկնալի էին ինծի համար: Ուրիշ աղջնակի մը գեղեցկութեան մասին հիացմունքի խօսքեր ըսելէս ետք, մայրը թարգմանիչիս միջոցաւ հարցուց ինծի եթէ կ'ուզէի ունենալ իր դուստրը: Կը տեսնէք անոնց յուսալքութիւնը: Անոնք փորձեցին իրենց զաւակները ինծի տալ՝ ամբողջովին անձանօթ մէկու մը, որ իրենց լեզուն չէր խօսեր անգամ: Թերեւս կը յուսային դրամ առնել, բայց կը հաւատամ, որ դրամէն ատելի անոնք յոյս կ'ուզէին իրենց զաւակներուն համար: Զաւակ մը ծախելը աներեւակայելի է մեր մշակոյթին մէջ, բայց ինչ պիտի ընէիր եթէ այլեւս ոչինչ ունէիր տալու զաւակիդ:

Եկէք մեր զաւակները մեծցնենք այնպէս, որ անոնք

գիտակից ըլլան, որ աշխարհը եւ անոր աղբիւրները կը բաժնեկցին այդ կիներուն զաւակներուն հետ: Կը հաւատամ, որ Աստուած կ'ուզէ, որ դուն եւ ես ճիշդ ատիկա ընենք՝ այդ նիւթերուն կարելութեան մասին խօսելով:

ՓՐԿԵԼ ՊՁՏԻԿՆԵՐԸ

Այո, մեծ ցաւ կայ երկիրներու մէջ, ուր չքաւորութիւնը կը մերկացնէ մարդկային հոգին, բայց կան ճակատամարտեր տեղական դաշտին մէջ, որ մեր ուշադրութիւնը կը պահանջեն: Երբ կը գրէի այս գիրքը, հետաքրքրական պատահար մը պատահեցաւ: Ակնարկ մը ունեցայ, թէ ինչ կը նշանակէ ռազմավարական *փրոուէս* (հմտութիւն) երբ անիկա կը կիրառուի տեղական կրթական համակարգին մէջ: Կ'ըսեմ ակնարկ, որովհետեւ իմ մասնակցութիւնս պարզապէս այցելութիւն մըն էր, եւ յարգանքով կ'ուզեմ նշել, թէ կան շատեր, որոնք աշաւորջ եւ գործունեայ կերպով կ'աշխատին կրթական համակարգին եւ գործընթացներուն մէջ: Շնորհակալութիւն կը յայտնեմ Աստուծոյ ուսուցիչներուն եւ կրթական մարզի վարչական պաշտօնեաներուն համար, որոնք առանց յոգնելու կ'աշխատին՝ սեղմ պիտօճէներով որակաւոր կրթութիւն հայթայթելու համար: Ատոր համար կան ժամանակներ երբ անոնք պէտք ունին մեր օգնութեան:

Շաբթուան մէջ երեկոյ մըն էր երբ ամէնէն կրտսեր տղաս Արտընը ընթերցանութեան պարտականութիւն մը ունէր: Քանի որ շատ յոգնած էր *պասքէթ*ի փորձերուն պատճառով, խնդրեց, որ ես իրեն համար կարդամ: Կը վախնար, որ եթէ ինք կարդար, քունի անցնէր: Մեր ընտանիքի մնացեալ անդամները մեծ սենեակն էին՝ աղմկոտ կերպով կը հետեւին *ֆուլթայրի* խաղի մը, ուստի մենք ամփոփուեցանք իմ ննջասենեակս:

Մինչ կը կարդայինք, ես հետզհետէ սկսայ մտահոգուիլ գիրքին պարունակութեամբ: Պատմութեան մէջ կային հետեւեալ նիւթերը. պատանիներու անձնասպանութիւն, բարբարոսութիւն (քանդել-փշրել), զոյգի եւ զաւակի բռնաբարութիւն, վայրագութիւն, ոչ չափահասներու ալքոլի գործածութիւն, ալքոլամոլութիւն, ծնողներու կողմէ լքուիլ եւ խանութներ կողոպտել: Ճիշդ այն ատեն երբ կը մտածէի, որ

ատկէ աւելի վատ չէր կրնար ըլլալ, հասանք շատ առարկելի սեռային հատուածի մը:

Տղաս ինծի դառնալով ըսաւ. «Ես այս գիրքը կարդալ չեմ ուզեր այլեւս»: Յետոյ ինծի ըսաւ, որ ուրիշ գայթակղեցուցիչ հատուածներ ալ կային անոր մէջ: Հարցը այն էր, որ այդ գիրքի ընթերցումը պահանջուած էր երկրորդական վարժարանի առաջին դասարանի գրականութեան դասանիւթը առնող բոլոր տղոցմէ: Որոշեցի առտու հեռաձայնել դպրոց եւ պահանջել, որ Արտընին կարդալու ուրիշ գիրք մը նշանակուի: Յաջորդ առտու երբ խօսեցայ ուսուցիչին հետ, ան համաձայն գտնուեցաւ, որ Արտըն ուրիշ գիրք մը կարդայ իր այդ պարտականութեան համար: Հեռաձայնը գոցեցի՝ մտածելով, որ լաւ լուծումի մը հասանք, բայց օրուան ընթացքին յետագային բաներ պատահեցան, որոնք համոզեցին զիս, որ աւելին պէտք էր ընէի: Դպրոցի օրէնքներուն համաձայն, իր առարկելի պարունակութեան պատճառով, այդ գիրքը ծնողական հաւանութեամբ միայն կրնար տրուիլ աշակերտներուն: Անդրադարձայ, որ մնացեալ ծնողները գաղափար չունէին գիրքին պարունակութենէն: Վերջ ի վերջոյ միակ պատճառը, որ ես տեղեակ եղայ այն էր, որ ես տղուս համար կարդացի զանիկա: Սովորական պայմաններու մէջ ես ալ տեղեակ պիտի չըլլայի:

Ճիշդ էր, որ միայն իմ զաւակս պաշտպանուէր անոր պարունակութենէն: Այդ գիրքը արդեօք ինչ տեսակետներ պիտի կազմէր պոռնկագրութեան, սեռային յարաբերութիւններու, ծնողներու, արքայի, գողնալու, վայրագութեան եւ անձնասպանութեան շուրջ դասարանի մնացեալ տղոց քով: Ունենալով այն գիտութիւնը, որ ես ունէի, կրնամ յի լուռ մնալ: Արդեօք իմ պատասխանատուութիւնս չէր պաշտպանել այդ միւս զաւակները եւ ծնողները:

Համացանցի վրայ գրութիւն մը (*պլոկ*) հրապարակեցի՝ անոր պարունակութեան շուրջ արթնութիւն բերելու եւ ուրիշներու նեցուկը ապահովելու ճամբով դպրոցը տեղեակ պահելու համար, թէ առանձինս չէի մտահոգութեանս մէջ: Դեռ քսանչորս ժամ չէր եղած երբ աւելի քան հինգ հարիւր հոգի (անոնցմէ շատերը ուսուցիչներ) ընդառաջեցին՝ ըսելով, որ իրենք ալ գիրքը անպատշաճ գտած էին: Անոնցմէ ոմանք

տան մէջ իրենց զաւակներուն դաս տուող մայրեր էին, որոնք ըսին, թէ այդ ձեւի բաներն էին պատճառը, որ իրենք իրենց պզտիկները հանած էին հանրային դպրոցներէն:

Ես հարցականի տակ չէի առներ այդ պատմութիւնը գրելու հեղինակին իրաւունքը: Իմ մտահոգութիւնս այն էր, որ այդ գիրքը պահանջուած ընթերցանութեան նիւթ էր տասնչորս տարեկաններու համար: Այդ գիրքը պոռնկագրութիւն կը ջատագովէր: Սեռային մաքսանենգութիւնը մօտէն կապուած է պոռնկագրութեան հետ: Ոչ-առողջ նկարներ կրնան աներեւակայելի ձեւերով աղաւաղել երիտասարդի մը տեսակէտը կիներու նկատմամբ: Այդ գիրքին մէջ այնպէս կը ներկայացուէր, որ պոռնկագրութեան հետ միացած գիջութիւնը բնական վարմունք մըն էր տասնչորս տարեկան պատանիներու համար: Պոռնկագրութիւնը ունի զօրութիւնը ստեղծելու մտայնութիւն մը, որ կը հպատակեցնէ եւ ծուղակը կը ձգէ իր զոհերը (արու եւ էգ): Այդ խախտումը կրնայ անծին ապագայի սեռային յարաբերութիւնները արատաւորել կնատեցութեամբ [կիները ատելու հոգեբանական վիճակ մը- Թարգմանիչ], զգացական եւ սեռային անջատումով եւ սեռային մոլութիւնով, որոնք բոլորն ալ ճամբայ կը բանան սեռային մաքսանենգութեան դիմաց:

Գիտէի, որ մեր տեղական կրթական համակարգը կը նպատակադրէր արժանիք ներշնչել երիտասարդ-երիտասարդուհիներուն մէջ: Անոնք ազդու քաղաքականութիւններ կամ օրէնքներ որդեգրած էին այդ նպատակին հասնելու համար, բայց ձեւով մը այդ գիրքը ներս սողոսկած էր: Տնօրէնին հետ տեսնուելու ժամադրութիւն մը առի՝ իրեն զգուշացնելու համար, թէ կարգ մը օրէնքներ խախտուած էին: Ես իմ մտահոգութիւնս յայտնեցի, ըսելով, թէ ըլլալով մէկը, որ տեսած էր սեռային մաքսանենգութեան հետեւանքները, ահագանգ մը զգացած էի կիները իբրեւ սեռային առարկաներ ներկայացուելու վերաբերեալ:

Շաբթուան ընթացքին այդ գիրքը վերցուեցաւ: Տնօրէնութիւնը ուրախ եղաւ, որ գիրքերու ընտրութեան գործընթացին մէջ տեղի ունեցած սխալ մը երեւան ելած էր, եւ կարգ մը փոփոխութիւններ որդեգրեց, որպէսզի ապագային այդպիսի պարագաներ չկրկնուին:

Հանրային դպրոցներու անձնակազմը կը բաղկանայ մարդոցմէ, որոնք յանձնառութիւն վերցուցած են պզտիկները կրթելու: Մեզմէ ոեւէ մէկուն նման, անոնք ալ կրնան սխալներ գործել եւ դատողութեան բացթողումներ ունենալ: Փոխանակ անոնց դէմ յարձակում գործելու, ատելի լաւ չէ՛ անոնց քովէն քալել իբրեւ կրթական գործընթացին մէջ դաշնակիցներ եւ քաջալերել լաւագոյնը *բոլոր* պզտիկներուն համար, փոխանակ միայն մերը պաշտպանելու:

Մտահոգութիւնս յայտնելէ ետք, դպրոցը անդրադարձաւ, որ այդ գիրքի ընթերցանութիւնը պահանջուած էր բոլոր առաջին տարուայ դասարաններուն համար, եւ տղուս դասարանը պատահաբար առաջինն էր, որ սկսած էր կարդալ: Որովհետեւ ահազանգ հնչեցուցինք եւ դպրոցը նեցուկ եղաւ մեզի, մեծ թիով պատանիներ զերծ մնացին գայթակղեցուցիչ եւ առարկելի նիւթեր կարդալու այդ բարոյական խախտումէն:

Այդ ամբողջ գործընթացին մէջ ես Քրիստոնեայ ըլլալու քարտս չխաղցայ բնաւ: Չպոռացի-չկանչեցի դպրոցի ուսուցիչներուն կամ վարչութեան դէմ: Ես անոնց դիմեցի իրենց որդեգրած օրէնքին հիման վրայ: Հարց մը մատնանշելու կողքին, ես տրամաբանական լուծում մը առաջարկեցի: Անոնց յայտնեցի, թէ ես նպատակ ունէի մինչեւ վերջ երթալու այդ հարցին մէջ: Ձեզմէ ոեւէ մէկը կրնայ նոյնը ընել:

ԺԱՄԱՆԱԿՆ Է ՈՐՍԱԼՈՒ

Աստուած քեզ եւ զիս կը հրաւիրէ, որ մաս կազմենք որսի արշաւի մը: Մինչ կը փնտոռենք եւ կը հետապնդենք զինք, պիտի գտնենք մեզի պէտք եղած իմաստութիւնն ու պատասխանները: Ամուսնալուծումներով եւ զգացական անկապութեամբ բաժան-բաժան եղած աշխարհի մը մէջ, պէտք ունինք երկինքէն ներշնչուած բարեկամութիւններու եւ ռազմավարական յարաբերութիւններու, որպէսզի մարզենք եւ պաշտպանենք մէկս միւսի զաւակները: Մեր աշխարհի կորսուածներուն եւ վտանգի մէջ եղող պզտիկներուն ազատումը իրականացնելու համար, պէտք պիտի ըլլայ

երկինքէն ներշնչուած ռազմավարութիւններ եւ լուծումներ կիրարկել: Ոչ մէկ մարդ կղզի մըն է: Մենք ասոր մէջն ենք միասնաբար: Այդ պատճառով ինչ որ դուն կ'ընես՝ ինծի կ'ազդէ, ինչ որ ես կ'ընեմ՝ քեզի կ'ազդէ: Համադրուած ջանքերով մենք կրնանք ալիքը շեղել մեր ընտանիքներէն, եկեղեցիներէն եւ համայնքներէն: Մենք կ'ապրինք ժամանակի մը մէջ, ուր մեծ առիթներ կան ընկերային կապակցութիւններ ստեղծելու: Մեր ձեռքն է որոշելը, թէ այդ կապակցութիւնները լաւ նպատակի համար պիտի գործածենք կամ ոչ:

Երբ սկսայ էգ առիծներու մասին ուսումնասիրելու, չէի անդրադարձած, որ առիծները կատուներու ընտանիքի միակ տեսակն են, որ համայնքներու դրութեամբ կ'ապրին: Այն մարզին մէջ, որ էգ առիծ մը տկար է, ուրիշ մը զօրաւոր է: Հոն, ուր էգ առիծ մը կրնայ ձախողիլ, ուրիշ մը կը յաջողի: Եւ այդ բոլորը կը պատահին հզօր արու առիծին ապաստանին տակ:

Նոյնը չէ պարագան առանձին ապրող կատուներուն: Հզօր յովազները, ընծառիծները կամ չիթաները այդ ձեւի թեթիկունք կամ նեցուկի համակարգ չունին: Ամէն անգամ որ այդ մայրերը կը ձգեն իրենց ձագերը՝ որսի եւ կերակուր փնտռելու երթալու համար, վտանգ կայ, որ անոնք վերադառնան եւ իրենց որջը անբերած գտնեն: Վաերագրական *Վիպլէյ*ի մը մէջ լսեցի ցաւալի աղաղակները մայր *չիթայի* մը, որ որջ վերադարձած էր եւ տեսած, որ իր ձագերը չկան: Անոր ձայնը շատ ցաւալի էր մինչ կ'աղաղակէր զանոնք կանչելով ամբողջ գիշերը՝ յուսալով, որ անոնցմէ մէկը ձեռով մը փախուստ տուած կ'ըլլար այդ ջարդէն:

Դուն եւ ես չենք ստեղծուած մեկուսացած ապրելու համար: Չեմ կրնար բառերով արտայայտել անգամ, թէ միսիթարութեան ինչ մեծ աղբիւր եղած է ինծի համար ունենալ ընտանիքէս դուրս մարդիկ, որոնք իրենց զաւակներուն պէս հոգ տարած են զաւակներուս: Մենք օրինուած ենք մարդոցմով, որոնք կը բարձրացնեն մեզ Աստուծոյ գահին առջեւ եւ կը պահպանեն մեզ իրենց աղօթքներով: Նոյնիսկ մարդիկ, զորս բնաւ չեմ տեսած աղօթած են մեզի համար

Էգ Առիւծները Ռազմավարական Են

Եւ միայն յետագային լսած եմ ատոր մասին: Շատեր առատաձեռնօրէն տուած են՝ Աւետարանի տարածման համար եւ կապուածներու ազատագրութեան համար, առանց իսկ գիտնալու, թէ ո՞վ են անոնք: Թող երկինքը առատօրէն վարձատրէ ձեզմէ իրաքանչիւրը, որ ուրիշներու ընտանիքներուն կը հսկէք:

ԱՆՈՐ ՕԴԸ Կ'ԱՌՆԷ

Երբ էգ առիւծը սպաննէ անասուն մը, ան չի պատռեր կամ յօշոտեր իր որսը: Ան կը խեղդէ զանիկա՝ անոր օդի անցքերը գոցելով: Նոյնպէս ալ կը հաւատամ, որ ժամանակն է, որ մենք ալ թշնամիին օդի մատակարարումը կեցընենք: Ատիկա ընելու ձեւերէն մէկը անոր մեր ձայնը, մեր շունչը չտալն է: Շատ յաճախ մենք անոր շատ գործելու առիթներ կու տանք: Պէտք է անոր ոյժը խափանենք՝ մէկս միւսին դէմ չխօսելով: Փոխարէնը եկէք վարպետօրէն գործածենք մեր բառերը՝ շինութիւն բերելու, խրատելու, սրբագրելու եւ քաջալերելու համար:

Երբ որսի կ'երթամ, ես *պէտք* ունիմ ուրիշ կիներու, որոնք կը հասկնան իմ զօրաւոր կէտերս եւ նեցուկ կ'ըլլան ինձի իմ տկար կէտերուս մէջ: Դուն ալ ատոր պէտք ունիս: Ատիկա իրագործելու համար, ես ընտրած եմ դիտումնաւոր կերպով ինքզինքս շրջապատել մարդոցմով, որոնք զօրաւոր են այն տեղերուն մէջ, ուր ես տկար եմ: Իմ աղօթքս է, որ ես ալ կարենամ այդ բարեկամներուս տալ իմ զօրութիւնս այն մարզերուն մէջ, ուր իրենք տկար են: Առողջ, հաւասարակշռուած յարաբերութիւնները անոնք են, ուր իրաքանչիւր անդամ իր ներդրումը ունի:

Թող մեզմէ ոչ մէկը բաւարարուի միայն իր զաւակներուն ապահովութեամբ, այլ՝ աճինք այն հասկացողութեան եւ գիտակցութեան մէջ, թէ աշխարհի բոլոր պզտիկները մեր պատասխանատուութիւնն են: Թող ուշադիր ըլլանք, որ բոլոր պզտիկները վերցնենք վտանգի դիմացէն: Թող չմտածենք, թէ տեղական ազդեցութիւնը իր զօրութիւնը չունի հեռաւոր վայրերու մէջ: Թող այնպէս չհաւատանք, որ մեր դերը անհետեւանք է կամ անկարելի: Եւ թող մեզմէ ոեւէ մէկը

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻՇՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

չերեակայէ, որ կրնայ աշխարհը գրաւել առանձինը:

Միասնական եղէք, մէկ տեսիլքով, ջանք թափելով, որ մարդիկ վստահին Պատգամին, բարի լուրին, առանց որեւէ մէկ ձեռով վհատելու ընդդիմութեան դէմ կամ խուսափելու անկէ: Ձեր քաջութիւնը եւ միութիւնը անոնց ցոյց պիտի տան, թէ ինչ կը դիմագրաւեն. իրենց համար պարտութիւն, ձեզի համար յաղթանակ, եւ երկուքն ալ Աստուծոյ շնորհի: (Փիլիպպեցիներուն 1.27-28, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատճ* տարբերակէն)

Միասնաբար կրնանք ռազմավարական ըլլանք:

Էգ առիծները Կ'ապրին Լոյսի մէջ եւ Կ'որսան Մութի մէջ



Չար մարդիկ դիւրագրգիռ են յանցանքի պատճառով՝ պատրաստ փախչելու նոյնիսկ երբ ոչ ոք կը հալածէ զիրենք. Անկեղծ մարդիկ հանդարտ են եւ **ինքնավստահ՝ առիծներու պէս համարձակ:**

ԱՌԱՎԵՆԵՐՈՒ 28.1 (ԲԱՌԱՑԻՕՐԷՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒՄԾ ԱՍՏՈՒՄԾԱՇՈՒՆՉԻ ՏԸ
ՄԱՍԷՃ ՏԱՐԲԵՐԱԿԷՆ)

Էգ առիծները ոչ միայն բնագոյաբար գիտեն, թէ ինչ բաներու կարող են եւ ինչպէս ընեն այն ինչ որ կ'ընեն (*փրոուէս...*), այլեւ անոնց կեանքերը յարաբերաբար անելի պարզ են: Անոնք հանգիստ կ'ընեն երբ յոգնած ըլլան, եւ կ'որսան ու կ'ուտեն երբ անօթի ըլլան:

Ատկէ դուրս անոնք գլխաւորաբար կը խաղան:

Կրնաս տեսած ըլլալ էգ առիծներ հոս հոն երկնցած հանգիստի մէջ՝ կէս քուն կէս արթուն վիճակի մէջ: Երբեմն անոնք նոյնիսկ իրենց կռնակին վրայ դարձած կ'ըլլան մինչ հանգիստ կ'ընեն ոսկեայ արեւի ճառագայթներուն տակ՝ կարծես ըլլային արեւու ճառագայթ ամբարող վահանակներ, որոնք ոյժ կ'ամբարեն յետագայի գործածութեան համար: Նոյնիսկ ցատկոտող կորիւնները հազուադէպօրէն պատճառ կ'ըլլան, որ հանգիստ ընող էգ առիծները շարժին կամ իրենց տեղէն ելլեն: Երբեմն երբեմն կորիւն մը կրնայ սահմանը անցնիլ եւ ստանալ թեթեւ ապտակ մը իրեն ամէնէն մօտիկ

մամաներէն մէկէն: Բայց անոնցմէ ոչ մէկը ճնշուած կամ լարուած կը թուի, տրուած ըլլալով, որ անոնք օրական շուրջ քսան ժամ կը մրափեն:

Հանգիստի ժամանակէն ետք էգ առիծները ձգտելու շարժումներ կ'ընեն եւ խմբային խաղերու կը մասնակցին, որոնցմէ ետք կ'անցնին իրենց երկրորդ դիրքին, որն է՝ բարձր ահազանգի վիճակը: Սակայն նոյնիսկ այդ վիճակին մէջ, անոնք կեդրոնացած են, բայց ոչ ճնշումի տակ կամ լարուած:

Այդ կեդրոնացած սակայն հանդարտ կեցուածքը ուրիշ ճակատագրական մէկ կէտն է էգ առիծի *փրոուէսին*, զոր մենք՝ դուստրերս պէտք է որդեգրենք: Հետեւեալ համարը մեզի որոշ գաղափար մը կու տայ.

Չար մարդիկ դիւրագրգիռ են յանցանքի պատճառով՝ պատրաստ փախչելու նոյնիսկ երբ ոչ ոք կը հալածէ զիրենք.

Անկեղծ մարդիկ հանդարտ են եւ ինքնավստահ՝ առիծներու պէս համարձակ: (Առակներու 28.1, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Ահա կ'ըսէ՝ հանդարտ, ինքնավստահ եւ համարձակ: Մարդիկ ընդհանրապէս հանդարտը եւ ինքնավստահը չեն կապեր համարձակին հետ, բայց Աստուած կը կապէ: Կրնամ ատիկա տեսնել էգ առիծին մէջ: Անոր կեցուածքը շարունակ կու տայ հետեւեալ պատգամը. «Ես եմ ով որ եմ: Ես հզօր եմ եւ շատ տաղանդաւոր, խաղասէր եւ մահաբեր, հանդարտ, կեդրոնացած եւ հոգատար»:

Կնոջ պէս, էգ առիծն ալ հակասութիւններու հաւաքածոյ մըն է, հակառակ անոր որ այս համարը կը խօսի առիծներու մասին՝ երկու սեռերուն ալ, քանի որ բոլոր առիծները՝ արուները եւ էգերը, ունին այդ կեցուածքը: Թերեւս անիկա պէտք է դառնայ մե՛ր ալ կեցուածքը:

Երբ էգ առիծը չ'որսար, պատճառ չունի շուքին մէջ քալելու: Ան կ'ապրի լոյսին մէջ: Կը հաւաքուի իր քոյրերուն հետ եւ կեանքը կը վայելէ արիւնքեան տափաստաններու

Էգ Առիւծները Կ'ապրին Լոյսի մէջ եւ Կ'որսան Մուօթի մէջ

լոյսով լեցուն բաց տարածքներուն մէջ: Հոն, դաշտի մը մէջ, ուր շուք չկայ, անոնք կը հանգչին, կը խաղան, զիրար կը մաքրեն լգելով, կ'ուտեն, կը մարզեն եւ նոյնիսկ կը զուգաւորուին բաց երկինքի տակ: Բայց *ինչո՞ւ* էգ առիւծը պիտի ամչնայ կամ պահուրտելու պէտքը զգայ:

Իրենց աշխարհին մէջ չկայ թշնամի մը, որ այնքան համարձակ եւ զօրաւոր ըլլայ, որ բացէ ի բաց կռուելու մարտահրաւեր ուղղէ իրենց: Անոնք չեն նահանջեր որեւէ մէկուն դիմաց (բացի երբ ճամբայ կու տան փիղերուն, որոնք գլորուող տակառներու պէս վազելով կ'անցնին): Եւ երբ էգ առիւծը որսի համար դիրք չէ առած, պէտք չունի քողարկուելու: Առիւծները անվիճելի թագաւորները եւ թագուհիներն են իրենց մարզին, եւ իրենց միջավայրի կերակուրի շղթային գլուխը:

Եթէ օդը յատուկ կերպով տաք է, էգ առիւծը կրնայ ընտրել հանգիստ ընել շուքին, բայց ան ինքզինք չի քողարկեր պահուրտելու նպատակով: Ան ընծառիւծին եւ *չիթային* պէս չէ, որոնք առանձին կ'ապրին եւ կ'որսան: Էգ առիւծը պէտք չունի ծառերու վրայ մագլցելու կամ թուփերու տակ կծկտելու, հակառակ անոր որ կարող է ընելու երկուքն ալ: Ո՛չ: Մեր էգ առիւծը իր հանգիստը կ'ընէ առանց վախի, օր ցերեկով, շրջապատուած իր քոյրերով, մօրաքոյրներով, մօրմով եւ զարմիկներով, ինչպէս նաեւ իր ծագերով եւ իր արու առիւծով:

Այս տողերը գրելու ատեն իսկ ես ատիկա ընել կ'ուզեմ: Կ'ուզեմ հանգիստ ընել առանց վախի արեւուն տակ քոյրերու, դուստրերու, զարմիկներու եւ մայրերու հետ, մինչ բոլորս կը ժպտինք փոքրերուն՝ գոհ ըլլալով այն ամբողջական հասկացողութեամբ, թէ մեր ներկայի միջավայրին մէջ չկայ բան մը, որ կարող ըլլայ մեզ պարտութեան մատնելու:

Ես այդ երեւոյթը իրապէս տեսայ երբ Ճոնը եւ ես *սաֆարի* պտոյտի մը ընթացքին հետեւեցանք մայր առիւծի մը, իր արու կորինին եւ երկու էգ կորիններուն հետ: Այնպէս կը թուէր, որ այդ խմբակը աննպատակ կը թափառէր աշնանային բարձրահասակ խոտերուն մէջ: Անոնք կուշտ էին, եւ նկատեցի, որ արեան հետքեր կային իրենց երեսներուն վրայ: Անոնք տակաւին նոր կերած էին իրենց վերջին որսը եւ քիչ մը քնոտ կը թուէին ըլլալ: Հեռուն տեսայ ծառերու

խումբ մը եւ պատկերացուցի, որ հոն պիտի ուղղուէին: Բայց ո՛չ: Ճիշդ այդ ատեն բոլորն ալ ցածցան եւ նստան ճամբուն ծայրը՝ ոչ աւելի քան երեք մեթր հեռու մեր ինքնաշարժէն, մաքրուեցան քիչ մը, գոցեցին իրենց ոսկեայ աչքերը փայլուն արեւուն դիմաց եւ հինգ վայրկեան չանցած բոլորն ալ քնացան:

Հոն էինք՝ խումբ մը մարդիկ զինուած զէնքերով (լաւ, միայն անտառի պահակները զէնքեր ունէին...), հսկայ Ռէյնճ Ռոպլըր տեսակի ինքնաշարժի մը մէջ, եւ առիւծները ոչ մէկ չափով տպաւորուած էին կամ մտահոգ: Ժամանակն էր իրենց առաւօտեան ուշ ժամի մրափին, այդքան պարզ:

ԼՈՅՍԻ ՄԷՋ ԱՊՐԻԼ

Անմիջապէս ինծի եկան շատ մը գաղափարներ եւ պատկերներ թէ՛ լոյսի մէջ ապրիլը ինչ կրնայ նշանակել մեզի համար: Սկսելու համար, անիկա ակնարկութիւն է կեանքդ բաց կերպով ապրելու: Պատուհաններդ եւ դռներդ բաց են ողջունելու լոյսը եւ ընտանիքդ եւ բարեկամներ: Մեր տան մէջ խոհանոցը միշտ բաց է, որովհետեւ տղամարդոցմով լեցուն տան մը մէջ, մէկը միշտ անօթի է: Բայց չկայ մեր առողջութեան եւ գոյատեւման համար աւելի կարեւոր բան քան բաց, լոյսով լեցուած սիրտը:

Բացէք ձեր կեանքերը: Բաց եւ ընդարձակ կերպով ապրեցէք: (Բ. Կորնթացիներուն 6.13, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Այդ պատուէրը անյնքան պարզ է եւ անյնքան ազատագրող, եւ սակայն երբեմն անյնքան սարսափելի: Միայն մենք ունինք իշխանութիւնը բանալու մեր կեանքերը: Նախ եւ առաջ կը սկսինք անկեղծօրէն խօսիլ մեր կեանքին մասին, ապա բաց կերպով կ'ապրինք եւ յետոյ մեր կեանքերը կ'ընդարձակին: Կեանքդ բանալը եւ բաց կերպով ապրիլը երկու մասերէ բաղկացած գործընթաց մըն է: Կրնաս *կեանքդ բանալ*, բայց տակաւին *բաց կերպով չապրիլ*: Կը ճանչնամ մարդիկ, որոնք

Էգ Առիծները Կ'ապրին Լոյսի մէջ եւ Կ'որսան Մուօթի մէջ

Կեանքի որոշ մարզերու եւ յարաբերութիւններու մէջ իրենք իրենց մասին շատ բան կը յայտնեն, բայց եթէ բաց կերպով պիտի ապրէին, շատ անելի բան պիտի յայտնաբերուէր, որ նախապէս ծածկուած էր: Կարգ մը մարդիկ իրենց կեանքի մէկ մարզը կը յայտնաբերեն՝ քողարկելու համար ուրիշ մը:

Սակայն մինչ միտքիս մէջ շարունակ կը հնչեն Պօղոսի բառերը, անոր պատուէրը գրեթէ անդիմադրելի կը գտնեմ: Անիկա պատճառ կ'ըլլայ, որ մեր կեանքերը պատկերացնեմ իբրեւ բացուած նուէրներ մեր կենդանի Աստուծոյն առջեւ: Պօղոսի բառերը մէջս կը պարզեն պատկերը բացուած կեանքերու, որոնք բաց են ստանալու այն ամէնը, որ կը յայտնուի եւ կ'արձակուի վերէն: Բաց կերպով ապրուող եւ հետզհետէ ընդարձակող կեանքեր:

Կ'ուզեմ, որ կեանքդ պատկերացնես շարժումի մէջ. կ'աճի, կը զօրանայ եւ կ'ընդարձակի մինչ դուն կը շփուիս քու անմիջական աշխարհիդ բոլոր երեսներուն հետ:

Բացայայտուած էք հիմա: Քրիստոսի փայլուն լոյսը ձեր ճամբան կը յստակացնէ: Ուստի այլեւս չկայ հոս-հոն գայթիլ: Շարունակեցէք: Լաւը, ճիշդը, ճշմարիտը. ասոնք են ցերեկին յարմար գործերը: Գիտցէք, թէ ինչը կը հաճեցնէ Քրիստոսը եւ ապա ըրէք ատիկա: (Եփեսացիներուն 5.8-10, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակէն)

Կը լսես: Էգ առիծին պէս դուն ալ բաց տեղ մըն ես: Խաւար աշխարհի վախ չկայ քեզի համար: Չկայ ամօթալի, ստուերային տեղ մը, որ կրնայ ազդեցութիւն ունենալ կեանքիդ վրայ: Կը սիրեմ գործի լծուելու այս կանչը: Ճամբան յստակ կամ պարզ է: Սկսէ:

Շատեր կ'ուզեն գիտնալ, թէ ինչ ընելու կանչուած են: Եկէք չբարդացնենք այն ինչ որ Աստուած շատ պարզ ըրած է: Ան մեզ կը կանչէ ընելու բարին, ճիշդը եւ ճշմարիտը: Ասիկա ցանկ մըն է ընելիքներու, որոնք ամօթ պիտի չպատճառեն մեզի եթէ օր ցերեկով յայտնուին: Մենք լոյսի զաւակներ ենք՝ կանչուած ցերեկով գործելու: Մենք կը շրջանցենք

այն գործունեությունները, որոնք կը կատարուին խաւարի աշխարհին մէջ: Մենք կը գիտնանք, թէ ինչ բանը կը հաճեցնէ զԱստուած, եւ ապա պարզապէս կ'ընենք ասիկա:

Քրիստոսի մէջ մեր կեանքը ճառագայթներու պէս է, որոնք շարունակ կ'ընդարձակին եւ կ'երկարին՝ սկսեալ այն ապշեցուցիչ պահէն երբ անոր փառաւոր լոյսը նուաճեց մեր խաւարը: Իւրաքանչիւր նետ կարելի է նմանցնել արեւու լոյսի եւ տաքութեան ճառագայթի մը, որ արձակուեցաւ այդ օրը:

Կը սիրեմ երբ օդը թարմ եւ ջերմ կ'ըլլայ այնքան, որ կրնամ տանս պատուհանները բանալ եւ օդափոխել տունս: Տեսակ մը խանդավառութիւն կը զգամ երբ զեփիւռը ներս կը մտնէ եւ կը վերցնէ նեխած օդը՝ մինչ թարմութեան հոսանքներ կը պտըտին տանս մէջ: Ասիկա համով վայրիութիւն մը կը բերէ ներս, եւ մեր տան մէջ օդը կը թուի ընդլայնիլ եւ որդեգրել շարժումի հոսանք մը, որ իր հետ ներս կը բերէ դուրսի անոյշ հոտերը: Նոր կտրուած խոտի, ծաղկող եղրեանիի, շոճիի խեժի եւ անձրեւով մաքրուած աշխարհի մը սքանչելի հոտերը կը խուժեն մարդկային բնակութեան վայրի պատերէն ներս:

Դուրսի վայրի աշխարհը ներս բերելու անհրաժեշտութիւնն է պատճառը, որ մենք մեր ուշադրութիւնը կեդրոնացուցինք էգ առիծին վրայ, քանի որ ան ձեւով մը շնորհալի կերպով կը մարմնացնէ դիւրութեան եւ զօրութեան, հանգիստի եւ հմտութեան ու վայրիի եւ ապահովի ցնցիչ հաւասարակշռութիւնը, ինչ որ կը տեսնենք նաեւ հետեւեալ համարին մէջ:

Յոգնամծ էք: Սպառամծ: Ձանձրացամծ էք կրօնէն:
 Ինծի եկէք: *Առանձնացէ՛ք ինծի հետ եւ ձեր կեանքը
 պիտի վերստանաք: Ես ձեզի ցոյց պիտի տամ
 ինչպէս իրական հանգիստ ընէք: Քալեցէ՛ք ինծի
 հետ եւ գործեցէ՛ք ինծի հետ. դիտեցէ՛ք ես ինչպէս
 կ'ընեմ: Սորվեցէ՛ք շնորհքի բնական կշռոյթները:*
 Ես ձեր վրայ ծանր կամ ձեզի յարմար չեղող բան մը
 չեմ դներ: Ինծի հետ եղէ՛ք եւ պիտի սորվիք ապրիլ
 ազատօէն եւ թեթեւօրէն: (Մատթէոսի 11.28-30,
 բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը
 Մասէ՛ճ* տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Էգ Առիւծները Կ'ապրին Լոյսի մէջ եւ Կ'որսան Մուֆի մէջ

Մենք, որ մեծցանք իբրեւ կրօնի դուստրեր, պէտք է անգամ մը եւս սորվինք ինչպէս պարել Աստուծոյ հետ: Մեր զաւակները բնական կշռոյթ (*ռիտըմ*) մը ունին, զոր ճոնը եւ ես կարծես կորսնցուցած ենք: Երաժշտութեան հանդէպ անոնց հակազդեցութիւնը ւելի ազատ է քան մերինը, որովհետեւ մեզի սորվեցուցած էին, թէ պէտք էր զսպէինք եկեղեցիէն դուրս յօրինուած երաժշտութեան հանդէպ մեր բոլոր հակազդեցութիւնները: Ատիկա պատճառ կ'ըլլայ, որ մենք պրկուինք եւ երաժշտութեան չհակազդենք: Շնորհքի բնական կշռոյթները Աստուծոյ գերբնական գործերուն նկատմամբ մեր բնական հոսանքը եւ հակազդեցութիւնն են մեր հոգիին մէջ:

Սիրելիներ, այնպէս կը զգամք, որ ջանք կ'ընէք եւ կը սպառիք Աստուծոյ գործերը ընելու ընթացքին: Արդեօք մոռցած էք արդէն, թէ ինչ կը նշանակէ Աստուծոյ հետ կեանքը ապրիլը: Երբեմն բոլորս ալ պէտք ունինք այդ յիշեցումին: Գիտեմ, որ ես պէտք ունիմ: Մօտ մէկ տարի առաջ էր, երբ զգացի, որ ջանք կ'ընէի: Բնաւ ունեցամ էք փորձառութիւնը ըլլալու այն վտանգաւոր տեղին մէջ, ուր որեւէ վայրկեան կրնաս շրջիլ եւ ամբողջութեամբ իյնալ ճնշուածութեան մէջ: Լաւ, եթէ ձեզի հետ չէ պատահած, ինծի հետ պատահած է: Ես մտահոգ էի ծառայութեան մը համար, որ տակաւին երեք ամիս յետոյ տեղի պիտի ունենար:

Այդ դժուարութեանս մասին անկեղծօրէն բաժնեկցեցայ բարեկամուհիի մը հետ, եւ ան հանդարտեցուց զիս իմաստուն խորհուրդներով: Ան քաջալերեց զիս, ըսելով, թէ միակ ընելիքս իմ բաժինս ընելն էր եւ հունձքին փառաւոր Տէրը [հացի օրինակին պէս] պիտի կտրէր իմ բերած բաժինս եւ բազմապատկէր: Ես արտաշնչեցի եւ յիշեցի, թէ Յիսուս ծանօթ է քիչ թուացող բաները առնելով շատերու բաժնելով:

Եկէք անգամ մը եւս սորվինք ինչպէս ապրիլ ազատօրէն եւ թերթօրէն: Աշխատիլը եւ ջանք թափելը մեր վիճակը եղան Անկումէն ետք, բայց հանգիստը պէտք է ըլլայ մեր վիճակը փրկութենէն ետք:

Եւ ոչ միայն ատիկա. մենք մեր դռները կը բանանք
Աստուծոյ առջեւ եւ այդ պահուն կը յայտնաբերենք,

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

թէ ան արդէն իր դուռը լայն բացած է մեզի: Կը տեսնենք, որ կեցած ենք հոն, ուր կը յուսայինք կեցած ըլլալ. Աստուծոյ շնորհքի եւ փառքի լայն, բաց տարածքներուն մէջ, ուր կեցած ենք ուղիղ եւ մեր գովաբանութիւնը կը պոռանք: (Հոռմայեցիներուն 5.2, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Կը սիրեմ այդ բաց հրաւերը: Շատ երկար ժամանակ շատ դռներ եւ պատուհաններ գոցուած են մեր կողմէ եւ մեր առջեւ: Դուն եւ միայն դուն, սիրելիս, ունիս իշխանութիւնը բանալու կամ գոցելու կեանքիդ մուտքերը եւ պատուհանները: Դուն ես դռնապանը, որ ունի իշխանութիւնը ընտրելու, թէ որ դռները պիտի բանայ եւ որո՞նք գոցէ: Սահմանները կարելոր են, բայց ապահով է, որ զԱստուած ներս հրաւիրենք: Երբ կեանքիդ մուտքերը բանաս իր առջեւ, կը յայտնաբերես, որ հասած ես յոյսի տեղ մը... արձակուած եւ բաց՝ Աստուծոյ շնորհքին եւ փառքին դիմաց: Հետեւեալ համարին մէջ այդ յայտնութիւնը կը շարունակուի:

Մենք գաղտնիքներ չենք պահեր, մենք կը բացայայտենք զանոնք. մենք բաներ չենք պահեր, մենք բացը կը հանենք զանոնք: (Մարկոսի 4.22, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Դուն ալ մասնակից ես Աստուծոյ ծրագիրներուն եւ գործերուն: Չկայ գաղտնիք Աստուծոյ բարութեան մասին, որ քեզմէ կը պահուի: Ան կը սիրէ քեզ յաւիտենական սիրով եւ կը հրաւիրէ քեզ իր ողորմութեամբ: Ճիշդ ինչպէս Աստուած կը յայտնէ իր գաղտնիքները, հիմա ապահով է նաեւ քեզի համար, որ դուն յայտնես քուկիներդ: Ազատագրող բան մըն է գիտնալ, որ չկայ գաղտնի մեղք մը, ամօթ մը կամ կանոն մը, որ ազդեցութիւն ունի վրադ: Շատ զօրաւոր կը զգաս երբ կ'անդրադառնաս, որ Աստուած գիտէ նոյնիսկ ամէնէն մութ գաղտնիքներդ եւ խախտած կանոններդ եւ տակաւին իր սէրը կը հոչակէ քեզի հանդէպ բացայայտ կերպով:

Էգ Առիւծները Կ'ապրին Լոյսի մէջ եւ Կ'որսան Մուօթի մէջ

Ատոր փոխարէն ան կը խնդրէ, որ մենք ալ նոյնը ընենք: Աստուծոյ կողմէ մեզի վստահուած պատգամը, թէ՛ Աստուած սէր է եւ իր միաձին Որդին՝ Յիսուս մեռաւ մեզ հաշտեցնելու համար, այնքան մեծ է եւ առատաձեռն, որ չենք կրնար լռել եւ միայն մեզի պահել: Աւետարանը գաղտնիք մը չէ: Այդ ահ պատճառով խորհուրդը Աստուծոյ սիրոյ պատգամին ետին գտնուող պատճառն է:

Ո՛վ ենք մենք, որ երկնաւոր Հայրը այդքան կը մտածէ մեր մասին եւ մեզի այդքան փառաւոր նուէր մը կու տայ: Ան յայտնաբերեց իր սիրոյ ծրագիրը եւ մեզմէ խնդրեց, որ բաժնեկցինք զանիկա այնքան ազատօրէն եւ ճիշտօրէն որքան մենք ներս հրաւիրուեցանք: Ամէն մարդ արժանի է լսելու Աստուծոյ սիրոյն մասին:

Երբ կարդացիր բաց տեղ ելլելու Աստուծոյ հրաւերը, թերեւս անդրադարձար, որ կեանքիդ մէջ կայ մարզ մը, որ գոց մնացած է: Անիկա կրնայ ըլլալ վախի կամ ամօթի պատճառով գոց պահուած տեղ մը: Անիկա կրնայ ըլլալ դուռ մը կամ պատուհան մը, զոր կը վախնաս բանալու: Կը հասկնամ:

Յաճախ երբ ընտանեօք կը ճամբորդենք, իրարու միացուած սենեակներ կը խնդրենք ունենալ: Այդ սենեակները քով քովի սենեակներ կ'ըլլան, բայց երկու դռներ կ'ըլլան անոնց միջեւ: Հակառակ անոր որ սենեակէ սենեակ կրնաս անցնիլ, բայց ատիկա կարելի չէ ընել բացի եթէ երկու դռները բացուին: Ընդհանրապէս ճոնը եւ ես անմիջապէս կը բանանք մեր դուռը, եւ քիչ մը ետք տղաքը կը բանան իրենցը երբ իրենց ապրանքները տեղաւորած կ'ըլլան եւ իրենց հագուստները փոխած: Երբ երկու դռներն ալ կը բացուին, մենք կրնանք իրենց քով երթալ, իրենք կրնան մեր քով գալ: Եւ բոլորս կրնանք ազատօրէն մտնել երկու սենեակներն ալ եւ ելլել:

Սիրելիս, բաց դուռը: Լոյսով լեցուած սենեակ մը կայ միւս կողմէ, որ լեցուն է ընտանիքի անդամներով: Մի՛ վախնար: Աստուած չէ գոցած իր դուռը քու դիմացդ: Ոչ ալ նախապէս բացուած դուռ մը պիտի գոցէ քու երեսիդ. իր դուռը բաց է: Պարզապէս քու կողմէդ ալ դուռը բաց:

Կը հրաւիրեմ քեզ, որ իր առջեւը բանաս ամէն ցաւալի դուռ: Արտօնէ, որ իր կեանքը եւ լոյսը վտարեն շուքի ամէն նշոյլ քու մէջդ:

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

Հոգիիդ թշնամին կ'ուզէ, որ շուքի մէջ մնաս: Մթութիւնը կը բարդացնէ եւ շփոթի կը մատնէ այն ինչ որ պարզ է եւ յստակ լոյսին տակ: Մեր Աստուածը ոչ միայն կ'ուզէ, որ լոյսի մէջ ապրինք, այլեւ կ'ուզէ, որ թեթեւ ապրինք: Կրնաս քալել առանց բեռի, եւ աստիկա կրնայ պատահիլ հիմա: Ա՛յդ է գեղեցկութիւնը եւ զօրութիւնը աղօթքի:

Այս վարի տողերը կը գրեմ, որպէսզի օգնեմ քեզի, որ բանաս կղպանքը եւ բանաս դուռդ, բայց ազատ զգա արտօնելու, որ սիրտդ ըլլայ քու առաջնորդդ:

Սիրելի երկնաւոր Հայր,

Կու գամ քեզի Յիսուսի անունով: Ներէ ինձի ինքզինքս քեզմէ պահելուս համար: Կ'ուզեմ լոյսին գալ: Կը բանամ ամէն գոց դուռ եւ կու գամ քու սիրոյդ լոյսին եւ բարութեանը մէջ: Կ'ընդունիմ ներուելու իմ իրաւունքս եւ կ'ընտրեմ քալել ճշմարտութեան մէջ, որովհետեւ միայն անիկա կը հաստատէ զիս ազատութեան մէջ: Ես քուկդ եմ: Կը յանձնուիմ քու սիրոյդ եւ պիտի հետեւիմ քու ձեւերուդ: Լուսաւորէ ճամբաս: Ամէն:

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՏԵՍՈՂՈՒԹԻՒՆ

Հիմա, լոյսի քոյրս, անհամբեր եմ քեզի հետ բաժնեկցելու ուրիշ յատկանիշ մը, որ սորվեցայ էգ առիւծին մասին: Ինչպէս գիտես, էգ առիւծները կ'ապրին լոյսի մէջ եւ կ'որսան մուրփի մէջ: Բայց ինչպէս է, որ կրնան մուրփին մէջ որսալ: Արդեօք իրենց սուր հոտառութեան կամ լսելու բարձր կարողութեան շնորհիւ: Ո՛չ:

Մեր առիւծ քոյրերը կրնան *տեսնել մուրփին մէջ*: Ինչպէս:

Այնպէս կը թուի, թէ էգ առիւծները եւ կատուներու ընտանիքի ուրիշ անդամներ ունին կարողութիւնը ներս առնելու, ուղղութիւնը փոխելու եւ արտացոլացնելու լոյսը: Անոնք ունին կարողութիւնը իրենց միջավայրին մէջ որեւէ տեսակի լոյս տեսողութեան թարգմանելու: Ամբողջական մուրփի մէջ էգ առիւծ մը այնքան չի տեսներ որքան դուռն եւ ես չենք տեսներ: Բայց եթէ մէկ նշոյլ լոյս ըլլայ, որ կը կտրէ այդ

Էգ Առիւծները Կ'ապրին Լոյսի մէջ եւ Կ'որսան Մուֆի մէջ

խաւարը, ան զանհկա կը բռնէ եւ կը վերածէ տեսողութեան: Նոյնիսկ լուսինի փայլքը կամ հեռաւոր աստղերու լոյսի կէտերը կարելի կը դարձնեն էգ առիւծին գիշերային տեսողութիւնը:

Անոնց բիբերը, որոնք կ'արտօնեն, որ լոյսը մտնէ աչքերուն մէջ, մերիններէն տարբեր են: Ասիկա անոնց կարողութիւն կու տայ կեդրոնացնելու իրենց տեսողութիւնը մինչ նոյն պայմաններուն մէջ ուրիշներ չեն կրնար տեսնել: Ձեռով մը այն լոյսը, որ կ'օգնէ իրենց, որ տեսնեն կու գայ իրենց աչքերուն մէջէն եւ ոչ թէ միջավայրէն: Այդ պատճառով է, որ կատուի մը աչքերը երբեմն կը փայլին մութին մէջ: Անոնք կը հաւաքեն եւ կ'արտացոլացնեն ինչ լոյս, որ տրամադրելի է իրենց:

Ինչպէս կրնանք մենք ասկէ պակասը ընել: Մինչ մեր աշխարհի խաւարը կը շատնայ, մեր միջավայրէն ալ մեզի եկած լոյսը նուազագոյնի պիտի իջնէ: Ժամանակն է, որ զարգացնենք եւ կեդրոնացնենք մեր մէջէն եկող լոյսի աղբիւրը:

Կրնամ խնդրել, որ մթութիւնը պահէ զիս

եւ շուրջիս լոյսը դառնայ գիշեր.

Բայց նոյնիսկ մութին մէջ ես չեմ կրնար քեզմէ
պահուրտիլ:

Քեզի համար գիշերը ցերեկի չափ լուսաւոր է:

Մութն ու լոյսը նոյնն են քեզի համար: (Սաղմոսներու

139.11-12, բառացիօրէն թարգմանուած

Աստուածաշունչի *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն*

տարբերակէն)

Եթէ երբեք ժամանակ մը կայ, որուն ընթացքին կարիքը կայ, որ մենք էգ առիւծներու այդ գիշերային տեսողութեան ձիրքը ձեռք ձգենք ասիկա հիմա է: Մեզմէ շատերս կրնանք ցերեկը տեսնել, բայց իմ առաջարկածս այն է, որ զարգացնենք գիշերը կամ մութի մէջ տեսնելու մեր կարողութիւնը: Այն լոյսը, որով էգ առիւծները կը տեսնեն իրենց աչքերուն մէջ եղած լոյսն է: Եթէ մենք ներսէն լուսաւորուած ենք, ենթակայ պիտի չըլլանք մեր միջավայրի խաւարին: Ասիկա մեզի պիտի տայ

բարելաուած տեսողութիւն՝
աւելի ընդարձակ դաշտով եւ
Աստուծոյ տեսակէտով:

Աստուած լոյս է: Անոր մէջ
խաւար չկայ: Արդեօք մենք
մեր միտքին մէջ բաւարար
տարածութիւն ունինք այս
հոչակումին համար: Հոն, ուր
լոյս կայ՝ տեսիլք կայ: Հոն,
ուր տեսիլք կայ՝ յոյս կայ եւ
տեսողութեան վերականգնում:
Հոն, ուր տեսողութիւն կայ՝
յայտնութիւն կայ:

Կը յիշեմ այն առաջին համարը, որ մէկը նուիրեց ինծի
նամակի մը մէջ: Անիկա Եփեսացիներուն առաջին գլուխէն
էր.

Որպէսզի մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Աստուածը,
Հայրը՝ որուն կը պատկանի փառքը, ձեզի տայ
իմաստութիւն եւ յայտնութիւն պարգետող Հոգին,
որպէսզի կարենաք զինք ճանչնալ: ¹⁸Այո՛, կ'աղօթեմ,
որ Աստուած *ձեր մտքի աչքերը լուսաւորէ*, որպէսզի
զիտնաք՝ թէ ինչ է այն յոյսը որուն հրաւիրեց
ձեզ, եւ ինչ ճոխ ու փառաւոր է խոստումը՝ որ իր
ընտրեալները պիտի ժառանգեն: (համարներ 17-18*,
շեշտադրումը՝ մեր կողմէ)

Այս համարը ամենօրեայ աղօթք մը եղաւ ինծի համար: Ես
զանիկա կը փսփսայի մինչ կը գոցէի աչքերս ամէն իրիկուն
եւ զԱստուած կը հրաւիրէի երազներուս մէջ: Օր ցերեկով կը
շնչէի անոր խոստումը նախքան Աստուածաշունչ կարդալ
սկսիլս: Տարուած էի միտքի աչքերու լուսաւորման հրաշալի
խոստումով, որ կարողութիւնը պիտի տար երկինքի
գործերուն կատարումը տեսնելու աշխարհիս մէջ:

Աստուած տրամաբանական
ենթադրութիւններէ յառաջ
եկած վարկած մը չէ, այլ՝
անմիջական ներըմբռնում
մը՝ լոյսի պէս ինքնայայտ:
Ան բան մը չէ, զոր պէտք
է փնտռենք մութին մէջ
բանականութեան լոյսով: Ա՛ն
է լոյսը:

– Էյպրահիմ Ճաշուա Հեշըլ

* Նոր Աշխարհաբար Թարգմանութիւն՝ համեմատութեամբ յունարէնի եւ գրաբարի,
Անթիլիաս, 2001:

Էգ Առիւծները Կ'ապրին Լոյսի մէջ եւ Կ'որսան Մութի մէջ

Այն ինչ որ կը տեսնես միտքիդ մէջ՝ անիկա կը դառնաս: Այն ինչ որ կը տեսնես, անոր արտայայտութիւն կու տաս: Կարծես մենք կորսնցուցած ենք Աստուծոյ մեզի տալիքներուն սքանչելիութեան ընդարձակութիւնը տեսնելու կարողութիւնը: *Աստուած, տրոր մեզի տեսնելու աչքեր:*

Այս խնդրանքը կը յայտնաբերէ, թէ ինչ պէտք է ըլլայ մաքուր, մանկական պարզութիւնը մարգարէականին: Անոր արձագանգը կը լսենք Սամուէլի ուղղուած Հեղիի թելադրանքին մէջ:

Ուստի Հեղի Սամուէլի ըսաւ. «Գնա՛ եւ պառկէ՛:
Եթէ անգամ մըն ալ քեզ կանչէ, ըսէ՛. “Խօսէ՛,
Տէր, որովհետեւ քու ծառադ մտիկ կ'ընէ”»:
(Ա.Թագաւորներուն 3.9)

Աստուծոյ ձայնը կը կանչէ պատանի Սամուէլը երբ ան կը հանգչէր եւ կ'արթնցնէ զայն: Մեր պատասխանն ալ պէտք է անոր պատասխանին պէս ըլլայ. «Խօսէ՛, Տէր, որովհետեւ քու ծառադ մտիկ կ'ընէ»:

Նախքան Սամուէլի պատասխանելը եւ հրաւիրելը Աստուծոյ, որ խօսի, ան միայն փորձառութիւնը ունէր Աստուծոյ իրեն իր անունովը կանչելուն, բայց ան տակաւին Աստուծոյ անունով չէր խօսած:

Մեզմէ քանինէր փորձառութիւնը ունեցած են միայն Աստուծոյ կողմէ անունով կանչուելու: Հաւատացէ՛ք, չեմ նսենացներ այդ փորձառութիւնը, բայց անիկա պարզապէս սկիզբն է: Եկէ՛ք անցնինք այն *աւելիին*, զոր մեզմէ իրաքանչիւրը կը ցանկայ: Մենք կը փափաքինք գիտնալ իր խորհուրդը եւ գործել իրեն հետ, ինչ որ կը նշանակէ՝ արտօնել, որ խօսի մեր միջոցաւ:

Տէրը Սամուէլի ըսաւ. «Ուշադիր մտիկ ըրէ՛: Ես կը պատրաստուիմ Իսրայէլի մէջ ընելու այնպիսի բան մը, որ պիտի ցնցէ բոլորը եւ գրաւէ անոնց ուշադրութիւնը: (Ա.Թագաւորներուն 3.11, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի Տը Մասէ՛ճ տարբերակէն)

Ես կասկած չունիմ, որ նոյնպէս ալ այսօր Աստուած մեզի կ'ըսէ. «Դուստրերս, ուշադիր մտիկ ըրէք: Ես կը պատրաստուիմ երկրի վրայ ընելու այնպիսի բան մը, որ պիտի ցնցէ բոլորը եւ գրաւէ աշխարհի ուշադրութիւնը»: Աստուած կը փափաքի ունենալ ժողովուրդ մը, որ աշխարհի ուշադրութիւնը դէպի Աստուած կը դարձնէ:

Սամուէլի օրերուն Աստուած հազուադէպօրէն կը խօսէր մարդոց, եւ Աստուծոյ ժողովուրդին ընծաները եւ պաշտամունքը կ'արհամարհուէին: Սեռային մեղքը տարածուած էր... տաճարին մէջ: Այն օրուայ ղեկավարը չէր կրնար կամ չէր ուզեր զսպել իր որդիները, որովհետեւ ան կ'օգտուէր իր որդիներուն կատարած այդ խախտումներէն:

Ասոր իբրեւ պատասխան, Աստուած իր երեսը դարձուց Հեղիի տունէն եւ մէջտեղ հանեց նուիրագործուած պատանի մը, որուն կրնար վստահիլ: Մեր ժամանակի անօրէնութիւններն ալ այդքան ալ տարբեր չեն, եւ Աստուած ունի որդիներ, որոնք կ'արթննան եւ կեանքով լեցուն են:

Բայց պատանին կեանքով լեցուն էր, կը մեծնար, կ'օրհնուէր Աստուծոյ կողմէ եւ սիրուած էր բոլորին կողմէ: (Ա.Թագաւորներուն 2.26, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակէն)

Ես տեսած եմ պատանիներ, որ ճիշդ այդպէս են. *կեանքով լեցուն*, օրհնուած՝ Աստուծոյ կողմէ եւ սիրուած՝ բոլորին կողմէ: Երկինքի հպումը իրենց կեանքին վրան է, եւ Աստուած կ'ուզէ զանոնք մեր քովը դիրքաւորել, որպէսզի միասնաբար ընենք իր կամքը:

Ատիկա պատահելու համար, պէտք է մարգարէական արթնութիւն տեղի ունենայ, որպէսզի աչքեր տեսնեն, թէ ինչ կ'ընէ Աստուած, ականջներ լսեն, թէ ինչ կ'ըսէ ան, եւ ունենանք կարողութիւնը իր Խօսքը յայտնելու այնպիսի կենսունակ եւ կենդանի ձեւով մը, որ անիկա վերցնէ մարդկային սիրտի բոլոր արգելքները:

Ասոր լոյսին տակ, կ'ուզեմ, որ այս էջերը կարդաս մարգարէական տեսակէտով: Կ'ուզեմ, որ թէ՛ ակնկալես եւ

թէ՛ արտօնես, որ անոնք խօսին Աստուծոյ ներշնչումները ստացող քու ներքին անձիդ: Գիտցի՛ր, որ մինչ կը կարդաս կարգ մը աստուածաշնչական հատուածներ կամ պատկերներ, անոնք կրնան արծարծել Աստուծոյ կողմէ քու մէջդ դրուած պարգեւները:

Ատիկա Սուրբ Հոգին է, որ կ'ընդարձակէ կեանքիդ արգանդը եւ կը մեծցնէ լսելու, տեսնելու եւ հասկնալու կարողականութիւնդ:

Առիթով մը, պատգամս ասարտելէ ետք, գեղեցիկ երիտասարդուհի մը, զոր Աստուած հզօր կերպով կ'օժէ, քովս եկաւ եւ ըսաւ. «Ամէն անգամ որ կը լսեմ մէկ պատգամդ, կարծես մէջս մանուկ մը կը շարժի»:

Ան արգանդին մէջ մանուկ չունէր. առնուազն ոչ այն տեսակի մանուկ, որ մենք գիտենք կ'ըլլայ: Ան կը խօսէր Աստուծոյ կողմէ իր մէջը բան մը արծարծուելուն մասին, եւ չէր գիտեր ուրիշ ինչ ձեռով նկարագրէր ատիկա:

Թերեւս դուն ալ նոյն արծարծումը զգացած ես քու մէջդ: Բայց կրնայ ըլլալ, որ դուն կ'ըսես՝ *Ես մարգարէ չեմ*: Ես տանտիկին մըն եմ եւ մայր մը, պարմանուհի մը, բազմաբաղ ասպարէզ ունեցող կին մը կամ մեծմայր մը: Թերեւս երբ կը լսես *մարգարէ* բառը, միտքդ կու գայ Երեմիան՝ բանտարկուած եւ ոսկորներուն մէջ կրակ կամ Յովնանը՝ կէտծուկին փորին մէջ:

Այո, համաձայն եմ, որ կեանքդ անոնց կեանքէն շատ տարբեր է: Եւ թերեւս դուն մարգարէ չես, բայց կ'ուզեմ շեշտել, որ ատիկա չի նշանակեր, որ դուն մարգարէական հոգիով չես կրնար ապրիլ:

Մարգարէական հոգիով ապրիլ կը նշանակէ ըլլալ թէ՛ տեսիլք ունեցող մը եւ թէ՛ հեռատես, ինչ որ քեզի ռազմավարական կարողականութիւնը կու տայ կանխագուշակելու: Նոյնիսկ մեր աղօթքները կանխագուշակութիւններու ձեւ կը ստանան: Մենք գիտենք, որ ան կը լսէ, հետեւաբար գիտենք, որ ան կը պատասխանէ եւ մեզի ցոյց պիտի տայ մեծ եւ հզօր բաներ, որոնց մասին նախապէս չէինք գիտեր: Մենք կ'աղօթենք եւ կը սպասենք ականկալութեամբ:

Յիսուսի երկրաւոր առաքելութեան ժամանակ, փարիսեցիները արդէն իսկ կորսնցուցած էին իրենց տեսողութիւնը: Յիսուսի կեանքը եւ խօսքերը շարունակ դէմ կը դնէին այդ կորուրթեան, ինչ որ կը զայրացնէր զանոնք: Յովհաննէսի 5-ին մէջ Յիսուս անգամ մը եւս բարկացուց զիրենք, բայց այդ անգամ պատճառը այն էր, որ ան Շաբաթ օրը բժշկութիւն ըրեր էր: Ատիկա խախտում մըն էր անոնց Շաբաթի օրէնքներուն: Բայց կարեւոր է նշենք, որ Յիսուսի ըրածը Աստուծոյ պատուիրանին համապատասխան էր. անիկա Աստուծոյ ժողովուրդին կը թելադրէր, որ պատուեն, յիշեն եւ Շաբաթը սուրբ պահեն:

Ինչ կրնար ատելի սուրբ ըլլալ քան կաղ անդամալոյծ մը բժշկելը: Ըստ իրենց, սուրբ էր ոչինչ ընելը: Կամ եթէ բժշկութիւն պիտի պատահէր, առնուազն զանիկա պէտք էր ընէր շաբթուան մէջ ուրիշ օր մը: Օրէնքներով եւ կանոններով կուրցած, անոնք կը սայթաքէին:

Բայց Յիսուս ինքզինք պաշտպանեց: «Հայրս շարունակ կը գործէ, նոյնիսկ Շաբաթ օրը: Ես ալ պիտի գործեմ»:

Ատիկա իրապէս բարկացուց զիրենք: Հրեաները հիմա ոչ միայն կ'ուզէին սխալներ գտնել անոր վրայ, այլեւ կ'ուզէին *սպաննել* զինք: Ան ոչ միայն կը խախտէր Շաբաթի օրէնքը, այլ՝ զԱստուած իր սեփական Հայրը կը կոչէր՝ ինքզինք Աստուծոյ մակարդակին դնելով:

Ուստի Յիսուս ինքզինք մանրամասնօրէն կը բացատրէ: «Ուղղակիօրէն ասիկա կ'ըսեմ ձեզի: Որդին չի կրնար անկախ բան մը ընել. *կ'ընէ այն ինչ որ կը տեսնէ, որ Հայրը կ'ընէ: Ինչ որ Հայրը կ'ընէ՝ Որդին ալ կ'ընէ:* Հայրը կը սիրէ Որդին *եւ զայն մասնակից կը դարձնէ իր բոլոր ըրածներուն»* (Յովհաննէսի 5.17-20, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Շաբաթը մեր գործելուն չի վերաբերիր. այլ՝ Աստուծոյ

Էգ Առիւծները Կ'ապրին Լոյսի մէջ եւ Կ'որսան Մութի մէջ

գործերուն մէջ հանգիստ գտնելուն: Յիսուսի այդ յստակ բացատրութիւնը մեր առջեւ կը դնէ կարգ մը հարցումներ, որպէսզի պատասխանենք:

Առաջին՝ դուն Աստուծոյ դո՞ւստրն ես:

Կ'ուզե՞ս տեսնել Հայրդ ի՞նչ կ'ընէ:

Կ'ուզե՞ս մասնակից ըլլալ:

Կ'ուզես ըլլալ լի՞յս կրող մը կամ մէկը, որ ցոյց կու տայ խաւարը:

Ուրմի՞ս ես Քրիստոնէական կեանքը անկախ կերպով ապրելով:

Կ'ուզե՞ս իր հրաշքներ բերել տանջուած, խաբուած, մեռնող եւ վիրաւոր աշխարհի մը:

Յիսուս բնաւ տարօրինակ չէր, բայց ամէն տեղ որ գնաց Աստուծոյ հրաշքները եւ սքանչելիքները բերաւ: Եթէ Յիսուս՝ Աստուծոյ Որդին, առանձինը բան մը չէր կրնար ընել, ապա մենք ալ առանձին բան մը չենք կրնար ընել առանց Սուրբ Հոգիի լուսաւորող ներըմբռնումին: Ինք ինչպէս որ ապրեցաւ այս կեանքը, մենք ալ պէտք է նոյնպէս ապրինք: Մենք իրմէ օգնութիւն ստանալու խոստումը ունինք: Ատիկա ընդգծելու համար, պիտի վերայցելենք Առաքեալներուն Գործերը երկրորդ գլուխը:

«Վերջին օրերը,- կ'ըսէ Աստուած,-

«Իմ Հոգիս պիտի թափեմ

Ամէն մարմինի վրայ,

Եւ ձեր որդիներն ու աղջիկները

Պիտի մարգարէանան,

Ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն,

Ու ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն:

Իմ ծառաներուս եւ աղախիններուս վրայ ալ

Այդ օրերը իմ Հոգիէս

Պիտի թափեմ,

Ու պիտի մարգարէանան:

Վերը՝ երկինքը՝ սքանչելիքներ ցոյց պիտի տամ

Եւ վարը՝ երկիրը՝ նշաններ,

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

Արին, կրակ ու ծուխի մառախուղ:
Արեւը պիտի փոխուի խաւարի,
Եւ լուսինը՝ արինի,
Դեռ Տէրոջ մեծ ու երեւելի օրը չեկած
Եւ ո՛վ որ կանչէ Տէրոջ անունը՝
Պիտի փրկուի»: (Գործերը 2.17-21)

Տակաւին կայ «Հովի Բառեր»ու խոստումը վերջին օրերուն [տե՛ս Յայտնութիւն 2.7,3.6 *Տը Մատճ* տարբերակին համաձայն- Թարգմանիչ]: Հաւատացէ՞ք ինձի, առաջին նայուածքով ես ալ հարց կու տամ, թէ Աստուած ինչո՞ւ մեզ ընտրեց: Երբ կը ճամբորդեմ հեռաւոր երկիրներ եւ շուրջս կը դիտեմ, կը մտածեմ, թէ ասիկա պիտի չըլլար այն ժողովուրդը, որուն վրայ կամ այն ժամանակը, որուն մէջ պիտի ընտրէի Հոգիս թափել: Շատ անելի գեղեցիկ, մաքուր, ապահով ժամանակ մը պիտի ընտրէի՝ երբ ամէն բան այսքան իրարանցած եւ անյստակ չէր:

Իբրեւ ժամանակի լաւագոյն ընտրութիւն ես նկատի պիտի ունենայի Բ.Ե. 50 թուականը՝ ճիշդ նախքան որ սկսան սպաննել Քրիստոնեաները: Բայց այդ պարագային մենք ինչ պիտի ըլլայինք: Կամ թերեւս կը մտածես, թէ չես ուզեր կամ պէտք չունիս Հոգիին թափելուն: Թերեւս քու եկեղեցւոյ մշակոյթը չի հաւատար այդպիսի բանի մը: Բայց իրականութեան մէջ իմ կամ քու ըսածները կարելոր չեն: «Վերջին օրերուն,» կ'ըսէ Աստուած, «Հոգիս պիտի թափեմ ամէն տեսակի մարդոց վրայ»:

Ինձի այնպէս կը թուի, թէ վերջաւորութեան ան թէ՛ պիտի ունենայ ժողովուրդ մը եւ թէ՛ իր կամքը պիտի կատարուի: Այդ բոլորը ըսելէ ետք, ճիշդ ինչ կը նշանակէ ասիկա: Ի՞նչ երեւոյթ կրնայ ունենալ իր Հոգիին թափիլը: Ուրեմն եկէ՞ք տեսնենք եւ սահմանենք, թէ Հոգիին թափիլը ինչպէս կ'ըլլայ:

Շուրջ երկու հազար տարի առաջ Սուրբ Հոգին արձակուեցաւ երկրի վրայ՝ յայտնաբերելու համար Յիսուսը եւ հեռու ու մօտիկ հաւատացեալներուն նոր սիրտ տալու համար: Ուստի Սուրբ Հոգին կը գործէ Քրիստոսի Մարմինին՝ Եկեղեցիին մէջ եւ միջեւ: Բայց կը վարանիմ մեր

Էգ Առիւծները Կ'ապրին Լոյսի մէջ եւ Կ'որսան Մուֆի մէջ

այսօրուայ ունեցածը իբրեւ Հոգիին թափիլը նկարագրելու:

Ուստի ինչ երեւոյթ կրնայ ունենալ Հոգիին թափիլը:

Ատիկա ուսումնասիրելու համար, պէտք է նախ գիտնանք *հոգի* բառին իմաստը: Հոգին ունի չորս տարբեր իմաստներ: Առաջինը ոյժն է: Այդ սահմանումին տակ կը գտնենք հետեւեալ բառերը՝ *քաջութիւն, նկարագիր, կամք, ոյժ, ամրութիւն, բարոյական հաստատակամութիւն, իմաստութիւն, վճռակամութիւն, յանդգնութիւն, սիրտ, ոգի կամ եռանդ*: Հետեւեալ աստուածաշնչական համարը օրինակ մըն է Հոգիին թափելուն եւ իբրեւ արդիւնք քաջութիւն եւ ֆիզիքական զօրութիւն կամ ոյժ տալուն:

Այդ պահուն Տիրոջ Հոգին զօրութեամբ անոր [Սամփսոնի] վրայ եկաւ, եւ ան առիծին բերանը պատռեց իր ձեռքերով: (Դատաւորներուն 14.6, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի Նիոյ Լիվինկ Թրանսլէյշըն տարբերակէն)

Լաւ, ատիկա քիչ մը ուժգին օրինակ մը եղաւ. Հոգիին աղանիի կերպարանքով իջնելէն շատ հեռու պատկեր մը:

Հոգիին իմաստութիւն եւ բարոյական ամրութիւն ըլլալու օրինակը պիտի ըլլայ հետեւեալը.

Եւ Տիրոջ Հոգին պիտի հանգչի անոր վրայ.
Իմաստութեան եւ հասկացողութեան Հոգին,
Խորհուրդի եւ զօրութեան Հոգին,
Գիտութեան եւ Տիրոջ վախի Հոգին: (Եսայիի 11.2, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի Նիոյ Լիվինկ Թրանսլէյշըն տարբերակէն)

Եւ՝

Մէջս մաքուր սիրտ մը ստեղծէ, ով Աստուած: Մէջս հաւատարիմ հոգի մը նորոգէ: (Սաղմոսներու 51.10, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի Նիոյ Լիվինկ Թրանսլէյշըն տարբերակէն)

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻՇՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

Ապա կայ Հոգիին իբրեւ կարողութիւն եւ հմտութիւն թափիլը.

Ես զինք լեցուցած եմ Աստուծոյ Հոգիով՝ իրեն տալով մեծ իմաստութիւն, կարողութիւն եւ փորձագիտութիւն ամէն տեսակի ձեռքի գործերու մէջ: (Ելքի 31.3, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* տարբերակէն)

Եւ վերջապէս, ահա համար մը, որ կը ներկայացնէ Հոգին իբրեւ սիրտ.

Եւ անոնց պիտի տամ սիրտի մէկութիւն եւ նոր հոգի մը պիտի դնեմ անոնց մէջ: Պիտի հանեմ իրենցմէ իրենց քարէ, յամառ սիրտը եւ իրենց պիտի տամ փափուկ, ընդառաջող սիրտ մը: (Եզեկիէլի 11.19, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* տարբերակէն)

Ապա կայ երկրորդ գլխաւոր սահմանումը *հոգիի*, եւ անիկա կը գտնուի *շունչ* [անգլերէնով՝ *սոլ*] բառին տակ: Այս սահմանումին մէջ կը գտնուին *ներքին անձ, կեանքի ոյժ* եւ *էութիւն* եզրերը:

Մարդկային հոգին կրնայ դիմանալ հիւանդ մարմինի մը, Բայց ճիշդ կրնայ տանիլ ճգնուած հոգին: (Առակներու 18.14, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* տարբերակէն)

Ուրախ սիրտը երեսը զուարթ կը դարձնէ.

Կոտրուած սիրտը կը ճզմէ *հոգին*: (Առակներու 15.13, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Հոգիի յաջորդ սահմանումն է՝ «ոգի, ուրուական, հոգետոր երեսոյթ, մեռելակիր ոգի եւ հոգետոր երեսում»: (Բաւական

Էգ Առիւծները Կ'ապրին Լոյսի մէջ եւ Կ'որսան Մուֆի մէջ

վստահ եմ, որ այս սահմանումը յաւելեալ կերպով ուսումնասիրելու պէտք չունինք:)

Եւ վերջապէս, հոգին կը սահմանուի իբրեւ՝ «ընդհանուր զգացում, կեցուածք կամ վերաբերում, տրամադրութիւն, հակում եւ մթնոլորտ»: Կրնայ ըլլալ, որ լսած ես մարդիկ կ'ըսեն՝ «Լաւ զգացում կամ հոգի կայ այս տեղին մէջ»: Անոնք չեն խօսիր ոգիի մը կամ աղանիի մը մասին: Կը խօսին մթնոլորտի մը կամ ակնկալութեան մը մասին: Շատ հաւանաբար վերնատան մէջ նախքան առաջին անգամ ըլլալով Հոգիին թափիրը, երբ մարդիկ միաբան էին եւ մէկ տեղ էին, հոն կար մթնոլորտ մը, տրամադրութիւն մը կամ հոգի մը, որ կ'ողջունէր եւ կը պատուէր ամէն բան, որ Աստուած կ'ուզէր ընել:

Եւ հոն, ուր Տիրոջ Հոգին է, ազատութիւն կայ:
(Բ.Կորնթացիներուն 3.17, բառացիօրէն թարգմանուած
Աստուածաշունչի Նիու Լիվինկ Թրանսլէյշըն
տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Ուստի հոս կը տեսնենք, որ Հոգին կը պատրաստէ ազատութեան մթնոլորտ մը՝ Աստուծմէ ստանալու համար:

Հաւանաբար նկատեցիք, որ *հոգին* չսահմանեցի իբրեւ լեզուներու պարզելը: Լեզուները միայն մէկ դրսեւորումը կամ ապացոյցն են Սուրբ Հոգիի ներկայութեան, եւ լեզուները Սուրբ Հոգիի ամբողջական արտայայտութիւնը չեն:

Ամբողջ Աստուածաշունչին մէջ տեսած ենք Սուրբ Հոգին կը դրսեւորուի վերը նշուած ձեւերով: Հոգին լիազօրեց Սամփսոնը գերբնական ոյժով, որով ան տաճարը փլեց փղշտացիներուն վրայ: Եղիա վազելով թագաւորին կառքին անցաւ: Աստուծոյ քաջութիւնը եկաւ Գեղէնի վրայ, որ բանակ մը հաւաքեց առանց զէնքերու՝ պարտութեան մատնելու համար զիրենք ճնշողները: Հոգիին զօրութեամբ, Դեբորա՝ առանձին կին մը անապատին մէջ, ոտքի հանեց ոյժ մը, որուն հաշիւը ընել ստիպուած պիտի ըլլար Իսրայէլը ճնշող թշնամին: Հոգիին զօրութեամբ, Յիսուս Աստուծոյ նկարագիրը ցոյց տուաւ ամէն տեղ, որ գնաց եւ ամէն մարդու, որուն հետ հանդիպեցաւ:

Եւ ապա կանգ մենք: Աստուածաշունչը կ'ըսէ, թէ մեր օրերուն սիրտեր պիտի նուաղին վախի պատճառով: Ինչպէս պիտի յաղթահարուի այդ թուլցնող կամ տկարացնող վախը: Թերեւս պատասխանը Աստուծոյ կողմէ թափուելիք քաջութիւնն է:

Քանի որ մենք մարգարէական վերականգնումի եղանակի մը մէջ ենք, երբեմն մարդիկ կրնան տեսնել հորիզոնին վրայ եղածը, բայց զանիկա կրկնելը կամ անոր մասին խօսիլը շինծու կամ ջանքով ու անբնական կը թուի: Ձեզմէ ոմանք կրնայ ըլլալ, որ անցեալին ականատես եղած են մարգարէական արտայայտութիւններու, որոնք քիչ մը տարօրինակ կամ պարզօրէն սխալ թուած են իրենց:

Եկէք յստակացնենք: Աստուծոյ ուզածը Քրիստոսի Մարմինին մէջ պաշտօն մը հաստատելէ կամ տիտղոսներ ունեցող խումբ մը մարդիկ ունենալէ աւելին է: Մեր մարգարէական հոգիով գործելը պարզապէս մեր ծնած ժամանակին շնորհիւ է: Ոչ թէ որովհետեւ սեմինարի մը գտնուած ենք, այլ՝ որովհետեւ Սամուէլի նման, ընդառաջեցինք Աստուծոյ: Սեմինարները սխալ չեն անշուշտ, բայց պարզապէս ասիկա սեմինարէ մը շատ աւելի մեծ է:

Աստուծոյ միտքը բնաւ անիկա չէր, որ մարգարէութիւնը բացարձակ սեփականութիւնը ըլլայ կարգ մը մարդոց կամ ընտրանի խումբի մը եւ կամ սահմանուած ըլլայ միայն կարգ մը մարդոց: Անոր միտքը այն էր, որ ստեղծագործութիւնը եւ մարգարէական տեսիլքներն ու ձայները բանան մեր աչքերը, որպէսզի տեսնենք, մեր ականջները, որպէսզի լսենք, մեր բերանները, որպէսզի խօսինք եւ մեր սիրտերը, որպէսզի հասկնանք:

Մարգարէականը պէտք եղածէն աւելի պարզացնելու *նիսքը* առնելու գնով, կ'ուզեմ ձեզի տալ քանի մը ուղեցոյցներ, զորս քաղեցի իմ նախասիրած մարգարէս՝ Եսային սերտելով: Անոր ներշնչեալ մարգարէական գրութիւններուն սկիզբէն իսկ հետեւեալը կը գիտնանք.

Ան մեզի ցոյց պիտի տայ իր գործելու ձեւը,
Որպէսզի կարենանք ապրիլ այնպէս ինչպէս
ստեղծուած ենք ապրելու: (Եսայիի 2.35 բառացիօրէն

Էգ Առիւծները Կ'ապրին Լոյսի մէջ եւ Կ'որսան Մուֆի մէջ

թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատճ*
տարբերակէն)

Կը սիրեմ ասիկա. անոր գործելու ձեւը մեզի կը գիտցուի, որպէսզի կարենանք ապրիլ այն ձեւով, որ ստեղծուած ենք ապրելու: Մենք ստեղծուած ենք ապրելու մեր Աստուծոյն հետ համաձայնաբար: Ան կ'ուզէ մեզի յայտնաբերել իր ճամբաները եւ գործերը: Ասոր լոյսին տակ ես կարգ մը տեսիլք ունենալու վերաբերեալ ցուցմունքներ գտայ Եսայիի 49-ին մէջ, որոնք արձագանգուած են Պօղոսի կողմէ երբ Եսային կը մէջբերէ Հռոմայեցիներուն 9-ին մէջ:

- Վէր նայէ:
- Շնորջդ նայէ:
- Լաւ նայէ:
- Առջեւ նայէ:
- Ճշմարտութիւնը ըսէ:

Առաջին՝ *վէր նայէ*: Եթէ կը մտածես, թէ ինչպէս աչքերդ երկինք պիտի բարձրացնես, կրնաս նայիլ Յայտնութեան Գիրքին՝ երկնային տեսակէտը ունենալու համար: Կը խնդրեմ, որ այդ գիրքին չնայիք իբրեւ ժամանակներու վերջի մարգարէութեան վախճանալիք ձեռագիրք մը: Անիկա յայտնութիւններու հաւաքածոյ մըն է եղած, եղող եւ գալիք բաներուն մասին: Աստուած անկախ է ժամանակներէն. ան անժամանակ է, եւ ան յաճախ մեզի կը խօսի իր այդ դիրքէն: Համալսարանը ամբողջ եռամսեակ մը դաս առի Յայտնութեան Գիրքին մասին, եւ ես տակաւին վստահ չեմ, որ մարդիկ ինչպէս զանիկա կը թիմեն մեր ժամանակներուն մէջ: Արդեօք յայտնութիւնները յայտնող Յովհաննէսը ամբողջութեամբ հասկցամ իր բոլոր գրածները: Երբեմն հարց չէ ամէն բան չգիտնալը. պարզապէս պէտք է հաւատալ, որ կայ մեր երեակայածէն աւելի մեծ իրադարձութիւն մը պատահարներուն ետին:

Ահաւոր կարիքը կայ դէպի վեր նայելու: Մենք տակաւին կը քարոզենք այն Յիսուսը, որ Գալիլիոյ Ծովուն եզերքը քալեց, տղոց հետ ժամանակ անցուց՝ մերկացած իր աստուածութենէն, եւ երկրի վրայ քալեց իբրեւ Մարդու Որդի:

Հապա այն Յիսուսը, որ ինքզինք յայտնեց Յովհաննէսի...
Հետեւեալը պատկերացուցէք եթէ կրնաք.

Մարդու Որդին՝

Պատմուճանով եւ ոսկեայ լանջապանակով,

Մազերը՝ ճերմակ ձիւնամրրիկ,

Աչքերէն՝ կրակ ու բոց,

Երկու ոտքերը՝ փուռի մէջ տաքցուած

Պղինձի պէս, ձայնը՝ ջրվէժի պէս,

Աջ ձեռքը բռնած էր Եօթը Աստղերը,

Բերանը՝ սրած երկսայրի թուր մը,

Դէմքը՝ երկրին իր ամէնէն մօտիկ կէտին մէջ եղող

արեւին պէս:

Ատիկա տեսայ եւ մեռածի պէս ինկայ անոր ոտքերուն
առջեւ: Անոր աջ ձեռքը վերցուց հանեց զիս, անոր ձայնը
վստահութիւն ներշնչեց ինծի.

“Մի՛ վախնար. ես եմ Առաջինը, ես եմ Վերջինը,
ես Ողջ եմ: Ես մեռայ, բայց կեանքի եկայ, եւ հիմա
իմ կեանքս յաւիտենական է: Կը տեսնէս այս
բանալիները ձեռքիս մէջ: Անոնք կը բանան եւ կը
գոցեն Մահուան դռները, անոնք կը բանան եւ կը
գոցեն Դժոխքի դռները: Հիմա գրէ՛ ամէն բան,
որ կը տեսնես. բաներ, որոնք են, բաներ, որոնք
պիտի ըլլան”:

(Յայտնութիւն 1.13-19, բառացիօրէն
թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ*
տարբերակէն)

Անկեղծ ըլլանք: Յովհաննէս շատ հաւանաբար
Տասներկուքին մէջ ամէնէն կայունն էր: Կը թուի, թէ ան
Յիսուսի նախասիրած աշակերտներէն էր: Վերջապէս ան
այն անձն էր, որուն գաղտնիք մը յայտնեց Յիսուս Վերջին
Ընթրիքին: Յիսուսը տեսաւ երկինքի մէջ յայտնուած իբրեւ
Աստուծոյ Որդին եւ մարելով ինկաւ անոր ոտքերուն առջեւ:
Յիսուսի այդ երեւոյթը կարծես քիչ մը աւելին էր քան գառնուկ
շալկող, ձուկ եփող Յիսուսը, չէ՛: Ահա՛ Ամենաբարձր Աստուծոյ
Որդին կը յայտնուի իբրեւ աստղեր բռնող, զինուած, փառաւոր

Էգ Առիւծները Կ'ապրին Լոյսի մէջ եւ Կ'որսան Մուօթի մէջ

պատերազմիկ թագաւոր մը: Ինչ պիտի պատահի եթէ սկսինք քարոզել Յիսուսի այդ կատաղի յայտնութիւնը: Լրջօրէն, տեսէք ինչպէս կը սկսի Յայտնութեան Գիրքը:

Յիսուսի՝ Մեսիայի յայտնաբերումը: Աստուած տուաւ անիկա, որպէսզի յստակացնէ իր ծառաներուն համար, թէ ինչ տեղի պիտի ունենայ: Ան հրատարակեց եւ յանձնեց զանիկա Հրեշտակին միջոցաւ իր ծառային՝ Յովհաննէսի: Եւ Յովհաննէս պատմեց ամէն ինչ որ տեսաւ. Աստուծոյ Խօսքը՝ Յիսուս Բրիստոսի վկայութիւնը:

Ո՛րքան երանելի է կարդացողը: Ո՛րքան երանելի են լսողները եւ պահողները այս մարգարէական խօսքերը, այս գիրքին մէջ գրուած բոլոր խօսքերը:

Ժամանակը կը հասնի իր աւարտին:

(Յայտնութիւնը 1.1-2, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Այս գիրքը նախ եւ առաջ Յիսուսի քողազերծումն է: Երանութիւն կամ օրհնութիւն կը հոչակուի այս յայտնութիւնը ընթերցողին, լսողին եւ պահողին վրայ, ուստի, ըստ ինծի, մեր ուշադրութեան արժանի է: Ինչո՞ւ արժանի պիտի ըլլար այդ բացայայտումը: Մենք չունինք արդէն արձանագրութիւնը երկրի վրայ անոր ապրած կեանքին:

Կը հաւատամ, որ անիկա ակնարկ մըն է, թէ ճիշդ ի՞նչ է այս յաղթական Յիսուսը՝ մեր Մեսիան: Ան ինքզինք մերկացուց եւ մեզի պէս եղաւ, որպէսզի մենք մեր անձերը մերկացնենք եւ իրեն պէս ըլլանք: Ան հզօր է, ան սուրբ է, ան փառաւոր է... ուստի *վեր նայեցէք*:

Յաջորդը *շորջոյ նայիլն* է: Մէյ մը, որ ակնարկ մը կ'ունենանք երկնային տեսակէտին մասին, կը սկսինք մենք մեզ, մեր շրջապատը եւ երկրի բնակիչները տեսնել տարբեր, աւելի լուսաւորուած աչքերով: Եսայի ունեցաւ այդպիսի փորձառութիւն մը երբ ինքզինք կորսնցուց Աստուծոյ յայտնութեան պատճառով, Եսայիի 6-ին մէջ: Նախ ան իր բերանը պիղծ համարեց, ապա իր ժողովուրդը: Կտոր մը ածուխով մաքրուեցան անոր յանցանքն ու մեղքը, եւ

Եսայիի պատասխանը եղաւ. «Զի՛ն դրկէ»: Ան մաքրուեցաւ, ընդարձակուեցաւ եւ պատրաստ էր երթալու ժողովուրդի մը, որուն մասին Աստուած սկիզբէն ըսաւ իրեն, որ մտիկ պիտի չընէին իրեն:

Սուրբ, արդար Աստուծոյ մը պատկերը հրքան հակառակ է եւ հակասական մեր կեանքին եւ մեր շուրջի աշխարհին մէջ մեր տեսածներուն, եւ ասիկա մեր սիրտը կը կոտրէ: Շնորքդ նայէ: Հեռատեսիլին վրայ լուրի կայան մը բաց կամ նոյնիսկ խնդալիք ֆիլմաշար մը դիտէ: Ինչ կը տեսնես: Ես կը տեսնեմ մեղք եւ անարդարութիւն, բայց նաեւ կը տեսնեմ, որ լոյսի զաւակներ կը սկսին դուրս գալ իրենց պահուըտած տեղերէն՝ դիմադրելու համար այն թանձր խաւարը, որ հաւաքուած էր մինչ անոնք պահուըտած էին լոյսին մէջ:

Ապա մենք պէտք է լսւն նայինք: Կը հաւատամ, որ ասիկա կը նշանակէ, որ մենք պէտք է փնտռենք ձեւեր լաւացնելու այն բաները կամ առողջութիւն բերելու այն բաներուն, որոնք լաւ չեն եւ անառողջ են մեր աշխարհին մէջ: Ատիկա կը նշանակէ լոյս բանալ՝ խաւարի մարզեր յայտնաբերելու համար, յոյս բերել հեռաւոր կամ մօտիկ անյոյսներու, դառնալ մեր սխալներէն եւ ճիշդը ընել: Վատառողջ եւ վտանգի մէջ եղող երեւոյթներու մէջ առողջութիւն եւ զօրութիւն վերականգնել: Ատիկա կրնայ ըլլալ տնտեսական եւ կրթական լուծումներէն մինչեւ յարաբերութիւններու հետ կապուած հարցեր:

Մեր շուրջը կան մեծ թիով ամուսնութիւններ եւ ընտանիքներ, որոնք պէտք ունին առողջութեան վերականգնումի: Կան անոնք, որոնք անհրաժեշտ կարիքը ունին դեղորայքի, մաքուր ջրի եւ կերակուրի: Կան մինակ մարդիկ, որոնք պէտք ունին ընտանիքներու, որբեր, որոնք պէտք ունին որդեգրուելու եւ գերիներ, որոնք պէտք ունին փրկուելու: Կան ճնշուած եւ անտեսուած տղամարդիկ եւ կիներ, որոնք պէտք ունին վերցուելու: *Լսւն նայէ:*

Հիմա, *առջեւ նայելու* համար մենք պէտք ունինք անդրադառնալու, որ մեր ներկայի ընտրութիւնները ապագայի վրայ ալ ազդեցութիւններ կ'ունենան: Հետեւաբար մենք ոչ միայն պէտք է ունենանք լաւ նայելու ներըմբռնումը, այլեւ առջեւ նայելու կանխատեսութիւնը: Մենք պէտք է ապրինք խորաթափանց ըլլալու

դիտումնաւոր մտադրութեամբ մինչ կը մօտենանք կեանքի խաչմերուկներուն:

Ես Նինճա տեսակի շարժակաւոր հեծելանիւ (*մոթորսայքը*) մը ունիմ: Հաւանաբար ամէնէն խելացի կամ ապահով ապրանքը չէ, որ ունիմ, եւ որպէսզի ամուսինս հանգիստ զգայ իմ այդքան վտանգաւոր բան մը քշելովս, մենք շարժակաւոր հեծելանիւ քշելու ապահովութեան դասընթացք մը առինք: (Ես միակ կինն էի դաս առնողներուն մէջ:) Մեր դասապահերուն ընթացքին սորվեցանք, թէ արկածներուն մեծ մասը կը պատահին խաչմերուկներու վրայ, ոչ որովհետեւ շարժակաւոր հեծելանիւ քշողը վտանգաւոր բան մը կ'ընէ, այլ՝ պարզապէս որովհետեւ ինքնաշարժ քշողները չեն նկատեր զինք: Արկածէ մը խուսափելու համար մեզի սորվեցուցին եզր մը, որ պիտի օգնէր մեզի, որ ըլլանք այդ հարցին առաջը առնողները. այդ եզրն է՝ փնտռել, գնահատել եւ գործադրել [անգլերէն բառերուն առաջնատառերը կը կազմեն ՍԻԻ (SEE) բառը, որ նաեւ կը նշանակէ տեսնել- Թարգմանիչ]:

Երբ Նինճաս քշելու ատեն կը մօտենամ խաչմերուկի մը, ես շատ աւելի արթուն կամ գիտակից եմ ինքնաշարժներուն ներկայութեան քան այդ ինքնաշարժ քշողները՝ իմ ներկայութեանս: Իմ աւելի արթուն գիտակցութեանս եւ իրենց յարաբերական անգիտակցութեան միացումին պատճառով ես կ'անցնիմ փնտռելու վիճակին: Արագ ակնարկով մը կ'ուզեմ գիտնալ, թէ ինքնաշարժներուն վարորդները հեռաձայնի վրայ կը խօսին, ի՞նչ կ'ուզէ դառնալ կամ ուղղութիւնը փոխել, ի՞նչ գիտնալ կամ ի՞նչ անգիտեց եւ ի՞նչ անգիտեց, ինչպէս նաեւ ուշադիր կ'ըլլամ ճանապարհային պայմաններուն: Խիճը եւ աւազը բարեկամ չեն ինձի: Իրաքանչիւր խաչմերուկի վրայ կը փնտռեմ հաւանական խնդիրներ ինչպէս նաեւ միւս կողմ անցնելու ճամբաներ:

Երբ փնտռտութիւն կ'աւարտի, կը գնահատեմ պայմանները՝ որոշելու համար լաւագոյն մօտեցումը: Երբեմն երբ ճոնը եւ ես միասին կողք կողքի կ'ըլլանք մեր շարժակաւոր հեծելանիւներուն վրայ, ճոնը աւելի առաջ կ'անցնի, որովհետեւ անոր շարժակաւոր հեծելանիւն աւելի բարձր ձայն կը հանէ եւ մարդիկ կը լսեն իր գալուստը: Բայց երբ խճողումի

մէջ կ'ըլլանք, ճոնը կ'ուզէ իմ ետեւս ըլլալ՝ իմ կոնակս պաշտպանելու համար:

Երբ ծրագիրը կը դնենք, կ'անցնինք գործադրութեան: Ինքնաշարժներուն շփոթեցուցիչ պատգամներ չենք տար: Ես ծախ երթալու նշանը չեմ տար եւ յետոյ ուղիղ շարունակէր: Այնպէս կ'ընենք, որ մեր մտադրութիւնները կարելի եղածին չափ յստակ ըլլան:

Երբ շարժումի մէջ կ'ըլլանք, ուրիշ դաս մը կայ, զոր պէտք է կիրարկեմ. եթէ վար նայիս, վար իյնալու վտանգը կը դիմագրաւես: Շարժակաւոր հեծելանիւին վրայ եղած ատեն, ճիշդ ինչպէս կեանքի մէջ, պէտք է վեր նայիս եւ այդպէս դառնաս դէպի աջ կամ ձախ: Դառնալդ ճիշդ ձեռով ըրած կ'ըլլաս եթէ աչքերդ պահես այն ուղղութեան վրայ, ուր կ'երթաս (առջեւ նայիս) փոխանակ նայելու անցած տեղերուդ ուղղութեամբ կամ նոյնիսկ եղած տեղիդ: Նայէ հասնելիք տեղիդ:

Մեր ներկայի տեղը հոն չէ, ուր պիտի հասնինք: Աւելին կայ մեր առջեւը. ւաւելի ուրախութիւն, ւաւելի վտանգ, ւաւելի Աստուած, ւաւելի չարիք, ւաւելի արդարութիւն, ւաւելի ազատութիւն, ւաւելի զօրութիւն, ւաւելի լոյս, ւաւելի յոյս:

Մենք իրապէս խաչմերուկի վրայ ենք պայմաններուն ներկայի վիճակին եւ յառաջիկային անոնց առնելիք վիճակին միջեւ: Ատիկա կը նշանակէ, թէ մեծ թիւով անգիտակից վարորդներ պիտի ըլլան մեր շուրջը: Անոնց գործը չէ մեզի ուշադիր ըլլալը. եկէք մենք ուշադիր ըլլանք անոնց:

Եւ վերջապէս, ճշմարտութիւնը ըսէ: Պօղոս ըսաւ, թէ Եսայի առջեւ նայեցաւ եւ ճշմարտութիւնը ըսաւ: Իր կեանքին ընթացքին Եսայիի խօսած խօսքերը միշտ իբրեւ ճշմարտութիւն չընդունուեցան: Ըստ կարգ մը պատմաբաններու, զայն մէջտեղէն սղոցեցին, քանի որ ան ճշմարտութիւնը ըսաւ: Ճշմարտութիւնը ժողովրդական, լաւ կերպով ընդունուած կամ յարմար չէր, բայց Եսայի ոչ միայն խօսեցաւ ճշմարտութիւնը, այլեւ ապրեցաւ այն ճշմարտութիւնը, զոր դէպի ապագայ արձակեց:

Քու ճիշդ ըլլալդ եւ քու ապրած ձեռք կարելոր են
Աստուծոյ առջեւ: Քու պաշտամունքդ պէտք է քու

Էգ Առիւծները Կ'ապրին Լոյսի մէջ եւ Կ'որսան Մուֆի մէջ

հոգիովդ ըլլայ՝ ճշմարտութեան հետամուտ ըլլալով:
Ա՛յդ ձեւի մարդիկ կը փնտռէ Հայրը. անոնք, որոնք
պարզապէս եւ անկեղծօրէն *իրենք իրենց անձին
պէս* են իր առջեւ իրենց պաշտամունքին ընթացքին:
(Յովհաննէսի 4.23, բառացիօրէն թարգմանուած
Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն,
շեշտադրումը՝ մեր կողմէ)

Հետեւեալը Յիսուսի աղօթքն էր մեզի համար.

Զանոնք սուրբ ըրէ՛, սրբագործէ՛ ճշմարտութիւնով.
Քու խօսքդ սրբագործող ճշմարտութիւն է:
Ճիշդ ինչպէս դուն ինձի առաքելութիւն մը տուիր
աշխարհի մէջ,
Ես ալ իրենց կու տամ առաքելութիւն մը աշխարհի մէջ:
Ես ինքզինքս կը սրբագործեմ իրենց սիրոյն,
Որպէսզի անոնք ճշմարտութիւնով սրբագործուած
ըլլան իրենց առաքելութեան մէջ: (Յովհաննէսի 17.17-19,
բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ*
տարբերակէն)

Եթէ չենք գիտեր ինչ է ճշմարտութիւնը, ապա ունինք
Աստուծոյ Խօսքը՝ մեր ճամբան լուսաւորելու համար, որպէսզի
անդրադառնանք Յիսուսին, որ ճշմարտութիւնն է:

Կան անոնք, որոնք վեր նայած են, բայց յետոյ իրենց
շուրջը չեն նայած, ուստի պահուրտած են: Կան անոնք, որոնք
իրենց շուրջը նայեցան եւ ճնշուեցան, որովհետեւ բնաւ վեր
չնայեցան, ուստի որեւէ բան չըրին: Կան անոնք, որոնք առջեւ
նայեցան, բայց չկրցան ճշմարտութիւնը ըսել, ուստի սուտի
մէջ ապրեցան: Կան անոնք, որոնք ճշմարտութիւնը ըսին,
բայց բնաւ իրենց շուրջը չնայեցան, ուստի ճշմարտութիւնը
բնաւ առողջութիւն չբերաւ ուրիշներուն:

Պիտի փորձեմ չափանիշը բարձրացնել յաջորդ գլուխին
մէջ: Նպատակս է գրել կարգ մը սքանչելի բաներու մասին,
որպէսզի անդրադառնանք այն զօրութեան, զոր չենք վայելեր:

Հոգիին թափելուն մասին չեն ասոնք, այլ՝ տեսողութեան:

Այն ինչ որ պիտի բաժնեկցիմ այս էջերուն մէջ ինձի տրուած էր հրաշալի յայտնութեամբ մը: Ասիկա իմ մարդկային փորձս է բաժնեկցելու ձեզի հետ յայտնութիւն մը, որ աւելի մեծ է քան ինչ որ իմ սահմանափակ բառերս կրնան նկարագրել:

Լուսաւորուած հասկացողութիւնը ճակատագրական է խաւար անմտութեան աշխարհի մը մէջ: Ճիշդ է. ինչ որ կը տեսնես՝ անիկա կը դառնաս: Մենք պէտք է արտօնենք, որ ներքին տեսիլք մը եւ լոյսի պատկերացում մը իրենց ազդեցութիւնը բերեն մեր շրջապատին վրայ: Ժամանակն է, որ ակնյայտօրէն բացայայտէն անդին նայինք եւ տեսնենք այն ինչ որ Աստուած կ'ընէ անյոյս կացութիւններու եւ կեանքերու մէջ:

Հակառակ անոր որ խաւարը կը տեսնենք, մենք պէտք է լոյսը հոչակենք:

Հասկացողութեան աչքերով պիտի տեսնենք, թէ որքան մեծ է մեր Աստուածը: Աստուած մեզի կու տայ աչքեր տեսնելու:

Մինչ Աստուծոյ լոյսը կը շատնայ, կը հաւատամ, որ տեղի պիտի ունենայ աստուածային մարգարէական արթնութիւն մը: Աստուած մեզի պիտի տայ աչքեր՝ տեսնելու իր ըրածները, ականջներ՝ լսելու իր ըսածները եւ համարձակութիւն խօսելու իր Խօսքը իշխանութեամբ: Մինչ այդ արթնութիւնը տեղի կ'ունենայ, մարդկային սիրտերու մէջ արգելքները պիտի փշրուին:

Ակնկալէ եւ արտօնէ, որ Աստուած խօսի քու խորունկ տեղերուդ մէջ: Աստուածային իրականութենէն նշոյլ մը կամ տեսիլք մը ունենալու մարգարէական կարողութիւնը կը նշանակէ տեսնել անոր սքանչելիութիւնը եւ ունենալ ներըմբռնում: Առանց այդ տեսողութեան, կեանքը՝ լաւագոյն պարագայի, խաւարի մէջ քալել է:

Եթէ մարդիկ չեն կրնար տեսնել այն ինչ որ Աստուած կ'ընէ,

Անոնք ջանք կ'ընեն:

Բայց երբ կ'ընեն այն ինչ որ ան կը յայտնէ,



Անոնք ամէնէն աւելի երանելի կ'ըլլան: (Առակներու 29.18, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակէն)

Յիսուս բնաւ տարօրինակ չէր, բայց ո՛ր, որ գնաց Աստուծոյ սքանչելիքները բերաւ: Ինչո՞ւ: Ան միայն ըրաւ այն ինչ որ տեսաւ իր Հայրը կ'ընէր: Ան նոյն ատեն կը տեսնէր տառապող մարդկութիւնը եւ իր սուրբ Հօր պատասխանը: Ան խօսեցաւ լոյս եւ ճշմարտութիւն՝ վտարելու համար խաւարը եւ կրօնի սուտերը, որոնք պղտորած էին աչքերը Աստուծոյ գաւակներուն եւ բաժնած զանոնք կենդանի Աստուծմէ:

Մարգարէի ուրիշ մէկ անունն է *տեսանողը*: Յիսուս կը տեսնէր այն ինչ որ ուրիշներու աչքէն կը վրիպէր: Ան նկատեց տառապողները եւ անտեսուածները, եւ դպաւ անմաքուրներուն: Ան պարզապէս չէր տեսներ ամբոխները. ան կը տեսնէր մարդիկ: Ան տղամարդոցմէ եւ կիներէ աւելին կը տեսնէր. ան կը տեսնէր անհատներ եւ սիրտեր: Յիսուս խաւարի մէջ կը տեսնէր լոյս, եւ մէջտեղ հանեց խաւարը, որ կը ձեւացնէր ըլլալ լոյս: Ան էր աշխարհի լոյսը, եւ հիմա դուն պիտի ըլլաս այդ լոյսը կրողը:

Գնա՛ աշխարհ չփտած, չաւրուած էութեամբ, եւ թարմ օդի շունչ մը բեր այս աղտոտ եւ ապականած ընկերութեան մէջ: Մարդոց տո՛ւր ականարկ մը լաւ ապրուած կեանքի ինչպէս նաեւ կենդանի Աստուծոյ: Լոյս բերող Պատգամը կրէ՛ գիշերուան մէջ (Փիլիպպեցիներուն 2.15, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակէն):

Ահա՛, սիրելիներ, նկարագրութիւն մը խաւարի մէջ մեր որսորդութեան: Մենք անոր լոյսը կ'ապրինք խաւարին դիմաց: Կը ձգենք, որ մեր կորսուած եւ տառապող աշխարհը տեսնէ մեր փոխակերպուած կեանքերը: Մենք չենք պահուրտիր խաւարէն, այլ՝ կը փարատենք զանիկա: Մինչ լոյսը կը մօտենայ ստուերային կամ խաւար աշխարհին, կը տեսնենք, թէ խաւարը ինչ ձգած է իր ետին: Կան շատեր,

որոնք պահուղտած են մութ վայրերու մէջ՝ սպասելով արծակման լոյսին:

Ժամանակն է, որ մենք որսանք եւ ազատագրենք բոլոր անոնք, որոնք տակաւին գերի են եւ չափազանց կարիքը ունին յոյսի պատգամին:

ՈՐՍԱԼ ԽԱՒԱՐԻ ՄԷՋ

Վերջերս առիթ մը ունեցայ որսալու մութին մէջ մինչ փնտռուող մը կ'ընէի Հնդկաստանի խաւարած աղքատ թաղամասերուն մէջ:

Այն ինչ որ գտայ խաւարին մէջ անակնկալի բերաւ զիս: Ես այցելեցի Մումայի՝ *Լայֆ Աութրիչ* առաքելութեան հետ միասին: Անոնք կը համագործակցէին շրջանին մէջ գործող կարգ մը կազմակերպութիւններու հետ, որոնք կը փորձէին փրկել աղքատ թաղամասերու աղտոտ հանրատուներուն մէջ թակարդուած կիներն ու պզտիկները:

Հնդիկ ժողովուրդը գեղեցիկ ժողովուրդ է եւ անոնց մշակոյթը թէ՛ շնորհալի եւ թէ՛ ազնիւ կրնայ ըլլալ, բայց աղքատ թաղամասերուն պայմանները ցաւալի են: Հոն տեսածներուս դիմաց «*Սլամպակ Միլիոներ*» ֆիլմին մէջ պատկերուած միջավայրը մաքուր կը համարուի: Պզտիկ կատուներու չափի առնէտներ կը պտտէին փողոցներու երկայնքին գտնուող մարդու եւ կենդանիներու կղկղանքի կոյտերուն միջեւ:

Երբ իջայ այն զովացուած ինքնաշարժէն վար, որ զիս ապահովաբար հասցուցած էր հոն՝ նաւարկելով Մումայի խենթ խճողումին մէջէն, ամբողջութեամբ փոխադրուեցայ օտար աշխարհ մը: Ոչ թէ օտար, որովհետեւ շատ տարաշխարհիկ (*էկզոթիք*) տեղ մըն էր, այլ՝ օտար որովհետեւ անջատ աշխարհ մըն էր. անմարդկայնութեան մանրամշակոյթ մը:

Հնդկական ովկիանոսէն եկող հովերու (*մոնսուն*) եղանակ մըն էր, եւ խոնաութեան ու տաքի միացումը շրջանի նեխած օդը դարձուցած էր խեղդող: Անմիջապէս քիթիս հասան աղտոտութեան հոտերը: Կղկղանքի, մէզի, ալրուած կերակուրի, կեանքի գարշելի պայմաններու եւ աղտոտ մարդոց հոտերու խայթող խառնուրդ մըն էր: Օդը ինքնին

Ծանր էր եւ խաւարի հոգիի մը ճնշումին տակ:

Երկու բաներ նկատեցի. գեղեցիկ հնդիկ ժողովուրդը եւ այն անողորմ հոգին, որ զիրենք գերի դարձուցած էր: Այդ աղքատ թաղամասերուն մէջ անոր ազդեցութիւնը ծածկել կարելի չէր: Տղամարդիկ եւ կիներ կքած էին անոր կշիռքին տակ մինչ աղքատութիւնը, փտածութիւնն ու անբարոյութիւնը կամ անառակութիւնը իրենց ծանր ձեռքը դրած էին բոլորին վրայ:

Աննկատ կերպով այդ տեղերէն անցնելու համար, մեր խումբը հաքած էր հնդկական հագուստներ: Բայց շուտով անդրադարձանք, որ մեր կարծածին չափ ալ աննկատ չէինք անցներ, քանի որ բոլոր մեր քովէն անցնողները մեզի կը դիտէին:

Մեր հովիւը եւ միսինարութեան առաջնորդները շուտով մեզ տարին իրենց բութարանը, որուն շնորհիւ մարդոց վստահութիւնը շահած էին ինչպէս նաեւ մարդիկը սիրելու եւ անոնց ծառայելու համբաւը: Մտայ բութարանի համեստ սպասման սենեակը, ուր հիւանդները լուռօրէն կը սպասէին՝ բժիշկին քով մտնելու համար: Ծառայողներու խումբ մը՝ բաղկացած նախկին *մայրամներէ*, կը սպասէր մեր հասնելուն: Սպորդեցանք դէպի քովի սենեակը, ուր ինծի ըսուեցաւ, թէ հոն էի պարզապէս «օրհնելու» հանրատուններու մէջ աշխատող կիները:

Անմիջապէս անդրադարձայ, որ կոնակի պայուսակիս մէջ դրած քարոզս անպէտք պիտի ըլլար: Հասկցայ, որ կացութիւնը իմ կարողութեանս սահմաններէն դուրս էր եւ որ հեղինակ եւ քարոզիչ Լիսան հոս օգուտ մը պիտի չունենար ինծի: Քանի որ գաղտնի կերպով հոն էինք, չէի կրնար Աստուածաշունչս գործածել: Թարգմանիչս սահմանափակ անգլերէն կը խօսէր, իսկ ես հնդկերէն չէի գիտեր: Այդ մարդոց հետ կապ հաստատելը միայն կրնար իրականանալ Աստուծոյ Հոգիով:

Իրենց պատմութիւնները արձանագրելու համար գաղտնի պզտիկ բարձրախօս մը փակցուցած էինք վերնաշապիկիս մէջի կողմը, թելը փաթթած էինք մէջքիս շուրջ եւ զանիկա կցած արձանագրող սարքի մը, որ փակցուցած էինք տափատիս մէջի կողմէն: Ծածուկ պզտիկ նկարչական

մեքենայ պահած էինք ուրիշ կնոջ մը վզնոցին մէջ: Ձեռք ձեռքի բռնեցինք, աղօթեցինք եւ դուրս ելանք դէպի գարշահոտ փողոցները:

Անմիջապէս զգացի, որ զիս կը դիտէին: Բայց աւելի դառն նայուածքով քան թշնամական: Վեր նայեցայ եւ փողոցին միւս կողմը, երկրորդ յարկի վրայ պատուհանի մը ետին գեղեցիկ ասիացի աղջիկ մը կար: Կ'ենթադրեմ, որ տասնհինգ տարեկանէն աւելի չէր ան: Անոր երիտասարդ դէմքին վրայ կար տառապանքի եւ յուսահատութեան խառնուրդ մը: Այդ ատեն միայն անդրադարձայ, որ ան բանտի ճաղերու ետին էր՝ կղպուած հանրատան մը մէջ:

Ինչպէս կը պատասխանես այդպիսի նայուածքի մը:

Կարելի չէ բաժնեկցիլ ժպիտ մը: Չէի կրնար գլուխս շարժել եւ սխալ հասկցուելու *ոհսքը* առնել՝ մտածել տալով, թէ *իրեն* հանդէպ նայուածքս դատողական էր կամ զգուանք: Ես ալ իրեն նայեցայ մինչեւ որ ան իր նայուածքը շեղեց: Երբ վար նայեցայ, տեսայ վեր, դէպի շէնք բարձրացող աստիճաններ, որոնց յատակը կեցած էին խումբ մը բարկացած մարդիկ: Անոնք ինծի նայեցան բացայայտ արհամարհանքով, կարծես կ'ըսէին՝ «Դուն ի՞նչ կը կարծես, որ ես: Գնա՛ ասկէ: Դուն այս տեղին չես պատկանիր»:

Անկասկած, որ այդ տեղին չէի պատկաներ: Աստուծոյ պատկերին նմանութեամբ ստեղծուած ոչ մէկ մարդ արարած կը պատկանէր այդպիսի սոսկալի վայրի մը: Ատիկա տեղ մը չէր, որուն մարդ պէտք էր պատկանէր. անիկա տեղ մըն էր, ուրկէ մարդ պէտք էր փախչէր:

Կիներէն մէկը զգաց նեղութիւնս եւ թելը մէջքիս շուրջ դնելով, ըսաւ. «Եկո՛ւր, ես կ'օգնեմ, որ ճամբուն միւս կողմը անցնիս»: Ան առաջնորդեց զիս ամբոխին, հեծանիւներուն եւ ինքնաշարժներուն մէջէն, որոնք կը ճամբորդէին առանց կարգ կանոնի կամ երթելուութեան օրէնքներու:

Մէկ օր այդ թաղամասին մէջ անցընելով սորվեցայ քալողներուն համար միակ օրէնքը, որն էր՝ երբ կը սկսիս կտրել փողոցը բնաւ կանգ մի՛ առներ: Անվախօրէն կը շարունակես քալել՝ անկախ անկէ, թէ քանի՞ հեծանիւներ, շարժակաւոր հեծելանիւներ եւ ինքնաշարժներ կու գան

քու ուղղութեամբ: Մէկ անգամ պահ մը վարանեցայ ճամբուն մէջտեղը եւ երկու նախկին մատրամները իրենց կողերով հարուածեցին եւ հրեցին զիս դէպի ճամբուն միւս կողմը՝ իրենց գլուխները շարժելով: «Չկայ կենալ: Մենք կը պաշտպանենք քեզ»: Եւ այդպէս ալ ըրին:

Առաջին հանրատունը, որ մտանք, մուտքի կամ սպասման սենեակի պէս տեղ մը ունէր՝ ոչ ւաւելի քան 1.5-ով 2.5 մետր տարածութեամբ: Հոն էր, որ յաճախորդները կը սպասէին, որ այդ աղջիկները ծառայէին իրենց: Հոն նաեւ կիները կը հաւաքուէին ճաշ եփելու, իրարու հետ ժամանակ անցընելու եւ իրենց զաւակներուն հոգ տանելու համար: Այդ մուօ սենեակէն անոնք կրնային տեսնել իրենց դուռէն դուրս փողոցին թշուառութիւնը: Այդ սենեակին մէջ խումբ մը կոտորուած կիներ հաւաքուած էին՝ լսելու համար Աստուծոյ սիրոյն մասին:

Երբ ներս կը մտնէի, նկատեցի ուրիշ դուռ մը եւս: Բարակ վարագոյր մը կար մուտքին, որ կ'առաջնորդէր դէպի նեղ միջանցք մը, որուն երկու կողմերը հանրային լուացարաններու նմանող տաղաւարներու շարքեր կային: Յետոյ գիտցայ, որ հոն էր, որ աղջիկները կը քնանային եւ կը ծառայէին իրենց յաճախորդներուն: Նայելով այդ միջանցքն ի վար, նկատեցի, որ քանի մը դռներ գոց էին, ինչ որ կը նշանակէր, թէ աղջիկ մը կը հանգստանար կամ զբաղած էր:

Ուշադրութիւնս դարձուցի առջեւս կեցած կիներուն: Անոնք նստած էին սենեակին երկու կողմերը եղող նստարաններուն վրայ ինչպէս նաեւ գետինը: Անոնք կծկուած էին իրենց քողերուն տակ եւ կասկածանքով կը նայէին մեզի մինչ մենք ներս կը մտնէինք:

Թարգմանիչը բարեւեց զիրենք հնդկերէնով: Անոնք ուշադրութեամբ մտիկ կ'ընէին եւ յարգանքով իրենց գլուխը կը շարժէին հաւանութեան նշանով, որ ըստ հնդկական մշակոյթին, գլուխը աջ եւ ձախ շարժելն է:

Շատ երկար չանցած հնդկերէն բառերու խառնուրդի մը մէջ անունս լսեցի: Գլուխները իմ կողմս դարձան: Շուարած վիճակով հովիւին նայեցայ: Ան ձեռքերը դէպի վեր վերցնելով, կրկնեց իր նախկին թելադրանքը ինձի, ըսելով. «Օրհնէ՛ զիրենք... Քեզի կը սպասեն... հոս այսպէս երկու ժամէ ի վեր»:

Ես ինքզինքս ծանօթացուցի եւ ըսի, թէ ո՛րկէ էի: Ըսի, որ չորս որդիներ ունէին, եւ շուտով տղայ թռռնիկ մըն ալ պիտի ունենայի: Խօսքերը պարապ հնչեցին իմ իսկ ականջիս: Իմ կեանքիս մանրամասնութիւնները ի՞նչ իմաստ կրնային ունենալ այդ կիներուն համար: Իրենց գիտցածը ամբողջովին հակառակ էր իմ ամերիկեան «նորմալ»իս: Բայց անոնք քաղաքավարօրէն իրենց գլուխները կը շարժէին մեղմօրէն:

Ըսի, թէ մենք երկար ճամբայ կտրած էին՝ իրենց ըսելու համար, որ առանձին չէին: Ամբողջ աշխարհի մէջ կիներ իրենց սիրտին մէջ ունէին զիրենք եւ կու լային իրենց դժուար պայմաններուն համար:

Ի՞նչ էր ատիկա: Առանձին չէին: Իրենց յուսալքութեան լուրը ամէն տեղ տարածուած էր: Ուրիշներ կու լային իրենց կորուստին համար: Ըսի, թէ ո՛րքան մեծ թիւով կիներ Հնդկաստանի այդ պահուլտած դուստրերը աղօթքով կը բարձրացնէին Աստուծոյ գահին առջեւ: Անոնց դէմքերը սկսան փայլիլ լուռ արցունքներով:

Երբեմն ես ինձի հարց կու տամ եթէ իրապէս կը հասկնանք զօրութիւնը այն կապակցութեան, որ կը հաստատենք ուրիշներու հետ: Մենք առանձին չենք մեր դժուարութիւններուն մէջ: Մենք առանձին չենք մեր յոյսերուն մէջ: Յիսուս խոստացաւ միշտ մեզի հետ ըլլալ:

Ես խոստովանեցայ իմ անձնական սխալներս կամ զղջումներս: Թէ ի՞նչպէս երիտասարդութեան օրերուս ես վատնած էի այն սեռային մաքրութիւնը եւ արժանապատուութիւնը, որոնք բռնի կերպով գողցուած էին իրենցմէ: Ես ընտրած էի անառակութիւնը, բայց յետոյ դուռը բացած էի Աստուծոյ եւ անոր սէրը ողողած էր կեանքս եւ փրկած էր զիս կորուստէ: Անոնք սկսան ուշադրութեամբ հետեւիլ:

Զգացի Սուրբ Հոգիին ներկայութիւնը՝ մինչ ան կը կեդրոնանար կիներէն իւրաքանչիւրին վրայ: Անոնք կիներու հաւաքածոյ մը չէին. անոնք անհատ դուստրեր էին: Ես կարգով դպայ անոնց դէմքերուն՝ վստահելով Աստուծոյ, որ ինքն ալ նոյնպէս իր ձեռքը պիտի երկարէր եւ պիտի կառավարէր իմ մարդկային խօսքերս իր Հոգիով: Մինչ կը դպչէի իրենց, կը հռչակէի. «Աստուած ծրագիր մը ունի



Էգ Առիւծները Կ'ապրին Լոյսի մէջ եւ Կ'որսան Մութի մէջ

Կեանքիդ համար»:

Արցունքներ սկսան հոսիլ անոնց այտերն ի վար երբ ես խօսեցայ Աստուծոյ մը մասին, որ փնտռած էր զիրենք եւ այցելած իրենց իրենց ստրկութեան խաւարին մէջ: Անոնք շատ լաւ գիտէին ինչ կը նշանակէ ըլլալ ուրիշի մը ճնշումին եւ կառավարումին տակ: Աղջիկներէն իւրաքանչիւրը կ'ապրէր մղձաւանջի մը մէջ, զոր ուրիշ մէկը ծրագրած էր իր կեանքին համար: Այդ կիներէն իւրաքանչիւրին հետ խօսեցայ եւ բոլորն ալ կամ առեւանգուած էին կամ ալ խաբուած էին եւ իրենք զիրենք գտած սեռային ստրկութեան մէջ: Անոնք գերի առնուած էին ճիշդ այն խոստումով, որ ես հիմա իրենց կ'առաջարկէի. յոյս:

Անոնցմէ իւրաքանչիւրը համարձակած էր յուսալ աւելին. աւելի լաւ գործ մը, ուսում կամ պարզապէս սիրուիլ: Ոմանք յուսացած էին փախուստ տալ իրենց գիւղի անողորմ աղքատութենէն:

Այս կիներուն սուտ խօսած էին տղամարդիկ եւ կիներ, որոնց վստահած էին ժամանակին: Պատմութիւններ լսեցի հօրեղբայրներու, ամուսիններու, եղբայրներու, զարմիկներու, հօրաքոյր/մօրաքոյրներու եւ նոյնիսկ բարեկամներու մասին, որոնք ծախած էին զիրենք: Աւելի լաւ կեանքի մը իրենց երազը գործածած էին՝ իրենց դաւաճանելու համար: Ես իրենցմէ խնդրեցի, որ անգամ մը եւս յուսան, վստահին Յիսուսի՝ Աստուծոյ Որդիին, որ երբեք չի ստեր:

Ես իրենց ուրիշ բաներ ալ ըսի: Բաներ, որ հիմա յիշողութեանս մէջ չեն: Խօսքեր եւ բառեր, զորս եթէ կրկնեմ այս էջերուն մէջ, կրնան մանկական կամ պարզ մխիթարական թուիլ մեր արեւմտեան ընկերութեան մէջ: Բայց այդ պահուն անոնք երկինքէն տրուեցան ինձի:

Առանց ֆանֆառի [իր գալուստը աւետող փողերու ձայնի եւ տօնակատարութեան- Թարգմանիչ] երկինքի մթնոլորտը ներխուժեց այդ նեղ, սեղմուած վայրին մէջ: Կապակցութիւն մը տեղի ունեցած էր երբ անոնք ընդառաջեցին կենդանի Աստուծոյ, որ յոյս ներշնչեց անոնցմէ իւրաքանչիւրին:

Զգալով մթնոլորտի այդ փոփոխութիւնը եւ իրենց հետ հաղորդակցելու իմ անատակութիւնս, դարձայ հովիւին: Ան

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

աղօթեց այդ կիներուն հետ եւ համար: Մինչ ան երկինքին կը դիմէր անոնց համար, մեր խումբի կիները սկսան պտտիլ այդ թանկարժէք դուստրերուն միջեւ եւ փաթթուկ ըրին իրաքանչիւրին, իրենք եւս աղօթքով շրջապատելով զանոնք: Այդ պահուն կարծես այդ վայրին պատերը դէպի ետեւ գացին:

Նկատեցի յաճախորդ մը դուրս կ'ելլէր տափաստին շղթան գոցելով եւ զգուանքի նայուածք մը նետելով մեր վրայ: Մենք արտասովոր այցելուներ էինք:

ԿԵԴՐՈՆԱՑԱԾ ԵՒ ԿԱՏԱՂԻ

Նկատի առ հետեւեալ աստուածաշնչական հատուածը.

Կը համարձակիմ հաւատալ, որ անբախտները
բախտաւոր պիտի ըլլան օր մը քեզմով:
Դուն զանոնք յուսախաբ պիտի չընես.
որբերը յաւիտեան որբ պիտի չմնան:
Կոտրէ՛ չար աջ բազուկները,
կոտրէ՛ բոլոր չար ձախ բազուկները:
Փնտռէ՛ եւ կործանէ՛ ոճիրի ամէն նշան:
Աստուծոյ շնորհքը եւ կարգը
կը շահին. անաստուածութիւնը կը կորսնցնէ:

Չոհեբուն նուաղած զարկերակը կը սկսի արագնալ.
անյոյս եղողներուն սիրտերը կարմիր արիւն կը մղեն,
մինչ դուն քու ականջդ կը դնես անոնց շրթունքներուն:
Որբերը ծնողներ կ'ունենան,
անտունները տուներ կ'ունենան:
Սարսափի իշխանութիւնը վերջ գտած է,
աւազակապետերուն տիրապետութիւնը աւարտած է:
(Սաղմոսներու 10.14-18, բառացիօրէն թարգմանուած
Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Կրնան իրապէս լսել ասիկա: Անիկա կը պարունակէ ամէն տարր, որուն մենք պէտք ունինք՝ խաւարին մէջ որսորդութիւն ընելու համար. հաւատք, արդարադատութիւն, յաղթանակ, բժշկութիւն, յոյս, որդեգրութիւն, վերականգնում, արդարութիւն, վերջ մը եւ նոր սկիզբ մը: Հիմա ժամանակն է,

որ այս աղօթքը աղօթենք, եւ եթէ մենք Աստուծոյ խօսքը մեր բերանէն արձակենք, ան պիտի հսկէ անոր:

Ասիկա ծայրայեղ միջոցառում մըն է. *մաքայի* տեսակի աղօթք: Անձնապէս ես յոգնած եւ ձանձրացած եմ ապահով, նուրբ աղօթքներէ: «Կոտրէ անոնց երկու ձեռքերը եւ անկարող դարձուր զիրենք, Աստուած»ը վտանգաւոր աղօթք մըն է: Անիկա խիստ դիմում մըն է: Եւ չեմ պատկերացներ, որ այսպիսի աղօթք մը ես լուռօրէն կամ կրաւորական կերպով պիտի ընէի: Սաղմոս 10-ը իրականութեան մէջ Աստուծոյ խոստումն է, զոր ես հետս առի իբրեւ սուր մը երբ վերջերս այցելեցի հարաւարեւելեան Ասիա: Ամէն անգամ որ անարդարութիւն մը տեսայ, գործածեցի այդ սուրս:

Կեդրոնացած եւ կատաղի եղիր աղօթքի ատեն: Գոցէ աչքերդ տեսանելի բաներուն դիմաց եւ տես վերականգնումի եւ արդարութեան կատարման տեսիլք մը: Ասիկա է, որ Աստուած կ'ուզէ բերել երկիր: Կան մարդիկ, որոնք պէտք ունին, որ դուն գոցես քու աչքերդ եւ զիրենք տեսնես երբ կ'աղօթես: Ըսել կ'ուզեմ իրապէս աղօթես յամառ աղօթքներ, որոնք կը հասնին երկինք եւ կը վախցնեն քեզ երբ դուրս կ'ելլեն շրթունքներուդ մէջէն:

Կրաւորական եկեղեցի մը պիտի չդիմանայ: Եկեղեցիին համար լաւագոյն յոյսը այն է, որ մենք խաւարի մէջ որսորդութիւն պիտի ընենք մինչեւ որ Խաղաղութեան Իշխանը գայ եւ վերջ դնէ այս սարսափի իշխանութեան: Որպէսզի ատիկա պատահի, մենք պէտք է անհատապէս եւ հաւաքաբար հետամուտ ըլլանք, փնտռենք եւ վերականգնենք այն ինչ որ հիմա պահուած է:

Հաւատացէք ինծի, պէտք չունիք Հնդկաստան ճամբորդելու, որպէսզի գտնէք խաւարի մէջ բանտարկուած յուսալքուած կամ օգնութեան կարիքը ունեցող մարդիկ: Կապուած տղամարդիկ, կիներ եւ պզտիկներ կան ամէն տեղ: Անոնք մեզի կը սպասեն, որ երթանք եւ բարձրացնենք զիրենք: Պէտք է բանանք ազատութեան դուռը եւ հեռանանք ամէն տեսակի խաւարէ, որպէսզի կարենանք զիրենք լոյսի բերել:

Երբ մենք լեցուած ըլլանք Աստուծոյ լոյսով, իրապէս կրնանք հանել կորսուածները խաւարէն: Ասիկա ժամանակը

չէ վարդապետութիւններու վրայ կռուելու կամ աւելի մեծ առաքելութիւն կամ եկեղեցի ունենալու համար մրցակցութեան մէջ մտնելու: Մենք պէտք է ծառայենք եւ ոչ թէ աւելի բարձր դիրք ունենալու ձգտինք եւ մենք մեզ ուրիշներու հետ բաղդատենք:

Արթնցէք: Որբեր կան, որոնք կը սպասեն որդեգրութեան եւ ամէն մարզի մէջ հոգատարութեան: Հազարաւոր մինակ, մեկուսացուած մարդիկ կ'աղօթեն եւ կը յուսան, որ հակառակ բոլոր արտաքին երեւոյթներուն, իրենք առանձին չեն:

Ես «խաւարի մէջ որսալու» գաղափարը ներկայացուցի ընդարձակ, միջազգային մակարդակի վրայ՝ մինչ այս էջերուն մէջ բաժնեկցեցայ տառապանքի եւ մարդկային մաքսանենգութեան պատմութիւնը Հնդկաստանի մէջ, բայց թող ատիկա ծառայէ տեսակէտի համար: Այդ ներըմբռնումը ունենալով, մի՛ պատկերացներ, որ քու ցաւդ կամ տառապանքդ կամ շուրջդ եղող մարդոց տառապանքը կամ ցաւը անհետեւանք են: Աստուած մօտ է բոլոր անոնց, որոնք ցաւի կամ տառապանքի մէջ են: Կապուածութեան, մեկուսացման, դաւաճանութեան, բռնութեան, բռնաբարումի եւ անյուսութեան ցաւը կ'այցելէ մարդոց ամէն երկրի մէջ: Մարդիկ նոյն կարիքները ունին ամէն տեղ, բայց բոլորը նոյն աղբիւրները չունին:

Եկէք ըլլանք հաւատարիմ ծառաներ եւ մեր բարգաւաճումը ճիշդ ձեւով բազմապատկենք: Դուն օրհնուած ես՝ ուրիշները օրհնելու համար: Անհամար տեղեր կան, ուր պէտքը կայ այն օրհնութեան, որ դուն կրնաս բերել: Պէտք չունիս շատ հեռու երթալու, որպէսզի տաս մարդոց: Անյուսութիւն կրնայ գտնուիլ քու գործատեղիիդ մէջ կամ այն խանութներուն, ուրկէ գնումներդ կ'ընես: Բռնաբարում կայ թերեւս քու մէկ բարեկամիդ ամուսնութեան մէջ: Մեկուսացումը կրնայ տարածուած երեւոյթ ըլլալ այն մարդոց կեանքերուն մէջ, որոնց հետ պաշտամունք կ'ընես: Զաւակներդ կրնան դաւաճանութեան հանդիպած ըլլալ դպրոցին մէջ:

Յաճախ ուրիշին կեանքին մէջ յոյս ներշնչելը ինքնին բժշկութիւն կ'ըլլայ մեզի համար: Ամբողջ աշխարհի մէջ մարդիկ պէտք ունին այն սիրոյն եւ արժէքին, որ Յիսուս Քրիստոս կը դնէ մարդուն շունչին կամ ներքին անձին մէջ:

Էգ Առիւծները Կ'ապրին Լոյսի մէջ եւ Կ'որսան Մուֆի մէջ

Ըլլան անոնք աղքատութեան պատճառով անկին մը կծկուած մարդիկ, փղոսկրեայ աշտարակներու մէջ ապրող մարդիկ կամ անհանգիստ կերպով անկայուն կացութիւններու մէջ ապրող մարդիկ, գիծերը քաշուած են, սահմանները գծուած են: Կայ կեանք եւ կան մահ ու կործանում: Կայ յոյս եւ կայ անյուսութիւն: Կայ լոյս եւ կայ խաւար: Այդ երկու թագաւորութիւնները կամ մարզերը աւելի յստակ չեն եղած երբեք, եւ վտանգը աւելի մեծ չէ եղած երբեք:

Էգ առիւծները կ'ապրին լոյսի մէջ եւ կ'որսան մուֆի մէջ: Ուստի, քաջ քոյս, մեզի համար ատկէ աւելի լաւ օրինակ մը չեմ կրնար պատկերացնել: Կը հաւատամ, որ այս գիրքը ձեռքերուդ մէջ կը բռնես, որովհետեւ դուն խոստումի դուստր մըն ես: Դուն դուռը լայն բացած ես: Հիմա սորվէ ապրիլ եւ հանգստանալ իր փառաւոր լոյսին մէջ: Եկէք նաեւ թեթեւօրէն ապրինք իրարու հետ. մի՛ արտօներ, որ հոգը կամ մտահոգութիւնը մեկուսացնեն քեզ կամ ճնշեն վրադ:

Եկէք լայն բանանք մեր աչքերը եւ սորվինք տեսնել մուֆին մէջ. նայիլ երեւցածէն անդին եւ տեսնել սիրտեր եւ բաներ, որոնք պահուած են: Եկէք միասնաբար որսանք մուֆին մէջ եւ ուրիշները բերենք Աստուծոյ լոյսին: Էգ առիւծին նման, եկէք հաւասարակշռութիւն մը գտնենք հանդարտին ու բացին եւ խիստին ու կատաղիին միջեւ: Եկէք հանգչինք իր մէջը, հանդարտինք իրարու հետ եւ միասնաբար ըլլանք վայրի խաւարին դիմաց:

Քալել Արու Առիծի մը հետ



Մի լար: Տնս, Յուդայի ցեղէն եղող
Առիծը՝ Դաւիթի գահին ժառանգորդը,
յաղթեց:

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ 5.5, ԲԱՌԱՑԻՕՐԷՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ
ՆԻՈՒ ԼԻԿԻՆԿ ԹՐԱՆՍԼԷՅՇԸՆ
ՏԱՐԲԵՐԱԿԷՆ

Ընդհանրապէս երբ դժուար կացութիւններու մէջ կ'ըլլանք այնպէս կը զգանք, որ առանձին կը քալենք: Բայց իրականութեան մէջ պահուած բայց հզօր բան մը քու առջեւ կը քալէ եւ ճամբադ կ'առաջնորդէ: Մինչ կը շարունակէք կարդալ, կրնաք անդրադառնալ, որ քալած էք մեր Առիծին՝ Յիսուս Քրիստոսի հետ առանց գիտնալու:

Երբեմն հետեւիլը կրնայ վախ պատճառել: Մեր դժուարութիւնը անպայմանօրէն Աստուծոյ մեզի ըսածը հասկնալուն մէջ չէ, այլ՝ զանիկա ինչպէս ընելուն մէջ է: Մարդոց մեծ մասը շատ կ'ուզէ յաջողիլ Աստուծոյ ըսածները ընելու մէջ, բայց բնաւ գաղափար չունի ինչպէս ընէ ատիկա:

Յիսուս տուաւ առաջին ակնարկով պարզ թուացող հրահանգ մը: Նայինք Մատթէոսի 16.24-ի երկու տարբերակներու:

Եթէ մէկը ուզէ գալ իմ ետեւէս, թող ուրանայ
ինքզինք, վերցնէ իր խաչը, ու հետեւի ինծի:

Եւ յաւելեալ յստակութեան համար...

Ով որ մտադիր է ինծի հետ գալու, պէտք է ձգէ, որ ես առաջնորդեմ: Դուն չես նստած վարորդի աթոռին. ես նստած եմ հոն: Փախուստ մի՛ տար տառապանքէն. ընդունէ՛ զանիկա: Հետեւէ՛ ինծի եւ ես քեզի ցոյց կու տամ ինչպէս: (բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Հրահանգը յստակ է. ուրացիր անձդ, խաչդ վերցնիր եւ հետեւէ: Բայց ատիկա ինչպէս ընելուն մէջն է, որ դժուարութիւն կ'ունենանք:

Ինչպէս կ'ուրանաս անձդ:

Ինչ կը նշանակէ խաչդ վերցնել:

Ինչպէս կրնաս հետեւիլ մէկու մը, զոր չես տեսներ:

Պատասխանը պարզ է. Յիսուս կ'առաջնորդէ... մենք կը հետեւինք:

ՀԱՒԱՏՔՈՎ ՔԱԼԵԼ



Ես յաճախ առիթը կ'ունենամ խօսելու երիտասարդուիկներու հետ՝ հարցում-պատասխանի հանդիպումներու ընթացքին: Չէք կրնար երեւակայել, քանի՛ անգամ ես հարցումի մը կը պատասխանեմ եւ անմիջապէս յետոյ կը լսեմ՝ «Բայց ինչպէս» հարցումը:

Ինչպէս կը գիտնաս, որ Աստուած է խօսողը:

Ինչպէս կրնամ ներել հօրս:

Ինչպէս ազատագրուեցար ուտելու հետ կապուած հոգեբանական հարցէդ:

Ինչպէս կը գիտնաս, որ այն տղան, որուն հետ կը հանդիպիս ճիշդ անձն է:

Ինչպէս յաղթահարեցիր վախդ, ամօթի զգացումդ, յանցաւորի զգացումդ:

Երբ կը դիմագրաւէի այն դժուարութիւնները, որոնց մասին այդ աղջիկները կը հարցնեն ինծի, ես պարզապէս կը հաւատայի, որ Աստուծոյ Խօսքը ճշմարիտ է եւ ապա կը

հետեւէի անոր հոն, ուր որ կ'առաջնորդէր զիս: Յիսուս է մարմնացած Խօսքը: Մինչ կը կարդանք Աստուծոյ Խօսքը, կը տեսնենք ինչպէս կը քալէր ան եւ ո՛ր կ'առաջնորդէ: Անոնք, որոնք անցած են դժուար պայմաններէ, սկիզբը իրենք զիրենք կարող չեն համարած: Այլ՝ պարզապէս իրենց քաջութիւնը հաւաքած են եւ հետեւած Յիսուսի՝ հաւատքով:

Հաւատքի քայլերով անոնք տապալեցին թագաւորութիւններ, արդարութիւն գործադրեցին, խոստումներուն տիրացան: (Եբրայեցիներուն 11.33, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Հաւատքով շարժող մարդոց շնորհիւ փտած թագաւորութիւններ տապալեցան, սխալ արարքներ փոխարինուեցան արդարութեամբ եւ Աստուծոյ խոստումները իրական դարձան: Մենք մեր կեանքին մէջ եւ մեր կեանքին համար Աստուծոյ ծրագիրին եւ խոստումին մէջ կը մտնենք հաւատքով: Հաւատք կ'ուզես հետեւելու համար Առիծին:

Հաւատքը կը յաղթէ կասկածին: Մենք Աստուծոյ կը հարցնենք. «Հո՞ն ես: Չեմ զգար քեզ»: Հաւատքով կը լսենք մեր Առիծին պատասխանը, որ կ'ըսէ. «*Բնան պիտի չթողում քեզ, ո՛չ ալ պիտի լքեմ քեզ*» (Եբրայեցիներուն 13.5):

Հաւատքը ակնկալելու դիրքին մէջ կը դնէ մեզ երբ կ'աղօթենք: Հաւատքով եղած աղօթքը պիտի բժշկէ հիւանդը, եւ Տէրը քեզ պիտի առողջացնէ: Եւ եթէ մեղքեր գործած ես, պիտի ներուիս անոնք քեզի (տես Յակոբոսի 5.14):

Ինչ է հաւատքի քայլ առնելը:

Աբրահամի համար՝ մեր հաւատքի հօր, անապատին մէջ ճամբորդութեան ընթացքին Աստուծոյ հետեւիլն էր հակառակ անոր որ չէր գիտեր, թէ ո՛ր կ'երթար: Երբ կարդացի Աբրահամի եւ Սառայի պատմութիւնը, նկատեցի, որ Աստուած իրենց տուաւ թէ՛ այն երկիրը, որմէ անցած էին եւ թէ՛ այն երկիրը, որ կը տեսնէին հեռուն:

Հաւատքով Աբրահամ «Այո» ըսաւ Աստուծոյ կանչին ճամբորդելու անձանօթ վայր մը, որ պիտի ըլլար իր

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

տունը: Երբ ճամբայ ելաւ, ան բնաւ չէր գիտեր, թէ ո՛ր կ'երթար: (Եբրայեցիներուն 11.8, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատճ* տարբերակէն)

Եթէ Սառա եւ Աբրահամ Ուր մնացած ըլլային, ուր ամէն բան հանգիստ էր եւ ծանօթ, անոնք Աստուծոյ խոստումը պիտի չժառանգէին:

Ո՛րքան դժուար է մեզի համար հաւատքով քալելը: Մենք քարտէս կ'ուզենք, իսկ փոխարէնը Աստուած խորհուրդ մը կը հիսւէ մեր առջեւ:

Այդ հաւատքի ճամբորդութիւնը քաջութիւն կը զարգացնէ մեր մէջ: Մեզմէ իւրաքանչիւրիս առջեւ արգելքներով լեցուն արկածախնդրական ընթացք մը կայ, եւ սակայն կայ այն երաշխիքը, որ մեր Առիծը մեզ պիտի չառաջնորդէ ճամբայէ մը, որմէ նախապէս ինք չէ անցած: Երբ Աստուած կը կանչէ մեզ, որ ընենք բան մը, որ ատկէ առաջ չենք տեսած կամ ըրած, ատիկա վախնալիք է: Երբեմն Աստուած մեզ կ'առաջնորդէ ուղղութեամբ մը, ուր ոչ ոք երազած է ոտք կոխել: Մեր ամբողջ ունեցածը մարտահրաւէր մըն է եւ անոր հրաւէրը. «Դուստր, կը հետեւիս ինծի... նոյնիսկ եթէ կը վախնաս»:

Տակաւին վերջերս բարեկամուիի մը հեռաձայնեց ինծի ըսելու համար, որ հրաւիրուած էր ընելու բան մը, որ միեւնոյն ատեն թէ՛ վախնալիք էր եւ թէ՛ ռազմավարական կարեւորութիւն ունէր: Իրմէ խնդրուած էր մասնակցիլ տղամարդ պատգամաբերներէ բաղկացած կլոր սեղանի մը՝ ուղղուած մեծապէս ազդեցիկ տղամարդ առաջնորդներու մեծ հաւաքի մը: Նոյնիսկ իր ամուսինը դէմ կեցած էր իր կնոջ մասնակցութեան՝ հարց տալով, թէ արդեօք ինչո՞ւ հրաւիրած էին զինք:

Ան հեռաձայնած էր ինծի, քանի որ խորհրդաժողովի ծանուցման գրքոյկը նոր հասած էր իրեն, եւ նկարին մէջ իբրեւ միակ կին պատգամաբերը իր դէմքը տեսնելէ ետք, ան ճնշում եւ վախ զգացած էր՝ մտածելով, որ լուրջ խնդրի մը մէջ դրած էր ինքզինք:

Նախքան որ մտածեմ ըսածիս մասին, բերնէս այս

խօսքերը ելան. «Դուն այս պահին համար պատրաստուած ես ամբողջ կեանքիդ ընթացքին: Դուն կարող ես այս գործը ընելու եւ լաւ ընելու: Ատիկա պիտի ընես գրաւիչ, բարեպաշտ եւ անդիմադրելիօրէն իմաստուն ձեռով մը»:

Լսեցի դանդաղօրէն արտաշնչելը եւ զգացի, որ գլուխը կը շարժէր հաւանութեան նշանով: Գիտէի, որ ան այդ մարտահրաւերը առանձին պիտի չդիմագրաւէր: Առիծ մը կանգնած պիտի ըլլար իր կողքին: Ան պիտի հետեւէր Առիծին եւ շարունակէր քալել, թերեւս դողալով, բայց գիտնալով, որ առանձինը չէր:

Անոնք, որոնք կը հետեւին Յիսուսի, միշտ Առիծի մը հետ կ'ըլլան: Յիսուս մեր Գառնուկն է, որ զոհուեցաւ եւ յարութիւն առաւ իբրեւ Յուդայի Առիծը:

Ահա Յուդայի տոհմէն եղող Առիծը, Դաւիթի
Արմատը, յաղթեց: (Յայտնութիւնը 5.5)

ՄԻ ՔԱՇՈՒԻՐ

Քրիստոնէական կեանքիդ մէջ քիչ մը վախ եւ դող դնելու համար, կ'ուզեմ, որ ինքզինքդ պատկերացնես առիծի մը կողքին քալելու ատեն: Ո՞վ գիտէ: Կրնայ ըլլալ, որ Աստուած ուզէ, որ վախնալիք բան մը ընես:

Գիտէ՞ք, Յիսուսը Գալիլիայի Ծովու եզերքին քալելու ատեն կամ լերան վրայ ուսուցանելու ատեն պատկերացնելը ճիշդ կերպով չի ներկայացներ այսօր անոր ով ըլլալը: Աստուծոյ Որդին այս երկիրը այցելեց իբրեւ մարդ մը՝ մերկացուած իր աստուածային առանձնաշնորհումներէն: Բայց ան այլեւս երկրի վրայ չի քալեր՝ մարդկութիւն հագած, բացի իր որդիներուն եւ դուստրերուն միջոցաւ: Ան նստած է բարձրերը՝ վառ, շոայլ, երկնային շքեղութեան մէջ. զօրութեան եւ սքանչելիութեան հարազատ պատկերը:

Բարձրացրո՛ւ աչքերդ եւ տես զինք հիմա իբրեւ Յուդայի Առիծը՝ շքեղ իր մեծափառութեան եւ զօրութեան մէջ: Ան կ'ուզէ, որ դուն ապրիս հիացմունքի եւ հրաշքի մէջ, ոչ թէ օրէնքներու եւ պարտականութիւններու մարզին մէջ: Արտօնէ, որ իր ձայնը քու մէջդ խորապէս անզուսպ եւ խորապէս

վայրի բան մը արծարծէ: Երիտասարդ Երեմիային տրուած Աստուծոյ խոստումները նաեւ քեզի ուղղուած են՝ իր անվախ, մարգարէական դուստրին.

«Նախքան որ քեզ ձեռակերպեմ արգանդին մէջ

Քու մասիդ ամէն բան գիտէի:

Նախքան որ ցերեկի լոյսը տեսնես,

Ես սուրբ ծրագիրներ ունէի քեզի համար.

Մարգարէ մը ազգերուն.

Ա՛յդ է, որ ի մտի ունէի քեզի համար»:

Բայց ես ըսի. «Մէկ վայրկեան, Տէր Աստուած: Նայէ իմ վիճակիս:

Ես բան մը չեմ գիտեր: Ես պարզապէս պատանի մըն եմ»:

Աստուած ինձի ըսաւ. «Մի՛ ըսեր՝ “Ես պարզապէս պատանի մըն եմ”:

Ես քեզի պիտի ըսեմ, թէ ո՛ր երթաս, եւ դուն պիտի երթաս հոն:

Ես քեզի պիտի ըսեմ, թէ ի՛նչ ըսես, եւ դուն պիտի ըսես:

Ոչ ոքէ մի՛ վախնար:

Ես հոն կ'ըլլամ եւ քեզի հոգ կը տանիմ»: (Երեմիայի 1.5-9, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Երեմիայի նման, որպէսզի դուն ալ ազդու ծառայող մը ըլլաս, պէտք է հանգիստ գտնես այն իրականութեան մէջ, որ Աստուած ճիշդ հոն է քեզի հետ: Ատիկա քեզ կը դնէ չվախնալու դիրքի մը մէջ, անկախ անկէ, թէ ուրիշներ ի՛նչ կ'ըսեն կամ կ'ընեն:

Քու կեանքի ճամբորդութեանդ ընթացքին պիտի լսես շատ մը ձայներ եւ ըլլաս բաներու ազդեցութեան տակ: Անոնցմէ ոմանք կը զօրացնեն եւ կ'ամրապնդեն քու ուղղութիւնդ. ուրիշներ՝ կը շեղեն քեզ քու ճամբայդ եւ արգելք կը հանդիսանան անոր: Կարգ մը ձայներ կը մղեն քեզ, որ երթաս տակաւին անձանօթ եղող տեղեր, իսկ ուրիշներ ետ կը պահեն քեզ: Կան ձայներ քու անցեալդ՝ ընտանիքդ,

յուսախարութիւններէդ եւ վախերէդ, որոնք երբեմն կը պոռան երբեմն կը փսփսան. «Մէկկողմ քաշուիր: Ետեւ դարձիր: Կրնաս ձախողիլ: Կրնաս ցաւիլ»: Այս ձայները կը մղեն քեզ, որ ինքզինքդ պաշտպանես:

Այդ ժխտական, կեանքը քեզմէ քամող ձայներուն կողքին կան հզօր, կեանք տուող ձայներ: Անոնք միշտ ներկայ են, բայց եթէ ընտրես մտիկ չընել անոնց, անոնք կրնան վրիպիլ քեզմէ: Ձայները երկնային բանակը կազմողներուն, որոնք մեզմէ առաջ երկինք ելան, կը կանչեն Սուրբ Գիրքերուն ընդմէջէն՝ քաջալերելով, որ յառաջ երթաս, եւ կ'ըսեն. «Մտիկ մի՛ ըներ քու վախերուդ կամ շուրջիններուդ սարսափին: Մտիկ մի՛ ըներ թշնամիին սուտերուն, որ դատապարտուած է եւ տանջուած: Մի՛ շեղիր: Մենք քեզի պէտք ունինք: Մնա՛ ճամբուդ մէջ եւ շարունակէ՛ ընթացքդ»:

Յիշեցնեմ, որ առիծի մը ներկայութեան, բոլոր միւս աւելի նուազ զօրաւոր անասունները կը դողան: Մինչ Սատանային համար կ'ըսուի, թէ առիծի *պէս* է, որ կը շրջի՝ փնտռելով մէկը, որ լափէ (տես Ա.Պետրոսի 5.8), ան առիծ չէ: Ան պարզապէս կը ձեւացնէ ըլլալ առիծ: Սատանան բաղդատելի իսկ չէ մեր ճշմարիտ Առիծին հետ: Խաւարի իշխանը եւ իր խումբը կը ծպտուին անոնց պէս, որոնք աստուածային մոնչիւն ունին, բայց անոնք ստուերներ են, որոնք պէտք ունին փոխ առնելու լոյս եւ ստեղծագործական հանճար:

ՎՍՏԱՀԻՐ ՔՈՒ ԱՌԻԻԾԻՆ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐՈՒԴ

Երբ փոքր աղջնակ մըն էի, Ծնունդի մը առիթով «Տը Քրոնիքըլզ աֆ Նարնիա»-յի ամբողջ շարքը ստացայ իբրեւ նուէր: Իւրաքանչիւր վերնագիր տեղ մը թաղուած գանձի մը պէս էր: Երբ ասարտեցի ամբողջ շարքը կարդալը, լացի: Ոչ միայն որովհետեւ պատմութիւնները վերջացան, այլեւ որովհետեւ կապս կտրուեցաւ սքանչելի եւ երազային աշխարհի մը հետ: Հասկցայ, թէ Ասլանը կը ներկայացնէր Յիսուսը, բայց չէի կրնար հաշտեցնել այն Յիսուսը, որուն մասին գիտէի այն վայրի, չընտելացուած սակայն հպելի առիծին հետ, զոր սկսած էի սիրել «Քրոնիքըլզ»-ին մէջ:

Ան կը քալէր իր գաւակներուն հետ: Ես չէի ուզեր վերադառնալ լուռ, լուսապսակուած սրբանկարներուն եւ պաղ սուրբ ջուրին: Ես ետ կ'ուզէի կենդանի, շնչող առիծը: Կ'ուզէի հանդիպում մը Աստուծոյ հետ այնքան խորունկ, ջերմ եւ կենդանի, որ անոր շօշափելի գոյութիւնը անուրանալի ըլլար: Կ'ուզէի սէր մը այնքան հզօր, որ կը վախցնէր զիս: Կ'ուզէի արդարութիւն այնքան մաքուր, որ շունչս կը կեցընէր:

Կ'ուզէի ըլլալ Լիւսի մը աշխարհի մը մէջ, ուր անասունները եւ ծառերը կը խօսէին: Ուր արժանիքի եւ ճշմարտութեան համար վարձատրութիւն կը տրուէր: Ուր սխալները կը ներուէին առանց խոստովանութեան արարողութեան:

Աստուած կը հրաւիրէ մեզ, որ իր առջեւ գանք՝ աչքերը լայն բացած մանուկի մը անմեղութեամբ, եւ ընդունինք իր սիրոյ եւ փրկութեան հրաշքը: Բայց կրօնական կանոնները եւ ժամանակի ընթացքը պատճառ եղան, որ մեզմէ շատեր շեղին: Եւ մեր առջեւէն ելաւ մեր պատանեկութեան Առիծի պատկերը:

Այդ գաղափարը ի մտի ունենալով, եկէք այցելենք Լիւսիին Նարնիայի շարքի չորրորդ գիրքին՝ «Փրինս Քասփիյըն»-ի էջերուն վրայ: Այն տեղին մէջ, ուր պիտի հանդիպինք իրենց, պատանիները սպառած են, կորսուած եւ կը պատրաստուին մէկ ուրիշ սխալ գործել երբ Լիւսի կը տեսնէ Ասլանը՝ իր Առիծը:

«Տեսէք, տեսէք, տեսէք», պոռաց Լիւսի:

«Ո՞ր: Ի՞նչ», հարցուցին բոլորը:

«Առիծը», ըսաւ Լիւսի: «Ինքը Ասլանը: Չտեսա՞ք»:

Անոր դէմքը փոխուած էր ամբողջութեամբ եւ անոր աչքերը կը փայլէին:

«Այսինքն իրապէս ըսել կ'ուզես...», սկսաւ խօսիլ Փիթըր:

«Ո՞ր կը կարծես տեսար զինք», հարցուց Սիւզըն:

«Չափահաս մէկու մը պէս մի՛ խօսիր», ըսաւ Լիւսի, ոտքը գետին զարնելով: «Ես չեմ կարծեր, որ տեսայ զինք: Ես տեսայ զինք»:

«Ո՞ր, Լիւ», հարցուց Փիթըր:

«Ճիշդ հորդ վերը, մոլահացիներուն միջեւ: Ո՛չ, կիրճին այս կողմը: Եւ վերը, ոչ վարը: Ձեր երթալ ուզած ուղղութեան ճիշդ

հակառակը: Եւ ան կ'ուզէր, որ երթանք հոն, ուր ինք էր. հոն վերը»:

«Ինչպէս գիտես, որ այդ էր իր ուզածը», հարցուց Էտմընտ: «Ան... ես... ես... պարզապէս գիտեմ», ըսաւ Լիւսի, «անոր դէմքէն»:

Միաները իրարու նայեցան շփոթի մէջ եւ լուռ մնացին:

Երբ Առիծը յայտնուի, դէմքդ կ'արտացոլացնէ աստիկա: Տեսիլքին հետ կու գայ գիտնալը:

Կը յիշեմ այդ *գիտնալու* տեսքը Էտիսընի երեսին վրայ երբ ինծի ըսաւ, որ կը հաւատար, թէ Ճիւլիանան իր ապագայի կինը պիտի ըլլար: Ես նոր տուն հասած էի Քիեւի մէջ կիներու խորհրդաժողովէ մը, եւ իմ բացակայութեանս կարճ ժամանակամիջոցին (վեց օր) տղաս հանդիպած էր իր կեանքի սիրոյն: Ան կ'ուզէր, որ իրենց հետ ճաշի երթայի այդ օրը: Դուրսի տախտակամածին վրայ նստանք միասին, եւ մտիկ ըրի իրեն մինչ ինք ինծի կ'ըսէր, թէ Ճիւլիանան «այդ աղջիկն» էր:

Երբ հարցուցի իրեն, թէ ինչպէս գիտէր աստիկա, ան աչքերուս մէջ նայեցաւ եւ բացատրեց. «Պարզապէս *գիտեմ*»: Այդ պահուն ես ալ գիտցայ: Անդրադարձայ, որ տղաս բան մը տեսած էր այդ երիտասարդուհիին մէջ: Բան մը, որ իրեն ոյժ կու տար առնելու ճամբայ մը, որ չէր կրնար բացատրել: Իբրեւ իր մայրը, ես անշուշտ որ նեցուկ պիտի ըլլայի տղուս իր ճամբորդութեան մէջ: Նոյնիսկ նախքան Ճիւլիանայի հետ ժամանակ անցընելս, ես հաւատացի, որ ան այդ աղջիկն էր իմ տղուս համար, նոյնիսկ եթէ չէի հասկնար:

Երբ կ'ունենանք այդ Առիծին հետ հանդիպումները, պէտք է վստահինք այդ գիտնալուն, նոյնիսկ եթէ ուրիշներ չեն տեսներ այն ինչ որ յստակ է մեզի համար: Հակառակ միւս պզտիկներուն կասկածամտութեան, Լիւսի վստահեցաւ իր տեսածին եւ գիտէր, որ անիկա ճիշդ էր:

Երբ Լիւսի կը յայտնէ միաներուն այն ուղղութիւնը, դէպի ուր Ասլան կ'ուզէր, որ երթային, միւս պզտիկները հարցականի տակ կ'առնեն Լիւսին: Անոնք ոչ միայն կը կասկածին անոր Ասլանը տեսած ըլլալուն, այլեւ հարց կու տան, թէ Ասլան ինչո՞ւ Լիւսիին երեւցաւ: Անոնք կ'որոշեն

քուէարկել՝ որոշելու համար, թէ կ'ուզեն հետեւիլ Լիւսիին եւ իր Առիւծիին, կամ ուրիշ, աւելի ուղղակի ճամբայ մը առնել: Լիւսի կը պարտուի, եւ պզտիկները կը դառնան եւ ուրիշ ուղղութեամբ կ'երթան: Լիւսի խումբին կը հետեւի՝ լալով ուրիշ ճամբայ մը առնելուն համար:

Կարծեն բոլորս ալ գիտենք, թէ Լիւսի ինչ կը զգար:

Երբ կը տեսնես առիւծ մը, կամ Աստուծոյ կողմէ նշան մը, զոր ուրիշներ չեն տեսներ, հարցումներ պիտի հարցուն: Պիտի ուզեն գիտնալ, թէ ինչնի քեզի ցոյց տրուեցաւ բան մը, որ իրենցմէ վրիպեցաւ: Ես սորված եմ, որ միայն Աստուած կրնայ պատասխանել այդ հարցումին: Ան կրնայ ընել ինչ որ ուզէ: Աստուած ինքզինք տարբեր մարդոց կը յայտնէ տարբեր ձեւերով: Ատիկա պէտք է Քրիստոսի Մարմինին մէջ ստեղծէ իրարմէ կախեալ ըլլալու վիճակ մը եւ ոչ թէ հարցականի տակ առնելու: Եթէ մեզմէ իւրաքանչիւրը բաժին մը ունի, առաջնորդները կը զօրացնեն եւ կը մղեն մէկը միւսը: Սոսկալի է սխալ հասկցուիլ եւ ապա սխալ ուղղութեամբ առաջնորդուիլ: Շատ վատ է զգացումը երբ շուրջիներդ չեն արժեւորեր Աստուծոյ կողմէ քեզի տրուած ներըմբռնումը: Յիշեցէք, որ նոյնիսկ ասոր մէջ Աստուած աւելի մեծ նպատակ մը կը հետապնդէ: Մի՛ արտօներ, որ մերժումը եւ սխալ հասկացողութիւնը դատողութիւն եւ դառնութիւն բերեն շունչիդ կամ ներքին անձիդ մէջ: Վերլուծէ՛ եղածը:

Վերադառնալով «Փրինս Քասպիլըն»ին, շատ մը սխալ դարձուածքներով լեցուն օրէ մը ետք եւ գրեթէ մահացու հանդիպումէ մը ետք, պզտիկները դարձեալ կը հասնին հոն, ուրկէ սկսած էին: Յաւերու մէջ եւ սպառած, անմիջապէս կը քնանան: Ասլան գիտէ, որ Լիւսի ցաւի մէջ է, եւ որպէսզի արգելք ըլլայ անոր աւելի եւս վնասուելուն, նորէն այցելութիւն մը կու տայ անոր:

Իրենց բանակատեղիին դուրսէն Ասլան կը կանչէ Լիւսին, որ տարօրինակ կերպով արթուն է այդքան դժուարութիւններով լեցուն օրէ մը ետք: Իսանդավառուելով անոր ձայնէն եւ հրճուանքով լեցուած, Լիւսի կ'երթան անոր հետ հանդիպելու: Իր օրը նկարագրելու ատեն, Լիւսի կը քննադատէ իր եղբայրները եւ քոյրը՝ իր խրատը մտիկ չընելուն համար: Առիւծին խորքէն կու գայ մոնչիւն մը:

Յնցուած, Լիւսի կը հարցնէ իրեն, թէ սխալ բան մը ըրած էր արդեօք:

«Բայց արդէն իմ սխալս չէր, չէ»:

Առիծը ուղղակի անոր աչքերուն մէջ նայեցաւ:

«Օհ, Ասլան,» ըսաւ Լիւսի... «Չէի կրնար միաները ձգել եւ առանձին քեզի գալ: Ինչպէս կրնայի աստիկա ընել...»

Ասլան բան մը չըսաւ:

Առիծը ուղղակի անոր աչքերուն մէջ նայեցաւ: Ինչն է Աստուծոյ ներկայութեան մէջ, որ այդպիսի յստակութիւն կը բերէ մեր աղաւաղուած մարդկային տեսողութեան: Ես յաճախ մտած եմ Աստուծոյ ներկայութեան մէջ մտածելով, որ զոհ մըն եմ՝ որ սխալ հասկցուած է եւ չարաշահուած, միայն անդրադառնալու համար, որ կարգ մը ընտրութիւններ ուղղակի իմն էին: Սակայն մեր Առիծին ներկայութեան մէջ, ես ամօթ չեմ զգար: Չօրաւոր կը զգամ, դիրքաւորուած եւ պատրաստ յառաջ երթալու:

Երբեմն երբեմն մենք մեզ կը գտնենք դժուար կացութեան մը մէջ: Աստուծմէ մղում մը կ'ունենաս ուղղութեամբ մը երթալու, բայց շրջապատէդ կամ ընտանիքէդ ճնշումի տակ կ'ըլլաս ուրիշ ուղղութիւն մը առնելու: Թերեւս փորձուեցար զիջում ընելու հաւատքէդ կամ բարոյականէդ պարզապէս խումբին հետ երթալով եւ լուռ մնալով: Անկախ որքան ճնշումի մէջ ես, հաւանաբար նկատած ես, որ երբ կը դիմես մեր Առիծին, պատրուակներու շարքդ կէս կը մնայ: Անոնք լռութեան կը հանդիպին: Ես յաճախ լսած եմ, որ եթէ Աստուած լուռ է, վերադարձիր վերջին ըսածին: Ընդունեցիր անիկա, ըրիր, ըսիր կամ տուիր: Եթէ ոչ, ան տակաւին կը սպասէ ընդառաջումիդ:

«ԴՈՒՆ ԷՊ ԱՌԻԻԾ ՄԸՆ ԵՍ...»

Աստուած իր ըսածները չի փոխեր պարզապէս որովհետեւ մարդիկ քուէարկութեամբ ուրիշ բան կ'որոշեն կամ չեն համաձայնիր անոր հետ: Ան նաեւ մեղադրանքի խաղը չի խաղար: Ան կը սպասէ եւ մտիկ կ'ընէ մինչեւ որ մենք կ'անցնինք ամբաստանութենէ՝ անկեղծութեան: Այդ խոնարհութեան կեցուածքը մեզի զօրութիւն կու տայ ոտքի

ելլելու եւ քալելու իրեն հետ վայրի տեղերու մէջ:

Սի. Էս. Լուիս այդ խորունկ ճշմարտութիւնը շատ լաւ կերպով կը ներկայացնէ Լիւսիի եւ Ասլանի միջեւ հետեւեալ խօսակցութեան մէջ: Լիւսին անդրադարձած է, որ պէտք էր հետեւէր Ասլանին, նոյնիսկ եթէ միաները իրեն հետ չուզեցին երթալ: Այդ յայտնութեան հետ կու գայ նոր պատասխանատուութիւն մը: Ասլան անոր կու տայ երկրորդ առիթ մը եւ կը թելադրէ, որ արթնցնէ իր եղբայրները եւ քոյրը՝ ըսելու համար, որ դարձեալ տեսած էր զինք եւ ժամանակն էր, որ իրեն հետեւէին:

«Բայց ինձի պիտի չհաւատան», ըսաւ Լիւսի:

«Կարեւոր չէ», ըսաւ Ասլան:

«Օ՛, ինչ պիտի ընեմ ես հիմա», ըսաւ Լիւսի: «Ես ալ շատ ուրախացայ քեզ նորէն գտնելուս համար... Եւ կարծեցի, որ կու գաս մոնչելով եւ թշնամիները վախցնելով կը փախցնես, անցեալ անգամուայ պէս: Իսկ հիմա ամէն բան ահաւոր պիտի ըլլայ»:

«Քեզի համար դժուար է, պզտիկ աղջիկս», ըսաւ Ասլան: «Բայց բաներ երկու անգամ նոյն ձեւով չեն պատահիր երբեք»:

Եկէք պահ մը կանգ առնենք: Կը սիրեմ այդ պատկերը, ուր մարդ մը կ'ընդառաջէ Աստուծոյ մէկ հրամանին: Ան մեզ կը դրկէ արկածախնդրութեան մը, իսկ մենք կը պատկերացնենք, որ «ահաւոր» ձախողութիւն մը պիտի ըլլայ: Լիւսի յուսալից վիճակէն պահուրտելու վիճակին անցաւ:

Եկէք շարունակենք.

Լիւսի իր գլուխը մխրճեց անոր բաշին մէջ՝ անոր երեսէն պահուրտելու համար: Բայց կախարդական բան մը պէտք էր ըլլար անոր բաշին մէջ: Լիւսի զգաց, որ առիծի զօրութիւն կը մտնէր իր մէջ: Յանկարծ շտկուեցաւ:

«Կը ներես, Ասլան», ըսաւ ան: «Ես պատրաստ եմ հիմա»:

«Հիմա դուն առիծ մըն ես», ըսաւ Ասլան: «Եւ հիմա ամբողջ Նարնիան պիտի նորոգուի»:

Երբ կարդացի այդ հոշակումը, զգացուեցայ: «Հիմա դուն առիծ մըն ես...»: Կը հաւատամ, որ Աստուած կ'ուզէ այդ նոյն հոշակումը ընել իր դուստրերէն իւրաքանչիւրին վրայ

մինչ մենք կը շտկուինք, լացը կը կեցընենք եւ մենք մեզ կը պատրաստենք: Այդ ատեն է, որ Աստուած կրնայ հոչակել. «Հիմա դուն քաջ ես: Հիմա ունիս իմ տեսակէտս: Գիտես քու զօրաւոր կէտերդ: Պատրաստ ես ճակատամարտի»: Յիշէ՛, որ դուն մաս կը կազմես բանակի մը, որ ճակատամարտի մէջ է:

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ԲԵՐԵԼՈՒ ՔԱՋՈՒԹԻՒՆԸ

Եւ ինչ կը վերաբերի այդ ճակատամարտին: Այնպէս կը թուի, որ խաւարը հետզհետէ կ'աճի մինչ մեր լոյսը կը շարունակէ վառիլ:

Ժամանակն է, որ հոչակենք, թէ առիծ մը կայ, որ մեր միջեւ կը պտըտի: Թերեւս վրիպեցաւ մեզմէ մինչ զբաղած էինք անկարեւոր բաներով: Մեր բանակը պառակտուած է եւ մեր կեդրոնացումը շեղած է մինչ խաւարի զօրութիւնները քայքայած են երկիրը, որուն պահպանութիւնը մեզի յանձնուած է: Ճակատամարտ մը կ'ընթանայ մեր շուրջը, բայց մենք զբաղած ենք մեր բանակատեղիին մէջ կոհներ ընելով:

Յաւիտենական, անտեսանելի Թագաւորին՝ միակ Աստուծոյ ըլլայ պատիւ եւ փառք յաւիտեանէն յաւիտեան: Ամէն: Տիմոթէոս, որդիս, կը թելադրեմ, որ պահես ժամանակին քու մասիդ եղած մարգարէութիւնները, որպէսզի անոնց հետեւելով՝ կարենաս մղել բարի պատերազմը, բռնուած մնալով հաւատքին եւ բարի խղճմտանքին: Ոմանք մերժած են այս բաները եւ այդ պատճառով խորտակած իրենց հաւատքը: (Ա.Տիմոթէոսի 1.17-19, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* տարբերակէն)

Կան խոստումներ մեր ապագային համար: Մենք պատերազմ կը մղենք լոյսի եւ յոյսի գէնքերով: Յիսուս անգամ մը եւս պիտի ջաղթէ մահուան: Ան յաղթանակը շահած է: Բայց ժամանակն է, որ մենք ապրինք իր յաղթանակը եւ քաջալերենք ուրիշներն ալ, որ հետեւին:

Ներկայիս մեր երկիրը բարոյական, տնտեսական եւ հոգեւոր փլուզումի մէջ է: Մենք շրջապատուած ենք թշնամիներով եւ ահաբեկիչներով ամբողջ աշխարհի մէջ եւ մեր սահմաններէն ներս: Վախը եւ դաւաճանութիւնը վէճեր եւ կռիւներ կը պատճառեն ամէն ճակատի վրայ, եւ մեր մէջ կան մարդիկ, որոնք կը կարծեն, թէ ատակ չենք մեր անձնական տեսակէտները ունենալու:

Իմ կարծիքովս, մեր ներկայի կլիման կը նմանի քանի մը հարիւր տարի առաջուայ Անգլիոյ կլիմային: Կայսրութիւն մը ծնաւ պատռտուած, կտոր-կտոր եղած երկիրէ մը, եւ Մեծն Բրիտանիոյ ժողովուրդը նորոգուեցաւ երբ երիտասարդ կին մը իր մէջի առիծը արթնցուց:

Քսանհինգ տարեկան հասակին, Էլիզապէթ Ա. Թագուհին ստանձնեց գահը երկրի մը, որ ֆինանսապէս եւ բարոյապէս սնանկացած էր: Անգլիոյ դէմ սպառնալիքներ կային ամէն կողմանէ՝ զօրաւոր երկիրներու կողմէ, որոնք միացած էին Կաթոլիկութեան տակ: Ի հակասութիւն ատոր, Անգլիան բաժնուած էր իր սահմաններէն ներս ծագած կրօնական պատերազմներու պատճառով: Մեծն Բրիտանիան սկսաւ նահանջել Հենրի Ը. Թագաւորի եւ Մերի Թագուհիի խռովալից ժամանակաշրջաններէն ետք:

Սակայն մտիկ ըրէք իր թագադրութեան առիթով Էլիզապէթ Թագուհիի արտասանած խօսքին. «Այն բեռը, որ վրաս դրուած է կը զարմացնէ (կ'ապշեցնէ) զիս»: Դարեր ետք, անոր այդ բառերը շատ ժամանակին եւ հետաքրքրական կը գտնեն: Ինչ տեսակի կին մը կ'ընտրէ զարմանալ հսկայական բեռան մը պատճառով:

Ուրախ եմ, որ այդ թագուհին չմերժեց ստանձնել այդ պաշտօնը տարիքով շատ փոքր, շատ տկար (թոյլ) կամ սխալ սեռին պատկանելուն համար: Իշխանութեան գլուխ ըլլալու իր իրաւունքը շարունակ հարցականի տակ առնուեցաւ: Բայց նոյնիսկ երբ զինք կոչեցին Հենրի Ը.ի ապօրինի դուստրը, ան չզիջեցաւ: Փոխարէնը, ան ընտրեց զարմանալ: Անոր զարմանքը զինք մղեց դէպի ահի, սքանչելիի եւ Աստուծոյ վստահութեան դաշտը:

Սկիզբէն Էլիզապէթ սորված էր իր բառերը զգուշութեամբ

ընտրել: Եթէ աստիկա սորված չըլլար, մինչեւ քսանհինգ տարեկան հասած պիտի չըլլար: Ծնունդէն մինչեւ գերեզման, ան շրջապատուած էր մարդոցմով, որոնք վսասել կ'ուզէին իրեն: Իր պալատին եւ երկրին մէջ կ'ապրէին դաւաճաններ եւ յափշտակիչներ, որոնք շատ պիտի ուզէին զինք ծուղակը ձգել իր խօսքերով: Անոր հօր կողմէն քոյրը՝ Մարին, որ թագուհի էր իրմէ առաջ, «Պլապի Մերի» («Արինոտ Մերի») տիտղոսը ստացաւ իր իշխանութեան ընթացքին իր հրամանով գործադրուած մահապատիժներուն պատճառով: Մերի առիթ կը փնտռէր սպաննել տալու Էլիզապէթը եւ նոյնիսկ բանտարկել տուաւ զայն Լոնտոնի Աշտարակին մէջ, ուր Էլիզապէթի մայրը՝ Անն Պոլէյնը բանտարկուած էր նախքան գլխատուիլը: Էլիզապէթի դէմ Մերի Թագուհիին յարձակումները եւ դաւերը դադրեցան միայն վերջինին մահով:

Էլիզապէթի թագուհի ըլլալէն կարճ ժամանակ ետք, անոր զարմուհի Մերին՝ Սկովտիացիներու Թագուհին, որ ունէր Կաթողիկէ Եկեղեցոյ նեցուկը, վերադարձաւ Մեծն Բրիտանիա եւ շարունակ փորձեց Անգլիոյ գահին տիրանալ: Վերջաւորութեան Էլիզապէթ մահապատիժի դատապարտեց զայն երբ մէջտեղ ելաւ, որ անոր հրամանով կազմակերպուած էր բացայայտ ահաբեկչութեան փորձ մը: Էլիզապէթ տեսաւ դաւաճանութիւն, մերժեցին զինք եւ չվստահեցան իրեն, բայց ան արտօնեց, որ դժուարութիւնները ձեւակերպեն զինք ըլլալու լաւագոյն կառավարիչը, որ Անգլիա երբեւէ ունեցած է:

Փոխանակ ամուսնանալու եւ ժառանգորդ մը տալու իր երկրին, Էլիզապէթ Ա. Թագուհին ուխտեց ըլլալ թէ՛ հարս եւ թէ՛ մայր իր թագաւորութեան: Այդ գերակշիռ մակարդակի նուիրումը ազատութիւնը տուաւ իրեն, որ կեդրոնանայ իր թագաւորութիւնը զօրաւոր հիմերու վրայ հաստատելու ռազմավարութիւններու վրայ: Ինքզինք շարունակ ինքնաշխատութեամբ կրթելու եւ բարելաւելու կողքին, ան ինքզինք շրջապատեց իմաստուն խորհրդականներով եւ մօտէն հետեւեցաւ իր հպատակներուն կամ ժողովուրդին վիճակին եւ բարօրութեան:

Էլիզապէթ Թագուհիի գահակալութեան շրջանին.

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

- Կրօնական հատուածները միացան՝ Անգլիոյ Եկեղեցիին հովանիին տակ:
- Անգլիոյ տնտեսութիւնը մեկուսի եւ կախեալ վիճակէն դարձաւ այլազան եւ անկախ:
- Գիտութիւնն ու արուեստը ծաղկեցան:
- Անգլիան դարձաւ ծովային ոյժ մը:
- Ամերիկան մարդոցմով լեցնելը եւ զանիկա հետախուզելու աշխատանքները զարգացան:

Էլիզապէթ Թագուհին իր երկիրը հասցուց Ոսկեդարի մը եւ պզտիկ թագաւորութիւն մը վերածեց կայսրութեան:

Զարմանալի չէ ուրեմն, որ ան էգ առիւծ կոչուած է: Այդ բոլոր իրագործումներով հանդերձ իբրեւ թագուհի անոր դերը բնաւ չդադրեցաւ բեռ մը ըլլալէ: Ան ըսած է.

Թագաւոր ըլլալ եւ թագ մը կրելը ատելի փառաւոր կը թուի անոնց, որոնք կը տեսնեն զանիկա քան հաճելի է անոնց, որոնք կը կրեն զանիկա:

Ինչպէս պատմութեան գիրքերէն կը տեղեկանանք, Էլիզապէթ Ա. Թագուհին թագ մը կրելէ ատելին ըրաւ. ան նորութիւններու, առեւտուրի եւ հետախուզութեան ճամբաներ բացաւ: Ան հասկցաւ կատարեալ հաւատարմութեան ոյժը եւ յառաջ բերաւ ազգային եղափոխութիւն մը, նոյնիսկ երբ Ֆրանսայի նման երկիրներ յեղափոխութիւններու պատճառով պառակտուելու վտանգին առջեւ կը գտնուէին:

Էլիզապէթ անվախ էր ճակատամարտի դաշտին վրայ: Ահա հատուած մը իր ունեցած ելոյթէն մինչ պատրաստուած էր ճակատամարտի երթալ իր զօրքերուն հետ:

Թող բռնատէրները վախնան: Ես միշտ այնպէս վարուած եմ, որ Աստուծմէ ետք իմ գլխաւոր վստահութիւնս եւ ապահովութիւնս դնեմ իմ հպատակներուս հաւատարիմ սիրտերուն եւ բարի կամքին վրայ: Եւ, հետեւաբար, ես հիմա ձեր միջեւ

Քալել Արու Առիծի մը հետ

Եմ ոչ թէ զբօսանքի եւ ժամանցի համար, այլ՝ որոշած ըլլալով ճակատամարտի մէջ ապրիլ կամ մեռնիլ ձեզի հետ: Աստուծոյ, իմ թագաւորութեանս եւ իմ ժողովուրդիս համար իմ պատիւս տալու եւ արհիւս թափելու հողին վրայ...

Ես գիտեմ, որ մարմինով տկար եւ թոյլ կին մըն եմ, բայց ես ունիմ սիրտը եւ ստամոքսը Թագաւորի մը, եւ Անգլիոյ Թագաւորի մը, եւ վատ անարգանք կը համարեմ, որ Փարման կամ Սպանիան կամ որեւէ ուրիշ Եւրոպայի Իշխան կը համարձակի ներխուժել իմ Թագաւորութեանս սահմանները: Ատոր վրայ ուրիշ անպատուութիւն ալ պիտի չաւելցնեմ, ուստի ե՛ս ալ պիտի կռուիմ... Կարճ ժամանակ մը ետք մենք հռչակաւոր յաղթանակ մը պիտի ունենանք Աստուծոյ, իմ Թագաւորութեանս եւ իմ ժողովուրդիս թշնամիներուն դէմ:

Եւ ունեցան:

Կը տեսնէք ինչ եղաւ երբ կին մը ընտրեց զարմանալ փոխանակ սարսափելու: Էլիզապէթ Աստուծոյ հետեւեցաւ անվախօրէն՝ ուշադիր ըլլալով իր կոչումին կամ ուղիին: Ան ատեն-ատեն Աստուծոյ խորհուրդը հարցնող մը չէր, այլ՝ հերթական կերպով ատիկա կ'ընէր եւ աղօթքներու օրագիր մը կը պահէր երեք տարբեր լեզուներով: Արդիւնքը պարզապէս ապշեցուցիչ է: Թերեւս դուն ալ կը զգաս, որ Աստուած քեզ կը կանչէ արտասովոր կամ վախճանալիք բանի մը: Եթէ այդպէս է, թող Լիւսիի եւ Էլիզապէթ Ա.ի օրինակները քաջալերեն, որ առջեւ երթաս:

Կարելոր չէ, որ ուրիշներ ինչպէս կը տեսնեն քեզ: Եթէ Աստուած խօսած է, հաւատա՛ իրեն: Գնա՛ հոն, ուր կ'ըսէ, որ երթաս: Մտի՛կ ըրէ իր քեզի խօսածին: Հետեւէ՛ այդ Առիծին առաջնորդութեան եւ վստահի՛ր մէջիդ այդ «գիտնալ»ուն նոյնիսկ երբ ուրիշներ չեն հասկնար:

Պատրմաստ ես զարմանալու:

Փսփսուքէ՛ Մոնչիւնի

Ես առիւծը չէի, բայց ինձի ինկաւ առիւծի մոնչիւն հանելը:

ՌԻԻՆՍԹԵՆ ՉԸՐՉԸԸ



Առիւծները կը մոնչեն:

Անկասկած, որ գիտէիր ատիկա: Բայց գիտէիր, որ էգ առիւծներն ալ կը մոնչեն: Որպէսզի արու առիւծները եւ էգ առիւծները ազդու կերպով մոնչեն, նախ պէտք է փոխեն իրենց կեցուածքը: Ոյժի այդպիսի վայրի յայտարարութեան մը սանձազերծումը խոնարհում մը կը պահանջէ: Անոնց հզօր գլուխները կը ծոին, եւ անոնք կը լայնցնեն իրենց կուրծքերը, որպէսզի օդով լեցնեն զանոնք: Արդե՛ժք անոնք պայթելու աստիճան կը հասնին երբ իրենց այդ յայտարարութիւնը կ'արձակեն, որ կ'ըսուի, թէ կը հասնի հինգ մղոն [8 քմթր.] հանդարտ գիշերուան օդին մէջ եւ կը ցնցէ մարդոց եւ արարածներուն սիրտերը իր ճամբուն ընթացքին: Առիւծի մը մոնչիւնը կրնայ շրջապատել քեզ եւ զարմացնել քեզ իր վախազդու սքանչելիութեամբ:

Նոյնպէս ալ եթէ մենք՝ Աստուծոյ առիւծներս, երբեւէ այդ տարողութեան ձայն պիտի արտադրենք, պէտք

է մեր կեցուածքը փոխենք: Մոնչելու կարողութիւն ունենալու համար, պէտք է մեր բարձր բռնած գլուխները խոնարհեցնենք եւ ծռենք: Խոնարհութեան եւ աղօթքի այդ կեցուածքը մեզ պիտի դնէ դիրքի մը մէջ, որուն շնորհիւ պիտի կարենանք թարմ կերպով լեցուիլ Սուրբ Հոգիի շունչով: Կը հաւատամ, որ այդ մոնչիւնը պիտի պատահի երբ Աստուծոյ Հոգին ներս կ'առնենք այնքան, որ անիկա աւելի մեծ կ'ըլլայ մեր մէջ քան անոր կեանքի լեցունութիւնը պարփակելու մեր կարողականութիւնը: Երբ այլեւս չենք կրնար ետ պահել կամ զսպել իր ճշմարտութիւնը, սէրը եւ բարութիւնը, կ'արձակենք ցնցիչ յայտարարութիւն մը այն բոլորին մասին, որ Աստուծոյ է:

Բայց մեր մոնչիւնը էգ առիծի մոնչիւնէն տարբեր պիտի ըլլայ, որովհետեւ միայն ձայն պիտի ջըլլայ: Մեր յայտարարութիւնը պիտի ըլլայ գրաւիչ բառերու, արարքներու եւ հաւատքի գործերու աստուածային խառնուրդ մը: Երբ հաւատքի, յոյսի եւ սիրոյ բոլոր անշօշափելի բաները շօշափելի կը դառնան անհատներու մէջ եւ կ'արտայայտուին աշխարհի պէտքերուն եւ Աստուծոյ սիրոյն դիմաց մեր միացեալ կեցուածքով, մեր մոնչիւնը լսելի պիտի ըլլայ: Մինչ մենք մեր Առիծին օրինակին կը հետեւինք, աշխարհը պիտի լսէ անոր մոնչիւնը: Ապա բոլոր աւելի նուազ տէրերը եւ աղմուկները պիտի դադրին եւ աղաղակ մը պիտի բարձրանայ. «Միայն Աստուած պաշտեցէք»:

Մեր աշխարհը լեցուն է մոնչիւններով: Մինչ ես կ'ուսումնասիրէի մոնչիւնի մը գաղափարը, յայտնաբերեցի շատ մը բաներ, որոնք կարող են մոնչելու: Ովկիանոսները կը մոնչեն: Վայրի, սանձազերծուած հովը կը մոնչէ: Ջրվէժները կը մոնչեն մինչ մեծ քանակութեամբ ջուր վար կը թափի հսկայ բարձրութենէ: Մարգախաղերու դաշտերուն մէջ խանդավառուած համակիրները կը մոնչեն:

Երկինքի գահին շուրջ չորս էակները կը մոնչեն. «Սուրբ, Սուրբ, Սուրբ» (տես Յայտնութիւնը 4.6,8), եւ այդ մոնչիւնին ձայնէն երկինքի ճարտարապետութեան սեմերուն հիմերը ցնցուեցան (տես Եսայիի 6.4): Երկրի

Փսփսուքէ՛ մոնչիւնի

վրայ մենք անոնց բառերը կը կրկնենք երգերու ձեւով, բայց Սուրբ Աստուծոյ մասին այդ յայտարարութիւնը ծագում առաւ իբրեւ մոնչիւն մը:

Մեր Ամենաբարձր Աստուածը՝ բոլորին Տէրը... կը մոնչէ:

Աստուած կը մոնչէ առիծի մը պէս երկինքէն.

Որոտում կ'ելլէ անոր սուրբ բնակութենէն:

(Երեմիայի 25.30, բառացիօրէն թարգմանուած

Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Եւ դարձեալ՝

Ես եմ Սուրբը եւ ես հոս եմ՝ ձեր միջեւ:

«Ժողովուրդը պիտի հետեւի Աստուծոյ:

Ես պիտի մոնչեմ առիծի պէս.

Օ՛, ինչպէս պիտի մոնչեմ:

Իմ վախի մէջ եղող զաւակներս արեւմուտքէն

վազելով պիտի գան»:

(Ովսեայի 11.9-10, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը*

Մասէճ տարբերակէն)

Ինչն է, որ կը մեծցնէ արտայայտութիւն մը, որ ըլլայ փսփսուքէ մը, մրմնալէ մը, աղաղակէ մը կամ պոռալէ մը աւելին: Արդեօք միայն ձայնի բարձրութիւնը բաւարար է հանելու համար մեծ մոնչիւն մը, որ ահ կը պատճառէ իր զօրութեամբ:

ԱՆԻԿԱ ԿԸ ՍԿՍԻ ՓՍՓՍՈՒՔՈՎ ՄԸ

Պատասխանելու համար, եկէք նախ խօսինք փսփսուքի մասին:

Սաղմոսողը գրեց.

Կը լսեմ ամէնէն մեղմ փսփսուքը Մէկէն,

Որ բնաւ չէի կարծեր, որ կը խօսի ինձի:

(Սաղմոսներու 81.5, բառացիօրէն թարգմանուած

Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Հոս սաղմոսողը կը բացատրէ իր զարմանքը Աստուծոյ փսփսուքը լսելուն համար: Արդէն ան Աստուծոյ հանդէպ իր հաւատարմութեան մասին չէր գրեր եւ երգեր: Թերեւս այս սաղմոսին մէջ ան կը յիշէ իր սքանչացումը այն ժամանակին հետ կապուած երբ Աստուծոյ հետ իր հաղորդակցութիւնը սկսաւ: Մենք չենք ճանչնար այն ինչ որ նախապէս չենք լսած: Դաւիթ առաջին անգամ Աստուծոյ փսփսուքը լսեց երբ պատանի հովիւ մըն էր, եւ յետոյ ան Աստուծոյ ծայնը ամէն տեղ լսեց: Աստուծոյ ծայնը կը նկարագրուի իբրեւ՝ «ամէնէն մեղմ փսփսուքը»: Փառահեղը կը խօսի նուրբ, ցած ծայնով՝ ընդգծելով մեր մարդկային կեանքի դաժան իրականութիւնը:

Եւ ահա՛ մեզի հրաւեր կ'ուղղուի հանդարտ ըլլալու. «Հանդարտ եղէք եւ գիտցէ՛ք, որ ես Աստուած եմ»: (Սաղմոսներու 46.10, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* տարբերակէն)

Վստահ եմ, որ Ամենաբարձր Աստուած եւ բոլոր բաներուն Ստեղծիչը գիտէր, որ իր զաւակները պիտի կանգ առնեն եւ հանդարտին իր փսփսուքով:

Ես փսփսացող Աստուծոյ մը գաղափարը աւելի զարմանալի կը գտնեմ քան պոռացող Աստուծոյ մը: Վիթխարի Աստուծմէ մը կրնաս ակնկալել, որ որոտացող ծայն մը ունենայ, բայց չես ակնկալեր, որ փսփսայ: Այդ մեղմ արձագանգով, Աստուած ունի կարողութիւնը օգնելու մեզի, որ կեդրոնանանք: Ճիշդ ինչպէս «անդունդը կը գոչէ անդունդին» (Սաղմոսներու 42.7), Աստուծոյ փսփսուքը Ստեղծիչին արձագանգն է իր զաւակներուն՝ ստեղծուածներուն մէջ:

Եղիա զԱստուած փնտռեց հովին մէջ, երկրաշարժին մէջ եւ կրակին մէջ, բայց ան լսեց զԱստուած փսփսուքի մէջ (տե՛ս Գ.Թագաւորներուն 19.12): Երբ Եղիա լսեց մեղմ, թեթեւ ծայնը, ան դուրս ելաւ իր քարայրէն եւ ըրաւ այն ինչ որ Աստուած թելադրած էր իրեն:

Հանդարտ ծայնը իր մէջ ունի խորունկ եւ մտերմիկ թելադրանքներ անոնց, որոնք կը լռեցնեն իրենք զիրենք

Փսփսուքէ՛ Մոնչինի

այնքան որ լսեն: Այդ հանդարտութեան մէջ մեր հոգին կը լսէ որդեգրող Հօր մը փսփսուքը: Բոլորս ալ կը փափաքինք լսել Աստուծոյ փսփսուքը: Դուն ստեղծուած ես լսելու քու Ստեղծիչդ: Արտօնէ՛ իրեն, որ խօսի քու հոգիիդ խորերը եւ գոհացնէ սիրտիդ տենչանքը:

Կը հաւատամ, որ երբ Աստուած կը խօսի, անիկա միշտ կը սկսի իբրեւ փսփսուք մը: Ամէն բարձրաձայն խօսուած բան կը սկսի փսփսուքով մը: Երբ ես յղի էի եւ կը զգայի, որ կեանք մը կը կազմուէր մէջս, անիկա զաւակի մը փսփսուքն էր, որ պիտի գար: Աղաղակ մը կը սկսի ներքին փսփսուքով մը: Թերեւս Աստուծմէ՛ փսփսուք մը լսեցիր նախ՝ ի պատասխան աղաղակի մը, որ կու գար հոգիիդ խորերէն: «Աստուած, ես ծարաւ եմ, վախի մէջ եմ եւ առանձին»:

Աստուած ալ պատասխանեց. «Մի՛ վախնար: Ես հոս եմ, զաւակս»:

Երբեմն ես նոյնիսկ կիները կը պատկերացնեմ իբրեւ փսփսուքներ: Իր վախի մէջ եղող զաւակը օրօրող մայրը չի պոռար. կը փսփսայ: Տարիներ ես լսած եմ Աստուծոյ դուստրերուն փսփսուքները մէկը միւսին՝ իրենց մէջ զգացած իրենց մղումներուն մասին: Շուրջ երեք տասնամեակ ես փսփսացած եմ իմ ամուսինիս մեր անկողինին մէջ պառկած ատեն: Բարձրաձայն խօսիլը անտեղի կը թուի ըլլալ գիշերուան ծածկոցին տակ, մեր տաքուկ անկողինին մէջ: Անիկա փսփսուքի, հանգիստի եւ մտերմութեան վայր մըն է:

Եղած են ժամանակներ երբ ես փսփսացած եմ պաշտամունքի ծառայութեան մը ընթացքին մինչ մեր ընտանիքը քով քովի նստած էր: Ես ցած ձայնով խօսած եմ երբ լսած եմ կոպիտ կամ անճիշդ բան մը: «Ատիկա ճիշդ չէ,» կը փսփսամ: Ճոնը եւ մեր տղաքը լուռօրէն հաւանութեան նշանով կը շարժեն իրենց գլուխները եւ երբեմն ալ թեւիս կը դպչին, փորձելով ինձի ըսել. «Կը հասկնանք, որ նեղացար: Պէտք չունիս ատելի բարձրաձայն արտայայտուելու: Կը լսենք քեզ»:

Կը փսփսամ կարծես հարկադրուած: Սխալ կը թուի լուռ մնալ եւ դէմ չդնել բանի մը, որ շատ պզտիկ, շատ բացառիկ,

շատ աղաաղուած կամ պարզապէս սխալ է: Թերեւս ատիկա կու գայ իմ ունեցած դերէս, բայց պէտքը կը զգամ ճշմարտութիւնը մըմռալու, որպէսզի խլեմ սխալի հունտերը նախքան որ արմատ տան: Իմ փսփսուքս կը հերքէ այն ինչ որ բարձրաձայն կ'ըսուի:

Ես կը փսփսամ երբ այն ինչ որ կը լսեմ, որ կը հոչակուի նոյնը չէ ինչ որ Աստուած փսփսացած է ինձի եւ ընդգծած իմ կեանքիս մէջ: Անկասկած որ եղած են ժամանակներ երբ դուն ալ նոյնը զգացած ես: Եթէ լսած ես Աստուծոյ մէկ փսփսուքը, ապա գիտես, որ անիկա նուիրական է եւ արժանի մեր ուշադրութեան: Յաճախ երբ մենք կ'ուսուցանենք կամ կը քարոզենք, պարզապէս կը կրկնենք այն ինչ որ ուրիշներ սորվեցուցած են մեզի: Բայց երբ Աստուած կը խօսի, բոլորովին ուրիշ բան է: Աստուծոյ փսփսուքը թերեւ բան մը չէ եւ պէտք է յարգուի:

Աստուած կը փսփսայ իր որդիներուն եւ դուստրերուն: Կը զգամ, որ ժամանակը եւ եղանակն է փսփսալու եւ լսելու Աստուծոյ փսփսուքը: Թերեւս այս պահուն իսկ կը լսես իր մէկ փսփսուքը: Փսփսուքները խորհուրդներու եւ կանխատեսութեան բարբառն են:

Հազարաւոր տարիներ մարդիկ Աստուծոյ փսփսուքը փնտռեցին, եւ այդ փնտռտուքը շատ յաճախ լռութեամբ դիմաւորուեցաւ:

Կան շատ մարգարէներ եւ թագաւորներ, որոնք իրենց աջ ձեռքը պիտի տային տեսնելու համար այն ինչ որ դուք կը տեսնէք, բայց նշոյլ մը իսկ չունեցան, եւ լսելու այն ինչ որ դուք կը լսէք, բայց փսփսուք մը իսկ չունեցան: (Ղուկասի 10.24, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակէն)

Հին մարգարէները եւ թագաւորները լարուեցան, որպէսզի լսեն, բայց Աստուած չմըմնջեց իսկ: Անոնք իրենց աչքերը նեղուցին, որպէսզի տեսնեն ապագան, բայց իրենց հորիզոնին վրայ տեսնելու բան մը չկար: Չկար ձայն, տեսիլք

Փսփսուքէ՛ Մոնչիւնի

կամ պատկեր, ոչ մէկ բան, որ պատճառ ըլլար, որ իրենց ընկերակիցներուն հարցնեն. «Լսեցի՞ր ատիկա»:

Ապա ժամանակը եկաւ երբ պատգամը հասաւ, ոչ թէ փսփսուքով, այլ՝ անձով մը: Փսփսուքով արտայայտուած Խօսքը մարմնացաւ եւ խօսեցաւ բարձրաձայն մինչ քալեց մարդոց միջեւ՝ դպչելով, սորվեցնելով, բժշկելով եւ մեռելները յարուցանելով: Յաւալի է, որ անոնք, որոնք լարուած էին լսելու, այլեւս լսելու ականջ չունէին: Անոնցմէ վրիպեցաւ ան, քանի որ Աստուած իրենց ականակալածէն տարբեր երեւոյթ ունէր եւ տարբեր կը խօսէր: Յիսուս փսփսաց մաքսաւորներուն եւ ձկնորսներուն, եւ պոռաց փարիսեցիներուն:

Փոխանակ ինքն իր բերանով բացատրէր, թէ ո՛վ էր ինք եւ ո՛րկէ եկած էր, Յիսուս իր կեանքով բացայայտեց, թէ ո՛վ էր ինք: Իր արարքներով ան աւելի բարձրաձայն խօսեցաւ քան որեւէ բառ կրնար:

ՓՍՓՍՈՒՔԷ ՄԸ՝ ԱՂԱՂԱԿԻ

Մեզմէ շատերուս պէս, ընկերուիկս Պոպի Հիուսթընը մտիկ կ'ընէ երկինքի ձայնին եւ կը հսկէ ինչպէս Ամենաբարձրին Հոգին կը ձեւակերպէ յանձնարարական մը իր դուստրերուն համար: Ան հետեւեալ բանաստեղծական բառերով կը նկարագրէ այն ինչ որ շատերս կը տեսնենք.

Աստուծոյ փսփսուքը դարձած է աղաղակ:

Աշխարհի շուրջ շատ մը կիներու համար յատուկ իմաստ ունին այդ բառերը:

Աւելի եւ աւելի մեծ թիւով Աստուծոյ դուստրեր կը լսեն անոր փսփսուքը: Ինչ է Աստուծոյ փսփսուքը: Եւ ինչո՞ւ ձայնին ուժգնութիւնը կը բարձրանայ: Արդարութեան հաւաքական աղաղակ մը կայ, որ ծնունդ տուած է մեր յոյսի հռչակումին: Երբ Յիսուսի մայրը Մարիամ ստացաւ իր ժողովուրդի փրկութեան Աստուծոյ խոստումը, ան զանիկա արժեւորեց եւ իր սիրտին մէջ պահեց: Այսօր հետզհետէ աւելի մեծ

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

թիով Աստուծոյ դուստրեր կը հռչակեն այն կեանքը եւ ազատութիւնը, զորս ան ցանած է իրենց սիրտերուն մէջ: Իբրեւ արդիւնք, այն ինչ որ սկսաւ իբրեւ փսփսուք մը անհատներու սիրտերուն մէջ դարձած է հաւաքական աղաղակ մը: Այդ պատգամը կը բարձրանայ երկար ժամանակի զսպուած լռութենէն վեր:

Ինչ որ կը փսփսամ ձեր ականջներուն մէջ, պոռացէք տուներու տանիքներէն, որպէսզի բոլորը լսեն:
(Մատթէոսի 10.27, բառացիօրէն թարգմանուած
Աստուածաշունչի *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն*
տարբերակէն)

Յիսուս նախ փսփսաց եւ ապա իր աշակերտներուն ըսաւ, որ պոռան: Ան ներըմբռնում եւ իմաստութիւն հաղորդեց իրենց մտերմիկ պահերուն ընթացքին, յետոյ թելադրեց իր աշակերտներուն, որ բաց կերպով հռչակեն այն ինչ որ գաղտնիք մըն էր:

Կը հաւատամ, որ մենք երկրի վրայ կ'ապրինք ժամանակի մը մէջ, ուր Աստուծոյ երէկուան փսփսուքները պիտի բարձրանան եւ ըլլան վաղուան աղաղակները: Ես վստահ չեմ, որ մենք կը հասկնանք ատոր հաւանական մեծութիւնը կամ տարողութիւնը, բայց կը զգամ, որ ձեզմէ շատեր այս պահուն իսկ կը ծռին դէպի առջեւ եւ մտիկ կ'ընեն: Մինչ կը մօտենաս, կը լսես թեթեւ խշրտուք մը. բան մը կ'արծարծուի մէջդ:

Աստուծոյ փսփսուքը այնքան գրաւիչ է, որ կրնայ վախցնել քեզ:

Այնքան գրգռիչ, որ կրնայ մեկուսացնել քեզ:

Այնքան հզօր, որ մէյ մը որ գործի դրուի, անկարելի է, որ դադրեցուի:

Որոտումներ կը պայթին եւ կը գոռան երկինքներուն մէջ:
Մտիկ ըրէք: Աստուած կը բարձրացնէ իր ձայնը:
Իր զօրութեամբ ան կը հանդարտեցնէ ծովու
փոթորիկները,

Փսփսուքէ՛ Մոնչիւնի

Իր իմաստութեամբ ան կ'ընտելացնէ ծովու հրէշները:
Մէկ շունչով ան կը մաքրէ երկինքը,
Իր մէկ մատով կը ճզմէ ծովու օձը:
Եւ ասիկա միայն սկիզբն է,
Սոսկ փսփսուքը իր իշխանութեան:
Ինչ պիտի ընէինք եթէ ան *իրապէս* բարձրացնէր իր
ծայնը: (Յոբի 26.11-14, բառացիօրէն թարգմանուած
Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն,
շեշտադրումը՝ մեր կողմէ)

Իրապէս... Ինչ պիտի ընէինք: Մենք վստահաբար պիտի դողայինք, բայց անոնք, որոնք գիտեն եւ կը վստահին փսփսուքին, պիտի չընդդիմանան անոր գալիք աղաղակին: Մեր մէջ խորունկ բան մը մտիկ պիտի ընէ ահով քանի որ մենք կը սպասէինք անոր բարձրացած ծայնին: Այդ ամբողջ հում զօրութիւնը եւ Աստուծոյ իշխանութիւնը պարզապէս կը գործեն փսփսուքի մակարդակի վրայ: Անոր արտաշնչումը կը մաքրէ երկինքը...

Երբ Աստուած սկսաւ կեանք, ազատութիւն, յոյս, ոյժ, վայրիութիւն, արժէք եւ նոյնիսկ գեղեցկութիւն փսփսալ իմ աշխարհիս մէջ, ասիկա լայնցուց կամ ընդարձակեց զիս: Ան ինձի մեծնալ առաջարկեց երբ այնպէս կը թուէր, որ տարածութիւն չկայ ինձի համար, որ ընդարձակիմ կամ մեծնամ:

Այս ձեւով կրնամ լաւագոյնս նկարագրել իմ վիճակս. ըսենք, որ կը լսես փսփսուք մը, որ կ'ըսէ, թէ կեանքդ քու գիտցածէդ աւելին է եւ թէ այն ինչ որ ընդունած ես որ է միայն քու կեանքդ, իրականութեան մէջ ճիշդ չէ: Փսփսուքը կը հակասէ այն բանին, որ լսած ես բարձրաձայն կերպով հռչակուած:

Սակայն փսփսուքը կը խօսի քու մէջդ գաղտնի, խորունկ տեղի մը եւ կ'արթնցնէ ձգտում մը, որ մինչ այդ բնաւ չէ դրսեւորուած: Անիկա աւելի իրական կը հնչէ քան ինչ որ լսած ես հեռատեսիլէն կամ կարդացած ես գիրքերու կամ ամսաթերթերու մէջ: Այդ փսփսուքի ձեւով քեզի եկած յայտնութենէն ետք դուն այլեւս նոյնը չես ըլլար:

Յանկարծ կը սկսիս այլեւս հանգիստ չըլլալ որոշ վայրերու, յարաբերութիւններու եւ խօսակցութիւններու մէջ, ուր դուն շատ հանգիստ էիր միայն ամիս մը, շաբաթ մը կամ օր մը առաջ:

Երբ նոր լսեցի Աստուծոյ փսփսուքը, հետեւեալը պատահեցաւ: Որոշ մակարդակի վրայ գիտէի, որ ընկերութիւնս, ոչ հաւատքս, խզուած էր նախապէս իմ գիտցած բաներուս հետ: Այնպէս կը զգայի, որ նաւ ջուրին վրայ դրուած էր, բայց բնաւ գաղափար չունէի, թէ ինչո՞ւ կամ ինչպէս պիտի գտնէի յաջորդ նաւահանգիստը: Ամէն բան որ կայուն էր այդ պահէն առաջ հիմա անվստահ, անորոշ եւ անհանգիստ կ'երեւէր: Միակ վստահ բանը կեանքիս մէջ այն էր, որ բան մը փոխուած էր, եւ ես երբեք նոյնը պիտի չըլլայի:

Այո՛, փսփսուք մը ունի զօրութիւնը մեզ այդքան արագօրէն բաժնելու մեր գիտցած բաներէն, եւ այդքան պարզ ձեւով: Ոմանք ատիկա կրնան կոչել աստուածայայտնութիւն, ուրիշներ՝ մօտեցումի կամ անոր ետին գտնուող ենթադրութիւններու արմատական փոփոխութիւն:

Երբ որ զԱստուած փնտոեմ, ան կը պատասխանէ փսփսուքով:

Մօտեցիր եւ փսփսա՛ քու պատասխանդ:

Ես իրապէս պէտք ունիմ քեզի: (Սաղմոսներու 55.2,
բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը
Մասէճ* տարբերակէն)

Անոր պատասխանները կրնան որոշ բաժանում բերել, եւ եղանակի մը համար կրնան անհանգստութիւն պատճառել: Ատոր համար երբ լսենք Աստուծոյ փսփսուքը, կարելոր է, որ լռեցնենք մեր անձերը, մտիկ ընենք եւ ընկալենք մեր ներսի փսփսուքը:

Լուտուիք Վան Պիթիովըն գրեց. «Հնչերանգներ կը հնչեն, կը մոնչեն եւ կը փոթորկեն շուրջս մինչեւ որ նօթերու ձեւով գրի առնեմ զանոնք»: Ինչ պիտի ըլլար եթէ ան չկարենար գրել նօթերը, զորս կը լսէր իր մէջը: Ոչ միայն պիտի չունենայինք անոր երաժշտութիւնը, այլեւ պիտի չունենայինք

Փսփսուքէ՛ Մռնչիւնի

այն խորհուրդները, սէրը, երազները եւ ներշնչումները, զորս անոր հնչերանգներու *սիմֆոնի*ն արթնցուցած է մարդոց մէջ:

Երբ Աստուծոյ փսփսուքը միտքերու փոթորիկ մը կամ մռնչիւն մը կ'արթնցնէ իմ մէջս, անհանդարտ կ'ըլլամ մինչեւ որ արձանագրեմ զանոնք: Կան շատ մը ձեւեր երկինքէն ներշնչուած փսփսուք մը ընկալելու: Ոմանք կը գրեն այդ ձայնը, ուրիշներ երաժշտութիւն կը յօրինեն: Ուրիշ մը կրնայ անիկա պատգամի, թատրոնի կամ պատմութիւններու ձեւով դրսեւորել՝ անոր պարունակութիւնը բարձրաձայն լսելի դարձնելով: Տակաւին ուրիշներ ստեղծագործ փսփսուք մը կրնան ներկայացնել գծելով եւ ճարտարապետութեամբ, որոնք փսփսուքին կու տան ձեւ եւ գործունէութիւն:

Մեթոտը կարելոր չէ, բայց զանիկա արձանագրելը կարելոր է:

ՓՍՓՍՈՒՔԸ ԲԱՐՁՐԱՁԱՎՅՆ ԱՊՐԷ

Բոլորս ալ լսած ենք, որ կ'ըսեն՝ «Բարձրաձայն ապրէ», բայց կ'ուզեմ բան մը անելցնել անոր վրայ: Քու մէջդ եղածը բարձրաձայն ապրէ:

Ռալֆ Ուալթո Էմըրսըն ըսաւ. «Ոչ մէկս երբեւէ պիտի իրագործենք որեւէ գերազանց կամ ազդու բան եթէ մտիկ չընենք այն փսփսուքին, որ միայն մենք կը լսենք»:

Սորվէ մտիկ ընել դուն քեզի եւ քեզի համար: Մի՛ հարցներ ուրիշներու, որ քեզի ըսեն այն ինչ որ միայն դուն կրնաս լսել: Ատիկա ընելով, դուն անոնց իշխանութիւն կու տաս սիրտիդ մէջ գտնուող Աստուծոյ փսփսուքին վրայ: Պատուէ՛ Աստուծոյ փսփսացածը եւ ժամանակ առ լսելու, թէ ան ինչ կը հաղորդէ քեզի գերազանցութեամբ:

Մենք յաճախ առանձին կ'ըլլանք երբ կը լսենք փսփսուքը: Բայց մենք բնաւ միակը չենք, որ կը լսենք անոր փսփսուքը: Աստուած կ'ուզէ խօսիլ բոլոր անոնց, որոնք բաւարար չափով լուռ են լսելու համար: Պարզապէս պէտք է դադար առնենք այն չափով, որ կարենանք լսել Սուրբ Հոգին յստակօրէն եւ ապա ընկալել անոր խօսքերը իրենց զօրութեան մէջ: Մէյ մը, որ անոր արտայայտութեան մե՛ր բաժինը կը լսենք,

պատրաստ կ'ըլլանք ճանչնալու փսփսուքը ուրիշներու մէջ: Լուսօրէն լսելու եղանակները կրնան անհանգիստ ըլլալ, բայց աստիկա գործընթաց մըն է, որմէ պէտք է անցնինք եթէ կ'ուզենք դարձեալ մեր ճամբան գտնել եւ ուղղուիլ դէպի ապահով նաւահանգիստ մը:

Առանձին մնալու եւ լսելու եղանակս իր ասարտին հասաւ 2006-ին երբ ինքզինքս գտայ Ֆիլիփփինեան կղզիներու վրայ զօրատր եւ ազնիւ կիներու հետ միասին՝ Հելէնին, Պոպիին, Լիսային եւ Տեպորային: Բոլորս ալ տարբեր երկիրներէ եկած էինք հոն՝ մասնակցելու համար ուսուցումներու նոր շարքի մը արձակման, որուն նպատակն էր արժէք եւ զօրութիւն բերել կիներուն աշխարհի շուրջ:

Ես բնաւ չէի գիտեր, որ վարմունքս արմատականօրէն պիտի փոխուէր այդ խորհրդաժողովին: Այդ հանդիպումին պատճառով իմ խօսածս չփոխուեցաւ այնքան որքան թէ խօսքերս ինչ ձեւով կ'ըսէի: 2006-ի վերջաւորութեան ես արդէն անելի քիչ հարցումներ եւ արդարացումներ ունէի իմ խօսքերուս մէջ:

Այդ խորհրդաժողովէն ետք ես անելի մտերմօրէն կապուեցայ եւ անելի հաւատարիմ եղայ Աստուծոյ փսփսուքին: Ատկէ առաջ ես շփոթի մէջ էի, մեկուսացած եւ շատ առանձին:

Օրակարգին համաձայն, ես էի առաջին խօսք առնողը: Երբ ասարտեցի, նստայ եւ ներծծեցի միւս կիներուն պատգամները: Իւրաքանչիւր պատգամի հետ կեանք լեցուեցաւ իմ յոգնած եւ շուարած շունչիս (ներքին անձիս) մէջ: Կարծես այդ կիներէն իւրաքանչիւրը բառերու մէջ դրաւ իմ փսփսուքներս եւ գաղտնիքներս՝ մինչ խօսեցան յստակօրէն, զօրութեամբ, օծութեամբ եւ ազնուութեամբ: Չէի կրնար կեցընել այտերս ի վար հոսող արցունքները, որոնք կը ջրէին շունչիս (ներքին անձիս) չոր բաժինները: Իմ փափաքներս եւ հարցումներս պատասխանուեցան:

Վերջին պահէն ետք, պանդոկ վերադարձանք եւ ինքնաշարժին մէջ ինձի հետ էին այդ պատգամաբեր կիներէն ոմանք: Անյաջող կերպով կը փորձէի բառեր գտնել բացատրելու համար, թէ մէջս ինչ կը պատահէր:

«Բայց ասոնք ճիշդ այն բաներն են, զորս դուն կը գրես կամ անոնց մասին կը խօսիս», ըսաւ Պոպին:

Ան ճիշդ էր, բայց մինչեւ այդ ատեն ես չէի լսած անոնց այդ բարձր արձագանգը: Տարիներ առաձին զգացած էի՝ խօսելով բառեր ամփոփ տեղի մը մէջ: Կրնայի դուրսը տեսնել, բայց չէի կրնար դուրս ելլել, մինչեւ որ մէկը յանկարծ հրելով բացաւ փեղկերով դուռը եւ հրաւիրեց զիս լայն, բաց տարածութիւն մը՝ լոյսով եւ խնդուքով լեցուն:

Պոպին ձեռքը դրաւ սրունքիս վրայ եւ ըսաւ. «Այլեւս առանձին չես»: Գլուխով հաւանութեան նշան տուի եւ լացի՝ ինքզինքս մանուկի պէս զգալով բայց ատոր համար բնաւ հոգ չընելով: Այդ գիշեր յիշատակելի էր եւ անկիւնադարձային: Վստահ չեմ, որ անդրադարձած էի, թէ առանձին էի մինչեւ այն պահը երբ ներս առնուեցայ: Ես իրապէս այն քոյրերէն էի, որոնք կը միանային իրենց եղբայրներուն շարքերուն՝ աշխարհը փոխելու նպատակով միասնաբար գործելու համար: Այդ նոյն փսփսուքը լսող ուրիշներու հետ մէկտեղուիլը զօրացուց զիս, հիանալի էր եւ ազատագրող:

Դուն ալ կրնայ ըլլալ, որ նոյնանման փորձառութիւն մը ունեցած ես: Բնաւ զգացած ես, որ դուրսն ես եւ դուրսէն ներս կը նայիս, եւ յանկարծ կը տեսնես, որ ներս հրաւիրուած ես եւ ներսիններուն հետն ես: Դուստր, քոյր, մայր եւ ընկերուիի, գիտցի՛ր, որ կը պատկանիս տեղի մը: Դուն առանձին չես: Բնաւ առանձին չէիր: Քու վրադ հսկող կայ եւ ընդունուած ես բոլոր անոնց կողմէ, որոնք իրենց մէջ Աստուծոյ փսփսուքը ունին:

Քեզի ներս առնելը տեղի չունեցաւ որովհետեւ նկատեցին, որ չէիր հրաւիրուած եւ պարտադրուած զգացին քեզ հրաւիրելու քաղաքավարութեան համար: Ոչ, բնաւ այդպէս չէ: Դուն ներս կ'առնուիս, որովհետեւ կը պատկանիս կիներու եւ տղամարդոց ընկերութեան մէջ, որոնք ոտքի կ'ելլեն երկրի վրայ:

Բայց դուք կը պատկանիք: Սուրբը օժած է ձեզ, եւ դուք գիտէք ասիկա: Ես չեմ գրեր ձեզի ըսելու բան մը, որ դուք չէք գիտեր, այլ՝ կը գրեմ հաստատելու

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

համար այն ճշմարտությունը, որ արդեն գիտեք, եւ յիշեցնելու ձեզի, թէ ճշմարտությունը սուտ չի ծնիր: (Ա.Յովհաննէսի 2.20-21, բառացիորէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Գիտնալը, որ կը պատկանիմ մեծ իմաստ ունեցաւ ինծի համար: Հակառակ անոր որ ես կը ճամբորդէի եւ ամէն շաբաթ հարիրաւոր կիներու կը խօսէի, յաճախ այցելուի պէս կը զգայի: Միշտ այցելելը եւ բնաւ չպատկանիլը երբեմն շատ առանձին կրնայ զգացնել քեզ: Ուստի եկուր ասոր շուրջ համաձայնինք, սիրելիս. դուն այցելու մը չես, դուն ընտանիքի անդամ մըն ես: Երբ շատերը մէկ կ'ըլլան, բառեր կ'արձագանգեն, յարաբերութիւններ կը հաստատուին եւ ձայնը կը բարձրանայ: Այդ տեսակի փսփսուքը մեզ իրարու հետ կապակցութեան կը հրաւիրէ:

Ուստի ինչ կարելի է ըսել պոռալու մասին:

Մի՛ պոռաք: Իրականութեան մէջ մի՛ խօսիք իսկ. մի՛ փսփսաք անգամ մինչեւ որ լսէք, որ կ'ըսեմ՝ «Պոռացէք»: Այդ ատեն պոռացէք: (Յեսուի 6.10, բառացիորէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Որոշ ժամանակ կայ, որ փսփսուքը պոռալու բարձրանայ: Գիտէք, մենք այս երկրին վրայ կ'ապրինք ռազմավարական եւ վտանգաւոր եղանակի մը մէջ: Ինչպէս Աստուած ըրաւ Երիքովի պարագային, ան գաղտնաբար պիտի շրջապատէ կարգ մը բաներ, եւ երբ ճիշդ ժամանակը գայ, վար առնէ գանոնք հաւաքական աղաղակով մը:

Քանի որ նոյնինքն Տէրը պիտի իջնէ երկինքէն՝ ազդարարութեան հրամանով [աղաղակով մը, ըստ *Նիու Քինկ Ճէյմզ Վըրժըն* տարբերակին], հրեշտակապետին ձայնով եւ Աստուծոյ փողով: (Ա.Թեսաղոնիկեցիներուն 4.15)

Փսփսուքէ՛ Մոնչիւնի

Իր ծայնին հնչումով, մահուան եւ կործանումի իշխանութիւնը պիտի քանդուի:

Իսրայէլացիները եօթը անգամ Երիթովի շուրջը դարձան նախքան որ պոռալու զօրութիւնը գար իրենց վրայ: Նոյնպէս ալ խելացի էգ առիւծները չեն մոնչեր բացի երբ վստահ կ'ըլլան, որ դարանուած են: Ասիկա այնքան չի վերաբերիր ծայն բարձրացնելու եւ աղաղակելու որքան որ ռազմավարական ըլլալու: Ոչ մէկս պէտք է մերը հոչակենք այն ինչ որ տակաւին պատրաստ կամ կարող չենք զօրութեամբ կրելու կամ կատարելու:

Մենք պէտք չէ մեր փսփսուքները պոռալու չափ բարձր ըսենք:

Ինչպէս զաւակ ծնանող կին մը,
Որ կը գալարուի նեղութեան մէջ, կը գոռայ ցափ մէջ
Մինչ մանուկը կը ծնի: (Եսայիի 26.17, բառացիօրէն
թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատէճ*
տարբերակէն)

Տարիներ մենք անհատապէս կամ հաւաքաբար գոռացած են մեր ցաւը, բայց ցաւով գոռալը լուծում չէ: Մեր երկունքի ցաւէն կեանք յառաջ բերելն է լուծումը: Եկէք իբրեւ փրկագին տանք երկունքը, նախապաշարումը եւ նոյնիսկ ցաւը՝ որպէսզի ծնունդ տանք զօրաւոր եւ կենսունակ դուստրերու սերունդի մը:

ԵՐԲ ԱՂԱՂԱԿԸ ԿԸ ԴԱՌՆԱՅ ՄՈՆՉԻՒՆ ՄԸ

Ոեւէ մէկը կրնայ պոռալ: Բայց ամէն մարդ չէ, որ կրնայ մոնչել, առնուազն ոչ նախքան ժամանակը հասնիլը:

Ուստի ճիշդ ի՞նչ է մոնչիւնը: Մոնչիւնը շատ բարձր աղաղակ մը չէ: Անիկա նախ եւ առաջ անվախ յայտարարութիւն մըն է: Մոնչիւնը արձակումն է սկզբնական, անպարունակելի կամ անզսպելի եւ քիչ մը ալ անհասկնալի բանի մը: Բոլորս ալ ունինք մոնչելու կարողականութիւնը, բայց ոչ իբրեւ

անհատներ: Կը հաւատամ, որ մարդ արարածներուն պարագային, մոնչինը հաւաքական արտայայտութիւնն է ծայներէ աւելիին: Կը հաւատամ, որ անիկա ծայնն է մարդոց, որոնք կ'ապրին իրենց հաւատքը բարձրաձայն՝ բաժնեկցելով յոյս եւ արտայայտելով Աստուծոյ սէրը:

Ձեզմէ ոմանք կրնայ ըլլալ, որ յիշեն 1970-ականներուն Հելէն Ռէտիի մէկ երգը, որ կ'ըսէ՝ «Ես կին եմ, տեսէք ինչպէս կը մոնչեմ»: Կը խնդրեմ, որ ճիշդ հասկնաք ինծի: Ես չեմ ըսեր, թէ միայն կիները պէտք է մոնչեն: Ոչ ալ կը քաջալերեմ, որ կիները մոնչեն տղամարդոց երեսին, կամ տղամարդիկը՝ կիներուն: Կը հաւատամ, որ ժամանակն է, որ մեր ծայները միասնաբար բարձրացնենք եւ միասնաբար մոնչենք:

Այս պահուն իսկ կը լսեմ Աստուած հոգիս մէջ կ'ըսէ. «Պատրաստեցէք դուք ձեզ, դուստրերս, որովհետեւ հաւաքաբար ձեր աղաղակը մոնչին կ'ըլլայ, որ կը բարձրանայ երկրի վրայ եւ որ օգնութիւն կ'արձակէ երկինքէն»: Ինչպէս Ուինսթըն Չըրչը ըսած է. «Ես առիծը չէի, բայց ինծի ինկաւ առիծի մոնչին հանելը»:

Նոյնպէս ալ մենք առիծը չենք, բայց մեզի ինկած է ծայն տալ մեր Առիծին մոնչինին: Միայն Յիսուս է Քրիստոսը եւ Յուդայի Առիծը: Մենք իր հետեւորդներն ենք, որոնք կ'արձագանգեն անոր մոնչինը: Ինչը կրնայ պատճառ ըլլալ, որ մեր Առիծ Տէրը մոնչէ: Կը հաւատամ, որ պատասխաններ կը գտնենք երբ կը նայինք, թէ ինչն է, որ արու առիծներուն եւ էգ առիծներուն մոնչել կու տայ բնութեան մէջ:

Հակառակ անոր որ այդ երկու մեծ կատուններն ալ կը մոնչեն, իրաքանչիւրին մոնչինը կը սկսի տարբեր պատճառներով: Գլխաւոր պատճառը արու առիծի մը մոնչելուն իր տարածքը իրը հոջակելը եւ զանիկա պաշտպանելն է: Երբ մուրը կ'իյնայ, առաջնորդ արու առիծը (կամ առիծները) ոտքի կ'ելլէ, կը խոնարհեցնէ իր գլուխը, կ'ընդլայնէ իր կուրծքը եւ ներս կը քաշէ գիշերուան օդը: Ապա ան կ'արձակէ իր մոնչինը: Ձայնը կ'արձագանգէ ամբողջ տարածքին մէջ՝ յայտարարելով. «Ես արթուն եմ, հզօր եւ ներկայ: Ես պատրաստ եմ պաշտպանելու իմ տարածքս եւ խումբս ընդդէմ բոլոր անոնց, որոնք

մարտահրաւեր կ'ուղղեն ինծի: Ես լուռ պիտի չըլլամ եթէ մէկը փորձէ գողնալ իմ էգ առիծներս կամ կորիւններս: Մեր կերակուրը պիտի չգողցուի աւազակներու կողմէ, որոնք մաս չեն կազմեր մեր ընտանիքին»:

Առիծին մոնչիւնը վախ կը պատճառէ բորենիներուն: Անոր զօրութիւնը կը լսուի ամէն տեղ եւ անիկա կը զգուշացնէ բոլոր անոնց, որոնք կը պահուրտին ստուերին մէջ, թէ՛ ոտնձգութիւնները հանդուրժելի չեն: Մոնչիւնը կը սարսափեցնէ ներխուժողները եւ սահմաններ կը գծէ:

Առիծները նաեւ կը մոնչեն իրենց խումբի անդամներուն ո՛ր ըլլալը գիտնալու համար: Մոնչիւնը կ'ըսէ. «Ես հո՛ս եմ: Ո՛ր էք դուք»: Խումբի էգ առիծները եւ արու առիծները իրենց կարգին կը պատասխանեն մոնչիւններով:

Մոնչիւնին զօրութիւնը եւ ձայնին բարձրութիւնը շատ բան կ'ըսեն առիծին յատկանիշներուն մասին: Մոնչիւնը կը հաղորդէ չափ, տարիք եւ ֆիզիքական վիճակ: Իր էութեան մէջ անոր մոնչիւնը կ'ըսէ. «Գիտեմ, որ չէք տեսներ զիս, բայց կը լսէք եւ կը զգա՞ք զիս: Հետս խնդիր մի՛ ունենաք»: Եւ վերջին կէտ՝ առիծները կը մոնչեն երբ կը զայրանան կամ դժգոհ կ'ըլլան բանէ մը:

Մինչ կը գրեմ այս բառերը, միտքս կու գայ մեր Յիսուսի նախանձախնդրութիւնը Աստուծոյ տան նկատմամբ: Արդեօք մենք ալ բաւարար չափով փափաքո՞վ ենք խոնարհեցնելու մեր գլուխները, լեցնելու մեր կեանքերը եւ հոչակելու, թէ ո՞վ ենք մենք իրեն հետ կապակցաբար:

Ի՞նչն է, որ կը ներշնչէ էգ առիծը, որ մոնչէ:

Արու առիծին պէս ան ալ կը մոնչէ իր տարածքը իրը հոչակելու եւ զանիկա պաշտպանելու համար ինչպէս նաեւ իր խումբի անդամներուն հետ իր յարաբերութիւնը հաստատելու կամ վաւերացնելու համար: Ան կը մոնչէ օգնութիւն եւ պաշտպանութիւն ուզելու համար միւս էգ առիծներէն եւ թշնամին ետ մղելու համար: Ան կը մոնչէ կորսուած կամ հեռուները գացած կորիւնները կանչելու համար: Բայց գլխաւոր պատճառը էգ առիծի մը մոնչելուն իր պզտիկները պաշտպանելն է:

ԵՐԲ ԿԻՆ ԱՌԻԻԾՆԵՐԸ Կ'ԱՐԹՆՆԱՆ

Բացատրելու համար ատիկա, կը դիմեմ առիծներուն մոնչելու պատճառներուն մասին երկու տարի տեւած ուսումնասիրութեան մը մէկ յայտնաբերումին:

Այնպէս կը թուի, թէ իրարու հետ խմբուելով, էգերը կ'օգտուին անկէ, որ ոչ միայն ւելի լաւ կերպով կարող կ'ըլլան պաշտպանելու իրենց կորիւնները այն արուններէն, որոնք ուղղակի կապի մէջ մտնելով կորիւններուն հետ կրնան սպաննել զանոնք, այլեւ միասնաբար մոնչելով անոնք կը պակսեցնեն այդպիսի հանդիպումներու պատահելուն առիթները:

Էգ առիծները գլխաւորաբար միասնաբար կը մոնչեն, որովհետեւ երբ էգ առիծ մը առանձինը մոնչէ ատիկա իրենց խումբէն չեղող արու առիծի մը կրնայ տալ այն սխալ պատգամը, թէ ան կ'ուզէ զուգաւորուիլ: Վերջին բանը, որ էգ առիծները կ'ուզեն ընել ներգրաւել է արու առիծ մը, որ կրնայ սպաննել իրենց կորիւնները եւ տիրապետել իրենց խումբին: Խորամանկ առիծ մը կը փորձէ սպաննել կորիւնները, որպէսզի էգ առիծները ժամանակէն շուտ ուզեն իրեն հետ զուգաւորուիլ (էգ առիծները չեն զուգաւորուիր երբ կորիւններ կը մեծցնեն): Ատիկա կարող կը դարձնէ այդ արու առիծին, որ իր սերունդը ունենայ ւելի արագ ձեւով:

Անցեալին կենդանիներու վարմունքը ուսումնասիրողները կը հաստատային, որ էգ առիծին ընկերային ցանցեր հաստատելու պատճառը որսալու ւելի լայն առիթներ ունենալն էր: Ներկայիս ատիկա հարցականի տակ կ'առնուի եւ հիմա կայ այն համոզումը, որ էգ առիծներուն իրենց ընտանիքի խումբին հետ միշտ մնալու գլխաւոր պատճառը կորիւններուն պաշտպանութիւնն է, իսկ երկրորդ պատճառը իրենց որսալու ջանքերը համադրելն է:

Երբ կարդացի, թէ խմբային մոնչիւնին ետին գտնուող պատճառը արգիլելն է, որ իրենց պզտիկները մեռնին կամ կործանին, յուզուեցայ: Վերը նշուած ուսումնասիրութեան մէջ յայտնաբերած էին, որ միայն երեք էգ առիծներու

Փսփսուքէ՛ Մոնչիւնի

Խմբային մոնչիւնը բաւարար էր իրենց զաւակները մեռցնելու համար եկող արու առիւծները ետ պահելու:

Ատիկա ինչ կ'ըսէ մեզի:

Առանձինդ անպաշտպան ես:

Բարեկամի մը հետ կրնաս յոռեգոյնը դիմագրաւել:

Կրնամ հաւաքել երրորդ մըն ալ:

Երեք թելերէ բաղկացած պարան մը դիւրաւ

չի կտրուիր: (Ժողովողի 4.12, բառացիօրէն

թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատէճ*

տարբերակէն)

Եթէ էգ առիւծները գիտեն, որ իրենց պզտիկները ապահով չեն երբ իրենք կը մեկուսանան ուրիշ էգ առիւծներէ, ինչո՞ւ մենք կը փորձենք այդքան անկախ ըլլալ: Միասնաբար կրնանք պաշտպանել պզտիկները մահուրնէ եւ կործանումէ:

Մեկուսացած՝ մենք հնարաւորութիւն չունինք:

Այդ իրականութեան լոյսին տակ, ինչո՞ւ այդքան կը վախնանք ընդունելու, որ պէտք ունինք մէկս միւսին: Պէտք չունինք բազմութիւններու. պարզապէս պէտք ունինք քանի մը հոգատար, գթառատ մարդոց, որպէսզի փոխեն աշխարհը բազմութիւններուն համար:

Բնաւ մի՛ հաւատար, որ քանի մը հոգատար մարդիկ չեն կրնար աշխարհը փոխել: Որովհետեւ իրապէս միայն այդպիսիները կրցած են երբեւէ աշխարհը փոխել:

- ՄԱՐԿԱՐԷԹ ՄԻՏ

ԱՂՕԹՔԻ ՄՈՆՉԻՒՆՆԵՐ

Միայն նոյն ընտանիքին պատկանող էգ առիւծները կը համարձակին անվախօրէն մոնչել: Անոնք գիտեն, որ պէտք ունին ոչ միայն ձայնին, այլեւ քոյրերուն պաշտպանութեան:

Ուստի ինչո՞ւ մենք՝ Աստուծոյ առիւծ աղջիկները պէտք է մոնչենք:

Մենք մեր ձայնը կը բարձրացնենք հոչակելու համար

իր հզոր իշխանությունը եւ մեր հաւատարմութիւնը: Մենք կը մոնչենք կանչելու համար կորսուածները: Մեր ձայնը պզտիկները եւ հեռուները գացողները ապահովաբար տուն պիտի վերադարձնէ: Մենք օդը կը դողացնենք, որպէսզի ստուգենք սահմանի խախտում կատարողներուն, թշնամիներուն եւ գողերուն շարժումները: Միասնաբար մենք մոնչին կը բարձրացնենք պաշտպանելու համար մեր պզտիկները մահէ եւ կործանումէ: Մենք խաւարը պիտի չդիմագրաւենք լուրթեան մէջ:

Այս վերիններէն աւելի լաւ պատճառներ չեմ կրնար պատկերացնել: Այս պահուն ես կը բարկանամ, որ այսքան երկարատեւ լուռ մնացած ենք: Մենք իրաւունք չունէինք լուռ մնալու երբ մեզի յանձնարարուած էր համարձակօրէն խօսիլ անոնց տեղը, որոնք ձայն չունին: Ժամը ուշ է: Խաւարը անարգել աճեցաւ երբ մենք կը քնանայինք: Հիմա որ արթուն ենք, պէտք է աղօթենք, որ Աստուած բազմապատկէ մեր ջանքերը մինչ մենք կ'ընդարձակենք իր լոյսը: Աղօթքը մեր ամէնէն հզոր պատճառն է հաւաքուելու: Մենք պէտք պիտի ունենանք երկինքի պաշտպանութեան, իմաստութեան եւ ռազմավարութիւններուն այս պատերազմը մղելու համար:

Յիսուս ըսաւ. «Սիրէ՛ Տէրը՝ Աստուածդ քու ամբողջ փափաքովդ եւ աղօթքովդ եւ խելացութեամբդ»
(Մատթէոսի 22.37, բառացիօրէն թարգմանուած
Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակէն):

Ահա երեք միջոցներ, որոնցմով կրնանք մեր ձայնին ուժգնութիւնը բարձրացնել մոնչինի մակարդակի. մեր բուն փափաքով, աղօթքով եւ խելացութեամբ: Երբ կը սրբագործենք մեր կեանքի այդ երեք մարզերը, անոնք իրարու կը միանան մինչեւ որ կը սկսինք սիրել զԱստուած բուն, խելացի աղօթքներով:

Կը սկսինք պզտիկ եւ կը հաւատանք մեծին: Աստուած կը խոստանայ ներկայ ըլլալ հոն, ուր երկու կամ երեք հոգի իր անունով կը հաւաքուին: Աղօթքը ճամբայ կը բանայ հայթայթումի, նպատակի եւ ռազմավարութիւններու: Առիծ

Փսփսուքէ՛ մոնչիւնի

քոյր, վստահ եմ, որ կրնաս գտնել երկու կիներ, որոնք կրնան քեզի հետ աղօթել... նոյնիսկ եթէ հեռաձայնի վրայ պիտի ընէք ատիկա:

Մինչ մենք ոտքի կ'ելլենք եւ կը բարձրացնենք մեր ձայները, թող Աստուած այնպէս ընէ, որ երեք հոգինոց խումբերը բազմապատկուին ըլլալու երեսուն հոգինոց խումբեր: Ապա թող իրաքանչիւր երեսուն քոյր բազմապատկուի տասը անգամ եւ ըլլան երեք հարիւր հոգի: Թող երեք հարիւրը բազմապատկուի ըլլալու երեք հազար, եւ այդպէս շարունակ մինչեւ որ ըլլանք բանակ մը, որուն աղօթքները կը բարձրանան երկրէն երկինք իբրեւ հօր մոնչիւն մը: Ժամանակն է, որ արձագանգենք մեր Առիւծին մոնչիւնին:

Ոտքի ելէք իբրեւ Առիւծներ իրենց քունէն ետք
Անյաղթահարելի թիով,
Թօթուեցէք ձեր շղթաները հողին վրայ ցօղի պէս,
Որ ձեր քնացած ատեն եկած էր ձեր վրայ.
Դուք շատ էք, անոնք քիչ են:

– Փըրսի Պիշ Շելի

Ո՛վ էգ առիւծ, բարձրացրո՛ւր ձայնդ:

ՍՈՒՐ ԿՐՈՂ ԱՂՋԻԿՆԵՐ


Ինչպես խաչդ կրես հերոսի մը պէս



Աստուծոյ Խօսքը սուր մըն է, զոր մենք անելի հանգիստ կերպով կը կարդանք քան կը ճօճենք կամ կը գործածենք: Ժամանակն է, որ սուրեր դնենք աղջիկներու ձեռքերուն մէջ եւ տեսնենք, որ անոնք ինչպէս երկինքը երկիրին պիտի կապեն: Ամբողջ աշխարհի տարածքին կիները թիրախներն են նախապաշարումի, սեռային մաքսանենգութեան, բռնաբարումի եւ նոյնիսկ սեռասպանութեան: Լիսա Պըվիր կը գրէ, թէ այդ յարձակումները անելի բան կ'ըսեն անոր մասին, թէ կիները ղվ կրնան ըլլալ ապագային քան թէ ղվ էին անցեալին: «Սուր Կրող Աղջիկներ»ուն մէջ ան կը բացատրէ, թէ հոգեւոր թշնամին կը փորձէ զինաթափ ընել կիները ամէն մակարդակի վրայ: Ժամանակն է, որ կիները ըլլան այն հերոսները, որ Աստուած ստեղծած է զիրենք, որ ըլլան եւ ոտքի ելլեն՝ քաջաբար, զանազանելու կարողութեամբ, ներող եւ իմաստուն կերպով: Ժամանակն է, որ սուրդ քաշես եւ հերոս մը ըլլաս:

X MessengerX

Աշակերտութեան ճամբորդութիւն մը ամէն մարդու համար, ամէն տեղ





- Անվճար, աւելի քան 120 տարբեր լեզուներով
- Հասանելի որպէս հեռաձայնային կիրարկում («Եփիլէշըն») եւ առցանց
- Աղբիւրներ՝ նախատեսուած ձեր աճին համար
- Հետեւեցէք ձեր անցած նիւթերուն եւ աշակերտութեան ուղիին



Ստացէք «Messenger»-ի աշակերտական նիւթերու ամբողջ գրադարանը, ներառեալ ելեկտրոնային գիրքեր, օտիօ-գիրքեր, կարճ ֆիլմեր, վիտեօ-ուսուցումներ, Աստուածաշունչեր եւ աւելին. դիտեցէք, կարդացէք եւ լսեցէք ձեր բոլոր սարքերուն միջոցով:

MessengerX.com



Հասանելի է աշխարհի տարածքին «App Store»-ի եւ «Google Play»-ի մէջ

Արթևցիկ

Էգ առիծը կ'արթննայ իր բունեն. ոյժի, բունն փափաքի եւ գեղեցկութան հոյակապ պատկեր մը: Անոր սոսկ ներկայութիւնը կ'իշխէ տարածքին վրայ, կը պաշտպանէ իր ծագերը եւ զօրութիւն կը ներշնչէ արու առիծին: Էգ առիծները կը գործեն խումբերու դրութեամբ իբրեւ մէկ մարմին՝ իրենց շրջապատին վրայ ազդեցութիւն բերելու համար:

Դուն ալ Առիծ մըն ես

Երբ Կին Առիծները Կ'արթնանին մէջ Լիսա Պըվիր Էգ առիծին կեանքը եւ պատկերը կը ներկայացնէ իբրեւ կատաղի եւ քնքոյշ տիպար մը կիներուն համար: Այդ հիանալի արարածին զարմանք պատճառող յատկանիշները յայտնաբերելով, Լիսա կոչ կ'ուղղէ կիներուն, որ յայտնաբերեն թարմ կրակ, հմտութիւն եւ նպատակ:

Սորվէ՛ ինչ կը նշանակէ.

- Ըլլալ ոյժի շշմեցնող ներկայացուցչութիւն մը
- Կատաղի կերպով պաշտպանել պզտիկները
- Ձայնդ տալ անոնց, որոնց լռեցուցած են
- Ապրիլ լոյսի մէջ եւ որսալ մութի մէջ
- Բարձրացնել հաւաքական մոնչիւն մը, որ կը փոխէ ամէն բան

Բնութենէն առնուած ուշագրաւ օրինակներով կամ նմանութիւններով եւ Էգ առիծներու վերաբերեալ աստուածաշնչական խորունկ վերագրումներով *Երբ Կին Առիծները Կ'արթնանը* կոչ մըն է կիներուն, որ ոտքի ելլեն զօրութեամբ եւ մեծ թիւով՝ իրենց աշխարհը փոխելու համար:

Մենք ենք Աստուծոյ արթնցող կին առիծները:



Կրակոտ, բուն, սրտի մօտիկ, հզօր, զուարթամիտ: Այս բառերը կը նկարագրեն Լիսա Պըվիրը: Ան աշխարհը շրջող պատգամաբեր մըն է, մեծ վաճառք ունեցող գիրքերու (*պեսթ-սելիսկ*) հեղինակ, եւ համահաղորդավարը «Տը Մասենճըր» հեռատեսիլի յայտագիրի, որ կը սփռուի աւելի քան 216 երկիրներու մէջ:

Իր թափանցիկ ոճով, Լիսա կը բաժնեկցի Աստուծոյ Խօսքը անձնական փորձառութիւններու հետ հիստուած՝ կեանքեր զօրացնելու համար ազատութեամբ եւ փոխակերպումով: Անոր սիրտը կը կոտրուի ընկերային անարդարութիւններու համար, եւ իբրեւ փոփոխութեան ջատագով, ան ուրիշներն ալ կը համախմբէ, որպէսզի պատասխան ըլլան կամ լուծումներ բերեն լուրջ խնդիրներու համար մօտիկ եւ հեռու:



Անվճար ներբեռնումներու եւ հոսքային հեռարձակման համար այցելեցէք [MessengerX.com](https://messengerx.com)



Կը ցանկաբ անցին: Տեսանկէք պատկերով:



Messenger
INTERNATIONAL

Այս գիրքը նուրբ է հեղինակէն եւ ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱՅ ԶԷ

